Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5005

[illegible]

[illegible]

3кп19-
9--34

Շ. ԳԱՐԱԳԱՇ

ՊԱՅՔԱՐԻ ՃԱՄԲԻՆ

ՊԵՏՀՐԱՏ • 1932 • ՅԵՐԵՎԱՆ

3КП/գ
Գ-34

(Բանվոր Գարագաշ)

0 9 AUG 2005
14 NOV 2009
БИБЛИОТЕКА ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ՊԱՅՔԱՐԻ ՃԱՄԲԻՆ

(ՀՈՒՇԵՐ ՅԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ)

ԳԻՐՔ Ա.

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

3521-82

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Տպագրության հանձնելով «Պայքարի ճամբին» աշխատության Ա. գիրքը՝ հեղինակը նպատակ է դրել վորոշ չափով բավարարել մեր յերիտասարդ սերնդի այն բուռն հետաքրքրությունը, վոր նա ցուցաբերում է այժմ դեպի Անդրկովկասի մինչհեղափոխական հասարակական-քաղաքական կյանքը և մասնավորապես դեպի մեր կոմկուսակցության պադպոլիայի պատմությունը:

Գիրքը գրելիս մենք յերբեք նպատակ չենք դրել տալ շոշափվող հարցերի մարքսիստական ուսումնասիրությունը և վոչ էլ հավակնություն ենք ունեցել գրել նկարագրված շրջանի հասարակա-քաղաքական և կոմ կուսակցության պադպոլիայի պատմությունը:

Մենք ընթերցողներին տալիս ենք Անդրկովկասի հեղափոխական շարժման ու կոմկուսակցության պատմության վերաբերյալ հում նյութեր: Մենք հրապարակ ենք հանում ժանդարմական արխիվի փոշու տակից մինչև այժմ լույս չտեսած փաստաթղթեր, մեր և այլ կուսակցությունների քաղաքական թռուցիկներ, համագումարներում հրատարակված դեկլարացիաներ և, վերջապես մինչհեղափոխության շրջանի պարբերական մամուլից այնպիսի նյութեր, վորոնք լույս են սփռում մթության մեջ մնացած մի շարք հարցերի վրա, բնութագրում են վորոշ դեմքեր ու դեպքեր կամ սահման դնում այն անձանց վոտնձգություններին, վորոնք փառասիրության տենչանքով բռնված, թե այսորվա նեղ, անձնական հաշիվներից դրդված՝ ձգտում են կեղծել կուսակցության պադպոլիայի պատմության փաստերը, անգամ հեղափոխական շարժման պատմությունը:

Գրքիս հիմնական մասը գրված է 1931 թվի ամառվա ամիսներին Մոսկվայի հիվանդանոցում և ապա՝ Հյուսիսային Կովկասի հանքային ջրերում բուժվելիս: Ուստի՝ կասկածից դուրս է, վոր շոշափված հարցերը չկարողացանք խոր ուսումնասիրության յենթարկել, վորովհետև մեր ձեռքի տակ չունեյինք անհրաժեշտ գրականություն: Վերոհիշյալ բացերի լրացման գործը մենք թողնում ենք մեր մարքսիստ պատմաբաններին, վորպեսզի նրանք ուսումնասիրության նյութ դարձնեն մեր գրքում վերհանված բազմաթիվ փաստաթղթերն ու պրոբլեմները՝ հարստացնելով նորանոր նյութերով և գրեն մեր նկարագրած շրջանի պատմությունը:

Ինչպիսի թերություններ էլ վոր ունենա մեր աշխատությունը, վորն իր ձևով ու բովանդակությամբ նոր յերևույթ է մեր գրականության մեջ, այնուամենայնիվ, մենք հրապարակ ենք հանում այն՝ հա-

մոզված, վոր մեր նոր սերունդը մեր նկարագրած դեպքերի ու դեմքերի մեջ ուսանելի, դաստիարակչական բաներ կարող է գտնել:

Պադպոլյայի պատմության մասին հայերեն լեզվով լույս տեսավ յերկու գիրք—1. Ա. Կախոյանի «Հիշողություններ»-ը և 2. Բ. Բիբինեյշվիլու «25 տարի»-ն: Կախոյանի գիրքն ամբողջովին իր «հիշողության» վրա հիմնված, առանց փաստաթղթերի մի գործ եր, վորը գրված եր գլխավորապես իրեն ռեաբիլիտացիայի յենթարկելու համար: Գրքին կցված Կասյանի առաջաբանումն ել ասված եր.—

«Յեթե գլխավոր շեշտը դնում եմ իմ անձի վրա, անցքերն ու դեպքերն այնպես եմ դասավորում, դրանց մասին այն ձևով եմ պատմում, վոր ստացվի դաշնավոր ֆոն իմ լուսանկարի համար՝ այդ դեպքում է ահա, վոր հիշողությունները ստանում են սուբյեկտիվ բնույթ, վորոշ չափով կորցնում են իրենց արժեքն ու մնայունությունը»:

«Ափսոս, վոր ընկ. Կախոյանի «Հիշողությունները» զերծ չեն մնացել այդ թերությունից: Բազմաթիվ են այն եջերը, վորոնք պարունակում են մատնանշված թերությունը»:

Ա. Կախոյան, «Հիշողություններ», եջ 4, Կասյանի առաջաբանը:

Հարցերի գիտակցական աղավաղումը և գրքի սուբյեկտիվ բնույթը պատճառ հանդիսացան, վոր այդ գիրքը գրական շուկայից վտարվեր:

Յերկրորդ գիրքը՝ Բիբինեյշվիլու «25 տարի»-ն թեև տալիս է բազմաթիվ դեպքերի ու դեմքերի նկարագրությունը և արժեքավոր փաստաթղթեր, բայց նախ՝ այդ գրքում իսպառ բացակայում է քննադատական վերաբերմունքը դեպի նյութը, և ապա՝ գրքի ամենագլխավոր թերությունը կայանում է հետևյալում.—

Հեղինակը մեր կուսակցության պադպոլյայի պատմության թատերաբեմում տեսնում է միայն վորոշ ընկերների: Թուցե հեղինակը նպատակ է դրել գրել այն ընկերների մասին, վորոնց հետ աշխատել է, ունեցել է անմիջական շփում և կամ գրում է այն դեպքերի մասին, վորոնց մասնակցել է ինքը: Ինչպիսի պատճառաբանություն ել վոր ունենա հեղինակը, այնուամենայնիվ, նկատելի յե, վոր նրա մոտեցումը և նյութերի ընտրությունը միակողմանի յեն և կրում են ազգային սահմանափակվածության կնիք: Այս գրքի հեղինակը նույնպես աշխատել է շարժման կենտրոնը համարել իրեն, այլապես չեր կարող պատահել, վոր բացի վորոշ ընկերներից, ուրիշ ազգության պատկանող բոլշևիկների չհանդիպեր «25 տարվա» ընթացքում:

Մեր կուսակցությունը, վոր միշտ յեղել է և մնում է հետևողական ինտերնացիոնալիստական, միջազգային հեղափոխական պրոլետարիատի առաջապահ ջոկատը, իրավունք չի տալիս վոչ վոքի իր պատմության մասին գրելիս այնպիսի ընտրություն կատարելու, վոր նա վերածվի միջազգային կազմակերպությունից անջատ ազգային հատվածների: Ազգային սահմանափակվածության արդյունք պիտի համարել այն, վոր «25 տարվա» մասին գրող Բ. Բիբինեյշվիլին 300-եջանոց գրքում մոռա-

ցության է տվել Անդրկովկասի բոլշևիկյան պադպոլյայի պատմությունից այնպիսի դեմքեր, վորպիսիք են Շահումյանը, Սպանդարյանը, Ստասովան, Վախմինան և ուրիշները:

Թե մեր «Պայքարի ճամբին» Ա. գիրքը վորչափ է զերծ վերոհիշյալ թերություններից՝ այդ մասին թող դատի ինքը ընթերցողը:

Տ. ԳԱՐԱԳԱՇ

ԵՐԶԵՐՈՒՄ

Երզերում կամ Կարին քաղաքը, որտեղ յես ծնվել եմ և մեծացել մինչև 16 տարեկան հասակս, սակայն մի հետամնաց քաղաք էր: Այնտեղ ապրում էր ութսուն հազարի հասնող ազգաբնակչություն: Երզերումում և նրա դաշտի գյուղերում կային մինչև յերեսուն հազար հայեր: Այնտեղ ապրում էին նաև փոքրաքանակ հույներ, ասորիներ, հրեաներ և այլն, իսկ մնացյալ ազգաբնակչությունը կազմված էր գլխավորապես թյուրքերից:

Երզերում քաղաքը մինչև այսօր էլ դեռևս չի կորցրել իր միջնադարյան մի քանի խոշոր հուշարձանները: Քաղաքը շրջապատված է մարկոցապարիսպներով, որոնց մոտ փորված են հատուկ խրամատներ: Պատերազմների ժամանակ թշնամուն թակարդի մեջ ձգելու համար, այդ խրամատները ջրով լցնելիս և յերեսին հարդ փռելիս են յեղել, որպեսզի հարձակվող թշնամու զորքերը խեղդվեն այդ խրամատներում:

Քաղաք մտնել կարելի յե միայն վերոհիշյալ պարիսպների մեջ բացված չորս խոշոր դռներով, այսինքն՝ Ցերդնկայի, Թավրիզի, Ոլթիի և Խարբերդի դռներով, որոնցից անցնելիս պետք է ամեն մի ճանապարհորդ հատուկ տուրք վճարեր:

Երզերումը, կառուցված լինելով լեռնային բարձունքների վրա և շրջապատված հրաբխային լեռներով, հաճախ յենթակա յե ստորերկրյա ուժերի սոսկալի արհավիրքներին, որոնց քաղաքի ազգաբնակչությունը յենթարկվել է մի քանի անգամ: Հիշում եմ այսօրվա նման, 1902—3 թվերի ձմեռային մի առավոտ եր, յերբ սոսկալի յերկրաշարժից ժողովուրդը փողոց թափվեց՝ փլատակվող բազմաթիվ տներից իրենց կյանքն ազատելու համար: Դրանից հետո, մի քանի ամիս շարունակ, չնայած սոսկալի սառնամանիքներին, այնուամենայնիվ ազգաբնակչությունն ապրում էր վրանների տակ:

Ստորերկրյա դղրդյունների – ցնցումների ժամանակ, սնոտիապաշտ երզերումցիները ծունկի չոքած, աղոթում աղոթում և արցունք էյին թափում աներևույթ ուժերը «ղեկավարող աստծուն», որը «հասակավորների մեղքերի համար պատժում եր անգամ բոլորովին անմեղ մանկահասակներին»: Այդ պատճառով էլ մեզ՝ «արդար, անմեղ» պատանիներիս, առավոտյան ծեգին արթնացնում և ստիպում էյին բարձրաձայն աղոթելով՝ մեծերի մեղքերին թողություն խնդրել «ամենակալ արարչից»:

Երզերումը ոչ միայն ռազմական կենտրոն ու զորատեղի յեր և հարևան վիլայեթների հարաբերության կենտրոն, այլև նա, գտնվելով

Տրապիզոնից Թավրիզ տանող մեծ ճանապարհի վրա՝ հանդիսանում եր յեվրոպական ապրանքների և Պարսկաստանի ու Թյուրքիայի հումքը փոխադրելու գլխավոր կայան: Այդ նպատակով Երզերում մտնում և դուրս էյին գալիս բյուրավոր կարավաններ, որոնք հանգիստ առնելուց հետո՝ այնտեղից վերցնում էյին իրենց պաշարը և ապա մեկնում:

Կուլտուրական տեսակետից Երզերումն անհասարակ չափազանց աննախանձելի վիճակ եր ապրում: Այնտեղ բոլորովին չկար թատրոն, կինո, թերթ, հասարակական գրադարան, թանգարան կամ այլ կուլտուրական վայր, բայց Երզերումը հարուստ եր դպրոցներով: Քաղաքն ուներ բազմաթիվ տարրական թյուրքական դպրոցներ, կային նաև միջնակարգ և մի քանի զինվորական դպրոցներ, իսկ Երզերումի բոլոր փողոցները ծածկված էյին մեդրեսեներով: Այդ մեդրեսեներն ունեյին հետևյալ պատկերը: Երզերումի բոլոր մզկիթների մոտից անցնելիս կարելի յեր լսել խիստ աղմկալի խմբական ընթերցանություն և մանկական խլացուցիչ աղմուկ: Այդ աղմուկը գալիս եր մեդրեսեներից: Ներս եք մտնում, այնտեղ խսիրների վրա ծալապատիկ նստած են բազմաթիվ աշակերտներ, որոնց ծնկների վրա բացված է ինչ որ դասագիրք: Դրանցից յուրաքանչյուրն իր դասը սերտում է բարձրաձայն ընթերցանությամբ և հետ ու առաջ օրորվելով: Ընդարձակ սենյակի մի ծայրին, պատվանդանին դրված սեղանի առաջ նստած է՝ սպիտակ չալման գլխին՝ ճերմակամորուս մոլլան, որի ձեռքին կա մի խիստ յերկար գավազան: Դրանով նա հարվածում է չարություն անող աշակերտների գլխին: Թե այդ աղմկի մեջ և կամ այդ մոլլայից ինչ կարելի յե սովորել՝ այդ միանգամայն հասկանալի յե: Այդպիսի մեդրեսեներ, ինչպես ասացինք, կային յուրաքանչյուր ճամիի մոտ, որի աղմուկը բռնում եր մոտակա ամբողջ փողոցը:

Հայերը նույնպես Երզերումում ունեյին բազմաթիվ թաղային տարրական դպրոցներ և մանկապարտեզներ, որտեղ սովորում էյին քաղաքի համարյա բոլոր յերեխաները: Քաղաքում կար նաև, այսպես կոչված, ազգային Արծնյան յոթդասյան վարժարանը և աղջիկների Հռիփսիմյան յոթդասյան վարժարանը:

Այնուհետև գալիս է Սանասարյան միջնակարգ վարժարանը: Դա քաղաքին ու այլ վայրերին տվել եր բազմաթիվ սաներ, որոնք պարապում էյին գլխավորապես ուսուցչությամբ: Սանասարյան վարժարանը պահվում եր ռուսահայ Ցեղյանի և Սանասարյանի կտակած գումարներով և ուներ գիշերօթիկ աշակերտություն:

Սանիտարական տեսակետից քաղաքը չափազանց վատ վիճակում եր գտնվում: Փողոցներում կուտակված էյին աղբակույտեր, որոնք նեխվելով՝ տարածում էյին գարշահոտություն: Քամին սփռում եր ամենուրեք այդ աղբը և պարարտ հող պատրաստում ամեն տեսակ հի-

վանդության համար: Բայց, դրա փոխարեն, Երզրումը, համարյա բոլոր փողոցներում, ուներ մշտահոս սառնորակ աղբյուրներ և բազմաթիվ կարկաչահոս առվակներ, վորոնք ամառվա խորշակներին մի փոքր մեղմացնում եյին երզրումցու տառապանքը շոգից և միլիոնավոր ճանճերից: Աղբյուրների գլխին շղթայով կախված եյին պղնձե թասեր, վորոնցով անցորդները ջուր եյին խմում:

Քաղաքը չափազանց հարուստ եր փողոցային շներով, վորոնք տասնյակներով թափառում եյին փողոցներում, և վոչ վոք իրավունք չուներ նրանց ծեծել, յեթե անգամ նրանք վորևե մեկին վնաս հասցնեյին: Ընդհակառակը՝ հատկապես ուրբաթ որերն այդ շների համար ուղղակի հարսանիք եր, վորովհետև հավատացյալները, մզկիթներից դուրս գալուց հետո, փառավորապես բավարարում եյին նրանց հացով կամ կերակրով: Ժողովրդի մեջ տարածվել եր մի ավանդություն, թե իբր «Աստծու վերջին մարգարեն՝ Մահմեդը, հանդերձյալ աշխարհից յերբեմն գալիս է հավատացյալների աշխարհիկ կյանքը զննելու, և վորպեսզի նկատելի չլինի վոչ վոքի համար՝ նա ընդունում է շան կամ խեղճ մարդու կերպարանք»: Ահա այս պատճառով էլ հասարակ ժողովուրդը սիստեմատիկ կերպով կերակրում եր անտեր շներին և պաշտպանում նրանց մարդկային հալածանքներից: Սակայն Թյուրքիան հանրապետական վարչաձև ընդունելուց հետո, Քեմալ փաշան վոչ միայն վտարեց սնոտիապաշտության աղբյուր սուլթանին, այլ նաև բոլորովին վոչնչացրեց այդ շների վոհմակները Թյուրքիայի բոլոր քաղաքներից՝ վերջ դնելով նրանց հետ կապված սնոտիապաշտական ավանդություններին:

Կենցաղային հարցերից առանձնապես արժե կանգ առնել ամուսնական հարաբերությունների վրա, վորոնք նահապետական ավանդական սովորությամբ դեռևս յերկար ժամանակ ապրում եյին Երզրումում, նույնիսկ քիչ թե շատ ինտելիգենտ համարված ընտանիքներում: Աղջիկ փախցնելը, առևանգելը դեռևս մնում եր, վորպես սովորություն թե՛ թյուրքերի և թե՛ հայերի մեջ: Առանձնապես այդ ձեռնտու յեր չքավորների համար, վորոնք ազատվում եյին մի շարք սովորույթ դարձած ծախքերից: Բայց այդ կատարվում եր գլխավորապես այն ժամանակ, յերբ սիրահարների ծնողները մերժում եյին իրենց համաձայնությունը տալ սիրահարված զույգերին:

Ամուսնությունները սովորաբար կատարվում եյին վոչ թե ամուսնացող յերիտասարդի և աղջկա ցանկությամբ, այլ նրանց ծնողների անմիջական ղեկավարությամբ: Յերիտասարդներն ամուսնանում եյին աղջիկների հետ վոչ միայն առանց իրենց համաձայնության կամ աղջկա հետ ունեցած փոխադարձ սիրով, այլ շատ անգամ, նույնիսկ, առանց նրանց դեմքը տեսնելու: Տղայի ծնողները, յերբ արդեն հասունացած ե-

յին համարում իրենց վորդուն՝ փնտրում եյին ամուսնացնել. գնում եյին, տնե-տուն շրջում՝ «խնամախոսության», աղջիկ տեսնելու: Որինակ՝ իմ քեռին՝ մորս յեղբայրը, վորը դրագետ մի անձնավորություն եր, ամուսնացավ մի աղջկա հետ, վորին տեսավ միայն «հարսնատեսին», այսինքն՝ նշանադրությունից բավական ուշ: Այդ պատճառով էլ ամուսինները իրար չեյին հասկանում, և ապագայում ահագին թյուրիմացություններ առաջացան նրանց միջև: Իհարկե, ամուսնություններ կատարվում եյին նաև սիրահարված զույգերի միջև, բայց ամուսնության հիմնական ձևը, ընդհանրապես, խնամախոսության գնալը և աղջիկ ընտրելն եր:

Կենցաղային խոշոր սովորույթ պետք է համարել նաև երզրումցու բաղնիք գնալը: Հարսնացու ընտրելիս խնամիներն աշխատում եյին հարսնացվին տեսնել նաև բաղնիքում, և դրա համար սարքում եյին հազար ու մի մեքենայություններ, վորպեսզի գնության առարկա հանդիսացողը և նրա ծնողները վոչ մի դեպքում այդ չնկատեյին: Բաղնիք գնալիս նախորոք պատրաստում եյին զանազան թխվածքներ, հյուրեր եյին հրավիրում իրենց հետ լողանալու, կամ մեռած բարեկամների հարազատներին «սգից հանելու» եյին տանում իրենց հետ և այլն: Բաղնիք եյին գնում առավոտ վաղ և մնում մինչև յերեկո կամ ուշ գիշեր: Այդ պատճառով էլ վերցնում եյին ամբողջ որվա ուտելու պաշար և մի հսկայական պղնձե աման ու լողանալու համար անհրաժեշտ այլ պարագաներ:

Խնամախոսությունների մեծ մասը կատարվում եր բաղնիքներում և սովորաբար սկսվում եր զանազան «դիպլոմատական» և կամ ավելի շուտ՝ յեզոպոսյան լեզվով:

— Ցանկանում ենք ձեր դրախտանման պարտեզից մի անուշահոտ ծաղիկ քաղել,— ասում եյին պառավ խնամախոսները:

Երզրումի տիրող տնտեսական ձևը մանր արհեստն եր, վոր զարգացող առևտրական կապիտալի դրոշների տակ ապրում եր իր հոգեվարքը: Երզրումի վրայով Անատոլիի խորքերն եյին գնում Յեվրոպական Թյուրքիայի և արտասահմանի ապրանքները: Ուրիշ խոսքով՝ նա առևտրական մի հանգույց եր Անատոլիի և Յեվրոպական Թյուրքիայի միջև:

Բայց Երզրումում կային նաև, այսպես կոչված՝ «պաստուրմախանաներ»—ապուխտի «ֆաբրիկաներ», ծխախոտի ֆաբրիկներ, ոճառի գործարաններ և այլն: Պաստուրմախանաների աշխատանքը ամառվա, սեզոնային բնույթ եր կրում, և պաստուրմա արտադրվում եր գլխավորապես վոչ թե տեղում սպառելու՝ այլ Յեվրոպական Թյուրքիա ու արտասահման ուղարկելու համար: Բայց, այնուամենայնիվ, այդ ֆաբրիկա կոչեցյալներն այնչափ սակավաթիվ եյին, վոր չեյին կարող փո-

խել քաղաքի արդյունագործության հիմնական բնույթը, վորն աչքի յեր ընկնում իր կոշկակարներով, դերձակներով, վոսկերիչներով, դաբաղներով, ժամագործներով և այլ արհեստավորներով:

Թե առևտրի և թե արհեստի մեջ գլխավոր տեղը, առաջնությունը պատկանում էր հայերին, այնուհետև գալիս եյին հույները: Իսկ թյուրքերը պարապում եյին գլխավորապես նպարավաճառությամբ, բաղխալ— և մսագործությամբ— ղասաբ: Արհեստը նույնպես վաղուց անցել էր իր ծաղկման փուլը և որըստորե հոգևարքի շրջանն էր ապրում: Պոլսի, Սալոնիկի, Իզմիրի և առհասարակ յեվրոպական ապրանքներն իրենց եժանությամբ ու մաքրությամբ որըստորե շուկայից դուրս եյին վանում տեղական արհեստավորի կոպիտ ու թանկ ապրանքը: Այդ պատճառով էլ տեղական արհեստավորներին մնացել էր սահմանափակվել միայն պատվերներ ընդունելով, վորով նրանց համար ստեղծվել էր բավական աննախանձելի վիճակ:

Յեվ յեթե Երզերումի արհեստավորների ու նրանց քարգահների վիճակը չափազանց աննախանձելի յեր, ապա ավելի վատթար ու ծանր էր նրանց մոտ արհեստ սովորելու համար վարձված աշակերտների վիճակը, վորոնց շարքին պատկանում եյի նաև յես:

Ծնվելով Երզերումի Այգեպար գյուղում, մինչև տաս տարեկան հասակս ապրում եյի հորս խնամքի տակ, վորը մանր ծառայող էր: Հայրս մեռավ 1902—3 թվերի յերկրաշարժի ժամանակ: Նա ստորերկրյա ցնցումներից առաջացած փլվածքից ազատվել էր, սակայն սաստիկ վախից կաթվածահար յեղավ, փողոցով անցնելիս իրեն վատ զգալով մտավ դեղատուն, վորտեղ և հանկարծամահ յեղավ: Այնուհետև, դեռևս տաս տարեկան հասակումս յես ստիպված յեղա դուրս գալ Երզերումի Արծնյան «ազգային» վարժարանի 4-րդ դասարանից ու մտածել սեփական աշխատանքով ինձ կերակրելու մասին: Չնայած ավագ յեղբայրս ոգնության հասավ, սակայն նա ի վիճակի չէր առանց իմ աշխատանքի խնամելու ինձ: Այդ իսկ պատճառով յես նախ մտա ասիական դերձակի, իսկ հետագայում յեվրոպական կոշկեղեն պատրաստող արհեստավորի մոտ՝ արհեստ սովորելու համար:

Արծնյան վարժարանում յեղած ժամանակս յես խոշոր հետաքրքրություն հայտաբերեցի դեպի յերաժշտությունը կամ, ինչպես այնտեղ եյին ասում՝ «յերգեցողությունը», վորի համար միշտ հինգ ու խաչ եյի ստանում: Դպրոցի բոլոր ձայն— լսողություն ունեցող աշակերտներիս համար պարտադիր էր յեկեղեցում յերգել, վորպես «դպիր», «մեռելաթաղների» ժամանակ յերգելու գնալ և այլն: Բայց մեր ընտանեկան մի քանի պայմաններ խիստ խանգարում եյին իմ վրա դրված պարտականությունը բարեխղճորեն կատարելու: Մեր յերաժշտության ուսուցիչը հռչակավոր Արմենակ Շահմուրադյանն էր (մշեցի), վորը հետագայում Փարիզում հանդես յեկավ Ֆաուստի և այլ դերերում և ամբողջ մամուլի գովասանքին արժանացավ: Նա հորդորում էր, վոր կանոնավոր կերպով պարապեյի «յերգեցողությամբ», բարեխիղճ կերպով հաճախեյի յեկեղեցի, և տներին տալիս էր «Դանիելի» կամ «Վոչինչ» կարդալու և այլն:

Բայց մեր տանը, Սանասարյան վարժարանն ավարտած ավագ յեղբորս անվերջ հակակղերական զրույցներն իմ մեջ առաջացնում եյին թերահավատություն և կասկած դեպի կղերականությունը և վորոշ չափով էլ թուլացնում եյին հավատս դեպի կրոնն առհասարակ: Այդ պատճառով էլ, յեկեղեցի գնալու և յերգելու ցանկությունն իմ մեջ որըստորե աստիճանաբար մեռնում էր: Բացի դրանից, դրան նպաստում էր մի այլ հանգամանք էլ. այն է՝ իմ հորեղբոր վորդուն վոր չափազանց հարբեցող մի ուսուցիչ էր, վորոշել եյին քահանա ձեռնադրել: Այդ մարդն այն աստիճանի հարբել գիտեր, վոր փողոցներում ընկած մնում էր և տուն եյին բերում ուրիշները:

Երզերումում քահանա յեր նաև տեր—Մակար անունով մի կնամոլ, հարբեցող և ցոփ կյանք վարող կղերական, վորին «քաչալ կտիկ» եյին ավանում: Այդ մարդուն բռնել եյին պոռնիկներին այցելելիս և տեղնուտեղը մորուքը խուզել: Այս բոլորն իմ մեջ այն ժամանակ առաջացրել էր ատելություն դեպի յեկեղեցու սպասավորները, վորոնց մեջ մաքուր մարդիկ շատ քիչ կային: Յեվ յեղբորս ասածները համարում եյի ճիշտ՝ թե քահանաները և առհասարակ կղերականները տգետ, շահասեր և անբարոյական ու ցածհոգի մարդիկ են: Բացի դրանից, Երզերումի միակ յեկեղեցին, ուր յես յերգելու պիտի գնայի՝ չափազանց հեռու յեր, իսկ յես լավ կոշիկներ չունեյի, վոր ձմեռային սառնամանիքներին պաշտպանվեյի՝ առավոտ լուսաբացին անոթի, ծարավ, մի քանի ժամ վոտքի վրա յերգելու ժամանակ: Դրանք այնքան էլ հաճելի բաներ չեյին, վորոնցով կարելի լիներ հրապուրվել: Այս բոլոր հանգամանքներն ինձ ծուլացնում եյին և ինձ շատ անգամ հետ եյին պահում յեկեղեցի գնալուց, վորի պատճառով Շահմուրադյանը ցուցափայտով ու ճիպոտներով հարվածում էր ձեռքերիս ափերը, ծունկ էր չոքեցնում ժամերով, տանից տարած նախաճաշից զրկում և այլն:

Նման պատիժների տեսակետից մեր դպրոցը տեր—Թեոդիկյան դպրոցների կատարելատիպն էր:

Դպրոցական մյուս առարկաներից ինձ հետաքրքրում եյին իրազեկությունը, (բնագիտությունը), տաճկերեն, ֆրանսերեն լեզուները, իսկ հայոց պատմություն և մանավանդ կրոն՝ չեյի սիրում բոլորովին:

Մեր Արծնյան վարժարանն ավարտողները ամենաշատը հաշվետարներ և գրագետ գործակատարներ եյին դառնում, իսկ յես դուրս գալով այդ յոթդասյան դպրոցի չորրորդ դասարանից, շատ քիչ բան գիտեյի. կանոնավոր կարդալ ու գրել անգամ չգիտեյի:

Դրա փոխարեն մեր ընտանիքում կային զարգացման վորոշ պայմաններ: Հայրս խիստ ընթերցասեր մարդ էր և ուներ բավական հարուստ գրադարան՝ այն ժամանակվա Երզերումի պայմանների հետ համեմատած: Մենք հաճախ հավաքվում և լսում եյինք Վիկտոր Հյուգոյի «Թշվառները» կամ Ֆրանկլինի «Դելեմաքը» և կամ «Ռոբինզոնը», Ալ. Դյումայի «Յերեք հրացանակիրները» ֆրանսական հեղափոխության մասին: Հայրս ուներ մի քանի տարվա «Բյուզանդիոն» օրաթերթի և «Բազմավեպ» ժուռնալի կազմված համարները: Նրա պահարանում կային բազմաթիվ բժշկական բուսայթի թերթերից ու ժուռնալներից կտրված գրվածքներ, վորոնց միջոցով հարկ յեղած դեպքում ոգտվում էր իր տնային դեղարանից:

Յերբ հայրս մահացավ, ինձ արհեստի տվին՝ դուրս բերելով դպրոցից: Երզերումի արհեստավորներն այդ ժամանակ ապրում եյին բավական ծանր վիճակ: Նրանք աշխատանքի եյին գնում առավոտվա ծեգին և աշխատում եյին մինչև գիշեր: Առանձնապես յերկար էր աշխատանքի տևողությունը ամառները, յերբ աշխատանքը սկսվում էր առավոտյան 5—6 ժամին և վերջանում յերեկոյան 6—7-ին: Ուրիշ խոսքով՝ որական 12—14 ժամվա աշխատանք: Այդպես էր գարնանն ու ամառը, իսկ ձմեռը և աշնանը պատկերը փոխվում էր բոլորովին: Աշնանը, յերբ արհեստավորների պատվերները շատանում եյին, նրանք, չկարողանալով աշնանային կարճ որերին պատրաստել իրենց ընդունած պատվերները՝ սկսում եյին աշխատել գիշերները նույնպես, վոր հաճախ տևվում էր մինչև լուսաբաց, իսկ յերբեմն՝ մինչև առավոտ:

Աշնան գիշերային աշխատանքները սովորաբար սկսվում եյին հետևյալ արարողություններով: Արհեստանոցի տեր վարպետը գնում էր մի քանի «օխա» (1—2 կիլոգրամ) դեղձ և բաժանում էր քարգահներին ու աշակերտներին: Այդ նշանակում էր, վոր վարպետը, չբավականանալով ցերեկվա աշխատանքով՝ վճռել էր աշխատել նաև գիշերները: Գիշերային աշխատանքը յերկուշաբթիից հինգշաբթի որերը տևում էր մինչև կես գիշեր, իսկ ուրբաթ և շաբաթ որերը՝ մինչև լույս՝ կիրակի որը հանգստանալու նպատակով: Սակայն այդ անհաշիվ հավելյալ աշխատանքի համար վորևե հավելյալ վարձատրություն տալ չկար: Դրա փոխարեն վարպետի տանից ստացվում էր միայն գիշերային սնունդ, և ուրիշ վոչ մի վարձատրություն:

Զափազանց ցածր էր նաև աշխատավարձը: Ամենալավ քարգահը, վորը «վարպետ ձեռնադրվելու» բոլոր տվյալներն ուներ, ամսական մի տաճկական վոսկուց ավելի ստանալ չէր կարող, իսկ դա այն ժամանակվա ռուսական փողով՝ ամսական 8—10 ռուբլուց ավելի չէր:

Ավելի վողորմելի վիճակ ունեյին աշակերտները, վորոնց «միսը վարպետինն էր, իսկ վոսկորը աշակերտի տիրոջը»—արհեստ սովորելու,

«մարդ դառնալու» համար: Նրանց էր մնացել կյանքի մրուրը: Նրանք, վորպեսզի «մարդ դառնային»՝ պետք է 4—6 տարի ամենադաժան շահագործման յենթարկվեյին և կամ՝ ավելի շուտ՝ վարպետի տան ծառայի դերը կատարեյին: Աշակերտը վարպետի տանը պետք է կատարեր հետևյալ պարտականությունները. նա պետք է փայտ ջարդեր, զամբյուղը շալակած՝ մթերքներ փոխադրեր շուկայից վարպետի տունը, բաղնիք գնալիս ընտանիքի անդամների շորերը և մի խոշոր պղնձե աման, ամբողջ որվա ուտելու պաշարը տեղափոխեր նախ բաղնիք և ապա նորից տուն, ձմեռը վարպետի տան կտուրն ու տան առջևի ձյունը մաքրեր, աղբյուրից ջուր բերեր տուն, սուրճ աղար և այլն:

Չեմ կարող մոռանալ մի դեպք, յերբ մի անգամ վարպետիս աղջիկը յեկել էր մեր տուն և պահանջել, վոր կիրակի՝ «հանգստյան որս» գնայի իրենց համար ջուր կրելու և փայտ ջարդելու: Յեղբորս կինը, չկարողանալով իրեն զսպել, վարպետիս աղջկանն ուղղակի դուրս էր վռնդել տնից ու հայտարարել.

— Դուրս գնա այստեղից և հայտարարիր քո հորը, վոր Շավարշը մեր տանը նման աշխատանք չի կատարում և ձեզ համար էլ բոլորովին կատարելու չէ: Նա յեկել է ձեզ մոտ արհե՞ստ սովորելու, թե՞ տան ծառայի դեր կատարելու: Դուրս գնա և մեկ էլ վոտքդ այս տան շեմքից ներս չդնես:

Այդ յերեկոյան մեր տանը վճիռ կայացավ՝ հաջորդ որնեյեթ ինձ հանել այդ վարպետի մոտից: Հաջորդ որը առավոտյան գնացի արհեստանոց, վոր վարպետիս հայտնեյի մեր վճիռը, բայց նա դեռևս ինձ չլսած՝ հավաքեց հարևան արհեստավորներին և նրանց ներկայությամբ հայտարարեց, վոր մենք վիրավորել ենք իր աղջկանը, մեր տանից դուրս վռնդել նրան՝ ու ասաց.—

— Քեզ նման աշակերտները բան սովորել չեն կարող, դուք վոչ մեծ գիտեք, վոչ էլ վարպետ, դուք ազա մարդիկ եք, աշխատել չեք ցանկանում: Ի՞նչ է, խենչելիդ քարը կընկնի՞, վոր գայիր և մի քիչ աշխատեյիր: Մենք նման աշխատանք չե՞նք կատարել մեր վարպետների մոտ: Առանց այդ աշխատանքի քեզ վոչ վոք արհեստ չի սովորեցնելու. այդ լավ իմացիր և մեկ էլ այստեղ չերեվաս:

Այդպիսով վարպետս ինձ արձակեց՝ առանց վորևե վարձատրության: Յես պետք է պատժվեյի, վորովհետև խիստ մեծ հանցանք եյի գործել՝ խախտել եյի պապենական սովորությունները: Այդտեղ հավաքված հարևան արհեստավորները չխոսեցին, բայց նրանց դեմքերին կարելի յեր կարդալ վարպետիս ասածներին լիակատար համաձայնության արտահայտությունը:

Յեվ ահա, այդպիսի դժոխային աշխատանքի ծանր պայմաններն իմ մեջ միտք հղացրին՝ հետևել ավագ յեղբորս որինակին՝ թողնել Թյուր-

քիայի սահմանները և փախչել վորևէ սուրհանդակի՝ «վեկիլի» առաջնորդությամբ, անցնել Ռուսաստան՝ Կովկաս՝ այնտեղ «բաղդ վորոնելու», ապրելու ավելի տանելի պայմաններ ստեղծելով:

Բայց Թյուրքիայից փախչելու դրդում էյին նաև սուլթան Համիդի կառավարության կազմակերպած այն սոսկալի հալածանքներն ու կոտորածները, վորոնց ահն ու սարսափը դամոկլյան սրի նման կախված էյին մեր գլխի վրա:

Վո՞րտեղ էր թաղնված այդ կոտորածների հասարակական պատճառները, ինչու՞ հայ-թրքական հարաբերություններն այդ աստիճան սրվել էյին և հասել արյունահեղության, փոխադարձ վոչնչացման:

Իհարկե, հուշերի սահմաններում անկարելի յե տալ այդպիսի մի խոշոր հասարակական հարցի անալիզը, և մենք բոլորովին էլ այդ կարգի խնդիրներ լուծելու նպատակ չունենք: Սակայն այստեղ անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսքով ուրվագծել սոցիալական այդ մեծ չարիքի դրդապատճառները:

Գաղտնիք չէր վոչ վոքի համար, վոր Թյուրքիայի հայաշատ վայրերում արհեստի և առևտրի հիմնական ճյուղերը գտնվում էյին վոչ թե թյուրքերի, այլ հայերի, հույների և այլոց ձեռքին: Սակավաթիվ թյուրք առևտրականներն ու հետամնաց արհեստավորները վոչ մի կերպ չէյին կարող մրցել հայ առևտրականների ու արհեստավորների հետ: Իսկ այդ հանգամանքը խիստ կարևոր մի ազդակ էր թյուրք-հայկ. հարաբերությունների սրման գործում: Թյուրք կալվածատերերը, սակավաթիվ առևտրականներն ու արհեստավորները տանել չէյին կարող այն դրությունը, յերբ ազգային փոքրամասնություն կազմող հայերը լինեյին տնտեսական ասպարեզում իշխողի, տոն տվողի դերում: Բացի դրանից, հասկանալի յեր, վոր միջնադարյան-ֆեոդալական տնտեսություն ունեցող Թյուրքիայում տնտեսական զարգացումն որոշ տարբեր առևտրական հայերի համար ստեղծում էր գերիշխանություն տնտեսական ասպարեզում: Ահա այդպիսի պայմաններում ինչ ասել կուզի, վոր հայ-թրքական հարաբերությունները սրող ամենանվազ ագիտացիան անգամ կարող էր տալ վողբալի հետևանքներ այնպես, ինչպես բենզինի պահեստում մի փոքր կայծը:

Մյուս կողմից՝ Անդրկովկասում ուռճացող հայ բուրժուազիան իր կապիտալը շրջանառության մեջ դնելու համար վորոնում էր շուկա և նա ամենանպատակահարմարն էր համարում օգտագործել, վաղուց ի վեր Թյուրքիայի մի մասը կազմող հայաշատ վայրերից «պատմական Հայաստանը», պոկել Թյուրքիայից, կազմակերպել սեփական պետություն: Այդ նպատակով էլ կազմակերպվել էյին նրա քաղաքական կուսակցությունները՝ հանձին Դաշնակցության և Հնչակյան կուսակցությունների: Այդ նպատակով էլ Անդրկովկասից հայդուկային խմբեր

էյին ուղարկվում, վորոնք կռվի էյին բռնվում թյուրքական կանոնավոր զորքի, կամ թյուրք ու քյուրդ ժողովրդի հետ և պատճառ հանդիսանում անգեն, խաղաղ թյուրքահայ աշխատավորության բնաջնջմանը:

Հայ-թրքական հարաբերությունների սրման և համիդյան կոտորածների դրդապատճառ հանդիսանում էր նաև այն, վոր հայ բուրժուազիան իր դաշնակ և հնչակ մարտական կուսակցությունները միասին վերցրած, ուղղակի խաղալիք էր դարձել յեվրոպական իմպերիալիստների ձեռքին: Իմպերիալիստների համար յերբ անհրաժեշտ էր դիպլոմատական զանազան շախմատային խաղերով վորոշ ճնշում գործադրել համիդյան Թյուրքիայի վրա, իսկույն հրապարակ էյին քաշում «հայկական հարցը» և առհասարակ Թյուրքիայում ազգային փոքրամասնություն կազմող ժողովուրդների «ազգային հարցերը»: Իսկ մեր տնարույս նացիոնալիստների, հասկացիր՝ դաշնակ, հնչակ կուսակցությունների համար, այդպիսի մի առիթ էր պետք, վորպեսզի, այդ խաբուսիկ խաղերից հրապուրված, «հայ ազգի փրկության ժամը հասած» համարեյին, զինված ապստամբության ավանտյուրիստական յելույթներ կազմակերպեյին և հենց իրենց պատճառով արդեն ծայր առած համիդյան կոտորածների յաթաղանն էլ ավելի բորբոքեյին:

Այդ յելույթները բազմաթիվ էյին և նրանք առիթ էյին հանդիսանում համիդյան կառավարության վաղեմի ծրագրի իրագործմանը՝ Տաճկահայաստանը թողնել առանց հայերի՝ դիպլոմատական խաղերի առարկա հանդիսացող այդ հանգույցը ես լուծելու համար:

Այսպիսով, ուրեմն՝ մի կողմից Անդրկովկասի հայ բուրժուազիայի անմիջական շահերը պաշտպանող և յեվրոպական դիպլոմատիայի ձեռքին խաղալիք՝ դաշնակ և հնչակ նացիոնալիստներն իրենց շովինիզմով, իսկ մյուս կողմից՝ թյուրք շովինիստները հանգարությունը կորցրած, իրենց անասնական ատելության թույնն էյին սրսկում խաղաղ և հաշտ ապրող յերկու դրացի ժողովուրդների աշխատավորության մեջ, վորոնք բաժանելու վոչինչ չունեյին և հավասար չափով հարստահարվում էյին համիդյան միահեծանության կողմից: Իսկ մեջտեղ շահողն իհարկե, համիդյան կառավարությունն էր և հայ բուրժուազիայի մրցակից թյուրք ունևոր դասակարգը:

Յեվ այսպես, մի կողմից՝ աշխատանքի խիստ ծանր, անհրապույր պայմանները, իսկ մյուս կողմից՝ համիդյան կոտորածները, հալածանքը վոչ միայն դեպի հայերը, այլ նաև դեպի թյուրք աշխատավորությունը, այլ և հայ-թրքական հարաբերությունների ծայր աստիճանի լարումը ստեղծել էյին մի այնպիսի մթնոլորտ, վորտեղ շնչելն անկարելի յեր դառել:

Ահա այդ պատճառով էլ իմ մեջ միտք հղացավ փախչել Տաճկաստանից, ապաստանել Կովկասում, հետևելով ավագ յեղբորս՝ Յերվանդի օրինակին, ինչ գնով էլ վոր լիներ, ինչպիսի սպառնալիքներ էլ վոր կանգնած լինեյին փախուստի ճանապարհին:

ՓԱԽՈՒՍՏ

Փախչել գաղտնի և սահմանն անցնել՝ հեշտ բան չէր և կապված էր խիստ մեծ ռիսկի հետ: Փախուստի չափազանց վտանգավորության մասին մեզ շատ էյին պատմել, և գիտեյինք, վոր փախչողներից շատերը անհետ կորել և կամ սպանվել էյին: Ճանապարհին կամ սահմանում այդպիսիներին առանց վորևե պատժի սպանել կարող էյին վոչ միայն սահմանապահ զորքերը, այլ նաև բոլորովին պատահական ճանապարհորդներ: Բայց համիդյան Թյուրքիայի դժոխքից ազատվելու համար չարժեր կանգ առնել նման ռիսկի առաջ:

Մեր փախուստը տեղի ունեցավ 1907 թվի օգոստոսի վերջերին, խիստ գաղտնի, գյուղ գնալու պատրվակով: Այդ պատճառով էլ վոչ վոքի հետ չկարողացանք տեսնվել վերջին րոպեյին: Չէյինք կարող տեսնվել նաև՝ մեզ չմատնելու համար: Յես կյանքումս առաջին անգամ Երզերումից դուրս պիտի գայի դեպի հեռավոր, անհայտ յերկիր, ուստի ինձ համարում էյի կարծես թե ինչ վոր խոշոր մի բան կորցրած, վորբացած: Արտասվալից աչքերով, լռելյան հրաժեշտ էյի տալիս այն բոլորին, վորոնք հարազատ էյին և մանկությունից կապված էյին ինձ հետ բազմաթիվ և գունեղ հուշերով: Մնաք բարով, սիրելի ընկերներ և ազգականներ, իմ սիրած լեռներ ու ձորեր, ուր շնչասպառ մագլցել և թավալգլոր իջել եմ բյուրավոր անգամ՝ հրճվանքից ճչալով,— իմ սիրելի գետեր, վորոնց մեջ խայտացող ձկների վորսով հափշտակված՝ քանի-քանի անգամ կյանքս խեղդվելու վտանգին եմ յենթարկել: Գնում, փախչում եմ վոչ թե ձեզանից, այլ մարդ արարածից, նրա բռնակալներից, ապրելու խիստ անհրապույր, աննախանձելի պայմաններից, գնում եմ ինձ համար բոլորովին անծանոթ վայրեր՝ «բախտ վորոնելու»:

Ահա այդպիսի մտորումներով, յեղբորս հետ դուրս յեկա Երզերումից՝ ինձ մատնելու արկածների, պատահականությունների քմահաճույքին, չունենալով վոչ մի գրավական ապահով տեղ հասնելու:

Երզերումից մինչև սահմանը հասնելու համար մեզ անհրաժեշտ էր վոտքով անցնել յերեք-չորս որվա ճանապարհ, և այն էլ վոչ թե սովորական կանոնավոր ճանապարհով, այլ լեռներով, կածաններով և առհասարակ այնպիսի տեղերով, վորտեղ մարդ արարածին հանդիպելն անկարելի յեր և կամ կարելի յեր պատահել խիստ սակավ: Փախչելու նպատակով յես, ավագ յեղբայրս և մի այլ ծանոթ, քաղաքի գերեզմանոցում մի փոքր խորհրդակցությունից հետո, գնացինք, ուտելու պաշար և այլ պիտույքներ գնեցինք և զգուշությամբ մեկնեցինք քաղաքից՝ մեր ճանապարհն ուղղելով դեպի Լուսավորչի վանք կոչված վայրի ձորը: Բայց, վորպեսզի մարդկանց չպատահեյինք, գնացինք լեռնային

վտանգավոր ճանապարհով, վորտեղ սովորական յերևույթ էր ճանապարհորդների «անհետացումը», նրանց սպանությունը չարագործների ձեռքով: Յոթը կիլոմետր ճանապարհ կտրելով, հասանք վանքի ձորն ու նշանակված տեղում թաքնվեցինք ժայռերի մեջ:

Մեզ մոտ պիտի գային նաև ուրիշ ուղեկիցներ: Բայց քանի՛ հոգի և ովքե՛ր էյին լինելու նրանք՝ մենք նախորոք չգիտեյինք և իմանալ չէյինք կարող: Այդպես էր պահանջում գաղտնապահությունը: Այլապես, կարող էյինք վտանգել մեր գործը: Յերեկոյան մթին հետզհետե մեզ մոտ յեկան ուրիշ իննը հոգի ևս և մենք դառանք տասներկու հոգի:

Մինչև սուրհանդակի գալը ծանոթացանք իրար հետ, վոգևորեցինք իրար, վոր միմյանց ոգնելու յենք ամեն ինչով: Խոսակցությունից պարզվեց, վոր մեզնից վոչ վոք զինված չեր:

— Լավ է, վոր զինված չենք: Ով գիտե, ինչեր կարող է պատահել մեզ հետ, յեթե մեր փախուստը անհաջողությամբ վերջանա և բռնվենք. կարող են մեզ ֆեդայիների տեղ դնել և կամ ավազակներ համարել, և այն ժամանակ եշի նահատակ կլինենք,— ասաց մեր ուղեկիցներից մեկը:

— Իսկ յեթե ինքնապաշտպանության կարիք լինի՞, ի՞նչ կարող ենք անել առանց զենքի,— հարցրեց մյուսը:

— Իզուր մի վիճեք, տղերք, արդեն ուշ է, շուտով վեկիլը (սուրհանդակ) կգա: Ավելի լավ է մտածենք, թե ինչո՞ւ ուշացավ նա,— ավելացրեց յերրորդ ուղեկիցը:

Դրանով էլ հարցը սպառված համարվեց: Ճիշտ է, մենք զենք չունեյինք, բայց հաջող ճանապարհորդելու համար համարյա թե բոլորս էլ ունեյինք լավ չաեր, ցուպեր և ճանապարհորդական պարկեր՝ անհրաժեշտ պաշարով լի:

Մեր վեկեղը պիտի գար գիշերը և լուցկու լույսով ազդանշան տար հեռվից, վորպեսզի հանդիպեյինք իրար և ճանապարհ ընկնեյինք:

Մեր վեկեղն ամեն մի ճանապարհորդից պիտի ստանար մեկական ոսկի վոսկի դրամ, վորի մի մասը ստացել էր արդեն, վորպես կանխավճար, իսկ մնացած մասը կստանար այն ժամանակ, յեթե մեր ապահով տեղ հասնելու մասին Երզերում տաներ վորևե նշան: Թե ինչ էր լինելու այդ նշանը՝ սուրհանդակն իմանալ չէր կարող: Նրան ինչ վոր տային փախչողները՝ նա պարտավոր էր տանել: Մենք պայմանավորվել էյինք սուրհանդակի հետ Երզերում ուղարկելու յերկու նշան: Մեկը ապահով տեղ հասնելու մասին, իսկ մյուսը՝ տեղ չհասնելու և կամ անապահովության մասին: Նամակ գրելը, իհարկե, խիստ վտանգավոր բան էր, ուստի մեր նշանները պետք է լինեյին յերկու տեսակ կաճակներ:

Սուրհանդակը յեկավ բավական ուշ: Այդ մեզ չափազանց անհանգստացրեց: Ուղեկիցներս արդեն սկսել էյին [illegible] և հազար ու

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР
3521-82

մի յենթադրություն անել, իսկ յերկուսն ուղղակի հայհոյում եյին մեր վելեղին:

— Սուլթան Համիդ, յես քո այխինչը, այնինչը, վոր դու մեզ ես օրը գցեցիր...

— Տո, մի հայհոյի, ապա թե վոչ լոող կլինի և Պասարմաջյանի օրին կնկնես... (Պասարմաջյան ազգանունով հարբեցող մի մարդ կար Երզնկումում, վորին, Համիդին հայհոյելու համար, մի վոսկի տուգանել եյին: Նա վճռից հետո դատարանում սեղանի վրա դրել եր 3 վոսկի և 3 անգամ կրկնել եր հայհոյանքը):

— Տո, մի սաղ լինի, թե ինչո՞ւ պիտի ընկնենք լեռներ ու ձորեր և սպասենք, վոր գան ու բռնեն և վարվեն մեզ հետ այնպես, ինչպես քեֆներն է ուզում:

— Այդ սրիկան, սուրհանդակը, մեզ մատնելու յե կառավարության ձեռքը, այ, կտեսնեք աղերք:

— Ո՞ւր գնանք, ո՞ւր փախչենք և ինչպե՞ս: Զենք էլ չունենք, վոր նեղ տեղը վերջ տանք մեր կյանքին:

Յեվ նման բացականչություններ, Համիդի կառավարության մեծ ու փոքր ներկայացուցիչների հասցեյին ուղղված հիշոցները չափ ու սահման չունեյին: Իսկ յես ու ավագ յեղբայրս, յենթադրելով, թե դեռևս ճանապարհ չնկած մեզ սպառնում է ձերբակալվելու վտանգը՝ լուռ, համարյա թե պապանձված, սպասում եյինք, թե ինչով է վերջանալու այդ կոմեդիան: Մենք, իհարկե, կասկածելու ամեն հիմք ունեյինք, վորովհետև շատ եր պատահել, վոր վելեղները փախչողներից ստացել եյին կանխավճարներ և բոլորին մատնել կառավարության ձեռքը:

Տեսնելով մեր ուղեկիցների ջղայնությունը՝ նրանցից մեկը կանգնեց և համոզեցուցիչ կերպով հայտարարեց.—

— Տղերք, մեր վելեղը շատ մարդ է տարել և ապահով տեղ հասցրել: Նա դժվար թե այդպիսի ստորություն անի: Մի՛ ջղայնանաք, մի քիչ էլ սպասենք, տեսնենք: Յես չեմ կարող նրա վրա կասկածել:

Նրա խոսքերը մի քիչ հանգստացրին բոլորիս և տիրեց կարճատև լռություն: Յեվ ահա, հանկարծ մեր թաքստոցի հակառակ կողմը, ձորի մյուս կողմի լեռան վրա յերևաց խիստ աղոտ մի կրակ: Քիչ հետո յերկրորդ և ապա յերրորդ անգամ: Ազդանշան տվողը մեր սուրհանդակն եր, վորի հետ այդպես էլ պայմանավորվել եյինք: Մենք թվով տասներկու հոգի, շարժվեցինք դեպի նա, հանդիպեցինք իրար և խուլուն սուրհանդակի կողմից տուգման յենթարկվելուց հետո՝ շարժվեցինք դեպի առաջ: Հանդիպելով մեզ՝ վելեղն ասաց.—

— Տո անաշեններ, յես ձեզ կորցրել եյի և փնտրում եյի այլ տեղ: Նույնիսկ սկսեցի անհանգստանալ և կասկածել, թե գուցե ձեզ հետևողներ յեղան, բռնեցին:

Այնուհետև նա մեզ մի կարճատև հրահանգ տվեց, թե ինչպես պիտի պահել իրեն ամեն մի ուղեկից:

— Ճանապարհին բարձր ձայնով խոսելն ու հազալը արգելում եմ ընդմիշտ: Լուռ, առանց հետ մնալու ընկերներից՝ պետք է գնանք բոլորս միասին: Յեթե ասեմ վազել՝ առանց առարկության պիտի հետևել ինձ, վորչափ էլ յերկար տևի այդ վազքը: Յեթե զենք ունեք, ապա մինչև հրաման չտամ՝ կրակել չի կարելի: Յես էլ ունեմ ահավասիկ մի ժանգոտած «տապանչա», բայց նրա ուժով չե, վոր հաջողությամբ պիտի ավարտենք մեր ճանապարհը, այլ ինքը, բարձրյալն ալլահը պետք է կամենա այդ, և մեր ճարպկությամբ պիտի հասնենք տեղ: Դեհ, տղերք, պինդ կացեք, շարժվում ենք առաջ,— ասավ նա և ընկավ առաջ, վորին և հետևեցինք բոլորս:

Գնում եյինք միայն գիշերները, իսկ ցերեկները թաքնվում եյինք վորևե լեռան գլխին, քարայրի կամ հոսող ջրերից առաջացած խոռոչների մեջ, ժայռերի արանքում և առահասարակ այն տեղերում, վորտեղ մարդու պատահելու վտանգ չկար: Ամբողջ ցերեկն այդպիսի տեղերում թաքնվում եյինք, բոլորովին անշարժ ընկած հոգնածությունից և կամ վախենում եյինք, թե մեր շարժումը կարող է վորևե բարձունքից նկատվել անցորդների կողմից ու վտանգել մեր գոյությունը:

Չափազանց հոգնեցուցիչ եր այդ ճանապարհորդությունը: Շատ անգամ մի վորևե վտանգավոր տեղից շուտով անցնելու համար ստիպված եյինք վազել մի ամբողջ ժամ և կամ ավելի, մագլցել ժայռերն ի վեր, բարձրանալ խիստ անմերձենալի թեք սարեր, յերբեմն թավալգլոր նետվել ձորը, մտնել ճահիճը, անցնել խոր ջրերով, նույնիսկ կյանքը յենթարկելով խեղդվելու վտանգին: Քիչ չեր պատահում, վոր մեր վազքից արթնանում եյին մոտակա գյուղի շները, վորոնք սոսկալի վայնասուն եյին բարձրացնում և այս անգամ մեզ հարկադրում արդեն վոչ թե վազել, այլ շնչասպառ թռչել, առանց նայելու, թե ուր եյինք դնում վոտքներս:

Մեր վելեղը հաճախ «ս՛ս՛ս՛» անելով՝ մեզ կանգնեցնում եր, ականջը դնում գետնին ու նման ոլինբազություններով մեզ զարմանք պատճառում իր «փորձվածությամբ» ու «խելոքությամբ»: Մենք մեր սուրհանդակ Մուստաֆա աղային գովաբանում եյինք մինչև նրա ինքնասիրությունը շոշափելու աստիճան: Դա նրան, ինչպես յերևում եր, շատ հաճելի յեր:

Մի անգամ, յերբ յերկար ժամանակ վազելուց ուղղակի ուժասպառ եյինք յեղել, հայտնեցինք նրան, վոր վոչ միայն վազելու, այլ նույնիսկ քայլելու ընդունակությունը կորցրել ենք: Նա ուրիշ յելք չգտնելով, մեզ հայտարարեց.

— Հանգստանալ կարող ենք միայն մի տեղ, այս մոտակա յայլա-

յում, բայց նախազգուշացնում եմ, որ նա ավազակաբույն է, ուստի պետք է լինել չափազանց զգույշ:

Մենք այդ յայլան մտանք հետախուզողի զգուշությամբ և մոտեցանք հենց առաջին պատահած մի հյուղի: Մտնելով ներս՝ նկատեցինք, որ հանգչող կրակ կար և բուրում էր խորոված մսի հոտ:

— Սատանան տանի, ի՛նչ քաղցր է բուրում խորովածի հոտը: Հետաքրքրական է, թե ովքե՞ր են այստեղ ընթրել,— ասաց ուղեկիցներից մեկը:

— Ո՞վ պիտի լինի. յես ասացի, որ ավազակները կարող են այս պահին այստեղ ընթրել: Յես ձեզ ասել եյի բարձր չխոսել, դուք սկսում եք մոռանալ, որ այստեղ բարձր խոսելը մահացու չափով վտանգավոր է,— ասաց սուրհանդակը:

Ո՜ֆ, ինչ լավ բան է հանգստությունը. յերանի նրանց, որ այս րոպեյիս անկողնում հանգիստ ննջում են,— ասաց մի այլ ուղեկից:

— Լավ, լավ, բավական է հանգստանանք: Լավ չէ, որ սկսեցիք քնելու մասին խոսել և ներշնչում եք ձեզ նման բաներ: Վեր կացեք, շարժվենք առաջ, մի՛ մոռանաք, որ այստեղ վտանգավոր է յերկար մնալը: Մի քիչ էլ գնանք, արդեն կլուսանա, և այն ժամանակ տաքուկ արևի ճառագայթների տակ, սարի գլխին վո՛րչափ ուզեք հանգստացեք ու քնեք ամբողջ ցերեկը՝ նույնչափ քաղցր, վորչափ կատուները տաք թոնրի գլխին,— ասաց մեր վելեդն ու վոտքի յելավ, վորին խուլ հետևեցինք նաև մենք:

Վոտքի թռանք մեքենաբար բոլորս էլ և զգուշությամբ վելեդի հետևից դուրս յելանք փողոց: Հանկարծ վելեդը «ս՛ս՛ս՛» անելով, կանգնեց և կիսախավարի մեջ ականջը դրեց գետնին ու սկսեց նայել առաջ՝ գետնի վրա փռված: Մենք նույնպես կրկնեցինք նրա արածը՝ կռահելու համար, թե ինչ էր պատահել, ինչ էր նկատել նա: Հաստատվեց վելեդի յենթադրությունը: Նկատելի յէր, որ հրացաններով զինված ձիավորներ եյին հեռացել յայլայից և, ըստ յերևույթին, ընթրողները նրանք պիտի լինեյին: Մեր ուղեկիցներից մեկը, որ ամբողջ ճանապարհին տեղի-անտեղի խուճապ էր սարքում, լսելով ավազակների մասին՝ նորից գլուխը կորցրած, սարսափից մի ճիչ արձակեց, բայց նրա մոտի ընկերներն ուղղակի բռնեցին նրա բերանը և լռեցրին: Վելեդը մոտեցավ նրան և ժանգոտած ատրճանակը նրան ցույց տալով, ավելացրեց շշնջալով.—

— Տարանչայից քըլլեյիդ մի գնդակ կհասցնեմ, և տեղնուտեղը կմնաս ճանապարհին: Ի՞նչ ես անում, հո յերեխա չե՞ս, վերջապես չե՞ս կարող հասկանալ, որ այստեղի քարերն անգամ ականջներ ունեն, մեզ կլսեն և այն ժամանակ ամեն ինչ մեզ համար վերջացած պետք է համարել...

Ինչպես մենք բոլորս, այնպես էլ մեր վելեդ Մուստաֆա աղան, պակաս չեյինք այլայլվել, բայց բոլորս էլ աշխատում եյինք զսպել մեզ: Այդ բավական չէր, վրա յեր հասնում նաև լուսաբացը, ուստի պետք էր մտածել ցերեկվա «օթեվանի» մասին:

Մենք արդեն հասել եյինք Ղարակյուղեկ գյուղին և շուտով պետք էր անցնել բավական վտանգավոր մի տեղով ու բարձրանալ ինչ վոր քարայր, վորտեղ մնալու եյինք մինչև յերեկո: Ճանապարհը բարձր լեռան լանջին մի ավազոտ կածան էր, և վոտք դնելիս ավազի հետ կարելի յէր սահել ու ընկնել ձորը, վորի միջով հոսում էր Ղարակյուղեկ գետը: Կանգ առանք: Վոչ վոք ռիսկ չէր անում շարժվել առաջ: Պետք էր շտապել, որ դեռևս չլուսացած՝ հասնեյինք քարանձավը: Սուրհանդակը գտավ անցնելու հնարը: Նա մեզ մի առ մի, մեջքներիս թոկ կապած ձեռներիս յերկու մահակ տված, ավազների մեջ խրել տալով անցկացրեց ապահով կերպով: Այնուհետև մենք մագլցելով բարձրացանք մեր օթեվան քարանձավը և պառկեցինք քնելու, առանձնապես վորևէ տեղից նկատելի չլինելու համար:

Քարայրը շատ խորը չէր և ձորի մյուս կողմից ուշադիր նայողի մեջ կարող էր կասկած հարուցվել, թե ինչ վոր կենդանի արարածներ կային այնտեղ: Առավոտյան վաղ ներքևից սկսվեց թորթումցիների յերթը, վորոնք էշերով ու ձիերով մրգեղեն եյին տանում Երզերում վաճառելու: Նրանց խոսակցության ձայնը հասնում էր մեզ: Ուղեկիցներիս ախորժակը խիստ գրգռված էր: Սկսեցին կատակներ անել:

— Տղերք, մի քիչ մրգեղեն գնենք, ով է ցանկանում գնելու գնալ,—հարցրեց ուղեկիցներից մեկը:

— Տո մի տեղդ նստիր, թե չէ շան սատակ կանեմ քեզ: Մոռացա՞ր, վոր յայլայում ավազակների մասին լսելիս լեղիդ պատռվեց:

— Բայց, Փայլակ, մոռացանք ջուր վերցնել: Ինչ լավ կլիներ մի ջուր լիներ խմեյինք,—ասացի յեղբորս, մոռանալով, վոր նրա մոտ ջուր կար:

— Իմ մոտ ջուր կա, ահավասիկ խմիր և՛ պառկիր քնիր, տեսնենք ինչ է լինելու այս ճանապարհորդության վերջը: Ի՞նչ ես կարծում, Շավարշ, քաղաքում մեր փախուստի լուրն արդեն տարածվա՞ծ կլինի, թե վոչ:

— Թող իմանան, ի՞նչ կարող են անել և վորտեղ պիտի գտնեն մեզ այս անծանոթ վայրերում: Յեվ վերջապես, խոմ կառավարության [illegible]ց տալու չե՞ն: Բայց յես չեյի կարծում թե այսչափ դժվարություններ պիտի կրեյինք փախչելու ժամանակ: Դեռևս հարց է առաջանում, թե ապահով տեղ կհասնե՞նք... խոսքս չվերջացրած աչքերս սկսեցին փակվել:

Կեսօրին յեղբայրս հրեց ինձ, վոր արթնանամ և զգաստ լինեմ, վորովհետև ձորի հակառակ կողմի լեռան վրա բարձրացել եյին յերկու

գյուղացի, 10–12 տարեկան մի պատանի, և սկսել էին վարել իրենց աշնանացան արտը: Պատանին խիստ հաճախ կանգ էր առնում և ուշադիր կերպով դիտում էր մեր քարայրը: Մեր վելեդն այդ նկատելով՝ զգաստացրեց մեզ:

— Սո՛ւս, զգույշ, տեղներիցդ չշարժվեք: Այդ շան լակոտը մեզ կարող է նկատել: Տեսեք ինչ կասկածելի նայում է այս կողմը: Մի այստեղ մոտ լինեյիր և մենակ՝ կտեսնեյիր, թե ինչպես վիզդ վոլորեյինք ու գետը նետեյինք: Կպեք գետնին և ավելի լավ կանեք, յեթե բոլորովին չխոսեք:

Մենք առանց վելեդի խոսքերի էլ արդեն լռել, քարացել եյինք և, մի զինվորական չինելի տակ ծածկված՝ հայացքներս հառել եյինք դեպի այդ տղան: Մեզ անհանգստացնում էր նաև այն, վոր բացի վելեդից, վոչ վոք զինված չեր: Բայց նրա «տապանչան» էլ իսկական մանկական խաղալիք էր և ժանգոտած, ուստի յեթե մի բան պատահեր՝ մեզ պիտի կոտորեյին վոչխարների նման:

Վերջապես մթնեց, մենք զգուշությամբ իջանք ձորը և ջրից անցնելով, բարձրացանք այնտեղ, վորտեղ ցերեկով վարում եյին գյուղացիները: Այնտեղից յերևում էր մեր քարայրը և նրա վրա բարձրացող հսկայական լեռը, վորի գագաթին փայլփլում եյին զորանոցի լույսերը: Վելեդի ասելով, այնտեղ բավական խոշոր զորանոց կար և բավականաչափ զորք: Մենք սկսեցինք նրա հետ վիճել, թե՝

— Յեթե միշտ այդպիսի վտանգավոր տեղերում մեզ պահելու լինես՝ ապա սահմանն անցնելը մեզ համար անկարելի կլինի, մեզ կորըստյան կմատնես ամենայն դյուրությամբ:

— Դեվեյլինեն տոստ ոլանըն ղափուսի յուկսեք կերեք (ուղտի հետ բարեկամացողը պետք է բարձր դուռ ունենա): Հապա ի՞նչ եյիք կարծում, հե՞շտ բան է փախչել գիշերով և սահմանն անցնել: Այդպիսի բաներ դեռևս շատ կարող են պատահել, և մի մոռանաք, վոր լուսաբացը վրա յե հասնում, այդ պատճառով էլ առաջին մոտակա ոթևանն այստեղ ընտրեցինք: Յեթե ավելի ապահով տեղի մասին մտածեյինք, ավելի ժամանակ պիտի կորցնեյինք, կլուսանար և մեզ իսկույն կբռնեյին: Մի մոռանաք, վոր մենք անցել ենք ավելի շատ վտանգավոր տեղերով, բայց յես չասացի, վորպեսզի ինձ հետ չվիճեյիք և իզուր ժամանակ խլեյիք: Վոչինչ, այդ անխուսափելի բան է, յեթե մի բան պատահի, չե՞ վոր յես էլ ձեզ հետ եմ և կտուժեմ ավելի, քան դուք:

Նրա այդ խոսքերը մեր ուղեկիցներից մի քանիսին ուղղակի հուսահատեցրել եյին և խիստ հոռետես դարձրել մեր առաջիկա հաջողության նկատմամբ: Իսկապես էլ դեռևս յերկու գիշերվա ճամբա պիտի կտրեյինք, բայց արդեն այնչափ արկածներ եյինք տեսել, վոր հոգնել, հուսահատվել եյինք:

— Յես դրա այսինչ, այնինչը, դա անպատճառ մեր գլուխն ուտելու յե,—ասում էր մեր պանիկյոր ուղեկիցը:

— Լռիր և ճանապարհդ շարունակիր և ուրիշներին էլ մի՛ հուսահատեցնիր,—ասում էր մեր հաստատակամ ու ժիր ուղեկիցը:

Այդ գիշեր համարյա թե ամբողջովին անցկացրինք վազելով, վորովհետև մոտենում եյինք սահմանին: Շատ հաճախ պիտի անցնեյինք գյուղերի մոտով և կամ հարկադրված եյինք կտրել լեռնային այնպիսի ճանապարհներ, վորտեղ անցորդներն անպակաս եյին:

Յերբ բարձրացանք մի բլուր և պետք է անցնեյինք մի փոքրիկ լեռնաշղթայով, անսպասելի կերպով մեզ դիմավորեցին փայտով բեռնավորված սայլեր: Վելեդը հրամայեց փռվել գետնի վրա մինչև սայլերի անցնելը: Մենք նրան հպատակվեցինք անտրտունջ, մինչև սայլերը ճռճռալով ու դանդաղությամբ անցան և անհետացան:

Պատահեցինք կաթնատու անասունների մի հոտի և նրանց շներին, վորոնք բավական յերկար մեզ հալածեցին և այդ պատճառով էլ, ըստ յերևույթին, մի թեթև հրացանաձգություն սկսվեց: Շատ հավանական է, վոր հովիվները մեզ գողերի տեղ դրին: Այդ գիշեր չափազանց շատ վազելուց ուժասպառ յեղանք: Լուսադեմին սուրհանդակը հայտնեց մեզ, թե այդ գիշերը զանազան սպասումների պատճառով անցավ ապարդյուն, ուստի սահմանն անցնելը թողնվում է հաջորդ գիշերվան: Բացի դրանից, պետք էր մտածել ցերեկվա թաքստոցի մասին, վորովհետև վրա յեր հասնում լուսաբացը: Այսպիսի պարագայում ընտրում եյինք չարիքներից փոքրագույնը: Ուստի այդ պահին ևս չունենալով ավելի հարմար տեղ, բարձրացանք մոտակա մի բարձր լեռան գագաթը՝ ժայռերի մեջ թաքնվելու, ուտելու և հանգստանալու մինչև գիշեր:

Կեսօրին լսվեցին ինչ վոր վոտնաձայներ: Մենք ցնցված՝ բոլորս միասին իսկույն վոտքի յելանք, մոռանալով մի րոպե, թե կարող եյին հեռվից նկատել մեզ այդ մերկ սարի կատարին: Սուրհանդակը պահանջեց, վոր մենք իսկույն պառկենք, իսկ ինքը առաջ գնաց՝ պարզելու բանի եյությունը: Նա միայն մի մարդու յեր նկատել, բայց կարծում էր, թե գալիս են դեպի մեզ մեկից ավելի մարդիկ՝ ուստի հրամայեց.—

— Պառկել անշարժ, մինչև յեկողների մոտենալը, մինչև պարզվի ովքեր են և քանի հոգի:

— Ըստ յերևույթին, այդ սրիկաները հեռվից նկատել են և զորքով գալիս են մեզ բռնելու,—ասաց մեր պանիկյոր ուղեկիցը:

— Ո՞վ գիտե, գուցե մեզ նման մարդիկ են, փնտրում են թաքնվելու վորևէ վայր,—ասաց մյուս ուղեկիցը:

— Իսկ յեթե ավազակներ լինե՞ն...հարցրեց պանիկյորը:

Նման սպասողական դրությամբ քննարկում եյինք ստեղծված դրու-

թյունը և սպասեցինք յերկար, գուցե և շատ քիչ, բայց մեզ թվում եր, թե սպասեցինք յերկար:

Վերջապես, ժայռի գլխին յերևաց մի հովիվ, վորը մահակը ձեռքին արածեցնում եր յեզները և քթի տակ մրմռալով յերգում եր: Մենք սուտ քուն մտած և ամբողջովին լսողություն դարձած՝ սպասում եյինք, թե ինչով ե վերջանալու այդ տրագիկոմեդիան: Հովիվն անսպասելի կերպով նկատելով մեզ՝ մի պահ ցնցվեց, բայց այնպես ձևացրեց թե մեզ չի նկատել և յերեսը շուռ տալով՝ զգուշությամբ քշեց յեզներն ու հեռացավ:

— Այդ հիմարը, շատ հավանական ե, վոր մեզ ավազակների տեղ դրեց,—ասաց մեր վեկիլը:

Հովիվը գնաց, բայց մեր հանգիստը խռոված էլ մնաց, վորովհետև նա կարող եր հայտնել լեռան շրջապատի գյուղերին կամ վոստիկանությանն ու ամեն ինչ վերջացած կլիներ մեզ համար: Ո՞ւր փախչեյինք այդ անծանոթ վայրում և ի՞նչպես փախչեյինք այդ մերկ լեռան վրայից, վոր մեզ նկատողներ չլինեյին: Այդպիսի տարակուսանքով մնացինք մինչև յերեկո, և ահա նորից ձայներ: Սուրհանդակը նորից գնաց և վերադառնալով՝ հայտնեց թե յեկողները լեռան շրջապատի գյուղացիներից են և գիտեն, թե մենք ովքեր ենք ու խոստանում են մեզ չմատնել, յեթե իրենց տանք յերեք հատ թյուրքական վոսկի դրամ «խաշվե խմելու համար»...

— Քա՞նի հոգի յեն,—հարցրինք մենք:

— Յերեք հոգի, ամեն մեկին մի-մի տաճկական վոսկի, էլրա յեն «խնդրում»:

— Իրենց գրպանից չեն վճարում, այդ պատճառով էլ այդքան թանգ են «վճարելու խաշվեյի համար»: Յերեք թյուրքական վոսկի խաշվե խմելու համա՞ր,—ասաց մեր ուղեկիցներից մեկը:

— Տվե՛ք, պետք ե հավաքել ու տալ, վոր սուս լինեն գնան, ի՞նչ կարող ենք անել, մեր դրությունն այնպես ե, վոր յեթե ավելի շատ էլ «խնդրեն», ստիպված ենք վճարել,—ասացինք յես ու յեղբայրս և մեր բաժինը տվինք վեկիլին:

Մեր որինակին հետևեցին նաև մյուս ուղեկիցները, և գումարը հավաքելով՝ տվին վեկիլին, վորը մի ուղեկցի ներկայությամբ փողը նրանց հանձնեց: Գյուղացիները փողը ստացան գնացին և իրենց խոստումը ճշտությամբ կատարեցին: Այդ որը մեզ մոտ այլևս վոչ վոք չեկավ:

Մութն ընկավ, սարից ցած իջանք և պատրաստվեցինք դեպի սահմանը մեկնելու, վորն անցնելու եյինք այդ գիշեր: Այստեղ մեր սուրհանդակ Մուստաֆա աղան հայտնեց, վոր մինչև սահմանն իր փոխարեն մեզ պետք ե ուղեկցեր Քորմիլի գյուղացի Ալի աղան, վորին ներկայացրեց մեզ, ավելացնելով.—

— Յես իմ գործն ավելի լավ գիտեմ և կարիք չկա վրդովվելու: Նոր վեկիլն իմ ոգնականն ե և այս տեղերին ավելի լավ ծանոթ, քան յես: Վստահ յեղեք, վոր միանգամայն ապահով կերպով այս գիշեր կանցնեք սահմանը: Սովորաբար այս տեղերում յես իմ ճանապարհորդներին հանձնում եմ նրան, և նա տանում ե: Իսկ յես վորոշ մարդկանց հետ պետք ե խոսեմ, նախապատրաստեմ ամեն ինչ,—ասաց և հեռացավ՝ հաջողություն ցանկանալով մեզ:

Մեր դիմադրությունն այսպիսի պայմաններում վոչ մի արդյունք տալ չեր կարող, ուստի լռելյայն համաձայնեցինք:

Սովորաբար սահմանն անցնում եյին գիշերվա ժամի յերկուսից յերեքը, ուստի վեկիլի հետ մի քիչ ճամբա կտրելուց հետո, մոտենալով սահմանին՝ նստեցինք, լավ հանգստացանք, մինչև վրա հասներ վորոշյալ ժամը: Բավական յերկար ժամանակ հանգստացանք, մեր ուտելիքի վերջին մնացորդները մաքրազարդեցինք, յենթադրելով, վոր յերկրորդ անգամ պիտի ուտեյինք Ոլթիում կամ նրա մոտակա գյուղերից մեկում:

Վրա հասավ վճռական ժամը: Սուրհանդակը հրամայեց պատրաստվել, շորերն ու կոշիկները կանոնավորել, և մի քանի վոգևորիչ խոսքեր ասելուց հետո, շարժվեցինք առաջ: Նա հայտարարեց, վոր իր հրամանները հենց այստեղ ե, վոր պետք ե կատարենք՝ առանց առարկելու և ճիշտ կերպով: Նա արգելեց ամենայն խոսակցություն, վորպեսզի իր հրամաններն ավելի լսելի լինեյին: Նրա հրամանները պետք ե շշնջալով հայտնվեյին իր հետ գնացողին, և ապա իրար պետք ե հայտնեյինք, վորպեսզի խոսակցության վոչ մի ձայն չհասներ սահմանապահ զորքերին:

Դեռևս պիտի գնայինք մի կիլոմետրի չափ, վորպեսզի ընդհուպ մոտենայինք սահմանին: Դա ևս անցանք անվտանգ կերպով: Յեվ ահա, պետք եր անել ամենադժվարը—խիստ զգույշ, աննկատելիորեն, չորքոտանի, սողալով կամ ուղղակի վազելով մառերի ծայրին, յեթե դրա անհրաժեշտությունը զգացվեր: Մենք արդեն առաջացել եյինք հիսուն քայլի չափ, յերբ հանկարծ լսվեց ինչ վոր ձայն:

— Կանգ առեք... և ապա նորից՝

— Կանգ առեք...

Սուրհանդակը իր կողքինին շշնջացել եր, իսկ նրանից հետզհետե մեզ բոլորիս հասավ նրա հրամանը:

— Զորեքթաթ, մառերի ծայրին, քայլերն արագացնել:

Յերրորդ անգամ լսվեցին ձայներ, թե՝

— Յեթե կանգ չառնեք՝ կրակելու յենք,—և նրանք հայհոյեցին մեզ ամենագռեհիկ խոսքերով:

Սուրհանդակը նորից կցկտուր բառերով հայտարարեց.—

— Փրկեցեք ձեր կյանքը, մենք մատնված ենք,—իսկ ինքը անհետացավ:

Դրանից հետո սկսվեց հրացանաձգությունը, և մենք իսկույն փռվեցինք գետնին՝ գոռալով—«Դուր․ զգուշ պառկեցեք»: Կրակոցը շատ երկար չտևեց և դադարեց: Լսվեցին մոտեցող ձիերի վոտքերի դոփյուններ: Ըստ յերևույթին, շրջապատում եյին մեզ: Բայց մենք տեղերից բոլորովին չշարժվեցինք, և մեզ մոտեցողներ էլ չեղան: Ով գիտե, գուցե վախենում եյին թե կկրակենք: Այդպես մնացինք մինչև լուսաբաց, վորից հետո հեռվից գոռացին:

— Վեր բարձրացրեք ձեռքերդ ու բարձրացեք:

Հրամանը կատարեցինք իսկույն: Յերկու զինվոր մոտեցան մեզ և խուզարկեցին թեթև կերպով, համոզվելու համար թե զինված չենք արդյոք: Մեզ տարան իրենց պետի մոտ, վորը մի խիստ «սպանիչ» հայացք ձգելով մեզ վրա՝ հարցրեց.—

— Ո՞ւր եյիք փախչում, ինչո՞ւ, քանի՞ հոգի եյիք, ո՞վ եր ձեզ ուղեկցում և ո՞ւր է նա, վո՞ր ճանապարհով յեկաք:

Բոլոր հարցերին մենք պատասխանում եյինք կարճ. լակոնական ձևով, խուսափելով ավելորդ խոսքերից:

Հարցաքննող օֆիցերը մեզ ասաց.—

— Տո, դյավուրներ, դուք ֆեդայի դառնալու յեք գնում, տո մինչև որս չկարողացա՞ք համոզվել, վոր ամեն մի ֆեդայու դեմ մի քանի հազար ասկյար ունենք: Տո դուք չհամոզվեցի՞ք, վոր ամեն մի վիրավորված թյուրքի փոխարեն հազարավոր հայեր կվոչնչացնենք:

— Ձերդ գերազանցություն, մենք անզեն աշխատավոր մարդիկ ենք և գնում ենք աշխատելու: Մենք փախչում եյինք, վորովհետև որինական ճանապարհով արգելում եք գնալ՝ ապրելու միջոց հայթայթելու:

Օֆիցերը մի զննական հայացք նետեց մեզ վրա և մի փոքր լռությունից հետո, ըստ յերևույթին, համոզվեց, վոր մենք «ֆեդայիններին» բոլորովին էլ նման չեյինք, հրամայեց մեզ տանել մոտակա սահմանամերձ Նարիման կոչված գյուղաքաղաքը: Նա ստորագրություն առավ մեզնից՝ փախչելու փորձ չանել, և խոստացավ մեզ ձեռք չտալ ու հրամայեց զինվորներին տանել մեզ:

Մեզ տարան Նարիման, վորտեղ մի քանի որ պահելուց հետո մի թեթև հարցաքննություն արին և ուղարկեցին Երզրում: Այնտեղ մեզ պահեցին համարյա սոված: Մեզ կերակրում եյին բանտարկված թյուրք գյուղացիները:

Երզրումում մենք նստեցինք ընդամենը չորս ամիս և ազատվեցինք հենց այն որերին, յերբ թյուրք ազգաբնակչությունը զանազան բունտեր սկսեց սուլթան Համիդի կառավարության դեմ:

ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԻԴՅԱՆ ՌԵԺԻՄԻ ԴԵՄ

Այդ խռովությունների կամ, ավելի ճիշտ՝ ապստամբությունների դրդապատճառը համիդյան կառավարության անծայր հարստահարություններն ու բռնություններն եյին, վորոնք գործադրվում եյին վոչ միայն ազգային փոքրամասնությունների, այլև թյուրք աշխատավոր մասսայի դեմ: Այս անգամ խռովությունների անմիջական առիթը նոր նշանակված «չախսի վերգին» (անհատական տուրք) եր: Բայց ծայր աստիճան շահագործվող աշխատավորությունը նման մի առիթի յեր սպասում, վոր հանդես գար և ամբողջ կուտակված մաղձը թափեր համիդյան սատրապների գլխին: Առանց այդ տուրքի յել, ինչպես ասացինք, համիդյան միահեծանության վոտնձգությունները դառնության բաժակը լցրել եյին ամբողջովին: Աշխատավորության իրավազրկությունը, որըստորե ծանրացող տուրքերը մի անտանելի լուծ եյին դառել չքավորության ուսերին, և այս անգամ նա վճռել եր դուրս գալ փողոց, անգամ զենքը ձեռքին թելադրելու իր կամքը, ինչ գնով էլ վոր վերջանալու լիներ իր այդ ըմբոստ քայլը:

Շարժման գլուխ եյին անցել մի շարք «Յերիտասարդ թյուրքեր», վորոնք աքսորված եյին Յեվրոպական Թյուրքիայից, Անատոլիի խորքերը, վորպես քաղաքական անբարեհույս մարդիկ: Նրանք Երզրումում և Անատոլիի այլ քաղաքներում ստեղծել եյին քաղաքական հակակառավարական մի ամբողջ կազմակերպություն: Երզրումի աքսորյալ «Յերիտասարդ թյուրքերի» մեջ կար Մուստաֆա բեյ կոչվող մի կրթված անձնավորություն, վորն ուներ խոշոր հեղինակություն, և առաջնորդ-ղեկավարի համբավ եր վայելում Երզրումի ազգաբնակչության մեջ:

«Յերիտասարդ թյուրքերը», վորոնք ամեն տեղ գլխավորում եյին ժողովրդական ըմբոստությունները համիդյան կառավարության դեմ, արտահայտիչն եյին Թյուրքիայում նոր զարգացող կապիտալիստական տարրերի, վորոնք յերկրի առաջավոր մասերից թափանցում եյին ավելի հետամնաց ծայրամասերը, իրենց հետ բերելով խռովություններ համիդյան ֆեոդալական կարգերի դեմ: Բայց ըմբոստացումներն իրենց բնույթով բնորոշում եյին յերկրի տնտեսական-կուլտուրական մակարդակի զարգացման աստիճանը:

Խռովությունները սկսվեցին 1907 թվի աշնանը, յերբ գիշերվա ժամի 12-ի մոտերքը վոստիկանները Մուստաֆա բեյին ու թյուրքական կղերական մի աստիճանավորի-մուֆթիին—խուզարկեցին և ձերբակալեցին: Յեվ ահա, լսվեցին ինչվոր ոգնության աղերսող ձայներ, հառաչանքներ, աղիողորմ լաց ու կոծ: Մենք այդ ժամանակ բանտում եյինք, և այդ ձայները գալիս եյին փողոցից: Ըստ յերևույթին այդ ձայները մեզ հասնում եյին կալանավորների ընտանիքի անդամներից, վո—

րանց բնակարանները նայում էին մեր բանտի լուսամուտներին: Մենք այլևս քնել չկարողացանք և ամբողջովին լռության պատած՝ փորձում էինք վորևէ մեկնաբանություն տալ այդ անցքերին: Յեվ վորովհետև գիտեցինք, վոր այդ փողոցումն էր ապրում մուֆտին, քաղաքական աքսորյալներից շատերը և նրանց ղեկավար Մուստաֆին բեյը՝ ուստի մենք անցքերին տալիս էինք քաղաքական մեկնաբանություն:

Հաջորդ առավոտյան պարզվեց, վոր իրոք, ձերբակալվել են Մուստաֆին բեյը, մուֆտին և ուրիշները և իսկույն ուղարկվել Տրապիզոն տանող խճուղու ուղղությամբ: Շատ հավանական էր, վոր դեպի Պոլիս, մայրաքաղաք:

Ձերբակալության լուրը կայծակի արագությամբ տարածվում է քաղաքում, վորը և վոտքի յե հանում վոչ միայն «Յերիտասարդ թյուրքերի» կազմակերպության անդամներին, այլև նրանց ազդեցության տակ գտնված աշխատավորությանը, վորը մի փոքր առիթից պատրաստ էր բռնկվելու: Ձերբակալվածների համախոհները, լսելով այդ, անմիջապես հարյուր զինված ձիավորներ են ուղարկում աքսորյալներին հետ բերելու համար: Դրան զուգընթաց, Երզերումում փողոց յելավ «պալտորի չիփլաղ» (վոտաբոբիկ) անունը կրող ամբողջ աշխատավորական մասսան, վորին ամենից ավելի յեր կեղեքում համիդյան ֆեոդալական իշխանությունը: Ի դեպ, այստեղ անհրաժեշտ է ավելացնել, վոր «պալտորի չիփլաղ» անունը թյուրիմացությամբ տրվում էր ըմբոստացած աշխատավորությանը: Այդ անունը խուժանին, ռուսական բոսյակին կամ իտալական սանկյուլոտին կարելի յե տալ, բայց յերբեք Երզերումի ըմբոստացած աշխատավորությանը, վորի շարքերում կային նաև հասարակական տականքներ, վորոնք հարմար առիթ էին գտել՝ թալանով, գողությամբ զբաղվելու: Այդ անունը տրվել էր կառավարական շրջաններից, շարժումը ժողովրդի աչքում նսեմացնելու համար: Բայց վոչ մի մեքենայություն չէր ոգնում կառավարությանը: Աշխատավորությունը մի մարդու նման հանդես էր յեկել և ամենախիզախ միջոցների յեր դիմում:

Կառավարությունը, վախեցած նորանոր բարդություններից և անակնկալներից, բռնեց զիջողության ուղին՝ հեռագրելով վերադարձնել աքսորյալներին Տրապիզոնի ճանապարհից: Այդ ավելի թևավորեց ըմբոստներին, վորոնք դիմեցին ավելի համարձակ գործողությունների: Դեպքերը սկսեցին արագորեն զարգանալ: Զայրացած ամբոխը շրջապատեց Երզերումի կուսակալ Նազիմ փաշայի պալատը, իսկ նա, վերջիններիս ցրելու համար հրավիրեց զինվորներ և հրամայեց կրակել: Զինվորները մի քանի անգամ ոդում կրակեցին և ցած դրին հրացանները, հայտարարելով, վոր «չեն կարող իրենց հարազատների վրա ձեռք բարձրացնել»: Այնուհետև կատաղած ամբոխը ներս խուժեց կուսա-

կալի պալատն ու Նազիմ փաշայի վիզը կեմ (խալից թոկ) ձգած՝ քարշ տվեց ու տարավ մոտակա մի մզկիթ և պահեց վորպես պատանդ, մինչև աքսորյալների վերադարձը: Դրանից հետո նույն ամբոխը շրջապատեց վոստիկանատունը, ներս խուժեց այնտեղ սեր-քոմիսերին՝ վոստիկանապետին ձերբակալելու, բայց հանդիպեց դիմադրության: Ըմբոստները նրան և ոգնականին քարշ տվին պատշգամբ՝ զայրացած ամբոխին ցույց տալու, վոր վոստիկանապետը և նրա ոգնականը նույնպես իրենց ձեռքումն էին գտնվում: Ներքևից պահանջում էին ցած շպրտել նրանց, իսկ նրանք պատշգամբից պինդ բռնած՝ պայքարում էին սպառնացող ինքնադատաստանի դեմ: Յեվ ահա, մերկացած դաշույնների հարվածներն իջան նրանց ձեռներին և թռցրին մատները, իսկ իրենց շպրտեցին փողոցի ցեխերի մեջ: Կատաղած ամբոխն իսկույն դանակների ու մահակների հարվածներով ինքնադատաստանի յենթարկեց նրանց: Այդ կեմերը սպանվածների վզերից կապած՝ քարշ տվին փողոցի ցեխերի մեջ, հայհոյանքների և ամեն տեսակ լուտանքի տարափ տեղալով բռնակալների և նրանց մեծ ու փոքր ներկայացուցիչների հասցեյին: Այնուհետև այլանդակված դիակները դրին սայլերի վրա, դանակները կրծքերի մեջ խրած, խառերով զարդարած, ուղարկեցին իրենց ընտանիքներին, վորպես «նվեր ըմբոստացած ժողովրդից»: Այդ բոլոր գործողությունները տևեցին մինչև յերեկո: Հանգստությունը տիրեց միայն այն ժամանակ, յերբ Երզերում հասան աքսորյալներն ու նրանց ազատելու գնացած ձիավորները:

Վերադարձող ձիավորները բանտի փողոցով անցնելիս գոռացին– «Բանտարկյալ յեղբայրներ, շուտով կազատենք նաև ձեզ»..., բայց նրանք իրենց խոստումը չկատարեցին, վորովհետև վոչինչ չարին մեզ ազատելու համար: Կառավարությունը, վոր զիջողության ճանապարհն էր բռնել, կանխեց ըմբոստներին և զանազան փրկանքներով ու յերաշխավորություններով ազատեց բազմաթիվ կալանավորների:

Սակայն, համիդյան սատրապները, մի կողմից ազատելով կամ թեթևացնելով կալանավորների վիճակը և առհասարակ զանազան խաբուսիկ զիջողություններով ցանկանում էին ժամանակ շահել, վորպեսզի ուժեր հավաքեն և խփեն ըմբոստացած աշխատավորությանն ու նրան ոգտագործող «Յերիտասարդ թյուրքերին» թիկունքից: Նազիմ փաշան՝ Երզերումի կուսակալը աննկատելի կերպով տեղական զորքերը փոխարինեց իրենց վստահելի զորամասերով և դիմեց հակահարձակման: Մի գիշերվա մեջ նա կալանավորեց ժողովրդական ըմբոստությունները ղեկավարելու ընդունակ բոլոր «խռովարարներին», և դրանով էլ գլխատեց տեղական կազմակերպությունը: Այդ առթիվ վոչ մի ակտիվ բողոքող չեղավ և չէր էլ կարող լինել, վորովհետև նոր յեկած զորամասերի վրա վոչ մի վստահություն չկար: Դրանով էլ սկսվեց ըմբոստության ղեկավարների տրագեդիան:

Սկսվեցին մասսայական նոր ձերբակալություններ և աքսոր: Մուստաֆին բեյը, մուֆտին և այլն արդեն առնված էյին Համիդյան կառավարության մագիլների մեջ, վորոնք վոչ մի գազանության առաջ կանգ չէյին առնում, զոհերից իրենց վաղեմի վրեժը լուծելու համար: Գրիչն անզոր է նկարագրելու այն սոսկալի տանջանքները, վորոնց յենթարկվեցին ձերբակալվածները: Ամբողջ քաղաքը գիտեր, վոր մուֆտիի մորուքը փետտել էյին համիդյան դահիճները: Ուրիշների վոտների վրա ջարդել էյին կանդալները, վոմանք ուղղակի ծեծի տակ վերջացրել էյին իրենց կյանքը: Շատերին Երզնկումի ձմեռային սառնամանիքներին մերկացրել դուրս էյին բերել փողոց, սառը ջուր ածել վրաները և ճիպոտներով ծեծել մինչև ուշագնացություն: Վոմանց գլուխներն ածիլել ու միջատներ էյին դրել գլխներին, մետաղյա ամաններով ծածկել գլխները, կապել ձեռքերը, վորպեսզի միջատները սոսկալի տանջանքներ պատճառեյին զոհերին: Մի խոսքով, համիդյան ինկվիզիտորներն ամեն ինչ արել էյին՝ պարտված հակառակորդից վրեժ լուծելու համար: Նրանց այլասերված վառ յերևակայությունը գործել էր նորանոր տանջանքներ հնարելու և պարտված հակառակորդից վրեժ լուծելու համար:

Այդպիսի դժվարություններով ճնշվեցին Երզնկումի ժողովրդական ըմբոստացումները: Համիդյան սև ռեակցիան նորից փռեց իր փեշերն ամենուրեք: Նա իր վոտների տակ տրորում էր այն բոլոր ուժերին, վորոնք համարձակություն էյին ունենում կատարվող վոճրագործությունների դեմ բողոքի ձայն բարձրացնել:

Բայց համիդյան ֆեոդալական կարգերը հավիտյան ապրել չէյին կարող: Նրանց տապալման համար անհրաժեշտ էր, վոր ժամանակակից կապիտալիզմն էլ ավելի ուժգնորեն մուտք գործեր Թյուրքիա և իր ազատ զարգացման համար համապատասխան պետական ձև ընտրեր:

ՀԱՄԻԴՅԱՆ ԲԱՆՏԸ

Ինչպես ասացինք, մեր անհաջող փախուստը վերջացավ տասներկու փախչողներիս բանտարկությամբ: Մեզ ադատեցին համիդյան կառավարության դեմ ուղղված խռովությունների ոճերին: Մենք բանտում մնացինք ընդամենը չորս ամիս:

Երզնկումն ուներ յերկու բանտ, վորոնցից մեկում բանտարկված էյինք մենք: Մեր բանտը կրում էր «Ղափի ալթի»—դռնատակ անունը և գտնվում էր կառավարական տան՝ Սարայի փողոցում:

Այս բանտի բոլոր կամերաներում հատակը հողածածկ էր, վորի վրա փռված էյին խսիրներ՝ կալանավորների պառկելու և նստելու համար: Զկար վոչ սեղան, վոչ աթոռ և վոչ էլ ցարական բանտերին հատուկ նառեր: Կալանավորներն ուտում, խմում, քնում և նստում էյին՝ հողերի վրա փռված այդ խսիրների վրա:

Բանտի կամերաների լուսամուտները շինված էյին առաստաղին մոտիկ, վորպեսզի կանգնած մարդը հնարավորություն չունենար փողոց նայելու: Լուսամուտները ցանկապատված էյին հաստ յերկաթներով և վոչ վոքի չէյին թույլատրում բարձրանալ պատուհանը և փողոցը դիտել: Բազմաթիվ դեպքեր են յեղել, յերբ փողոցը դիտող կալանավորներին դրսի պահակը հրացանազարկ է արել ու ցած գլորել:

Մեր ընդհանուր կամերայում ապրում էյին մինչև յոթանասուն կալանավոր: Այնտեղ մենարան-խցեր կային մահապարտների և նրանց համար, վորոնց քննիչի կարգադրությամբ պետք էր առանձնացնել: Կամերան մի հսկայական սրահ էր, վորի յերկարությամբ յերկու պատերի տակ փռված խսիրների վրա ապրում էյին կալանավորները՝ թողնելով յերեք մետր տարածություն յերթևեկության համար: Ինչ ասել կուզի, վոր այդպիսի խոշոր բազմություն պարունակող կամերայում մաքրության և հանգստի մասին խոսք անգամ չէր կարող լինել: Գարշելի ոդը, փոշին, վոջիլները մարդու կյանքն ուղղակի մաշում էյին: Կամերայի հենց մեջտեղում շինված էր մշտահոս աղբյուրներով խոշոր արտաքնոցը, կարծես հատկապես նրա համար, վոր ոդն էլ ավելի ապականվեր, գարշահոտությունը գլխացավ պատճառեր: Այդ մշտահոս աղբյուրներով արտաքնոցը, հավատացյալներին լվացվելու, նամազ անելու հնարավորություն տալու համար էր շինված:

Զրուանքի թողնում էյին դատախազի (վերակացու) քմահաճույքի համաձայն: Գատախազները փաստորեն ավելի մեծ իշխանություն ունեյին բանտում, քան ուրիշ վարչական անձինք: Նրանց ամեն մի վոճրագործություն մնում էր անպատիժ: Սակայն զրուանքի համար վորևէ կարգ չկար. ամեն վոք զրուավայրում-բակում վորչափ ցանկանար՝ կարող էր մնալ: Այնտեղ կարելի յեր պատահել ամեն տիպի կալանավորի: Նման «արտոնություն» վայելում էյինք մենք՝ թեթև հանցավորներս, իսկ մահապարտները և նրանք, վորոնց չէդրքացրել էյին, այդպիսի իրավունքներից բոլորովին զուրկ էյին. նրանց մենարաններին վոչ վոքի թույլ չէյին տալիս մոտենալ:

Երզկրումի բանտերից հաճախ կազմակերպվում էյին մասսայական փախուստներ: Յերբեմն հարձակումներ էյին գործվում պահակների վրա, նրանց զինաթափում և մասսայորեն փախչում: Ուրիշ անգամ կալանավորներն ամիսներ շարունակ ընդհատակյա անցքեր (թյուրքերեն լաղում) էյին փորում, վորոնք յերբեմն քաղաքի տներում, նրանց թոնիրների մեջ էյին դուրս գալիս: Յեվ շատ անգամ այդ նկատելով, իսկույն իմաց էր տրվում կառավարությանը, և շատերը տեղնուտեղը սպանվում էյին: Փախուստի համար ոգտագործվում էյին նաև արտաք-

նոցի ընդհատակյա ջրանցքները և ջրատար խողովակները, վորոնք լայնացնելով՝ փախչում էյին կալանավորները: Այդ հաճախակի փախուստները յերբեմն չափազանց ծիծաղելի մանրամասնություններ էյին ունենում: Օրինակ, մեզ պատմում էյին, թե ինչպես մեր բարեկամ գյուղացի Մուրադը «ազատվել էր» բանտից: Մի անգամ, յերբ պահակների վրա հարձակվում է գործվում և նրանց զինաթափելով մասսայորեն փախչում են՝ այդեպարցի Մուրադն ուշանում է և չի կարողանում ամենավերջին դռնից փողոց դուրս գալ: Այդ պատճառով էլ թամաշա անողի նման հենվում է պատին ու սպասում: Դրսից յեկած փախստականները տեսնելով Մուրադին այդ վիճակում՝ մի լավ ծեծում ու վռնդում են դուրս, կարծելով թե դրսից է յեկել թամաշայի համար: Դրանից հետո Մուրադը մինչև գիշեր թաղնվելուց հետո, կես գիշերին յեկել էր մեր տուն և հաջորդ օրը գնացել էր գյուղ, վորտեղ հարցնող էլ չէր յեղել, թե ինչու և ինչպես է ազատվել: Իհարկե, այդ մի բացառիկ բախտավոր դեպք էր, իսկ սովորաբար, փախչողներին ամենադաժան պատիժներ էյին տալիս:

Համբիկյան բանտում սովորական յերևույթ էր կալանավորներին ծեծելը, նրանց լլկելը: Յերբեք չեմ մոռանա, թե ինչպես յերկու յեղբայր քիթ ու բերանն արյունոտած ուղարկեցին մեր կամերան, վորովհետև ուրիշ կամերաներից վերադառնում էյինք մի քիչ ուշ: Վորի՞ն պիտի բողոքեյինք, ո՞վ պիտի լսեր մեր «գյավուրներիս» գանգատը:

Բանտում չկար վոչ գրադարան, վոչ թերթ ու գիրք և վոչ էլ կուլտուրական վորևէ զբաղմունք, վորով ժամանակ անցկացնեյինք: Կալանավորներն իրենց ժամանակը սպանում էյին ծղոտից կամ հացից զանազան ձեռագործներ շինելով: Իսկ նրանք, ովքեր վորևէ արհեստ ունեյին՝ ատաղձագործ էյին, դերձակ, կոշկակար, յերկաթագործ և այլն, կարող էյին աշխատել, բայց ամենադաժան շահագործման յենթարկվելով: Իսկ նրանք, վորոնք վոչ արհեստ ունեյին և վոչ էլ ուրիշ վորևէ ձեռագործով պարապելու շնորհք՝ պետք է պարապեյին հեքիաթներ պատմելով (սովորաբար պոռնոգրաֆիական բնույթի), զանազան բամբասանքներով կամ լկտի կատակներ անելով:

Բանտում բավական տարածված էր թղթախաղը, բայց ձևականորեն «արգելված» էր «խումար» խաղալը, վորի համար անգամ պատժարան կուղարկեյին: Սակայն, յեթե զատախանը ստանար իրեն «հասանելիքը», թղթախաղը թույլատրելի կդառնար: Կաշառելով, այնտեղ ամեն ինչ կարելի յեր անել: Կաշառակերությունն այնտեղ իր գագաթնակետին էր հասել: Սահեցրիր մի մեճիտիա (տաճկական արծաթ դրամ, ցարական յերկու ռուբլու չափ), ապա դու նույնիսկ կկարողանայիր բանտապետից «թույլտվություն» ստանալ «խիստ կարևոր գործի համար» մի զինվորի հսկողությամբ քաղաքում զբոսնելու:

Այնտեղ ամեն տիպի կալանավորների, առանց խտրության, պահում էյին ընդհանուր կամերաներում: Քաղաքական հանցավորներ, գողեր, ավազակներ, գլուխ կտրողներ և այլ տիպի քրեական հանցավորներ ապրում էյին միմյանց կողքի: Չկար նաև հասակի խտրություն, ուստի անտեր յերիտասարդները, չունենալով անհրաժեշտ պաշտպանություն և հովանավորություն, բարոյապես այլանդակվում էյին այդ առակայի միջավայրում: Պետք էր տեսնել, թե ինչպիսի տիպեր կային այդ մարդկային կերպարանքով, բայց մարդկային ամեն ինչը կորցրած, անասնացած արարածների մեջ:

Կալանավորների մոտ փող պահելն արգելված չէր, ինչպես ցարական Ռուսաստանի բանտերումն էր, բայց ամեն ինչ գնել կարելի յեր միայն զատախանի (նադզիրատել) միջոցով կամ նրա նշանակած մարդու միջոցով, վորովհետև բանտում խանութ չկար, վոր անձամբ գնայինք ու գնեյինք: Ինչ ասել կուզի, վոր նրանք, այդ գնումները կատարելով, կալանավորներին կողոպտելով ու խաբելով, ուղղակի վաստակի նոր աղբյուր էյին գտնում: Նրանց գնածները կրկնակի, յեռակի թանգ էյին սովորականից:

Այցելությունները սովորաբար հատուկ տեղ էյին կատարվում, խիտ սյուներով յերկու պատերի միջև: Այդ պատերի միջև անընդհատ քայլում էր հատուկ պահակը: Այցելուները դրսի պատերի սյուների արանքից, իսկ կալանավորները ներսից բարձր ձայնով պիտի գոռային, վոր միմյանց լսեյին: Սյուներն այնչափ խիտ էյին շարված, վոր իրար յերես տեսնելն անհնար էր: Բայց, ինչպես ամեն տեղ, այստեղ էլ բանտապետի կամ զատախանի ձեռքը մի բան սահեցնելով կարելի կլիներ մտնել ներս, կալանավորի կամերան և ժամերով նստել ու խոսել առանց կոնտրոլի:

Բանտում քնելու և վեր կենալու վորոշ ժամեր էյին սահմանված, բայց այդ կարգը միշտ խանգարվում էր: Մեր քնելու և վեր կենալու ժամերը վորոշվում էյին թյուրք հավատացյալների կատարելիք նամազներով: Այդ նամազներին մասնակցում էյին հիսունից մինչև վաթսուն հոգի, վորոնք ամբողջ կամերայի յերկարությամբ ծնկաչոք անվերջ յերկրպագում և աղոթում էյին «բարձրյալն ալլահին»: Նրանք բոլորը միասին, միանգամից թեքվում էյին աջ ու ձախ «հասսալամ ալեյքիմ սելամ բեհեմիթուլլա» (վողջույն, վողջույն բարձրյալին, վողորմածին) ասելով: Այդ կոմեդիային մենք ականատես էյինք լինում օրական հինգ անգամ: Իսկ առավոտյան ծեգին, կամ դեռևս չլուսացած՝ հավատացյալների ղեկավար մոլլան իր հաճելի ձայնով և հմուտ կրոնական յերգով քնից արթնացնում էր ամենքին «լահի լահե իլալլահու, ելհեմտը ելիլ բապպիլ ալեմին վելեյնեննախիննելեյ բապպիլ ալեմին» (Աստված մեծ է և ճշմարիտ է, գոյություն աշխարհի արարչին, մարդկային ցեղի բարձրյալին):

Բայց ավելի կրոնամոլները, նույն մոլլայի ղեկավարությամբ կատարում եյին կրոնական մի ծիսակատարություն, վորը կոչվում եր «զիքիր»: Դա իր եքստազի աստիճանով մոտ է ռուսական սրբիդունական ծիսակատարությանը, բայց «զիքր» անողները յերկրպագելով ու վեր բարձրանալով և յերգելով՝ ուժասպառ եյին լինում, և իբր թե «աստված կամ նրա վերջին մարգարեն նրանց յերեվում եր»: «Զիքրը» չափազանց հոգնեմաշ, մոնոտոն, անսահմանաժամանակյա մի գործողություն եր, վորը կատարվում եր հետևյալ կերպ: Հավատացյալները ծալապատիկ կամ ծնրադիր շրջապատում եյին մոլլային: Վերջինս սկսում եր յերկար նախադասությամբ մի կտոր յերգել Ղուրանից, վորը կրկնում եյին շրջապատողները: Յերբ հերթը հասնում եր մոլլային, նա կրկնում եր նույնը՝ մի բառ պակասեցրած, վորպեսզի մյուսները կրկնեն: Յեվ այդպես՝ մինչև վերջին բառը, վերջին վանկը և վերջին տառը՝ մոլլան ասում և նրանք կրկնում եյին, անվերջ յերկրպագելով ու բարձրանալով: Այդ մեկ-յերկու ժամ տևող ծիսակատարությունը մասնակցողներին հոգնեցնում, ուժասպառ եր անում, նրանց բերաններից հոսում եր փրփուրը և ի վերջո անզգայորեն փռվում եյին գետնին: Իբր թե հենց այդ մոմենտին եր, վոր Մահմեդը յերևում եր մասնակիցներին ու խոսում նրանց հետ:

Այդ ամենօրյա կատակերգությունը մեզ համար չափազանց տաղտուկ ու ծիծաղաշարժ եր: Յեվ մեր ժպիտը չկարողանալով ծածկել՝ մենք ստիպված եյինք ուղղակի կամերայից հեռանալ, կամ ծածկոցի տակ մտնել՝ հավատացյալների զայրույթը չառաջացնելու համար:

Բանտում տիրում եր չափազանց սանձարձակ սեռական կյանք: Փողով, կաշառ տալով, կանանց բաժանմունքից ինչ վոր կանայք եյին «յերևում» զառախանի սենյակում: Տարածված եր նաև առնամոլությունը: բայց ձևականորեն իբր թե պատժում եյին «անզուսպներին»: Այնինչ ծառայողներն իրենք, փող վաստակելու համար, միջնորդի դեր եյին կատարում:

Մի խոսքով, Համիդյան բանտում տիրում եր կամայականությունն ու անբարոյականությունը, վորը հասել եր իր զարգացման գագաթնակետին: Յեվ վայ նրան, ով մենակ, անօգնական վիճակում կմնար այդ վորջում: Նա կայլանդակվեր և կկործանվեր:

Մենք, Կովկաս փախչելու համար բանտարկված տասներկու բախտակիցներս, սոսկ ինքնապաշտպանության բնազդի դրդումով կազմել եյինք «կոմունա»: Մենք ապրում եյինք միասին- իրար կողքի, ուտում եյինք միասին և գիշեր-ցերեկ հսկում, վորպեսզի այդ զարշելի մթնոլորտում մեզնից վոչ վոք չտուժեր:

Վե՛րջապես մեզ ազատեցին այն պահին, յերբ սկսվեցին ըմբոստացումները Համիդյան ռեժիմի դեմ և յերբ կառավարությունը բռնել եր բարեկարգումների ու զիջումների ուղին: Մեզ տարան հարցաքննելու առաջին անգամ՝ չորս ամիս հետո, և ասացին.

— Գյավուրներ, փեղայի դառնալո՞ւ եյիք գնում: Համոզվեցի՞ք, վոր ձեզ յերբեք չի հաջողվելու փախչել...

— Վոչ, եֆենդի, մենք այդպիսի մարդիկ չենք, այլ աշխատավորներ և կարիքն եր մեզ ստիպել փախչելու փորձ անել,—ասացինք մենք բոլորս միասին:

— Շան ծնունդներ, յեթե ուրիշ գործ չկար, խոմ ծառայություն կարո՞ղ եյիք անել: Ի՞նչ է, ցանկանում եք աղայի նմա՞ն ապրել,—և այլ հայհոյանքների տարափ տեղաց մեր գլխին:

Այնուհետև մեր հարևան թյուրքերի յերաշխավորությամբ ազատեցին մեզ այդ իսկական վորջից: Բայց, յեթե Երզրումի ժողովրդական ըմբոստացումները չլինեյին, ո՞վ գիտե, թե յերբ կվիճակվեր մեզ «քննության» գնալ և կամ ազատվել Համիդյան այդ «հյուրընկալությունից»:

. ԹՅՈՒՐՔԻԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

Ինչպես նախորդ հատվածներից յերևում է, սուլթան Համիդի կառավարության լուծը ծանր եր վոչ միայն ազգային փոքրամասնությունների, այսինքն՝ տվյալ պարագայում նրա մի մասի՝ հայերի համար, այլ նաև հենց թյուրք աշխատավորության համար, վորն արդեն ըմբոստանում եր: Մենք արդեն գիտենք, թե ինչպիսի դաժանությամբ ճնշեց Համիդյան միահեծանությունն այդ ըմբոստացումները: Իսկ հայ դաշնակցական ու հնչակյան ավանտյուրիստներն իրենց եյությամբ ընդունակ չեյին միանալու այդ վոտքի յելած թյուրք աշխատավորությանն ու միասին հարվածելու Համիդյան դեսպոտիզմը՝ այլ զենքն ուղղել եյին թյուրքերի դեմ առհասարակ, մինչև նրա ֆեոդալական կառավարությունը միասին վերցրած: Համիդի կառավարությանն էլ այդպիսի մի առիթ եր պետք, վորպեսզի թյուրք աշխատավորության զայրույթն ու ցասումն ուղղեր հայերի դեմ:

Սակայն, թյուրք աշխատավորության հետ աշխատակցելը, նրա հետ ձեռք-ձեռքի տված պայքարելը՝ ինտերնացիոնալիստական կուսակցությունների գործն եր: Իսկ հայ նացիոնալիստներն իրենց բնությամբ հակառակ եյին այդպիսի աշխատակցության: Դաշնակ և հնչակ կուսակցությունները, վորպես հայ բուրժուազիայի մարտական գնդեր՝ կոչված եյին հայ բուրժուազիայի համար «գլուխ դնելու տեղ» (հասկացիր՝ նրա կապիտալը շրջանառության մեջ դնելու համար անհրաժեշտ սեփական տերրիտորիա) ստեղծելու հոգսով: Նրանք այդ նպատակի համար պատրաստ եյին զոհաբերել ամբողջ հայ աշխատավոր մասսան և այդպես էլ արին՝ հակառակ վերջինիս կամքին: Թյուրքահայ աշխատավոր գյուղացիները խիստ չնչին, աննշան չափով եյին արձագանքում հայ բուրժուազիայի համար անմիջական բաղդ վորոնող և

նրա փողերով կերակրվող յեկվոր հայդուկային ուժերին: Տաճկահայաստանի աշխատավոր մասսան հայ նացիոնալիստական կուսակցությունների ագիտացիայից մնացել էր անդրդվելի: Նա նման եր այն ժամացույցին, վորի ճոճանակը ճոճում են դրսից, բայց, վորովհետև ներքին մեքենաները չեն աշխատում, ապա չի աշխատում նաև ժամացույցը: Հայ նացիոնալիստական այդ ավանտյուրիստները վոչ միայն ընդունակ չեյին աշխատակցել թյուրք աշխատավորության հետ, այլ նաև նրանց չհաջողվեց փողոց հանել հայ աշխատավորության հոծ բազմությունը: Այդ պատճառով էլ նրանց բոլոր ելույթները վերջանում եյին հերթական ավանտյուրայով և հարթում եյին հայությունը վոչնչացնելու Համիդյան ծրագրի իրագործման ուղին:

Սակայն, ինչպես բնության, այնպես էլ մարդկային հասարակության մեջ հավիտենական վոչինչ չկա: Հասարակական բոլոր յերևույթներն ունենում են իրենց ծնունդը, զարգացումը և անխուսափելի մահը կամ անկումը: Միայն այն հասարակական կազմակերպությունները հաջողություն կարող են ունենալ իրենց գործունեության ընթացքում, վորոնք ճիշտ կերպով կըմբռնեն զարգացման այդ օրենքը և համապատասխան ծրագիր կկազմեն, համապատասխան ստրատեգիա ու տակտիկա կընտրեն: Ապա թե վոչ՝ նրանց նավը՝ ինչպես յեղավ դաշնակ ու հնչակ նացիոնալիստների հետ՝ ընդհարվելով կյանքի ապառաժին՝ կխորտակվի:

Համիդյան կառավարությունը նույնպես, վորպես միջնադարյան ֆեոդալական տնտեսության վերնաշենք, չեր կարող ընդմիշտ դիմադրել Թյուրքիայում արդեն մուտք գործող և զարգացող կապիտալիզմի առաջխաղացմանը, նրա գրոհներին: Նա իր անարգել զարգացման համար վորոնում եր ավելի ազատ պայմաններ, այսինքն՝ Համիդյան միահեծանության փոխարեն սահմանադրական միապետություն կամ ծայրահեղ դեպքում՝ բուրժուական սահմանադրական կառավարական ձև:

Կատարվեց անխուսափելին: 1908 թվի հուլիսին պայթեց Թյուրքիայի հեղափոխությունը: Նրան գլխավորում եր «Յերիտասարդ Թյուրքիայի» «Միություն և Առաջադիմություն» կոչված կուսակցությունը, վորն իրեն կենտրոն ընտրել եր Սալոնիկը: Այնտեղ եր գտնվում յերրորդ զորաբանակը, վորի ամբողջ սպայակույտը, Նիազի և Էնվեր բեյերի գլխավորությամբ, ղեկավարում եր այդ հեղափոխությունը: Ինչպես վերևումն էլ ասել ենք, այդ Թյուրքիայում նոր ծնունդ առնող բուրժուազիայի մարտական ուժերի ընդվզումն եր Համիդյան ֆեոդալական կարգերի դեմ, վորոնք կործանման հասցնելով Թյուրքիան, արդեն նրան սկսել եյին վաճառքի հանել յեվրոպական իմպերիալիստներին: Սուլթան Համիդը, սարսափած այդ ապստամբությունից, իսկույն վերականգնեց 1876 թվի սահմանադրությունը: Իսկ յերկրի տերն ու

տնօրենը դարձավ «Միություն և Առաջադիմություն» կոչվող թյուրքական կուսակցությունը, վորը լոզունգ եր ընտրել «Թյուրքիան թյուրքերի համար»:

Թյուրքիայի սահմանադրությունը լեգալ գործունեության ասպարեզ ստեղծեց նաև հայ նացիոնալիստական կուսակցությունների, այսինքն՝ դաշնակների ու հնչակների համար: Սոցիալ-դեմոկրատները և սոցիալիստ հեղափոխականները Թյուրքիայի հեղափոխության սկզբներում գեթ մուտք չեյին գործել Երզերում: Սահմանները բացվելուց հետո, վերոհիշյալ հայ նացիոնալիստական կուսակցությունները հնարավորություն ստացան Անդրկովկասից Թյուրքիա տեղափոխել ինտելիգենտ ուժեր և ստեղծեցին իրենց լեգալ կազմակերպությունները: Այնտեղ դաշնակներն ավելի ազդեցություն ունեցան, քան հնչակները:

Յես կապվեցի դաշնակների հետ և մտա նրանց կազմակերպած առաջին խմբի մեջ, վորը կրում եր «Աշոտ-Թաթուլ» անունը: Խումբը բաղկացած եր տասը հոգուց, վորոնք Արծնյան վարժարանի սաներ և արհեստով կամ գործակատարությամբ պարապող յերիտասարդներ եյին ու միևնույն գյուղացի դասընկերներ: Խմբի քարտուղարը կամ խմբապետը առաջնորդարանի քարտուղար Վաղարշակ Սանոսյանն եր, վորը մեզ առաջին անգամ սովորեցրեց ծածկագիր կազմելու ձևերը: Նա, բացի զենք գործածելուց և այլ մանրբուրժուական քարոզներից ու անտանելի շովինիզմից, դեպի թյուրքերն ունեցած ատելությունից, ավելին մեզ տալ չեր կարող և չտվեց:

Դաշնակներն ու հնչակներն Անդրկովկասից իրենց հետ բերել եյին նաև իրենց հրատարակած հասարակական-քաղաքական գրականությունից, վորը մենք մեծ յեռանդով տարածում եյինք ամենուրեք: Յես մեծ հաճույքով կարդում եյի այդ հրատարակություններից: Ինչ վոր դուր եր գալիս ինձ առաջին իսկ էջերից, հրապուրում եր ինձ և իմ հարցասիրությունը դեպի մի շարք հասարակական հարցեր՝ յես կարդում եյի: Առանձնապես իմ ուշադրությունը գրավեց սոցիալիստ հեղափոխական Բախի «Հարուստներ և աղքատներ» գիրքը՝ դաշնակցական «Հառաջ» գրադարանի սերիայից: Դա մի տարրական քաղաքատնտեսական ձեռնարկ եր՝ 120 էջից բաղկացած: Դրանով յես առաջին անգամ մակերեսային և աղավաղված գաղափար կազմեցի հավելյալ արժեքի, դասակարգային պայքարի, շահագործման դեմ պայքար մղելու մասին: Առաջին անգամ կարդացի նաև դաշնակ Թոփչյանի «Արհեստակցական միությունները» գրքույկը, վորը սկսվում է Մարքսի, Բեբելի, Ժոռեսի և այլ նշանավոր սոցիալ-դեմոկրատների մեջբերումներով՝ արհեստակցական շարժման մասին: Վորչափ խոշոր իրոնիա այդ մեծ մարդկանց հասցեյին և հակասություն: Համաշխարհային պրոլետարական հեղափոխության ամենահռչակավոր դեմքերից սկսելով, դաշնակցական լը-

դերը տալիս էր իր կուսակցության նեղ նացիոնալիստական—հայկական պրոֆմիություններ կազմելու ցուցմունքները: Հետևել այդ ցուցմունքներին՝ ասել է մի դասակարգի պատկանող, միևնույն շահերն ունեցող պրոլետարներին կամ աշխատավորներին բաժանել ազգային նեղ խմբերի: Իսկ յեթե դրա վրա ավելացնենք նաև դաշնակցական մաուզերիզմն ու շովինիզմը, ապա պետք է միևնույն դասակարգին պատկանող աշխատավորները պայքարեն իրար դեմ, հոշոտեն իրար, փոխանակ միանալու միմյանց հետ:

Մենք այդպես էլ արինք: Տողերիս գրողն ու իմ մոտիկ ընկեր Վահան Սեֆերյանը, վոր աշխատում եյինք միասին, Երզերումում կազմակերպեցինք առաջին արհեստակցական միությունը հայ կոշկակարներից ու դերձակներից: Վորպես պրոֆմիության առաջին նախաձեռնողներ և հիմնադիրներ, մեզ կատակով Նիազի և Ենվեր եյին անվանում մեր ընկերները: Մենք կազմակերպեցինք, անդամավճարներ հավաքեցինք, բայց ուրիշ վոչինչ չգիտեյինք, վոր անեյինք: Դաշնակները մեզ ոգտագործում եյին այլ նպատակով: Նրանց համար դասակարգային պայքարը, բանվորների շահերի պաշտպանության հարցը չէր, վոր անհրաժեշտություն էր առաջացնում իր պրոֆմիությունը կազմակերպել, այլ՝ բանվորներին ուրիշ ազգության բանվորներից հեռու պահելը, վորպեսզի դյուրությամբ իրենց ազդեցության տակ առնեյին բոլոր հայ աշխատավորներին: «Բաժանիր, վոր իշխես»,—ահա նրանց սկզբունքը:

Մյուս կողմից, դաշնակները ցանկանում եյին կանխել սոցիալ-դեմոկրատներին, վորոնք հետագայում մուտք եյին գործել նաև Երզերում:

Այդ ժամանակ մեր ուղեղներն իրենցից ներկայացնում եյին դաշնակցական ֆեոդալիզմի, նացիոնալիզմի և նոր ծնունդ առնող դասակարգային գիտակցության տարրերի մի քաոս: Մտքերի այդ քաոսն ավելի ուժեղանում էր Երզերում բերված նոր գրականության շնորհիվ: Այդ գրականությունից մենք իմանում եյինք, վոր յերկրագնդի վրա գոյություն ունեն նաև այլ կուսակցություններ, այսինքն՝ սոցիալ-դեմոկրատներ և սոցիալիստ-հեղափոխականներ: Մեծ հետաքրքրականություն առաջացավ իմ մեջ դեպի այդ կուսակցությունները, մանավանդ դեպի սոցիալ-դեմոկրատները, վորոնց մասին շատ էր խոսվում այդ գրքույկներում, և մեջբերումներ եյին արվում նրանցից ու քննադատության յենթարկվում սոցիալ-դեմոկրատիան: Այդ ավելի յեր բորբոքում իմ ծարավը՝ ծանոթանալու նրանց մտահայեցողության հետ:

Սակայն, Երզերումում վորոշ հաջողություն ունեցող նացիոնալիստները հնարավորություն չեյին տալիս նման գրականություն տարածելու: Ուստի, ըստ յերևույթին, ինձ վիճակվել էր Անդրկովկաս փոխադրվելուց հետո միայն ծանոթանալ նման գրականության հետ:

Ինձ հաջողվեց թողնել սահմանադրական Թյուրքիան միայն 1909 թ-ի սկզբներին, և անցնել Կովկաս, բայց այս անգամ վոչ թե վորպես փախստական, այլ օրինական ճանապարհով և հնարավորություն ստացա մեկնել Անդրկովկաս՝ «բախտ վորոնելու»:

ԴԵՊԻ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

1909 թվի հունվարի վերջերին էր, յերբ մեկնեցի Երզերումից դեպի Անդրկովկաս, բոլորովին նորմալ պայմաններում, վորովհետև «բացվել եյին սահմանները», հայերին նույնպես իրավունք էր տրված օրինական ճանապարհով դուրս գալ Թյուրքիայի սահմաններից:

Այն ժամանակ յես չափահաս չեյի, ուստի իրավունք չունեյի ինքնագլուխ կերպով համապատասխան վիզա ստանալ՝ Թյուրքիայից հեռանալու համար: Այդ պատճառով էլ Մոլլապողոսյան Արշավիրի հետ պայմանավորվեցի՝ ձևանալ նրա աշակերտը և այդպիսով վիզա ստացա՝ Անդրկովկաս մեկնելու համար:

Երզերումից դուրս գալիս բավական ցուրտ էր և մեծ քանակությամբ ձյուն կար: Ի դեպ, այստեղ անհրաժեշտ է ավելացնել, վոր Երզերումն առհասարակ ունենում էր սոսկալի ծանր ձմեռներ: Քաղաքի նեղ փողոցներում կուտակված ձյունը հասնում էր մինչև տանիքները և մնում էր մինչև մարտի վերջերը: Շատ անգամ հարևանների հետ յերթևեկություն կատարելու համար, կուտակված ձյան միջով բացում եյին թունելներ, իսկ գողերն առանց վորևէ նեղության՝ կարող եյին բարձրանալ հողե կտուրները և իրենց «մի կտոր հացի» մասին մտածել:

Մեր ճանապարհն անցնում է Դեվեբոյնու (ուղտավիզ) կոչված լեռնանցքից, ուր նույնիսկ գարնանը, ձյուն չեղած ժամանակ, դժվար էր անցնել քարքարոտ և խիտ թեք սարերի պատճառով: Այդ ճանապարհն ամբողջովին ծածկված էր ձյան հաստ շերտով և միայն հմուտ կառապանը կարող էր կռահել և անվտանգ կերպով անցնել այդ տեղերով: Սակայն, մեր «փորձված» կառապանը նույնպես անզոր հանդիսացավ ապահով կերպով անցնելու այդ «անիծյալ» ճանապարհից: Մոտենալով դարիվայրին, մեր սահնակը շուռ յեկավ, կտրվեցին ձիերի սանձերն ու սահնակներին կապող փոկերը և մենք կառապանի հետ գլորվեցինք անդունդը՝ ահագին բարձրությունից: Բարեբախտաբար այդ մեզ վոչ մի վնաս չպատճառեց, բայց կառչեյինք, յեթե մեզնից քիչ հետո անցնող ճանապարհորդները մեզ չօգնեյին: Մենք արդեն մրսելուց չեյինք կարողանում խոսել: Նրանց օգնությամբ բարձրացանք ձորից, կապոտեցինք ձիերը և դողդոջուն, կապտած, նստեցինք սահնակներն ու շարունակեցինք մեր ճանապարհը՝ մինչև մոտակա Ղոռուճուղ կայարանը:

Այնուհետև, յերկու օրվա ընթացքում մենք անցանք Հասան-Ղալա, Զոպան-Քյոփրու և վերջապես՝ ռուսական սահմանը: Հասան-Ղալայից թեքվեցինք Այգեպար գյուղը՝ յեղբորս վերջին հրաժեշտ տալու հա-

մար : Նա այնտեղ ծառայում եր և ապրում ընտանիքով : Թե ինչու եր այդ գյուղը Այգեպար կոչվում՝ վոչ վոքի հայտնի չեր, վորովհետև այնտեղ վոչ միայն այգի՝ այլև առհասարակ վոչ մի պտղատու ծառ չկար : Գյուղացիները շատ իրավացի կերպով նրան Հիգեպար եյին կոչում : Այդ գյուղի հետ չափազանց մեծ հուշերով կապված եր մեր ընտանիքը : Հայրս, չկարողանալով տանել Երզերումի տնտեսական ծանր պայմանները, ընտանիքով քաշվել եր այդ գյուղն ու մի քանի տարի ապրել եր այնտեղ, վորպես ծառայող : Այդ տարիներին ել յես ծնվել եմ այդ գյուղում : Երզերումում այդ պատճառով ինձ հաճախ կատակով «բաւենցի» կամ «գյուղացի» եյին անվանում, վորից յես չափազանց վիրավորվում, ղայրանում եյի : Այդ գյուղումն եր հայրս թաքնվել խոտեզի մեջ՝ Համիդյան ջարդերի որերին : Վերջապես, այդ գյուղում ծառայող ավագ յեղբորս համաշխարհային պատերազմի հենց սկզբին թյուրքերը սպանել, կտոր-կտոր եյին արել ու գետը նետել :

Յերբեք չեմ կարող մոռանալ մանկությունիցս մի դեպք . յերբ յեղբորս ու քրոջս հետ Հասան-Ղալայից Այգեպար եյինք գնում, ճանապարհին անցնելով յեղեգնուտ ճահիճների մոտով՝ նկատեցի, վոր բադեր թռան, իսկ ճահճի յեզերքին, ծանծաղուտ ջրի մեջ լողում եյին բադի ձագեր : Յես ել ահա, յես առանց նախազգուշացնելու ուղեկիցներիս, վազեցի և մտա ճահիճն ու հազիվ կարողացա բռնել ձագերից միայն մեկին : Սակայն մինչև մեջքս խրվեցի և այլևս չկարողացա դուրս գալ ճահճից : Յեղբայրս ու քույրս և՛ ղայրանում, և՛ ծիծաղում եյին :

— Դե՛հ, հիմա տեսնենք թե ինչպես պիտի դուրս գաս : Բադի ձագի հետ այդտեղ ել կապրես,— ասում եյին նրանք :

Յես, իհարկե, վախից հուզվում եյի և պատրաստ եյի լալու, բայց բադի ձագը, վորին սպանելու չափ պինդ սեղմել եյի կրծքիս՝ զսպում եր լալու ցանկությունս : Մի քիչ այդպես խրված թողնելուց հետո՝ նրանք անցորդներից վերցրին յերկար մահակներ և թոկը մեջքիս կապելով՝ քաշեցին դուրս հանեցին ինձ մեծ հրճվանքով : Մինչև գյուղը ջուր չլինելու պատճառով, առանց լվացվելու և մաքրվելու շարունակեցինք մեր ճանապարհը, գյուղի պատանիների ծիծաղի առարկան դառնալով :

Թողնելով Այգեպարը, մենք անցանք միջնադարյան վիթխարի հուշարձան՝ պատմական «Չոբան Քյուփրու»-ի (հովվի կամուրջ) վրայով դեպի ռուսական սահմանամերձ Քյոթիկ գյուղաքաղաքը : Այնտեղ մի թեթև հարցաքննությունից և խուզարկությունից հետո, մի քանի ձևականություններ կատարեցին և բաց թողին գնալու : Վերջին րոպեյին մաքսատան զինվորներից մեկն ասաց .

— Գյավուրներ, գնացեք, բայց շուտով կհամոզվեք, վոր Ռուսիան վոչնչով լավ չե Թյուրքիայից :

Մենք նրան հեգնական ժպիտով պատասխանեցինք և կառապանին պատվիրեցինք առաջ շարժվել, թողնել Քյոթիկը :

Մտեցանք ռուսական Կարաուրգան գյուղին : Նկատելով մեզ, ինչ-վոր տնակից դուրս յեկան ռուսական զինվորներ և մեր անցագրերի վիզեյին նայելով՝ պատվիրեցին կառապանին գնալ և մաքսատան առաջ կանգ առնել : Մաքսատանը նորից խուզարկեցին մեզ և ազատ արձակեցին :

Կարաուրգանում յես առաջին անգամ ֆեսերի տեղ գլխարկներ ու փողոցներում թափառող խոզեր տեսա : Աչքիցս չքացավ նաև թյուրքական բազմածալ անդրավարտիկը և հսկայական չալման ու գոտին : Այդ բոլորն ինձ համար խոշոր նորություն եյին, վորովհետև յես Երզերումից առաջին անգամն եր, վոր դուրս եյի գալիս դեպի հեռավոր և միանգամայն անծանոթ վայրեր :

ՑԱՐԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆ

Համիդյան կառավարության ճիրաններում տաճկահայերիս մեջ զարգացել եր մի աներևակայելի ռուսասիրություն : Մենք համոզված եյինք, վոր ռուսաց կառավարությունը, վորպես «պաշտպան քրիստոնյա ժողովուրդների»՝ պետք ե պաշտպաներ նաև հայ քրիստոնյաներին : Այն ժամանակ մեր մեջ իշխում եր այդ կղերա-իդեալիստական մտահայեցողությունը և մեզնից վոչ վոք ել չեր կարող մի րոպե անգամ մտածել, թե կրոնական, գաղափարական-բարոյական հասկացողությունները չեյին, վոր վորևե պետության պետի դրդեյին զանազան դիպլոմատական կամ քաղաքական գործողություններ կատարելու, այլ զուտ նյութական-տնտեսական շահերը, այն ել յերկրում իշխող դասակարգի շահերի թելադրանքով միայն : Իսկ այն ժամանակվա ցարական Ռուսաստանի մասին մենք ունեյինք այնպիսի պատկերացում, վորը բոլորովին չեր համապատասխանում ցարական գորշ իրականությանը : Դրանում յես համոզվեցի շատ շուտ, յերբ Թյուրքիայից անցա Անդրկովկաս :

Ռուսաստանը և նրա մի մասը կազմող Կովկասը մեր կարծիքով պետք ե լիներ այն աստիճանի ազատ պայմաններում, վոր բոլոր քաղաքական և հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև կրթական-կուլտուրական կամ բանվորական կազմակերպությունները պիտի ունենային իրենց զարգացման համար անհրաժեշտ, ամենանպաստավոր պայմաններ : Մեր կարծիքով, ամեն մի աշխատավոր ձեռքի համար ապահովված պիտի լիներ քիչ թե շատ բարեկեցիկ վիճակ : Սակայն, ինչպես ասացի, շատ շուտով համոզվեցի, վոր այդ բոլորը վարդագույն իլյուզիաներ և մեր՝ տաճկահայերիս ֆանտազիայի պտուղ եյին և ուրիշ վոչինչ : Իսկ ցարական ռեակցիան լայն կերպով փռել եր իր փեշերը և յերկաթե կրնկի տակ առել այն բոլորին, վորոնք մազաչափ անգամ դժգոհում կամ բողոքում եյին ցարական սանձարձակ միահեծանության

դեմ: Յեվ ցարական ռեակցիան բանտի, աքսորի, էկզեկուցիայի, կախաղանի, գնդակահարության միջոցով տրորում էր վոտների տակ, խեղդել էր հասարակական բոլոր կազմակերպություններն անխտիր: Սկսած ամենալոյալից մինչև ամենահեղափոխական կազմակերպությունները ճզմելով, ցարական արջի թաթը փորձում էր իրեն հպատակեցնել նաև յերբեմնի ըմբոստացող և այն ժամանակ պարտված պրոլետարիատի վոգին ու միտքը:

Ներկա ժամանակ մեր տրամադրության տակ կան հարուստ տվյալներ, վորոնք ցայտուն կերպով ընդգծում են ցարական ռեակցիայի վերոհիշյալ շրջանի սանձարձակությունների ծավալը: Ուստի, ավելորդ չի լինի բերել մի քանի թվական տվյալներ՝ տիրող ռեակցիայի պատկերն ավելի ռելյեֆ կերպով պարզելու համար:

Ռուսաստանում 1905 թվին յեղել է 86,184 բանտարկյալ և 6,125 տաժանակիր: 1912 թ. այդ թիվը՝ աճում և հասնում է 182,850 բանտարկյալի և 32,826 տաժանակրի:

Աքսորյալների ճիշտ քանակի մասին ճշգրտված թվեր չկան, բայց ո՞վ չգիտե, վոր ցարական Ռուսաստանի ծայրամասերը և առավելապես Ռուսաստանի ու Սիբիրի ազգաբնակչության հիմնական մասը կազմում էին աքսորյալներն ու տաժանակիր աշխատանքը վերջացրածները, վորոնք յերկար ժամանակ կենտրոնական Ռուսաստան գնալու իրավունքից զրկված լինելու պատճառով ընտելացել էին տեղական կյանքին և մնացել ընդմիշտ:

Ռեակցիայի այդ շրջանում Ռուսաստանում բանվորական տնտեսական բնույթի գործադուլները 1905 թվին հասնում էին 176,000-ի, իսկ 1910 թվին նվազելով, հասել էին 46,500-ի: Քաղաքական գործադուլներն ավելի պակասել էին, քան տնտեսական բնույթի գործադուլները: 1908 թվին 464, իսկ 1910 թվին միայն 4 գործադուլ է յեղել:

Ցարական ժանդարմական թաթը մեկնվել էր նաև պրոլետարական հեղափոխական յելույթների ղեկավար բոլշևիկյան կազմակերպությանը (այն ժամանակ ՌՍԴԲԿ), վորպեսզի ղեկավարությունից զրկեր բանվորական շարժումը: Յեվ այդ հաջողվել էր ցարական ժանդարմերիային: Յեթե 1905 թվին Մոսկվայի կազմակերպությունը մարզական մասշտաբով համախմբում էր 2000 անդամ, իսկ 1909 թվի հունվարին՝ 260, ապա 1910 թվի սկզբներին՝ միայն 152 հոգի, իսկ տարվա վերջին կազմակերպությունը քայքայվել էր բոլորովին:

Հատկանշական է, վոր ցարական մտրակը չէր խնայելու նաև պրոֆշարժման ղեկավարներին, նրա ակտիվին: Մինչև համաշխարհային պատերազմը, ռեակցիայի տարիներին փակվել են 898 պրոֆմիություն, իսկ 1,010 դիմում նոր պրոֆմիություններ կազմակերպելու մասին մերժված են: Պրոֆշարժման ղեկավար պերսոնալից ձերբակալված են 1,712 հոգի:

Այս բոլոր հալածանքների հետ բանվոր դասակարգի նոմինալ և ռեալ աշխատավարձը ցածրանում, աշխատաժամերն ավելացվում էին, իսկ նրան ֆիզիքապես հյուծում էին ավելի, քան յերբևիցե: Մի խոսքով, ցարական ռեակցիան իր սուրը ճոճում էր աջ ու ձախ, նրա վոտնձգությունները սահման չունեին:

Գրականության մեջ զարգանում էին անկման տրամադրություններ, յերևան էին գալիս պեսիմիստական և պոռնոգրաֆիկական բնույթի գործեր, ինչպիսիք են Լ. Անդրեյևի «Անաթեմա», Արցիբաշևի «Սանին» գրվածքները: Շատանում էին անձնասպանության դեպքերը: Ամենուրեք հուսահատություն ու լքում էր տիրում, տրամադրություններ, վորոնք հատուկ էին ռեակցիայի զարգացման շրջաններին:

Գյուղը նույնպես անհաղորդ չմնաց այդ ռեակցիային: Նա ավելի վատթար վիճակ էր ապրում, քան առաջ: Ստոլիպինի հողային որենսդրությունն ուժգին զենք էր տվել գյուղի կալվածատերերի ձեռքը, վորոնք գյուղական հսկայական զանգվածներին հողազրկության մատնելով, քշում էին քաղաք՝ ապրելու միջոցներ վորոնելու: Բայց այդ որենսդրության շնորհիվ էլ սկիզբ էր դրվել Ռուսաստանի կապիտալիստական տարրերի զարգացմանը գյուղում, վորոնք սկսեցին քայքայման յենթարկել գյուղի հողային համայնքները: Դրանով էլ սկսվեցին յերևան գալ Ռուսաստանի կապիտալիզմի զարգացման, նրա վերելքին անհրաժեշտ նախադրյալներ:

Ավելի վատթար վիճակ էր տիրում Անդրկովկասում, ազգությունների այդ խառնարանում, վորտեղ ցարական իմպերիայի ղեկավարները վարում էին զուտ գաղութային, մեծապետական-ռուսացման անողոք քաղաքականություն: Նրանք փակել էին հայկական դպրոցներն ու գրավել յեկեղեցական կալվածքները, վորոնց մասին դեռևս չէր մոռացել հայ բուրժուազիան:

Բռնակալական վոտնձգություններն իրենց հերթին բորբոքում էին Անդրկովկասի յերեք հիմնական ազգությունների բուրժուական-նացիոնալիստական կրքերը: Նրանց գլխավորող արտահայտիչներն էին թուրքերի կողմից այժմյան մուսավաթականները, վորոնք այն ժամանակ վորպես կուսակցություն դեռևս չէին ձևակերպվել, վրացիների կողմից՝ նացիոնալ-դեմոկրատները, ֆեդերալիստները և սոցիալիստական փետուրներով զարդարված մենշևիկները, հայերի կողմից՝ դաշնակցական, հնչակյան, մշակական-ռամկավարները:

Անդրկովկասում պրոլետարական հեղափոխության գործի ճանապարհին կանգնած էին կրկնակի դժվարություններ: Մի կողմից՝ պետք էր պայքարել ռեակցիայի և նրան հենված մեծապետական բուրժուազիայի դեմ, իսկ մյուս կողմից՝ պետք էր պայքարել տեղական բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների դեմ, վորոնց մի մասը՝

հնչակ և դաշնակ կուսակցությունները, մասսաներին խաբելու համար իրենց ներկայացնում էին սոցիալիզմի կողմնակից և անգամ հարյուր տոկոսով սոցիալիստ: Նրանք պրոլետարական միաձույլ շարքերում սրսկում էին իրենց նացիոնալիստական, շովինիստական թույնը, որպեսզի դրանով բաժան-բաժան անեյին և կասեցնեյին նրա դասակարգային պայքարի թափը: Եվ բանվոր դասակարգից բավական խոշոր հատվածներ յերկար ժամանակ անգիտակցաբար գնում էին այդ կուսակցությունների հետևից և դրանով վնասում իրենց պրոլետարական գործին:

Ահա, այսպիսի ծանր պայմաններ էին տիրում Անդրկովկասում, յերբ ես, Թյուրքիայից դեռևս նոր յեկած, վարդագույն հույսերով հասա Կարս: Բայց սպասելիքներիս հակապատկերը տեսնելով, այսինքն աշխատանքի և ապրելու ամենատարրական պայմաններ իսկ չգտնելով՝ հիասթափված, սովի ուրվականի սպառնալիքի տակ անմիջապես թողեցի Կարսը և Թիֆլիս մեկնեցի, հավատացած, որ այնտեղ գոնե մի կտոր հացի համար աշխատելու տեղ կգտնեի:

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Թիֆլիսն այն ժամանակ համարվում էր Անդրկովկասի հայ մտքի կենտրոնը: Այնտեղ էին հրատարակվում դաշնակցականների ամենօրյա «Հորիզոն», հայ ռամկավար վաճառականների ամենօրյա «Մշակ» թերթերը: Բացի դրանցից, հրատարակվում էին նաև ժուռնալներ, ամսագրեր՝ նույն հոսանքների և կլերիկալների կողմից: Գրքերի հրատարակչական գործը նույնպես կենտրոնացած էր գլխավորապես Թիֆլիսում: Եվ այն ժամանակ, յեթե ճիշտը կուզեք, հայ մտքի «գլխավոր» հոսանքները հենց դրանք էին, որովհետև հեղափոխական պրոլետարիատը և նրա իդեոլոգ բոլշևիկները հալածված էին, չունեյին իրենց մամուլը:

Այդ ժամանակ խոշոր ազդեցություն ուներ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերությունը, որի միջոցով հայ բուրժուազիան աշխատավոր մասսայից կորզած հավելյալ արժեքից փշրանքներ էր շպրտում հասարակական զանազան կրթական-կուլտուրական կարիքների համար, մասնավոր սեփականությունն անխախտ պահելու, կապիտալիզմի տիրապետությունը հավերժացնելու համար: Դպրոց, թատրոն, գրականություն, հրապարակախոսություն և առհասարակ կրթական-կուլտուրական բոլոր հիմնարկներն այն ժամանակ ապրում էին բարեգործական ողորմածությամբ և փառաբանում էին Մանթաշյաններին, Արամյաններին կամ «հոգևոր հայր» կաթողիկոսին: Հետագայում, յերբ մահացավ նացիոնալիստական կուսակցությունների կաթնատու կովը՝ նրանց

յերակներում արյուն սրսկող Մանթաշյանը, թերթերը սկսեցին աղի արցունք թափել:

Այդ առթիվ Շիրվանզադեն գրում էր.—

«Այն կորուստը, որ այսօր կրում է հայ ժողովուրդը Մանթաշյանի մահվամբ՝ անփոխարինելի յե: Ինչպես բանաստեղծն իր յերգը հորինելիս չգիտե ով պիտի կարդա այն, ինչպես յերաժիշտը նվագելիս չի հարցնում թե ովքեր են լսողները, նույնպես Մանթաշյանը հաճախ սփռում էր իր բարիքները աջ ու ձախ՝ առանց հաշվի: Ազգին մնում է իր խորին յերախտագիտությամբ գնահատել այդպիսի սիրտը»:

«Հորիզոն», նո. 82, 1911 թ.:

Չալխուշյանը նույն Մանթաշյանի մասին գրում էր.—

«Մի պսակ թարմ գերեզմանի վրա: Թող այդ գերեզմանը լինի մի վաճառականի, մի կմնա* մեզ համար միշտ թանգ: Նրա սիրտը բաբախում էր հայի համար, և նա հայ էր ու հայ էլ մնաց, և մեծ հարստությունը արատ չթողեց նրա վրա»:

միլիոնների—հոգ. չե: Այդ վաճառականը Ալ. Մանթաշյանն է, իսկ Մանթաշյանի անունը

«Մշակ», նո. 99, 1911 թ.:

Բավական խոշոր ու կատաղի պայքար էր սկսվել Համբարձում Առաքելյանի «Մշակ» թերթի, և Լեոյի, Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի «Հորիզոն» թերթի միջև: Սկսած ամենամեծ հասարակական, քաղաքական և կամ գրական հարցերից մինչև ամենափոքր թաղական-վարժապետական-ծխական հարցը, այդ յերկու հոսանքների միջև նիզակներ ճոճելու, փրփուրը բերաններին իրար հայհոյելու և հոշոտելու առիթ էր հանդիսանում: Ի հարկե, նրանց մտավոր հորիզոնը Կուր թաղից ու Մոզնու յեկեղեցուց այն կողմն անցնել չէր կարող, և վեճի հիմնական առարկան էլ դրանք էին:

Այդ այն ժամանակ էր, յերբ դաշնակցական լիդերները և նրանց ինտելիգենտներից մի քանի տասնյակ ձերբակալված էին ցարական կառավարության ձեռքով: Եվ նրանք փոխանակ, թեկուզ բուրժուական հեղափոխականի նման մինչև վերջ պաշտպանելու իրենց տեսակետը՝ թե իրենք հայ բուրժուազիայի մարտական ջոկատն են, նրան «գլուխ ընելու»՝ կապիտալ կուտակելու համար անհրաժեշտ տերրիտորիա ձեռք բերելու հոգսով են զբաղված և այլն,—դաշնակցական լիդերները ծունր դրին ցարական դեսպոտիզմի առաջ, մեղայի յեկան, ներում խնդրեցին և մասսայորեն ազատվեցին կալանքից:

Հայ կապիտալիստն ու կղերը, ունենալով իրենց արտահայտիչ օրգանները, հանձին «Մշակ», «Հորիզոն» և «Հովիտ» թերթերի՝ սերունդ էին դաստիարակում իրենց դասակարգային շահերի թելադրանքով և «տոն էին տալիս» այն ժամանակվա բուրժուական մտքին: Միայն բանվոր դասակարգը, որ զրկված էր նյութական բոլոր հնարավորություններից, այսինքն՝ տպարան, թուղթ, փող չունենալով և ցարական սատրապներից հալածված, իրավազուրկ, չուներ նաև իր տպագիր խոսքը, իր թերթն ու ժուռնալը, որպեսզի իր տեսակետը հակադրեր բուրժուա-

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

կանին և ստիպված չլինեի կերակրվել բանվոր դասակարգի համար բոլորովին խորթ և թշնամի դասակարգի մտքի արտադրանքով: Այդպիսի պայմաններում խիստ դժվար եր մանավանդ այն բանվորների համար, վորոնք, բացի հայերենից այլ լեզու չգիտեյին, վորպեսզի չիմեյին, հաղորդակից լինեյին ռուսերեն և թեկուզ վրացերեն հրատարակություններին: Այդպիսիք ստիպված եյին սնվել «Մշակ» կամ «Հորիզոն» թերթերի նեխած գաղափարներով: Այդպիսի բանվորների թվին, դժբախտաբար, պատկանում եյի նաև յես:

Թիֆլիսն այն ժամանակ իր արտաքին բուրժուական փայլով, Թյուրքիայից նոր յեկածիս վրա ուղղակի շշմեցուցիչ–շլացուցիչ տպավորություն եր թողել: Բայց, յերբ նկատեցի այդ արտաքին փայլի տակ թագնված ներքին աղաղակող անարդարություններն ու նրան հակասող դառն իրականությունը, ուղղակի հիասթափվեցի:

Ճիշտ եր, վոր Երզերումի կեղտոտ, փոշոտ և նեղ փողոցների տեղ, վորտեղ թափառում եյին բազմաթիվ անտեր շներ, այստեղ, Թիֆլիսում մաքուր, յեվրոպական տիպի բազմատուն փողոցների միջով սլանում եյին տրամվայի վագոնները կամ սակավաթիվ ավտոները: Ճիշտ եր և այն, վոր Երզերումի թյուրքական ֆեսերի ու չալմաների և չալից կարված բազմածալ շալվարի տեղ այստեղ ֆրակ, ցիլինդր, ոսլայած ոձիք հագած և խրոխտ, պճնազարդ կանանց հետ թևանցուկ անցնում եյին կուշտ փորով պարոններ: Կինո, թատրոն, ակումբ, փառահեղ տներ, ամառանոցներ և այլն, ամեն ինչ բուրժուական և բացառապես բուրժուազիայի համար եր: Սակայն բանվոր դասակարգին մնացել եր կյանքի մրուրը, նրա տականքը: Այն ժամանակ տիրող բուրժուական հոգեբանությունն այսպես եր դատում, թե՛ «ով լողալ չգիտե, թող խեղդվի», այսինքն ով չքավոր ե, անտեսապես թույլ, թող կործանվի:

Հիշում եմ այսորվա նման, թե ինչպես սևացած, յուղոտված բանվորին ցած իջեցրին տրամվայից, և կոնդուկտորը նրան հրամայեց այլևս չհամարձակվել տրամվայ նստել, վորովհետև սյուրտուկով և սպիտակ ձեռնոցներով պարոնների ու բուրժուական փափկասուն կանանց մաքուր շորերը կարող եյին կեղտոտվել: Հիշում եմ, թե ինչպես ակումբի դռնից հետ եյին դարձնում այն բոլոր մարդկանց, վորոնց հագին չկար ոսլայած ոձիք և մաքուր կոստյում: Յեվ բակարայի մոլի արհեստավորներն անգամ ստիպված եյին վարձով շորեր վերցնել՝ ակումբ գնալու, թուղթ խաղալու համար:

Բուրժուական ակումբներն այն ժամանակ հարբեցողության, թուղթ խաղալու և կամ կանանց հետ ժամադրվելու վայրեր եյին, ուր հաճախորդները մնում եյին մինչև լուսաբաց, կանաչ սեղանի շուրջը կարմրած, ուռած աչքերով, հարբեցողությամբ և պոռնիկների հետ

վարելով ամենացոփ կյանք: Ահա այդ եր այն ժամանակվա ակումբների «կուլտուրական» աշխատանքը:

Արժե՞ արդյոք հիշատակել, վոր ցարական իշխանության որով պրոստիտուցիան հովանավորվում եր և հասել եր իր զարգացման գագաթնակետին: Մի կտոր հացի համար իրենց մարմինը վաճառող կանայք, համախմբված հասարակական տներում, վայելում եյին կառավարության հատուկ հովանավորությունը, վորտեղ լրբության, ցինիզմի, «խաղաղ կյանքի» անդորրը չխանգարելու համար նշանակված եյին հատուկ պահապաններ:

Ահա, թե ինչ եր թագնված այն ժամանակվա տիրող բուրժուական արտաքին փայլի տակ: Մի կողմից՝ տիրող դասակարգի շարքերում անգործությունից ճարպակալած և ուռած փորեր, դեխություն, շվայտ կյանք և աշխատավոր մասսայի ծայր աստիճանի շահագործելու տենչանք, մյուս կողմից՝ կարիք, թշվառություն, անոթություն, մի կտոր հացի համար մարմնավաճառություն, գողություն, հանցագործություն և այլն: Այս ծայր աստիճանի ներքին հակասությունները, վորոնք աչք եյին ծակում, այն ժամանակ ամբողջովին իրենց վրա գրավեցին իմ ուշադրությունը:

Թիֆլիս գալով, ինձ իսկույն չհաջողվեց աշխատելու տեղ գտնել: Բավական յերկար գործազուրկ թափառելուց հետո, վերջապես հաջողվեց Ֆրանջյան ազգանունով մի կարինեցու մոտ գործի մտնել, վորպես կոշկակարի աշակերտ: Վարպետս չեկ մազերով, մռայլ դեմքով, կապույտ աչքերով և ամբողջովին ընտանեկան հոգսերի մեջ թաղված մի մարդ եր: Նա կանոնավոր կերպով հետևում եր թերթերին և քաղաքական անցուդարձին: Ինձ ընդունելիս նա ժպտաց և հայտնեց, վոր ճանաչում ե հորս, և ապա բավական յերկար մի «բարոյախոսական» քարոզ կարդաց գլխիս: Նա ասաց.—

— Նախ քան ընդունելս պետք ե քեզ հայտնեմ և նախազգուշացնեմ, վոր յես չեմ սիրում վոչ դաշնակներին, վոչ հնչակներին և վոչ ել «սոցիալ–մոցիալներին»:

— Վարպետ, դաշնակ և հնչակների մասին լսել եմ Երզերումում, բայց «սոցիալ–մոցիալներն» ովքե՞ր են:

— Լսիր և կիմանաս ովքեր են: Այ ախպեր, դու նոր ես յեկել Երզերումից և շատ լավ պիտի իմանաս թե ինչպես այդ դաշնակ կամ հնչակները և նրանց հայդուկները քանդեցին մեր տունը: Նրանք գալիս եյին, սահմանն անցնում, կռվի բռնվում թյուրքի զորքի հետ և կամ հարձակվում վորևե գյուղի վրա ու մի քանի պառաված քյուրդ կամ թյուրք սպանում և թողնում— փախչում եյին: Դրանից հետո ինչ եր լինում մեր վիճակը: Համիդյան կառավարությունն իր վրեժը լուծում եր խեղճ, անմեղ և անզեն ժողովրդից, թնդանոթի կրակի մատնելով

բոլորովին անմեղ և անզեն ժողովրդին: Այդ չէ՞ր պատճառը, վոր յես ծախեցի տուն ու տեղս և տեղափոխվեցի Անդրկովկաս, փորձեցի այստեղ մի քիչ շունչ քաշել... Բայց, ախպեր, այստեղ էլ դրանք մեզ հանգիստ չեն տալիս:

Տո, ամեն օր դրանց լրագրներում կարդում ենք — «Ի զեն, ի սուր և ի հրացան թուրք հայեր դեպի Տաճկաստան» և նման այլ բաներ: Թուրք, Թուր՛ք, ի՞նչպես չէ, տաճկահայերն էլ հենց գրկաբաց ձեզ են սպասում: Գնացեք և նրանց վերջին մնացորդների գլուխն էլ կերեք, վոր հանգստանաք: Տո, մի սառը լինի դրանց — այլ խելառներ, ո՞ւր եք գնում, ո՞վ է ձեզ սպասողը, տո հերիք չէ՞... Տո դրա՞նք պետք է փրկեն հայ ժողովուրդը Համիդի լծից...

— Բայց, վարպետ, դու չասացիր թե ովքեր են «սոցիալ-մոցիալները»:

— Սոցիալ-մոցիալնե՛ր... դրանց սոցիալ-դեմոկրատ, սոցիալ-հեղափոխական կըսեն: Դրանք Երզերում չեն գնացել դեռևս, բայց այստեղ ինչքան ուզես... Տո դրանք մոտեւ եյին քարդաշ, աշակերտի բեյլինը գլխից հանել նրանց և էլ շունը տիրոջը չէր ճանաչում, վոչ մեծ կար վոչ փոքր... Մենք էլ վերցրինք և ըսինք՝ ախպեր, արիք աշխատեք ջխտով (գործավարձով), և թող իծուն կախեն իծի վոտից, վոչխարներին էլ իր վոտից: Եդ էլ չեղավ, պահանջեցին ջխտին ավելի քան տասնում եյին: Յես էլ վերցրի և նրանց «պալուչկի» ժամանակ հայտարարեցի, վոր մաստերսկոս փակում եմ: Նրանից հետո աշակերտներ եմ վերցնում, վորոնք թե սովորում և թե աշխատում են ու հըստ տանն էլ աշխատում են առանց տրտունջի: Տես, հրեն, են չորս աշակերտներ են, խոկ են յերեքը ինձնից սովորեցին արհեստ, մարդ դառան, մի կտոր հացի տեր դառան և աշխատում են մի տան տղերանց նման: Ե՛ր, ախպեր, ո՞ւր է Երզերումի նահապետական կյանքը... Տո ենտեղ խաղեյին ու քարդաշ աշխատում եյին միասին, վոնց վոր մի տան տղերք: Ո՞վ եր լսել գործադուլ կամ ըտենց բաներ: Տո, մի դրանց պետք է ասել թե — ախպեր, դուք էլ լաց արեք մաստերսկոս, և քարդաշ էլ, աշակերտ էլ պահեք, ո՞վ է բռնում ձեր ձեռքը... Դուք էլ սովորեցրեք աշակերտներին և տըրեցեք վոնց վոր տալիս են հերն ու տղեն:

Տո են դաշնակներն էլ հայ ազգը փրկեցին վերջացրին, հիմա յել մարդկության ազատագրելու մասին են մտածում: Միթամ խորամանկություն են անում, վոր բանվորները սոցիալ-դեմոկրատների հետևից չգնան... Մախլաս, ախպեր, եա եր պակաս: Դրանք էլ կաղ եշով քարավան են մտել... Տո թե մալոխը ասեղի ծակից կանցնի՝ նրանք էլ սոցիալիստ կդառնան:

Ախպեր, դու Երզերումից նոր ես յեկել և յեթե գլուխդ քաշ արած ղլուխ աշխատես ու ըտենց մարդոց սատծին գլուխ չդնես, առա համե-

ցեք վաղվանից աշխատիր: Տո ի՞նչ մեր գործն է ազգը փրկելը կամ մարդկությունը ազատագրելը: Ըտենց բաները գահլեքս տարան, մենք պետք աշխատենք մեր ընտանիքը քաղցած չպահել, և դրանից էլ մեծ գործ լինել չի կարող: Արի, արի խելոք աշխատիր, քեզ մի լավ աղջիկ էլ գտնեմ, տուն-տեղ սարքեմ: Ետենց չէ՞, հայրենակից... Ետենց քեզ մատաղ, եքուց յարաղներդ վերցրու արի...

— Ի՞նչ բան է յարաղը, վարպետ:

— Հա, հա, հա, տո եա խոսքը թյուրքերեն չհասկանաս: Մոռացել եյի, վոր Երզերումից նոր ես յեկել և քեզ ծիծաղելի կթվա եդ խոսքը: Շաքուճ-մաքուճ ելլի:

Յես Քրաջյանին հայտնեցի, վոր վոչ մի գործիք չունեմ, և նա խիստ մեծ բարեգործի տոնով հայտարարեց.—

— Լավ, եգուց արի մի բան կանենք, ինչքան չլինի հայրենակից ես, կօգնենք մինչև գնես, գործիք է, խոմ մի քուրք չի...

Դուրս գալով Քրաջյանի մոտից, քայլերս մեքենայաբար ուղղեցի դեպի տուն՝ ամբողջովին պաշարված նրա հայտնած մտքերով դաշնակների ու հնչակների մասին: Նրա քննադատությունն իմ մեջ առաջացրել եր նոր սկսվող բեկում կամ ավելի շուտ՝ կասկած դեպի հայ նացիոնալիստական դաշնակ և հնչակ կուսակցությունների վարած քաղաքականության ճշտությունը:

Բայց, հափշտակված այդ քննադատությամբ, մյուս կողմից մոռացություն եյի տվել վարպետի քողարկված մտքերը՝ աշխատանքի ու կապիտալի փոխհարաբերության մասին: Միայն այն ժամանակ, յերբ սկսեցի աշխատել նրա մոտ, իմ կաշու վրա փորձեցի աշխատանքի անվերջանալի ժամերի ծանր լուծը, հասկացա լրիվին իմ վարպետին: Նրան պետք եյին այնպիսի բազուկներ, վորոնք գրաստի նման աշխատեյին, չհաղորդվեյին անտրտունջ: Յեվ, ըստ յերեվույթին, վարպետս Թյուրքիայից նոր յեկածիս համարել եր այդպիսին, վորին պետք եր նախազգուշացնել, վորպեսզի «սոցիալ-մոցիալներին» չխաբվի և կատարի հլու-հպատակ անասնի դեր:

Քրաջյանի մոտ աշխատանքը տևում եր առավոտյան ծեգից մինչև գիշերվա ժամի իննից տասը: Յես այդպես աշխատեցի մի քանի օր, կարծելով, թե շտապ պատվերներ կան, պետք է վերջացնել, և ապա կաշխատենք մինչև յերեկոյան մութը, ինչպես Երզերումում: Այդ պատճառով էլ մի քանի օր անց, մութն ընկնելուն պես վեր կացա և առաջարկեցի մյուս աշխատողներին էլ՝ թողնել աշխատանքը և տուն գնալ ինձ հետ միասին: Բայց նրանք շարունակեցին աշխատել, և դեմքերով անցավ ինչ վոր հեգնական ժպիտ: Յես մենակ գնացի դուրս:

Հաջորդ օրը մութն ընկնելուն պես վարպետս տվեց «շտապ» գործեր, վորոնք անպատճառ պետք եր վերջացնել այդ օրը: Յես նորից

աշխատեցի, բայց ի վերջո համոզվեցի, վոր այդ վոչ թե պատահականություն եր, այլ սիստեմ: Ինձ համար այդ չափազանց ծանր աշխատանքը թվում եր ամենադժոխային մի կյանք, վորից հնարավորության չափ պետք եր շուտով ազատվել: Ցերեկոյան ժամերը յես աշխատում եյի մեծ դժգոհությամբ, և յերանի եյի տալիս Էրզերումի աշխատանքային պայմաններին, պատմում եյի, վոր այնտեղ համենայն դեպս ավելի տանելի պայմաններ կային, քան «լուսավորված» Թիֆլիսում: Այդ ընազդական `խուլ պայքարը իմ և վարպետիս միջև յերկար տևել չեր կարող: Մի շաբաթ որ, յերբ պետք եր ստանալ «պալուչկա»— աշխատավարձ, յես մոտեցա վարպետիս՝ ստանալու: Նա մի խայթող հայացք ձգեց ինձ վրա:

— Վերցրու հաշիվդ,— ասաց նա՝ փողը նետելով իմ առաջ,— և այլևս վոտք չդնես իմ արհեստանոցի շեմքը, իմացա՞ր... Տե դեռևս աշակերտությունից չես ազատվել, բայց գործադուլների մասին ես մտածում. իսկ յեթե մի քիչ բան սովորես, ինչե՞ր պիտի անես մեր գլխին... Տո աշխարհի քոսությանը մտիկ արա, թե Տաճկաստանից նոր յեկածները նույնիսկ սկսեցին մեր գլխի վրա ընկույզ ջարդել: Տո ում վոր մուսուլման համարեցինք, նրա գլխից խաչ դուրս յեկավ... Չե, չե, չե, չե՛, դու այլևս վոտք մի դնի իմ մաստերսկոյն. ել չեմ ցանկանում քո յերեսն անգամ տեսնել... Այա, յալլա:

— Չես ուզում՝ չեմ աշխատի, վարպետ, բայց ինչո՞ւմն է բանը:

— Ուրիշ վոչ մի խոսք քեզ հետ, գնա, ասված քեզ հետ, լսեցի՞ր:

Քրաջյանի արհեստանոցից արձակվելուց հետո, նորից գործազրկության և սովի սպառնալիքը ծառացավ առաջս: Վո՞րին դիմեյի, վոր գործ տային, յերբ չկար մեկը, վոր յերաշխավորեր, միջնորդեր: Արհեստին դեռևս այն աստիճան չեյի տիրապետում, վոր գործատերերն իրենք ինձ վորոնեյին և գործ տային: Չափազանց խոշոր դժվարությամբ և հոգեկան ծանր ապրումներից հետո, հաջողվեց այլ կարենցու՝ Միքայելյանի մոտ գործի մտնել, վորը նույնպես «հայրենասիրաբար» ընդունեց «զեմլյակիս» իր մոտ աշխատելու: Դա հարբեցող և սեռական ցոփ կյանքով ապրող մի մարդ եր, վորն անվերջ դեղեր եր ընդունում՝ իր ախտերից ապաքինվելու համար:

— Թափի գյուղացի պես մարդ ես,— ասավ նա,— ել ինչո՞ւ յեկար այս անտեր քաղաքը, վոր մեր ո՞րն ընկնես... Բա ափսոս չե՞ քո առողջությունը, վոր կորցնելու յես այս անտեր քաղաքում,— հաճախ կրկնում եր նա այս խոսքերը:

Միքայելյանի մոտ մի քանի որ աշխատելուց հետո, նա յել անսպասելի կերպով հեռացրեց ինձ, հայտարարելով, թե՝

— Այլևս բանվորի կարիք չունեմ:

Նրա հայտարարությունն ինձ վրա շշմեցուցիչ տպավորություն թողեց, և յես ինձ հարց եյի տալիս, թե ինչո՞ւ այդ մարդը մի քանի

որ առաջ սիրով ընդունեց և բանվորի կարիք ուներ, իսկ այսօր կարիք չունի: Յես չեյի կարողանում պատասխան գտնել այդ հարցին: Սակայն, թեև բավական ուշ, բայց այնուամենայնիվ պարզվեց, վոր նա հեռացրել եր, վորպես «բունտարի» «խառնակչի», «բանվորական» հարցի մասին մտածողի: Այնինչ իմ հանցանքը միայն այն եր յեղել, վոր նրա բանվորներին պատմել եյի, թե Էրզերումում մութն ընկնելուց հետո իսկույն բոլոր խանութները փակվում եյին ու բանվորները գնում —ապրում եյին իրենց, ընտանեկան կյանքով: Իսկ այդ՝ բանվորների մեջ հավանություն եր գտել, և ուրիշ վոչինչ:

Յեվ այդպես գործազրկության, սովի սպառնալիքը նորից դամոկլյան սրի նման կախվեց գլխիս: Այդ պատճառով ել չկարողանալով գործազրկությանը յերկար դիմանալ՝ ստիպված եյի հեռանալ Թիֆլիսից: Ուստի, նախ գնացի Կարս և ապա Թիֆլիսի վրայով մեկնեցի Բաթում:

ԲԱԹՈՒՄՈՒՄ

Լուսադեմին գնացքը մեզ հասցրեց Սև ծովի ափերը, վորտեղ իրարից վոչ շատ հեռու, ծովափին նստած եյին Նոթանեբին, Կոբուլետը, Չակվան և ապա Բաթումի ամառանոցներ՝ Զելյոննի միս, Մախինջաուրի կայարանները: Մեր առաջ բացվեց գորշ մոխրագույն մի լայնածավալ ու մխապաղաղ հորիզոն: Յեղանակն ամպամած եր ու խոնավ, ուստի յերևացող ծովն արտացոլել եր համապատասխան գույն: Տեսնելով այդ պատկերը՝ հարցրի ուղեկցիս.—

— Ի՞նչ բան է սա:

— Ծովն է, ինչպես յերևում է առաջին անգամն ես տեսնում:

— Այո, բայց չե՞ վոր ծովը կապուտակ է լինում,— և ապա կատակով ավելացրի,— յերևի հենց այդ գույնի պատճառով ել Սև ծով է կոչվում:

Վոչ, յեղանակը յերբ պարզվի, արեգակը յերևա, այն ժամանակ ծովն ել կկապտի:

Գնացքը մոտենալով Բաթումին՝ արագացրեց իր ընթացքը, կարծես թե հրճվանքից մի սոսկալի ճիչ արձակեց, վոր անվտանգ տեղ եր հասել, բերելով իր հետ բազմաթիվ մարդկանց՝ բյուրավոր նորություններով ու հոգսերով: Այնուհետև նա փշշալով, փռնչալով, դանդաղաշարժ մտավ քաղաք և համարյա թե մեջտեղից, ծխելով իր հսկայական նարգիլեն, հպարտ կերպով կանգ առավ անշուք կայարանի առաջ:

Անձրև սկսում եր: Մռայլ ամպերն իրենց շիթերն արդեն հասցրել եյին յերկրին, վերածվել յերկար ջրային թելերի, և վողողում եյին փողոցների ասֆալտած մայթերը: Իրերս վերցրած՝ դուրս եմ գալիս և մտնում կայարան՝ մինչև ուժեղացող անձրևի կտրվելը:

— Վատ է զինավորում քո Բաթումը, Ղազանճյան,—ասում եմ ուղեկցիս՝ դառնալով նրան:

1909 թվի ապրիլի վերջերին էր այդ, յերբ յես գնացի Բաթում: Նա կարծես թե սգում էր իր անցյալը, յերբ 40–50 հազար աշխատավոր ձեռքեր առավոտ լուսաբացին գործարանային շչակների կանչից շտապելիս էին յեղել աշխատանքի, իրենց մի կտոր հացը ստանալու կապիտալիստների ձեռքից: Գործարանատերերը, տալով այդ աշխատավարձ անունը կրող քաղցի վարձը, կանգ չէին առել վոչ մի միջոցի առաջ, վորպեսզի հնարավորության չափ շատ աշխատեցնեն և քիչ վարձատրեն բանվորներին՝ հավելյալ արժեքներ կուտակելու տենչանքով բռնված:

Այդ գործարաններում նավթն արտասահման տեղափոխելու համար թիթեղյա ամաններ և փայտյա արկղներ են պատրաստվել: Սակայն այդ բոլորը վերաբերում էր անցյալին, և գործարանային ժխորից մնացել էին միայն ավերակներ, գերեզմանային լռություն: Բայց նավթն այնուամենայնիվ արտասահման գնում էր, միայն առանց թիթեղյա ամանների ու արկղների:

Բաթում էին այցելում բազմաթիվ յեվրոպական ու ամերիկյան նավեր, վորոնք բերում էին իրենց ֆաբրիկային ապրանքը և տանում յերկրի հումքը, թողնելով յերկրում իրենց վալյուտան, ապրանքներն ու վեներական ախտեր, վորով վարակվել էր քաղաքի ազգաբնակչության խոշորագույն տոկոսը: Քաղաքի ամբողջ ծովեզերքը ծածկված էր պոռնիկներ «գարեջրաններով», վորոնք վորսում էին քաղաքի յերիտասարդությանը, ու մի տեսակ պատուհաս էին դառել ազգաբնակչության գլխին, վտանգի տակ դնելով նրանց առողջությունը:

Ինչպես Թիֆլիսում, այստեղ ևս գործի մոտ մեծ դժվարություններից հետո, վորոնց պատճառները մեկից ավելի էին: Նախ՝ արհեստին լավ չէի տիրապետում, ուստի անվերջ մի տեղից մյուսն էի փոխադրվում, մինչև վերջապես կանգ առա արդվինցի Մուլքիջանյանների մոտ, վորոնք հասարակ կոշկեղեն էին պատրաստում կիրակնօրյա շուկա դուրս բերելու համար: Այնուհետև, քաղաքում կային բավական գործադուրկ կոշկակարներ, վորոնց թիվն օրստօրե ավելանում էր ֆաբրիկային ապրանքի մրցության շնորհիվ, վորն իր եժանությամբ և մաքրությամբ շուկայից դուրս էր վանում թույլ, անուժ արհեստավորներին, փողոց շպրտելով նաև նրանց բանվորներին: Վերջապես, արհեստավորների մեջ յերկար ժամանակ դեռևս ապրում էր յերաշխավորելու ձեռնականությունը: Իսկ յես ծանոթներ չունեյի, և այդ ել իր հերթին խանգարում էր իմ գործի ընդունվելուն:

Զարմացնող խորամանկ մարդիկ էին այդ արդվինցիները: Նրանք ինձ ընդունելիս առաջարկում էին զույգով՝ ամենաչնչին գինը տալով զույգին: Նրանց ծերունի բիձան ասում էր.—

— Զխտով աշխատի, քանի ջուխտ ուզել ես՝ տալիս ենք: Եղամ գործ ունենք վո՞ր, ջուլ-ջուլ կարի հա կարի...

— Չե, վարպետ, ամսականով, և կաշխատեմ իմ պարտականությունները բարեխղճորեն կատարել:

Նրանք համաձայնեցին ամսական 25 ռուբլով ինձ գործ տալ, և յես ստիպված էի համաձայնել: Բայց նրանք շահագործում էին նաև ուրիշ մեքենայություններ գործադրելով, վորոնք ծանոթ յերևույթ չէին անգամ քաղաքակրթության ասպարեզում, կապիտալի և աշխատանքի փոխհարաբերություններում:

Նրանց ծերունի «բիձան», վոր մի վաթսուն տարեկան ալեզարդ մարդ էր, ամեն օր «շարաշի» բանթողի ժամանակ, այդ փորձված ավեսը սկսում էր պատմել չափազանց հետաքրքիր ու յերկա՛ր, սուր հումորով համեմված արկածներ: Նա պատմում էր նաև իր յերիտասարդությունից այնպիսի հետաքրքիր դեպքեր և այնչափ վարպետորեն, վոր մարդ չէր կարող չլսել: Նա և նրա յերկու վորդիները ժպիտը դեմքերին աշխատում էին մինչև ուշ գիշեր, աշխատեցնելով իրենց հետ նաև մոտ սամնհինգ բանվոր: Այդպիսով, բանվորները «բիձայի» համով-հոտով պատմվածքներից, թե «քաղաքավարությունից դրդված» և կամ ուղղակի միամտորեն աշխատում էին օրական մեկից յերկու ժամ ավելի: Մուլքիջանյաններն օրական դրանով ստանում էին 15–30 ժամվա հավելյալ աշխատանքի արդյունք՝ փոխարենը վոչինչ չվճարելով: Բայց շատ շուտով պարզվեց ինձ համար նրանց այդ խորամանկությունը: Այդ պատճառով ել, յերբ մեր տաղանդավոր «բիձան» կամ նրա վորդիներից մեկը բանթողի ժամանակ սկսում էին պատմել, բաց անել «հազար ու մեկ գիշերը» հիշեցնող արկածների կամ անեկդոտների տուտը, յես առանց սպասելու նրանց վերջավորությանը, թողնում էի գործս, լվացվում և դուրս գալիս արհեստանոցից: Իմ օրինակին սկսեց հետևել նաև մյուս բանվորների մեծ մասը: Մենք սկսեցինք այնպես ձևացնել, թե այդ պատմվածքները վոչ թե մեզ համար էին, այլ հայրը պատմում էր իր պավակներին: Մեր վարմունքը, իհարկե, դուր չեկավ նրանց, բայց վերջ դրեց այդ կատակերգությունը:

Մուլքիջանյանների մոտ օրվա ընթացքում 11–12 ժամվա ամենալարված ծանր աշխատանքի համար ամսական ստանում էի 25 ռուբլի միայն: Իսկ յեթե խաբվեյի նրանց խորամանկությունից և միամտորեն աշխատեյի մեկից յերկու ժամ զանազան հեքիաթներ լսելով՝ ապա նույն աշխատավարձով օրական աշխատելու էի մինչև 14 ժամ:

Ռեակցիայից հետո, Բաթումում պրոֆմիություն չէր կազմակերպվել և վոչ էլ քաղաքական վորևէ կազմակերպություն կար, վորը համախմբեր բանվորներին՝ աշխատանքի լավագույն պայմանների համար պայքար մղելու, կամ թեկուզ սահման դներ անծայր շահագործման-

րին ու վտարնձգություններին։ Մնում եր միայն մի ասպարեզ, վորը ցույց եր տալիս այդ բոլոր անարդարությունների պատճառը և նրանցից յելք գտնելու ուղին։ Այդ՝ գիրքը, թերթը և առհասարակ տպագիր խոսքն եր, վորից կարելի յեր այրող հարցերի պատասխանը ստանալ և ռեակցիայի դաղածից թեթևություն զգալ վորոշ չափով։ Ընթերցանության համար այդ ժամանակ յես զոհում եյի ամեն ինչ՝ հանգիստ, զվարճություն, զբոսանք, բոլորը, բոլորը զոհաբերում եյի նրան։

Դեռ Թիֆլիս յեղածս ժամանակ, շուկայից մի առ մի գնել եյի համարյա թե այն բոլոր հրատարակությունները, վորոնք ասպարեզ եյին հանված 1905 թվին և հաջորդ տարիներում։ Համարյա ամբողջովին ձեռք եյի բերել սպեցիֆիկների «Կյանք», սոցիալ-դեմոկրատ-բոլշևիկների «Բանվորական գրադարան», Դաշնակցության «Հառաջ» և այլ հրատարակությունների բոլոր սերիաները, և ագահությամբ, առանց սիստեմի, կարդում եյի, ինչ վոր դուր եր գալիս ինձ։

Իմ այդ անսիստեմ ընթերցանությանը սիստեմատիկ բնույթ տվեց ավագ յեղբայրս՝ Յերվանդ Գարագաշը, վորն այն ժամանակ սովորում եր Եջմիածնի ճեմարանում և սոցիալ-դեմոկրատ եր։ Յես շատ բանով նրան եմ պարտական նրա համար, վոր նա դասավորում եր իմ ընթերցանելի գրքերը և ղեկավարում ընթերցանությունս՝ իր խիստ հոգատար ցուցմունքներով։ Նրա շնորհիվ ել հետագայում չափազանց շուտով ձգտեցի կապվել պրոլետարիատի մարտական գնդի, նրա կազմակերպված մասի ղեկավար ՌՍԴԲ բոլշևիկների կուսակցության հետ, վորն այսոր Կոմունիստական կուսակցություն ե կոչվում։

Բաթումում ծանոթացա հայերեն լեզվով հրատարակված թարգմանական մի շարք գրքերի և հայ կլասիկների գեղարվեստական յերկերի հետ, իսկ առաջին մարքսիստական գործը, վոր կարդացի այդ Շտերնի «Մարքսի պատմական մատերիալիզմը և հավելյալ արժեքի թեորիան» գրքույկն եր, վորը խիստ ժողովրդական, պարզ լեզվով շարադրում եր մեծ ուսուցիչ՝ Մարքսի թեորիայի հիմնական մասի այբուբենը՝ խիստ հակիրճ ձևով*)։ Այդ գրքույկն ինձ համար ուղղակի մի նոր հայտնություն, մի գյուտ հանդիսացավ։ Նա տվեց ինձ մտահայեցողության այնպիսի նորություններ, վորոնք ուղղակի հեղաշրջեցին իմ դատողությունները։ Այնչափ հափշտակվեցի այդ գրքույկով, վոր ագահաբար կարդացի մի քանի անգամ, և մինչև այսոր վորոշ կետեր մնացած են հիշողությանս մեջ։ Միայն այդ գրքույկի ընթերցանությամբ յես սկսեցի զանազանել բուրժուական-իդեալիստականը պրոլետարական-մատերիալիստականից։ Մինչև որս ել, յերբ հիշում եմ այդ գրքույկի ընթերցանության թողած տպավորությունը՝ իսկույն վերհիշում եմ նրանից հետևյալ մտքերը։

Մարքսից՝

«Վոչ թե մարդկանց գիտակցությունն ե, վոր վորոշում ե նրանց կեցությունը, այլ ընդհակառակը, մարդկանց հասարակական կեցությունն ե, վոր վորոշում ե նրանց գիտակցությունը»։

*) Հետագայում համոզվեցի, վոր Շտերնը հետևողական մարքսիստ չի յեղել յերբեք։

Ենգելսից՝

«Բոլոր հասարակական փոփոխումների և քաղաքական հեղաշրջումների վերջին պատճառները փնտրելու յե վոչ թե մարդկանց ուղեղներում, նրանց գիտակցության զարգացման մեջ, այլ այն փոփոխումների մեջ, վոր տեղի յեն ունենում արտադրության և փոխանակության յեղանակներում»։

Բացի դրանցից Մարքսի և Ենգելսի մտքի հրաշալիքներից մի շարք ուրիշ մարգարիտներ ուղղակի անգիր արած կրկնում եյի ամեն տեղ։ Իսկ հետագայում կարդացի Դիկշտեյնի «Ով ինչով ե ապրում», Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ», Կաուցկու՝ «Երֆուրտի ծրագրի մեկնաբանությունը» Մարքս և Ենգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և բավական ուշ՝ յեղբորս հետ պարապում եյի Բոգդանովի «Տնտեսագիտության համառոտ դասընթաց» գրքով։ Կարդացի և այլ գրքույկներ հայերեն թարգմանություններից։

Այնուհետև, յերբ այդ գրքերի շնորհիվ վերջնականապես ազատագրվեցի դաշնակցական մտահայեցողությունից, իսկույն մի նամակ գրեցի ճեմարան յեղբորս՝ հայտնելով նրան, թե «յես այլևս չեմ կարող հոգեկան կապ պահպանել (հասկացիր՝ նրա գաղափարները համակրել) դաշնակների հետ, վորոնց աշխարհայեցողությունը իդեալիստական, բուրժուական ե» և այլն։

Մնում եր խզել նաև այն ծանոթություններն ու «ընկերական» կապերը, վորոնց շնորհիվ դաշնակներն իրենց համակիրների թվում նկատի եյին ունեցել նաև ինձ։

Սակայն այդ կատարվեց բոլորովին անսպասելի կերպով և ստացավ պաշտոնական բնույթ։

ԽԶՈՒՄ ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՀԵՏ

Երզերումից դուրս գալուց հետո, այլևս յերկար ժամանակ կապ չունեցա դաշնակների հետ, բայց անգիտակցաբար, դատողությամբ ավելի մոտ եյի նրանց, քան վորևե քաղաքական այլ կուսակցության։ Այդ հասկանալի յեր, վորովհետև այն միջավայրը, վորտեղ ապրում և մտավոր սնունդ եյի ստանում, ամբողջովին հագեցած եր բուրժուա-նացիոնալիստական տրամադրություններով։ Յեվ իմ Բաթում յեղած ժամանակ, յերբ յեղբայրս՝ Յե. Գարագաշը գալիս եր ճեմարանից ամառվա հանգստի՝ յես նրա հետ միշտ վիճում և պաշտպանում եյի դաշնակցական տեսակետներ։ Պատմական մատերիալիզմի ու հավելյալ արժեքի մասին տարրական գաղափար կազմելուց հետո, Գարագաշին ուղղած իմ նամակը ուղղակի մի զղջումն ե սխալներիս վերաբերմամբ, վորոնցից հրաժարվում եյի անվերադարձ կերպով։ Բայց այդ նամակագրությա-

նը զուգադիպեց մի այլ դեպք, վորով վոչ միայն գաղափարական, այլ նաև ամեն տեսակի կապերս վերջնականապես խզվեցին դաշնակների հետ։

Այդ օրերը Բաթում եր յեկել Աշոտ անունով մի դաշնակցական պրոպագանդիստ և հայ բանվորներից խմբեր եր կազմակերպում։ Այդպիսի ժողովներից մեկում, վորտեղ նա ներկա պիտի լիներ, կանչեցին նաև ինձ։ Լսելով պրոպագանդիստի զեկուցումը, յես խոսք վերցրի և բավական անտակտ կերպով սկսեցի նրան հակաճառել, թե զեկուցողն ուզում ե բուրժուական գաղափարները բանվորներիս վզին փաթաթել, թե նացիոնալիստական գաղափարները բուրժուազիայի հացին յուղ են քսում, թե այդ գաղափարները մեզ բանվորներիս օտար են, և թե դաշնակները մեզ մոլորեցնում են և այլն, և այլն։

Դաշնակցական պրոպագանդիստը հենց առաջին խոսքերիցս դեմքը կնճռոտեց և խայթող հայացքներով հազիվ լսեց իմ խոսքերը։ Նա զարմանք հայտնեց, վոր ինձ «նմանները» «կարողացել եյին» դաշնակցական ժողովներին ներկա լինել։ Նրա պատասխանն ամբողջովին մի հայհոյանություն եր Ս.-Դ.-ների հասցեյին, վորոնց տեսակետները, նրա ասելով, անհամատեղելի եյին հայ ժողովրդի շահերին, ու վոչ մի հայ գիտակցաբար նրանց հետ գնալ չեր կարող, բացի ինձ նման «մոլորվածից»։ Դրանից հետո, նա կարճ կապեց, և ժողովը փակվեց։ Բայց յես հասկացա, վոր նա ժողովը հետաձգեց՝ ուրիշ անգամ շարունակելու համար։

Մի օր անցած, իմ բնակարանը յեկավ մի իսկական մաուզերիստ, ինձ դուրս կանչեց փողոց և հայտնեց, թե դաշնակներն իրենց ժողովում իմ յելույթը համարել են սոցիալ-դեմոկրատների ագենտի գործ և նախազգուշացնում են, ասելով թե վոչ՝ «մի գնդակով ինձ շան սատակ կանեն» և այլն, ու հեռացավ առանց լսելու իմ պատասխանը՝ թե ժողովին իրենք եյին հրավիրել ինձ, թե յես դաշնակցական տեսակետներից վաղուց եյի հրաժարվել և այլն։

Այսպիսով, իմ խզումը դաշնակների հետ, հանգամանքների բերումով, ստացավ պաշտոնական բնույթ։ Բայց այդ խզման հետ միասին, ինձ հետ հարաբերությունները խզեցին նաև վորոշ ծանոթներ, վորոնց հետ հաճախ տեսնվում եյի։ Ըստ յերևույթին, նրանք դաշնակներ եյին համարում իրենց, իսկ ինձ ամենաքիչը՝ իրենց հակառակորդ։ Ստեղծվեց բավական տարօրինակ մի դրություն։ Հին ծանոթներիս հետ կապերս միանգամից խզվեցին, իսկ նոր Ս.Դեմ. բարեկամներ չունեցա ու մնացի բոլորովին մենակ։

Միայն Բաթումում հրատարակվող «Կոչ» ժուռնալը ձեռքս ընկնելուց հետո իմացա, վոր թե Բաթումում և թե Թիֆլիսում կան Ս-Դ-ներ։ Վճռեցի թողնել Բաթումը և մեկնել Թիֆլիս՝ մի կերպ սոցիալ-դեմոկրատների հետ կապվելու համար։ Այդ ժուռնալը հրատարակվում եր Բ. Իշ-

խանյանի, Գ. Անանունի և Պրճիկյանի մասնակցությամբ, և հրատարակվեց, կարծեմ, ընդամենը չորս համար։ Նախաձեռնությունը պատկանում եր սպեցիֆիկներին։

Բայց Թիֆլիս գալով, յես կապվեցի վոչ թե սպեցիֆիկների և կամ մենշևիկների ու վպերյոդականների, այլ սոցիալ-դեմոկրատ-բոլշևիկների հետ, վորոնց շարքերում մնացի մինչև վերջ, վորովհետև հենց այն ժամանակ ել յես համոզվել եյի, վոր բոլշևիկներն եյին այն հեղափոխականները, վորոնք հետևողականորեն պաշտպանում եյին պրոլետարիատի դասակարգային շահերը և վոչ թե նրանք, վորոնք սոցիալ-դեմոկրատ կոչվելու և Մարքսի ուսմունքով «առաջնորդվելու» հավակնություն ունեյին և կոչված եյին աղավաղելու նրանց։

ՑՐՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ

Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատի յելույթը 1905 թվին, վորը վերջացել եր ժամանակավոր պարտությամբ, սոցիալ-դեմոկրատիայի շարքերում տարբեր մեկնաբանություններ առաջ բերեց։ Մենշևիկ-օպորտունիստական վորոշ տարրեր հեղափոխությունը վերջնականապես պարտված եյին համարում և հարց եյին հարուցում վերջ տալու կուսակցության ընդհատակյա կազմակերպությանը և պարապելու լեգալ աշխատանքով միայն։ Այդ կնշանակեր լեգալ, կուլտուրական աշխատանք վարել պրոֆմիություններում, ապահովագրական դրամարկղներում, գրադարան, ընթերցարան, ժողովրդական համալսարան և այլ կրթա-կուլտուրական հիմնարկներում։ Ուրիշ խոսքով՝ պրոլետարիատի կենդանի հեղափոխական գործը լուծել և վերածվել կուլտուրական մի լեգալ կազմակերպության, վորից վոչ մի վտանգ չեր սպառնալու վոչ ցարիզմին, վոչ ել նրա հետ միացյալ ֆրոնտով գրոհի յելած բուրժուազիային ու կալվածատիրությանը։ Ընդհատակյա աշխատանքի լիկվիդատորական այդ հոսանքը բավական ուժեղ եր կուսակցության մեջ և հղի խիստ վտանգավոր հետևանքներով։

Բայց կուսակցության հեղափոխական թևը հանձին բոլշևիկների, ծառացել եր մասսաներն այլասերող այդ վտանգավոր հոսանքի դեմ և ընդգծում եր, թե 1905 թ. հեղափոխության պարտությունը թեև վորոշ չափով ջլատեց բանվորության ֆիզիկական կենդանի ուժերը, բայց այդ ժամանակավոր պարտություն եր և վոչ մի դեպքում հիմք չկա լիկվիդացիայի յենթարկելու ընդհատակյա կազմակերպությունը։ Ընդհակառակը՝ պետք ե ուժեր հավաքել, կազմակերպել նոր ուժեր հարմարագույն բոպեյին կազմակերպված դուրս գալու թշնամու դեմ, մինչև վոր հեղափոխության գործը հասներ հաղթական վախճանի։ Բայց դրա համար պետք եր նաև ամենասերտ կապ պահպանել աշխատավոր գյուղացիության հետ, վորի բացակայության պատճառով ել պրոլետարիատի

հեղափոխական յելույթը չէր կարող լիակատար հաջողությամբ պսակվել։ Բոլշևիկները պնդում էին, վոր անկասկած, պետք է պահել հեղափոխության այդ գլխավոր շտաբը՝ ընդհատակյա կուս. կազմակերպությունը։ Բայց միաժամանակ անհրաժեշտ էր նաև օգտագործել բոլոր լեգալ հնարավորությունները, վորոնք գալու էին լրացնելու ընդհատակյա աշխատանքների բացերը՝ յենթարկվելով նրա անմիջական ղեկավարությանը։ Այդ տեսակետից գործունեության ասպարեզ կարող էին հանդիսանալ վոչ միայն պրոֆմիությունները ու հասարակական այլ կազմակերպությունները, այլև Պետական Դուման, քաղաքային դումաները և այն հասարակական կազմակերպությունները, վորոնց կապված էին բանվորները։

Բոլշևիկները սխալ էին համարում վոչ միայն մենշևիկ լիկվիդատորների տեսակետը, վորոնք այնչափ հեռու էին գնացել, վոր ուղղակի պահանջ էին դրել լուծել ընդհատակյա կենտկոմը, վորպես ամենավնասակար որգան, այլև, բոլշևիկների կարծիքով, չափազանց սխալ էին օտզովիստները, վորոնք հարց էին բարձրացրել հետ կանչել Պետական Դումայի անդամներին (Ս-Դ) և բոյկոտի յենթարկել Դուման։ Բոլշևիկները, Լենինի գլխավորությամբ, պնդում էին, վոր քանի դեռ պրոլետարական հեղափոխությունը պարտված է, բանվորական շարժումը քշվել, տեղատվության է յենթարկվել, պետք է օգտագործել վերոհիշյալ լեգալ աշխատանքի բոլոր ասպարեզները, վորպես ագիտացիայի ամենալավագույն ամբիոն, մինչև պրոլետարիատը ուժեր հավաքի և նորից ասպարեզ գա զենքը ձեռքին։ Այն ժամանակ, կուսակցությունը, գլխավորելով այդ շարժումը, այլևս կարիք չի զգա Պետական Դումայի ամբիոնի և վոչ էլ ուրիշ նման հիմնարկի օգտագործման։

Սակայն 1910 թվից նորից սկսում է բարձրանալ բանվորական շարժման ալիքը և իր հետ ոգն է ցնդեցնում մենշևիկ-լիկվիդատորական ամեն տեսակի աղավաղված բնորոշում պրոլետարական հեղափոխության վերաբերմամբ։ Պրոլետարիատը ուժեր էր հավաքում, վորպեսզի մաքրեր իր հաշիվները լրբացած ցարական միահեծանության հետ, վորը տեղի ունեցավ նրա հաղթությամբ՝ միայն 1917 թ. փետրվարին։

Այս անգամ առաջին ձեռնոց նետողը հանդիսացավ ուսանողությունը։ Վերջինիս յելույթին առիթ հանդիսացավ 1-ին Պետական Դումայի նախագահ չափավոր լիբերալ Մուրոմցևի և հռչակավոր արվեստագետ գրող Լև Տոլստոյի մահը։ Կազմակերպվեցին ուսանողական բազմաթիվ ժողովներ, վորոնք ի վերջո վերածվեցին ցույցերի։ Այդ ցույցերին ել ավելի զարկ տվին այն հրեշավոր բռնությունները ու սոսկալի տանջանքները, վոր գործադրվում էին ցարական Զարայկա-Զելենդուրի տաժանակիրների բանտում, վորտեղ ինքնասպանություն գործեց Ֆոն-Պլեվեյին սպանող տեռորիստ Սազոնովը։

Այդ բոլորին ցարական կառավարությունը պատասխանեց իր հին մեթոդով։ Բանտերը լցվեցին բազմաթիվ կալանավորներով, վորոնց վերաբերմամբ գործադրված բռնությունները վոտքի բարձրացրին նաև համբերության բաժակը լցված պրոլետարիատին։ Ինչպես մենք արդեն ասել ենք, ցարական կայսրությունն այդ շրջանում սկսել էր իր տնտեսական վերելքը՝ Ստոլիպինի հողային օրենսդրության շնորհիվ, իսկ այդ վերելքն իր հերթին կենդանացնում էր նաև բանվորական շարժումը։

1910 թվի վերջերին սկսում է բարձրանալ գործադուլների մի ամբողջ ալիք։ Այդ շարժումը ղեկավարելու համար այժմյան Լենինգրադում բոլշևիկ-լենինիստների և մենշևիկ կուսակցականների աջակցությամբ հրատարակվում է «Звезда» շաբաթաթերթը։ Այդ թերթը խոշոր դեր է խաղացել վոչ միայն Ռուսաստանի պրոլետարական հեղափոխական շարժումը ղեկավարելու գործում, այլ նաև Անդրկովկասի պրոլետարիատի համար։

Այդ ժամանակ Անդրկովկասը նույնպես ապրում էր տնտեսական աննախընթաց վերելք և իր հետ կենդանացրել էր հասարակական բոլոր առաջընթաց ուժերը։ Կովկասի փոխարքա Վարանցով-Դաշկովի 1905—1913 թվերի հաշվետվությունից և արդյունաբերական այլ ընկերությունների տվյալներից յերևում էր, վոր տնտեսական վերելք էր ապրում նաև Անդրկովկասը։

Այդ ժամանակ Թիֆլիսում, Բաքվում և ամենուրեք սկսվում է սոցիալ-դեմոկրատ հին, ցրված ուժերի համախմբումը, կազմակերպվում են բջիջներ, լույս են տեսնում պարբերական և վոչ պարբերական հրատարակություններ, վորոնց թիվը սակավ էր, բայց աճում էր օրեցօր։ Բանվորական շարժման այդ նոր ալիքը վոչ միայն համախմբեց ցրված ուժերը, այլ նաև առաջ քաշեց բանվոր և ինտելիգենտ ընկերների մի ամբողջ սերունդ։ Յեթե 1905 թվի շարժումը մեզ տվել էր հեղափոխական բոլշևիկների ամենահին գվարդիան, ապա 1910 թվին սկսված շարժումը տվեց հին բոլշևիկ հեղափոխականների յերկրորդ գվարդիան։

Ահա այսպիսի վերելքի շրջան էր ապրում Ռուսաստանի բանվորական-հեղափոխական շարժումը, յերբ յես ամենածանր զրկանքներից հետո կարողացա հաջողեցնել Թիֆլիս գնալ, վորպեսզի կապ հաստատեյի սոցիալ-դեմոկրատների հետ։ Բախտն ինձ ժպտաց։ Յես 1910 թ. օգոստոսի վերջերին Թիֆլիս գալով, յերկու օր չանցած՝ կապվեցի Թիֆլիսի Ս-Դ. բոլշևիկների հետ և մտա նրանց շարքերը։

Յես ապրում էյի Վողնեսենսկի փողոցում, պարսկաստանցի Իսրայել (ազգանունը չեմ հիշում) անունով մի ինտելիգենտ անձնավորության հետ, վորը համակրում էր սոցիալ-դեմոկրատներին և ճանաչում

եր նրանցից մի քանիսին: Նա, նկատելով իմ բուռն ցանկությունը՝ կապվել Ս-Դ հետ՝ իսկույն տարավ Յերեվանյան հրապարակ, վորը նրանց առորեական ժամադրավայրն եր, և ծանոթացրեց Ներսես Ներսիսյանի և Վասիլ Խաչատրյանի հետ: Նրանց հետ բավական յերկար խոսակցությունից հետո, յես հայտնեցի իմ ցանկությունը՝ մտնել սոցիալ-դեմոկրատների շարքերը: Նրանք սիրով ընդառաջեցին իմ ցանկությանն ու խոստացան հաջորդ որը գալ նույն տեղը՝ ժողով գնալու համար:

Հաջորդ որը յես արդեն մասնակցեցի բոլշևիկյան նորակազմ բջիջներից ամենաառաջինի յերկրորդ նիստին: Անդրկովկաս գալուց հետո այս արդեն յերկրորդ գրուպն եր, վոր կատարվեց ինձ համար: Առաջինը մարքսիստական գաղափարների ամենատարրական ծանոթությունն եր, վորը հեղաշրջեց ամբողջ մտահայեցողությունս ու պատճառ հանդիսացավ վերջնականապես խզվելու դաշնակների հետ, իսկ յերկրորդ անգամ՝ յես արդեն կապվում եյի այդ գաղափարներն ամենահետևողական կերպով կյանքում կիրառող կազմակերպության հետ, վորին վիճակված եր հետագայում հիմք դնել պրոլետարական դիկտատուրայի ամենակայուն և ձևակերպված սիստեմին՝ խորհրդային իշխանությանը:

Յես կազմակերպության մեջ մտնում եյի այն ժամանակ, յերբ պրոլետարիատն իր սոսկալի պարտությունից հետո նոր եր սկսել արթնանալ յերկարատև քնից, ու նրա ճանապարհին վարդեր չեյին սփռված: Նյութական վոչ մի անմիջական բարելավման կամ արտոնությունների խոստումներ չուներ և չեր ել կարող անել նա: Այն ժամանակ սոցիալ-դեմոկրատների և հատկապես բոլշևիկների շարքերը մտնողի առաջ բացվում եր չափազանց վտանգավոր, փշոտ, խութերով ու խոչընդոտներով լի մի ճանապարհ: Իսկ ընդհատակյա աշխատանքի անմիջական վարձատրությունը՝ բանտը, աքսորը, տաժանակիր աշխատանքն ու մահապատիժն եյին:

Կազմակերպության մեջ մտնելով, յես գնում եյի այն պայծառ գիտակցությամբ, թե բանվոր դասակարգը, վորին պատմականորեն վիճակված եր կոլեկտիվ համառ դասակարգային պայքարով ազատագրել վոչ միայն իրեն, այլ միաժամանակ նաև ամբողջ մարդկությունը, իսկ այդ կամ մի քանի մարդու գործ չեր, այլ ամբողջ դասակարգի միահամուռ ջանքերի, և վոչ ել կարող եր իրականանալ ուտոպիստների այն յերազանքով, թե մարդ անհատի ամենաբարձր ինքնակատարելագործմամբ կարելի կլինի լուծել սոցիալիստական այդ ամենաբարդ հանդույցը: Յես ամենախորը կերպով համոզված եյի, վոր մարդը մարդուն շահագործելու բոլոր հնարավորությունները վերացնելու համար պրոլետարիատի առաջ բացվել եր պայքարի ամենածանր զոհաբերությունների մի ասպարեզ, վորտեղ հարցերը լուծվելու եյին վոչ թե պարլամենտական քվեարկությամբ, այլ արյունով, յերկաթով ու զոհաբերություններով: Յես այդ գաղափարները ժառանգել եյի պրոլետարիատի համաշխարհային մեծ ուսուցիչներ՝ Մարքսից, Ենգելսից ու նրանց աշակերտներից:

Համաձայն մեր պայմանավորման, յես գնացի Յերեվանյան հրապարակ, դեղատան առաջ, ու հանդիպելով Ներսեսին՝ գնացի ժողով, վորը կայացավ Հավլաբարում, Ներսես Մանուչարյանի տանը:

Այդ բջիջը զուտ կոշկակարներից չեր, ինչպես գրում ե Ա. Կախոյանն իր «Հիշողությունների» մեջ, և չկային ու չեյին կարող լինել այդպիսի բյուրեղացած բջիջներ: Բջիջի անդամներն եյին. 1. Նշան Գարդաշյան, Մկրտչյան (գրաշար), 2. Ներսես Ներսիսյան (գործակատար), 3. Վասիլ Խաչատրյան (դերձակ), 4. Արիստակես Պետրոսյան (կոշկակար), 5. Ասատուր Կախոյան (կոշկակար), 6. Ներսես Մանուչարյան (գրաշար), 7. Յերվանդ Մազլումյան (դերձակ), 8 Գաբրո (կոշկակար), 9. Շավարշ Գարագաշ (կոշկակար): Բջիջի ներկայացուցիչը, կամ այժմյան անունով, քարտուղարը Ներսես Ներսիսյանն եր, վորն այժմ մեր պատասխանատու ընկերներից ե և աշխատում ե Թիֆլիսի Պետբանկում: Միայն Մանուչարյանը մահացել ե և Մազլումյանը մի ժամանակ հարել մենշևիկներին, իսկ այժմ անկուսակցական ե և հասարակական աշխատանքից վաղուց ի վեր կտրված: Մնացածները բոլորն ել այժմ կոմկուսի անդամներ են:

Հանգուցյալ Ն. Մանուչարյանը նկատելով, վոր յես թյուրքահայ եմ՝ ասում եր.—

— Այդ ի՞նչպես պատահեց, վոր տաճկահայդ, փոխանակ դաշնակցականի՝ սոցիալ-դեմոկրատների շարքերը մտար:

Ներսես Մանուչարյանի այդ հարցին իմ փոխարեն պատասխանեց բջիջի քարտուղար Ներսիսյանը.—

— Նա, Շավարշը, մեզ մոտ յեկել ե շնորհիվ իր ավագ յեղբոր, վորը ճեմարանում ե սովորում (Եջմիածնի) և սոցիալ-դեմոկրատ ե: Նա կարդալու գրքեր տալով՝ համոզվել ե, վոր բանվորը միայն սոցիալ-դեմոկրատ կարող ե լինել, բայց յերբեք դաշնակցական, նացիոնալիստ, շովինիստ:

Յերկրորդ նիստը մենք ունեցանք Թիֆլիսի բուսաբանական պարտեզից վերև՝ Կոջորի ճանապարհի ձորի մեջ: Այդ ժողովում պարզվեց, վոր հենց նոր բաց թողած թռուցիկը, վոր շարել ու տպել եր Նշան Մկրտչյանը, արդեն հասել եր մենշևիկների ձեռքը և նրանք չափազանց վրդովվել եյին, վոր մարզական կոմիտեից («Բ. Կ.») թռուցիկ եյին հրապարակել: Յեվ նրանք պահանջել եյին վերջ տալ նման յելույթներին և այլն: Բայց մեր բջիջը վոչ մի ուշադրություն չդարձրեց նրանց վրա ու շարունակեց համախմբել բանվորներին ու կապվել ինտելիգենտ ընկերների հետ: Ապա նույն ժողովում մենշևիկ Արոյանը, վոր թյուրիմացաբար յեկել եր մեր ժողովը, մեղադրում եր Ասատուր Կախոյա-

նի շանտաժի և պրովոկատորության մեջ: Բայց նրան հեռացրինք մեր շարքերից, և դրանով էլ այդ հարցը լուծված համարվեց:

Բջիջի հաստատ նիստերը հրավիրում էինք Մկրտչյանի, Կախոյանի, Մանուչարյանի բնակարաններում: Ժամադրավայրը շատ անգամ ընտրում էինք Յերևանյան հրապարակը, ուր հավաքվելուց հետո վճռում էինք նիստ ունենալու տեղը, և ապա մաս առ մաս գնում էինք նշանակված վայրը, վորտեղ մի հատուկ ընկեր սպասում էր մեզ՝ ուղեկցելու և հսկելու, վոր ժանդարմական շպիկները ժողովի հոտը չառնեն և չձերբակալեն մեզ: Բայց պետք է ասել, վոր ժանդարմական փորձված ֆիլյորները մեր այդ հաճախակի հանդիպումները Յերևանյան հրապարակում կարող էին կասկածի տակ առնել և պրովալը պատրաստ կլիներ:

Բացի այդ բջիջից, կազմակերպվեցին ուրիշ բջիջներ և կապվեցինք բանվոր ու ինտելիգենտ նոր ընկերների հետ: Կազմակերպվեց նաև տպարան: Այդ տպարանի գոյության մասին յես գիտեյի, բայց չգիտեյի թե վորտեղ է: Միայն 1912 թվին, յերբ ժանդարմները հայտաբերեցին ու ձերբակալեցին Վ. Խաչատրյանին, իմացա, վոր տպարանը նրա տանն է յեղել, վոր գտնվում էր Հավլաբարի Ժանդարմսկի փողոցում:

Այնուհետև որըստորե կապվեցինք Սուրեն Սպանդարյանի (Տիմոֆեյ, իսկ գրական ծածկանունը՝ Ոլգին), Կասյանի, Դ. Շահվերդյանի, Ա. Թումանյանի, Սերգո Թավդգիշվիլու, Հարություն Սոլովյանի, Սուխիշվիլու, Խանոյանի և ապա Ստասովայի, Մդիվանու, Վախմինայի և այլոց հետ: Մեզ հետ կապվեցին բանվորներից Կուրուլով, Իսախանյան և այլք: Կազմակերպությունն որըստորե աճում, ամրանում էր և աշխատանքներն ընթանում էին նորմալ կերպով:

Սկսեցինք կազմակերպել մի շարք պրոֆմիություններ կաշեգործներից, դերձակներից, գործակատարներից, տպագրական բանվորներից, տրամվայի բանվորներից, մետաղագործներից և այլն: Այս բոլոր միությունների կազմակերպման նախաձեռնությունը, ինչ ասել կուզի, վոր սոցիալ-դեմոկրատներին էր պատկանում: Այդ գործում բոլշևիկներն ու մենշևիկները մի ֆրոնտով պայքարում էին դաշնակ, էս-էր, ֆեդերալիստ և այլ նացիոնալիստական կուսակցությունների դեմ, վորպեսզի կասեցնեյին նրանց ազդեցությունը բանվորական լայն մասսաների շարքերում:

Սկսվեցին նաև ժողովրդական համալսարանի սեկցիաների աշխատանքները: Ընտրությունների ժամանակ խոշոր պայքար սկսվեց վերոհիշյալ կուսակցությունների ու սոցիալ-դեմոկրատների միջև: Բայց, յեթե վրացական սեկցիան սոցիալ-դեմոկրատների ձեռքը մնաց, վորտեղ մեծամասնությունը մենշևիկներ էին կազմում, ապա հայկական սեկցիայում բազմած էին դաշնակները՝ Ջամալյանի և Գևորգ Ղազարյանի

(ուսուցիչ) գլխավորությամբ: Իսկ ռուսական սեկցիայում, բացի սոցիալ-դեմոկրատներից, մտան նաև էս-էռներ:

Մի խոսքով՝ ամենուրեք շարժման, արթնացման նշաններ կային, հավաքում էինք ուժեր, կարծես ինչ վոր վերահաս խոշոր դեպքերին կազմ ու պատրաստ լինելու համար:

Վերելքի շարժում էր տիրում նաև հասարակական բոլոր մյուս կազմակերպությունների կյանքում, վորպես հետևանք այն վերելքի, վոր սկսվել էր տնտեսական կյանքում:

ԽՈՇՈՐ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹԻՖԼԻՍՈՒՄ

1912 թիվն անցքերով բավական հարուստ տարի հանդիսացավ մեր կուսակցության և հատկապես Թիֆլիսի կազմակերպության կյանքում: Այդ թվին մենք Թիֆլիսում փորձեցինք տոնել մայիսի մեկը, բայց այն վերջացավ անհաջողությամբ: Մինչ այդ բանվորական շարժումը հրահրող յերկու խոշոր դեպքեր էին կատարվել: Առաջինը՝ կուսակցության կոնֆերանսն էր Պրագայում, վորտեղ ընտրվեց բոլորովին անկախ բոլշևիկյան Կենտրոնական Կոմիտե: Այդ կոմիտեյի անդամ էր ընտրվել Բաքվի պրոլետարիատի ներկայացուցիչ Սուրեն Սպանդարյանը, վորն աշխատում էր Թիֆլիսում, և Ստասովան, վորպես փոխանդամ, վորը նույնպես աշխատում էր Թիֆլիսում:

Պրագայի կոնֆերանսի գլխավոր նշանակությունն էլ հենց այն էր, վոր կուսակցության շարքերում գլուխ բարձրացրած լիկվիդատորությունը չարաչար պարտություն կրեց, և բանաձևեր ընդունվեցին, վոչ միայն լիկվիդատորության, այլ նաև ուլտիմատիստ-ոտզովիստների դեմ: Ուրեմն՝ շարունակվելու յեր ընդհատակյա աշխատանքը, բայց միաժամանակ, զուգահեռաբար կատարվելու յեր նաև լեգալ աշխատանք, վորն ամբողջովին յենթարկվելու յեր անլեգալ կազմակերպությանը, իսկ ծանրության կենտրոնը թողնվելու յեր ընդհատակյա աշխատանքին:

Յերկրորդ խոշոր դեպքը՝ Լենայի գործադուլավոր բանվորների մասսայական գնդակահարությունն էր, վորը լցրեց հեղափոխական պրոլետարիատի համբերության բաժակը: Ցարական կայսրության մի ծայրից մյուսն անցավ բողոքների ու գործադուլների հսկայական մի ալիք, փչեց կենդանարար հեղափոխական նոր քամի: Հեռագրերն ամենուր հաղորդում էին արդյունաբերական կենտրոնների նորանոր գործադուլների մասին: Յեվ Մակարովի խոսքերին, թե՝ «Այդպես էր առաջ և այդպես կլինի հետագայում» պրոլետարիատը պատասխանեց արդյունաբերական պրոլետարիատի հսկայական գործադուլներով ու բողոքներով, ապացուցելով, վոր յեթե այդպես էր առաջ՝ հետագայում այդպես չի լինի:

Թիֆլիսի մեր կազմակերպությունն էլ արդեն հավաքելով ցրված ուժերը, փորձում եր մայիսի մեկի տոնակատարությունն անցկացնել կազմակերպված բանվորների և համակրողների մասնակցությամբ, կազմակերպել ուժերի ստուգատես, բարձրացնել բողոքի ձայն: Մայիսի մեկի առթիվ հրապարակված եր հատուկ թռուցիկ, վորից տողերիս գրողի ու դերձակ Յերվանդ Մաղումյանի միջոցով տարածվեց մեծ քանակությամբ մեր քաղաքամասում: Թռուցիկը տալիս եր մայիսի մեկի տոնակատարության նշանակության մասին համառոտ պատմական տեղեկանք, հրապարակ քաշելով մեր հիմնական պահանջները—լոզունգները, և կոչ եր անում բողոքի ձայն բարձրացնել ցարական սատրապների վոտնձգությունների դեմ:

Տոնակատարությունը պիտի կատարվեր Կոջորի ճանապարհի վրա, բուսաբանական այգու վերևի ձորի մեջ, վորտեղ յերբեմն մենք ունեցել եյինք բջիջային ժողովներ: Մեր թռուցիկը կարդալով, բանվորներն իրենց աշխատանքը վերջացնելով, մաս առ մաս ուղեվորվեցին նշանակված տեղը, վորտեղ միտինգ եր լինելու, իսկ հաջող անցնելու դեպքում գուցե և փոխվեր դեմոնստրացիայի: Այդ, իհարկե, կախված կլիներ հաջողությունից:

Բայց ո՛վ զարմանք, բանվորներն արդեն սկսել եյին անզգալի կերպով բարձրանալ լեռը, սակայն յեկան և մեզ հաղորդեցին, վոր ժանդարմական ու վոստիկանական ձիավորներն արգելում են լեռան վրա հավաքվել, ցրում են խմբված մարդկանց: Հասկանալի յեր, վոր ժանդարմերիան իր ագենտուրայից ստույգ տեղեկություն եր ստացել միտինգի և նրա տեղի մասին և պատրաստվել եր խանգարելու և արգելելու: Նկատելով այդ, խորհուրդ հայտնեցինք բանվորներին, վոր ցրվեն՝ անտեղի ձերբակալություններից խուսափելու համար:

Խանգարվեց մայիսմեկյան տոնակատարությունը, բայց բանվորների տրամադրությունն որըստորե կենդանանում եր, նրանք մոտենում եյին իրար, կազմակերպվում պրոֆմիությունների շուրջը և կապեր պահպանում մեր, ընդհանրապես բոլշեվիկյան կազմակերպության հետ: Այդ միությունները թեև թույլ եյին և նյութական տեսակետից չափազանց տկար, բայց հոգեպես գոտեպնդված և դասակարգային գիտակցությամբ զգոն:

Յեվ այդպես, բանվորական շարժումը սկսել եր իր վերելքը, ուժեր եր հավաքում գալիք որերի համար պատրաստվելու, հեղափոխական ալիքը բարձրանալիս նրան գլխավորելու, ղեկավարելու համար:

Վրա հասան նաև 4-րդ պետական դումայի ընտրությունները: Պետք եր կատարել նախապատրաստական աշխատանք, բանակցություններ վարել, վորպեսզի մի հատիկ քվե, վորը մեր ոգտին կարող եր տրվել՝ չոգտագործվեր հակառակորդների կողմից:

Քնած չեր նաև ցարական կառավարությունն իր ժանդարմական վարչությամբ, իր ախրանկայով: Նա հսկում եր մեզ վրա: Ժանդարմերիան չեր բավականացել միայն արտաքին հսկողությամբ, այլ հեղափոխական կազմակերպությունների ներսում ստեղծել եր պրովոկատորների մի ամբողջ ագենտուրա: Այդ ծախված սև հոգիների միջոցով ժանդարմական վարչությունը սիստեմատիկ ինֆորմացիա յեր ստանում մեր ընդհատակյա աշխատանքի մանրամասնությունների մասին: Յեվ, ըստ յերևույթին, ցարական կառավարությունը նյութական վոչ մի զոհողության առաջ կանգ չեր առել՝ ագենտուրայի աշխատանքը լավ դնելու համար: Ժանդարմական արխիվից դուրս բերված փաստաթղթերն ապացուցում են մեր այդ «յենթադրությունը»:

Ծանոթանալով նրանց գաղտնի զեկուցումներին, վորով նկարագրվում են մեր ընդհատակյա աշխատանքի մանրամասնությունները, կարելի յե ուղղակի շշմել: Նրանք իմացել են ամեն ինչ, և մնացել եր մի բան միայն, այն ե՝ սողոսկել առանձին հեղափոխականների «ուղեղն ու սիրտը»—գաղտնիքներ վորոնելու համար: Բայց ափսոս, վոր Թիֆլիսի ժանդարմական արխիվի հիմնական մասն այրված ե հենց իրենց ժանդարմների միջոցով մի ամբողջ շաբաթ, իսկ ամենակարևոր թղթերը՝ տարված, ուստի մենք զրկված ենք բազմաթիվ փաստաթղթերից, վորոնք կարող եյին լույս սփռել մեր պատմության մի շարք մութ կետերի վրա:

Փետրվարյան հեղափոխության սկզբում, յերբ ձերբակալվում են Թիֆլիսի նահանգական ժանդարմերիայի պետ գնդապետ Պաստրյուլինին, նրա բնակարանում հայտաբերում են զանազան բնակարանների հասցեներ: Պաստրյուլինը հրաժարվել եր հարցերին պատասխան տալուց և հայտարարել, թե՝

— Ինձ գնդակահարեցեք, միևնույն, յես վոչ մի ագենտի մատնողը չեմ:

Նա աշխատել եր ամեն կերպ շփոթություն առաջացնել, բայց խիստ դժվարությամբ կարողացել եյին պարզել, վոր նա այդ բնակարաններում տեսնվելիս ե յեղել ագենտների հետ առանձին: Նրա ագենտուրան, ինչպես արխիվային նյութերից էլ կարելի յե յեզրակացնել, դրված ե յեղել կոնսպիրացիայի տեսակետից չափազանց զգույշ ու հեռատեսորեն: Պահնորդական բաժանմունքի յերկու տարբեր ագենտներ, չճանաչելով միմյանց, վոր կատարում են միևնույն գարշելի գործը, կարող եյին կասկածել իրար «հեղափոխական» գործունեյության վրա և համապատասխան ինֆորմացիա տալ իրենց պետերին: Այդ կոնսպիրացիան կարող եր պահպանվել նաև արձանագրություն կազմելիս, առանց արձանագրության մեջ մազաչափ անգամ չշեշտելու «գործող անձանց» ագենտ լինելու մասին: Իհարկե, այդ հասկանալի յե: Ժանդարմերիայի գործի հաջողությունն

թյան տեսակետից այդ անհրաժեշտ էր: Այլապես ադենտուրան անհաջողության կենթարկվեր, ադենտները կսպանվեյին հեղափոխականների ձեռքով:

Ինչպես փաստաթղթերից էլ չերևում է, ժանդարմերիան իր հետախուզումները կատարելիս է չեղել չերկու ուղղությամբ՝ ներքին ադենտուրայի տեղեկանք և արտաքին հսկողություն—ադենտուրային տեղեկանքը ստուգելու համար: Կասկածից դուրս է, որ հենց այդպիսի դրվածքի շնորհիվ ադենտները պետք է հսկեյին նաև իրար վրա՝ «հեղափոխականի» տեղ ընդունելով միմյանց:

Մենք արդեն ասել ենք, որ մեր կազմակերպությունն օրըստօրե թվով աճում և ամրանում էր, նորակազմ պրոֆմիությունններում տարածվում էր մեր ազդեցությունը, մասնակցում էինք ժողովրդական համալսարանի աշխատանքներին, մայիսմեկյան միտինգ հրավիրելու փորձ արինք, պատրաստվում էինք Պետական Դումայի ընտրություններին և այլն: Իսկ այդ աշխատանքները ղեկավարելու համար մենք արդեն ունեյինք Պրագայի կոնֆերանսի բայլշևիկորեն ձևավորված միո որոշումներ և ղեկավար նոր Կենտրոնական Կոմիտե:

Մի խոսքով, աշխատանքները բայլշևիկորեն և անսայթաք տանելու համար բոլոր տվյալները կային, և մենք լարված կերպով անցել էինք աշխատանքի:

Բայց ցարական ժանդարմերիան, որ հետամուտ էր մեր կազմակերպության ամեն մի քայլին, մեր շարքերում ունեցած իր ադենտների միջոցով ուսումնասիրելով կազմակերպության ընթացիկ աշխատանքը, սկսեց մեր կազմակերպության ղեկավար մարմնի «լիկվիդացիայի» օպերացիները:

1912 թվի մայիսի 22-ին Բաքվի կայարանում անսպասելի կերպով ձերբակալվեց մեր ամենասիրելի ու ամենալավագույն ղեկավարներից մեկը՝ Տիմաֆեյը—Սուրեն Սպանդարյանը: Նա հունվարին Պրագայի կոնֆերանսին մասնակցելուց հետո վերադարձավ Թիֆլիս և ընդունված վորոշումների մասին մեզ զեկուցեց Ն. Մանուչարյանի տանը՝ Հավլաբար քաղաքամասում: Ժանդարմերիան նրան ձերբակալելով, ըստ չերևույթին չենթադրում էր հայտաբերել շատ փաստաթղթեր, որովհետև գիտեր, որ նա ընտրված էր Կենտկոմի անդամ, բայց Սուրենը փորձված կոնսպիրատոր էր, «իրեն պահում էր մաքուր», ուստի մոտը ոչինչ չեյին կարողացել գտնել: Այդ ձերբակալությունն այնպես «սուս ու փուս» կատարվեց, որ ոչ ոք հիմք չուներ կասկածելու որևէ մեկի վրա: Միայն հետագայում, չերբ ձերբակալվեցին Վախմինան, Հովյանը և ժանդարմերիայի ձեռքն ընկավ Ստասովայի թողած պորտֆելը կուսակցության արխիվային կարևոր թղթերով լի՝ այնտեղ հայտաբերվեցին նամակներ Սպանդարյանին վերաբերող, և ժանդարմերիան հիմք ունե-

ցավ դատի տալ վերոհիշյալ ընկերների հետ նաև Սպանդարյանին: Այդպիսով, մենք ընդմիշտ կորցրինք Սուրենին, որով մենք հպարտանում էինք, թե Թիֆլիսի կազմակերպության մեջ աշխատում են Կենտկոմի անդամներ և այլն:

Սուրենի ձերբակալվելուց հետո մենք չենթադրում էինք, որ շուտով կբռնեն Վասիլ Խաչատրյանին, որը Մուխրանյան փողոցի վրա սամորուդի փոքր դերձականոց ուներ, և ապա պիտի ձերբակալեյին Աստուր Կախոյանին, որովհետև Սուրենը համարյա թե ամեն օր լինում էր Վասիլի արհեստանոցում և Աստուրի տանը: Այդ պատճառով էլ այդ չերկու ընկերների մոտ գնալիս «խիստ զգույշ» էինք լինում, որպեսզի շպիկների աչքը չընկնեյինք և այդ չերկուսի հետ չվորսեյին նաև մեզ: Բայց ժանդարմերիան իր օպերացիաները կատարում էր բավական նուրբ քաղաքականությամբ, որպեսզի իր «ադենտուրան վտանգի չենթարկվեր», բայց «լիկվիդացիան» կատարվեր լիակատար կերպով:

Կորցնելով Տիմաֆեյ-Սպանդարյանին, թեև մենք խիստ ազդվեցինք, որովհետև զրկվեցինք մի ընկերոջից, որին փոխարինող չունեյինք, բայց, հաշտվելով դրության հետ՝ շարունակեցինք մեր աշխատանքը նախկին տեմպով:

Մայիսի վերջերին էր, չերբ Աստուրը պատահեց և հայտնեց ինձ, որ կիրակի օրը լինեմ Թիֆլիսի բուսաբանական պարտեզի ծաղկանոցի մոտ, որպեսզի «խիստ կարևոր գործով» մի տեղ գնայինք: Ցես առանց առաջ, որպեսզի «խիստ կարևոր գործով» մի տեղ գնայինք: Ցես առանց հարցնելու, թե ինչու և ուր, մեքենաբար համաձայնություն տվի և նրհարցնելու, թե ինչու և ուր, մեքենաբար համաձայնություն տվի և նր չանակված օրը ներկայացա ու պատահեցի Աստուրին: Պետք է կայանար ղեկավար կոլեկտիվի, այսինքն՝ Թիֆլիսի Կոմիտեի նիստը, ուստի կոնսպիրացիան հարկադրել էր Աստուրին վաղորոք չասել ժողովի մասին:

Հետզհետե հավաքվեցին ընկերները: Ցեկավ նաև բուրժուական արտաքինով, պանամա գլխարկ, մաքուր կոստյում հագած և հաստափոր մեկը, բարևեց ու նստեց: Ցես մոտեցա Ներսես Ներսիսյանին ու հարցրի.—

— Ո՞վ է այս բուրժուան և ինչո՞ւ նստեց մեզ մոտ

Ներսեսը ժպտալով պատասխանեց.—

— Բարձր մի խոսիր, անհարմար է: Դա մեր ընկերն է, սպասիր ու տես, թե ինչ փայլուն հռետոր է և որպիսի խոշոր պատրաստության, երուդիցիայի տեր մարդ: Հենց այդ արտաքինի համար էլ դրա ծածկանունը «Բոչկա» յէ:

Կոմիտեի ժողովը կայացավ բուսաբանական այգու ամենաբարձր մասում, սոճիների փոքրիկ պուրակում:

Կիրակի օր էր, ցերեկվա տաքի—խորշակի ժամանակ: Ժողովին մասնակցում էին Բուդու Մդիվանին, Կասյանը, Հարություն Սոլոմյանը,

Սերգո Թավդիշվիլին, Ցաշա Գուրշունյանը, Ներսես Ներսիսյանը, Վասիլ Խաչատրյանը, Ասատուր Կախոյանը, Շավարշ Գարագաշը: Օրակարգում Պետական Դումայի ընտրություններն էին, մի ուրիշ հարց և մենշևիկների կոնֆերանսի բանաձևերը: Զեկուցում էր Մդիվանին: Ժողովի ընթացքում մի քանի անգամ յեկան ու անցան ժանդարմական վարչության ֆիլերները: Բուդուն նրանց անցած ժամանակ ճարպիկ արտիստի շնորհքը գործադրում էր՝ խոսքն անմիջապես զանազան անեկդոտների փոխելով: Բայց այդ կասկածելի մարդկանց անցնելն այնչափ շատ կրկնվեց կարճ ժամանակում, որ, վախենալով, թե այդ «քեռիների» հետևից կարող են գալ վոստիկանական ուժեր ու շրջապատել և ձերբակալել բոլորիս՝ որոշվեց հետաձգել ժողովը, իսկույն ցրվել և հեռանալ պարտեզից:

Դրանից հետո, չանցած մի քանի օր, սկսվեցին ձերբակալություններն ու խուզարկությունները: Մենք ի վերջո համոզվեցինք, վոր վոչ Սպանդարյանի ձերբակալությունը և վոչ էլ նրան հաջորդող խոշոր պրովալը մեր ընկերների «անզգուշության հետևանքը» չէին, այլ ներքին, ծախված մարդկանց գործ, վորոնք «յերեսուն արծաթով» պատրաստ էին մատնել իրենց ընկերներին: Թե այդ սուտ արարածները ժանդարմական վարչությանն ինչպիսի մանրամասն զեկուցումներ էին ներկայացնում, այդ կարող է ապացուցել ստորև բերված մի փաստաթուղթ, վորը հայտաբերվեց ժանդարմական արխիվում: Այս փաստաթղթում տրված ինֆորմացիան չնչին բացառությամբ համապատասխանում էր իրականությանը: Բացի դրանից, փաստաթղթում տրված էին մի քանի փաստերի ճշգրիտ տեղն ու ժամանակը, ուստի անհրաժեշտ եմ համարում տալ առանց փոփոխության կամ կրճատումների, վորպեսզի վերջնականապես հաստատվի այն միտքը, թե մեր մեջ կար ծախված մարդկանց մի ամբողջ ագենտուրա: Ահա թե ինչ է ասվում այդ փաստաթղթում, վորն ուղղված պիտի լիներ փոխարքա Վորոնցով-Դաշկովին:

1912 թ. հունիսի 14

№ 7124

ԽԻՍՏ ԳԱՂՏՆԻ

«Սույն թվի մարտի 19-ին, շրջանի ագենտուրայից տեղեկանք ստացվեց, վոր մարտի 13-ին Թիֆլիսի ՍԴԲԿ մենշևիկների կոմիտեի անդամ, Անդրկովկասի յերկաթուղու գլխավոր արհեստանոցի փականագործ բանվոր Զախար Նիկոլայեվիչ Ջափարիձեի տանը (նա ձերբակալված է սույն հունիսի 6-ին, վորի մասին հաղորդված է հունիսի 12-ին նո. 7062-ով) տեղի յեր ունեցել հիշյալ կոմիտեի անդամների ժողովը, վորտեղ նշված հինգ հարցերից մանրամասնորեն քննվել էր միայն առաջին հարցը, այն է՝ Պետական Դումայի ընտրությունների համար կենտրոնական հանձնաժողով կազմելու մասին:

«Ինֆորմացիաների ժամանակ պարզվեց, վոր այդ հանձնաժողովը հիմնելու որոշումը ընդունված է յեղել դեռևս 1911 թ. օգոստոսի ժողովում, բայց կյանքում չէր կիրառվել, և մարտի 13-ին այդ առթիվ վորոշվել է հետևյալը. հանձնաժողովը կազմվում է հինգ հոգուց: Հանձնաժողովին իրավունք է տրվում աշխատանքի լայնացման հետ

զուգընթացաբար հանձնաժողովի մեջ մտցնել նոր անձանց: Կենտրոնական հանձնաժողովը կազմակերպում է ֆինանսական յենթահանձնաժողով: Թիֆլիսի նահանգի մյուս շրջաններում իրեն յենթարկվող յենթահանձնաժողովներին կոնտրոլի յենթարկելու համար կենտրոնական հանձնաժողովն իրավունք ունի ուղարկելու իր անդամներին:

«Ապրիլի 16-ին լրացուցիչ տեղեկություն հասավ այն մասին, վոր կենտրոնական հանձնաժողովի մեջ մտան հայտնի գործունյա սոցիալ-դեմոկրատ ուսուցչուհի Ելենա Դմիտրիևնա Ստասովան և քաղաքային վարչության ծառայող Վլադիմիր Ցախավկին Թոխդին:

«Ստասովայի վրա յեկած տվյալների պատճառով ապրիլի 24-ից նշանակված էր արտաքին հսկողություն «դալնայա» (հեռավոր) ծածկանվան տակ:

«Անցյալ մարտի հինգին ուրիշ հայտնի ագենտուրայի աղբյուրից պարզվեց, վոր մարտի 9-ին Իոսիֆ Կասցինսկու բնակարանում, վորն իր համոզմամբ կադետ է, պետք է տեղի ունենար «անկուսակցական պրոգրեսսիստների» կազմակերպած ժողովը 4-րդ Պետական Դումայի առաջիկա ընտրական կամպանիայի համար: Այդ խմբակը պետք է բաղկանար հետևյալ բլոկից՝ կադետներ, սեկտանտներ, սոցիալ-դեմոկրատներ և ուրիշ ձախ կուսակցություններ: Սոցիալ-դեմոկրատներից խմբակի մեջ նշանակված էր Ազով-Դոն բանկի գործավար Կովալյովը և ինչ վոր Մակեդոնսկի:

«Մայիսի 9-ին Կասցինսկու մոտ հավաքվեցին յերեք սոցիալ-դեմոկրատ՝ Կովալյովների յերկու յեղբայրները և Իոսիֆ Դմիտրևիչ Մակեդոնսկին (բոլորն էլ մենշևիկ), իսկ պրոգրեսսիստներից դեմոկրատների ու անկուսակցական պրոգրեսսիստների բլոկի հնարավորության մասին, վորպիսի բլոկն ընդունվեց ցանկալի (°):

«Հունիսի 4-ին տեղի ունեցավ նոր ժողով: Այդ ժողովում պրոգրեսսիստներից ներկա յեղավ միայն բնակարանի տեր ժուռնալիստ Յուրիյ Դմիտրևիչ Կաշչենկոն: Սոցիալ-դեմոկրատներից կային 1. Յերդվյալ հավատարմատարի օգնական Ռուբեն Պավլով Քաթանյանը, 2. յերդվյալ հավատարմատար Բրոյկի, 3. անունով և պրոֆեսիայով անհայտ տեղացի մի գործակատար, վորը շահագրգռված էր հիմնել գործակատարների պրոֆմիություն, և ասաց, թե յեթե պրոֆմիություն չհիմնվի, ապա գործակատարները կանցնեն ընդհատակյա աշխատանքի, 4. ուսուցչական դպրոցի ուսուցչուհի Ելենա Դմիտրիևնա Ստասովա և 5. ու 6. նույն դպրոցի յերկու ուսուցչուհիներ, վորոնք յեկել էին Ստասովայի հետ, սպասեցին յերդվյալ հավատարմատարի օգնական Գափրշունյանին և ինչ-վոր «Վիկտորի» ու «Կասյանի» գալուն, բայց դրանք չեկան: Հավաքվածները խոսեցին ռուսական ծխերում բայլշևիկ սոցիալ-դեմոկրատների և պրոգրեսսիստների միացման մասին, և վճռվեց միջոցներ ձեռք առնել, վորպեսզի անմիջական կապ հաստատվի ընտրողների հետ, ընտրողներին իրենց կողմը «քարշ տալու» համար: Ընտրողների հետ կապվելու համար յենթադրվում է մտնել սանիտարական գործը հովանավորողների մեջ և թոքախտավորների ընկերության հովանավորողների շարքը: Քաթանյանն այդպիսի բանակցություն վարել է բժշկա-սանիտարական տեսուչ Ստեփանովի հետ և նախատեսել է բանակցության մեջ մտնել թոքախտի դեմ պայքարող ընկերության անդամներից բժիշկ Ֆեոդորովի հետ: Քաթանյանի տված հարցերին Ստեփանովը վերաբերվում էր կասկածանքով: Սովորաբար սանիտարական գործի հովանավորողները, վորոնք ցանկանում են լինել այդպիսին, ընտրվում են քվեարկությամբ: Քաթանյանը Ստեփանովի կասկածանքի պատճառով հակված է մտածել, թե նոր հովանավորողները կքվեարկեն սոցիալ-դեմոկրատներին:

«Ֆեոդորովի հետ բանակցություններ չեն վարվել, բայց ընդհանրապես այդ ընկերության հովանավոր լինելը հեշտ բան է: Մտնելով հովանավորողների մեջ, սոցիալ-դեմոկրատները մտածում էին զինվել իրենց գիտությամբ, այցելել ընտրողներին և «քարշ տալ» իրենց հետ:

«Խուզարկության ժամանակ հիշեցին, ինչ-որ սոցիալ-դեմոկրատներ «Ներսեսի» և «Ցելինա Ալեքսանդրովնայի» մասին: Խոսում էին նաև, որ մենշևիկները լուրեր են տարածել, թե բոլշևիկներն առաջ են քաշելու «բոչկայի» թեկնածությունը (նա ոստիկանական դեպարտամենտին հայտնի չէ որպես Բուդու Մդիվանի), որը չի համապատասխանում իրականությանը, որովհետև պետք է անցկացվի Կարլո Չխեիձեն: Ստասովան հիշեց, որ սոցիալիստ-հեղափոխականներն ընտրություններին չեն մասնակցելու:

«Մայիսի ութին, նույն Կոլյակովի բնակարանում կայացավ չորրորդ ժողովը, որին ներկա էին սոցիալ-դեմոկրատները, և հաջողվեց պարզել, որ ռուս ուսուցչուհիներից մեկին անվանում էին «Մարիա Պետրովնա», իսկ մյուս տեղացուն՝ Ռեմենուհի Սաղինովա»: Պարզվեց, որ Կոլյակովի մոտ կայացած հիշյալ ժողովում Ցելինա Ալեքսանդրովնան բժշկուհի Շահնազարյանն էր, որ ամառը Սուխում գնալու պատճառով հրաժարվեց աշխատանքից: Ցելինա Իվանովնա Ցուլուկիձեյի անվամբ գրություն ուղարկեցին Բուդու Մդիվանուն կանչելու: Նա պատասխանել էր, թե Մդիվանին Թիֆլիսից բացակայում է: Տվին «Ներսեսի» և «Կոսյանի» անունները, որոնք ժողովի չեկին: Չկար նաև գործակատարը:

«Ժողովում պարզվեց, որ սոցիալ-դեմոկրատները քաղաքային վարչության մեջ զբաղված են հին ընտրողների ցուցակների արտագրությամբ, որի համար վարչության ստատիստիկական բաժինը նույն բաժնի վարիչ Պավել Ալեքսանդրովիչ Արղութինսկու թույլտվությամբ նստացրել է մի քանի մարդ, որոնց թվում նաև օրիորդ Շուշանիկ Գոլդավային: Բայց այդ ցուցակները Քաթանյանի ստուգելուց հետո միայն պետք է ուղարկեն «Ռուսաստանի ՍԴԲ կուսակցության ընտրական պլատֆորման», որն ստացված է «Սոցիալ-Դեմոկրատ»-ից:

«Քաթանյանը գանգատվում էր, որ միջոցներ չկան, Բրոցկին Ոկրուժնոյ Սուդից հավաքել էր քառասուն ռուբլի, իր մոտ գտնված Բեյլիսի գործի մեղադրական ակտի տպագրված պատճենը կարդալու համար 20-ական կոպեկ վճար ստանալով: Միջոցներ ձեռք բերելու համար, Մանգլիսում կամ Բորժոմում կազմակերպել զբոսանք, և այդ գործով զբաղված է Բրոցկին:

«Ստասովան հայտնեց, որ ինքն ամբողջ ամառը գնալու չէ նախ Պետերբուրգ և ապա Ուրալ՝ «ոչ թե աշխատելու, այլ հանգստանալու համար»:

«Քաթանյանը հանձնարարեց «Ռեմենուհի Սաղինովային»՝ կապ հաստատել «Հնչակյանների» հետ, բայց այդ գործի հետախուզումը ոչինչ չտվեց:

«Նկատի ունենալով, որ Ստասովան ասել էր իր Թիֆլիսից գնալու մասին, և նկատի ունենալով ստացված ցուցմունքները, որ նա մտնում է բոլշևիկների Կենտրոնական Կոմիտեյի կազմի մեջ, որպես քարտուղար և կարող էր ճանապարհին գործնական տեսակցություն ունենալ նույն Կոմիտեյի անդամների հետ, յես հրաման արձակեցի ուղեկցել նրան և ճանապարհին հսկել:

«Հունիսի տասին Ստասովան յերրորդ կարգի տոմս վերցրեց մինչև Ցեկատերինոսլավ և արագընթաց գնացքով գնաց Ռոստով: Նրան ճանապարհելու համար կայարան էին գնացել վերև հիշված Մարիա Պետրովնան և Ռեմենուհի Սաղինովան, որոնց ով լինելը մինչև այդ պարզված էր և նրանց վրա նշանակված էր արտաքին հսկողություն դեռևս հունիսի ինից: Նրանցից առաջինը Մարիա Պետրովնա Վախմինան էր, իսկ յերկրորդը՝ ուսուցչուհի Արմենուհի Սմբատովնա Ոսկյանցը:

«Ստասովայի ճանապարհելուց հետո Վախմինան Հովյանի հետ յեկավ իր բնակարանը, որտեղից Հովյանը մի փաթեթ, թերթով ծածկված, զգուշությամբ տարավ Մալո-Վանկովսկայա փողոցի № 7 տունը, այնտեղից դուրս յեկավ առանց այդ փաթեթի և շտապ գնաց ուսուցչական դպրոցի մոտ գտնվող բնակարանը:

«Ենթադրելով, որ այդ փաթեթի մեջ կարող են կուսակցական փաստաթղթեր լինել, յես անհրաժեշտ համարեցի խուզարկել այդ տունը և Հովյանի բերած փաթեթը գտնվեց Թիֆլիս քաղաքացի Ցակով Մկրտիչով Մդերովի բնակարանի խոհանոցի վառարանի հետևում: Այդ փաթեթում, բացի մեծ քանակությամբ մասնավոր բնույթի նամակներից ու հեռագրերից, որոնք վաղուց անցած ժամանակների էին վերաբերում, յերկու կոնվերտների մեջ հայտաբերվեցին անցագիր Խերսոնի քաղաքացի Վիկտոր Իցկով Գոլդֆելդի անվան, իսկ մյուսը՝ հինգ հատ տպագրված թերթեր՝ «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ընտրական պլատֆորմա» և կոչ մայիսի 1-ի մասին: Ապա մի կոնվերտի վրա նշված էր «համար յերեք քիմիա»: Այդ Ստասովայի գրագրությունն էր Կենտրոնական Կոմիտեյի անդամ «Վերայի», «Սերգեյի» և այլոց հետ: Դրանք կրում էին կուսակցական բնույթ և դրամական հաշիվ: Սույն գրության հետ, կցում եմ այդ փաստաթղթի պատճենը:

«Բացի դրանից, պապիրոսի փայտյա արկղիկում հայտաբերվեց. 1. «Բանաձևեր ընդունված ՌՍԴԲԿ Լոնդոնի համագումարում», 2. տպագրված թերթիկ հետևյալ վերնագրով. «Բանաձևեր ՌՍԴԲԿ Փարիզի 2-րդ խմբակի», 3. տպագրված թերթիկ «Բոլոր ս.-դ. կուսակցական կազմակերպություններին, խմբերին ու խմբակներին», 4. տպագրված գրքույկ հետևյալ վերնագրով. «ՌՍԴԲԿ համառուսական կոնֆերանսը 1912 թվին», 5. Գ. Վ. Պլեխանովի համար 14 «Դնևնիկ Սոցիալ-Դեմոկրատա», 6 տպագրված թերթիկ «Համառուսական կուսակցական ընդհանուր կոնֆերանս հրավիրող կոմիտեյի բանաձևեր», 7. յերկու ձեռագիր հետևյալ վերնագրով. «Կուսակցության հետ», և «Ընտրական պլատֆորմա», 8. գրամեքենայի վրա տպագրված թերթիկ հետևյալ վերնագրով. «Ս-Դ բոլոր կազմակերպություններին ու խմբակներին»:

«Որովհետև Ստասովային ուղղված նամակի կոնվերտի վրա իր ձեռքով գրված էր «քիմիա», ապա պետք է յեզրակացնել, որ նրան գրված նամակները գրվել էին քիմիական պատճենով, և Ստասովան պատճենը հանելուց հետո ոչնչացրել է:

«Մի քանի նամակներում խոսվում է «Ներսեսի» մասին և մի նամակում ասված է, որ նա ձերբակալված է վաղուց: Այդ տեղեկանքը վերաբերում է Կենտրոնական Կոմիտեյի անդամ Սուրեն Սպանդարյանին, որը ձերբակալվեց Բաքվի կայարանում մայիսի 22-ին (իմ զեկուցագիրը № 6808, հունիսի 5-ին), որ յերևում է ոչ միայն նրա ձերբակալման պայմաններից, ինչպես ասվում է նամակում, այլ նաև նրանից, որ յեթե «Ներսես» բառից հեռացնենք վերջին յերկու տառը և կարդանք հակառակ կողմից՝ ապա կստացվի «Սուրեն», այսինքն՝ Սուրեն Սպանդարյանի իսկական անունը:

«Մի նամակում հիշվում է «Բոչկա»: Այդ ցուցմունքը, ինչպես յերևում է վերև բերված հունիսի 4-ի ժողովից, այդ վերաբերում է Բուդու Մդիվանուն: Ապա Ստասովան իր հունիսի 4-ի նամակով հայտնում է. «Ցես մտադիր եմ անել հետևյալը. կանցնեմ Բաքու, կիմանամ, թե այնտեղ ինչպես են գործերը, ապա կանցնեմ Ռոստով, կկապվեմ այնտեղի մարդկանց հետ, կտեսնեմ «Վերային», որպեսզի իմանամ, թե ինչպես են Պիտերի գործերը: Այնուհետև կգնամ «Վիկտորի» մոտ, նրանից «Կոստանտինի» մոտ (գուցե կապվեմ նաև Վիկտորի ու Կոստանտինի հետ):

«Իսկ «Վերա» ստորագրությամբ նամակում վերջերը նախազգուշացնում է, որ ինքը գնալու չի Պիտերից և խնդրում է Ստասովայից, որ նա Ռոստովով անցնելիս հեռախոսով իրեն կանչի կայարան, իրեն անվանելով «Վերա Լազարևնա», իսկ իրեն գտնել կարող է Նիկոլայևսկի փողոցի հասցեյով:

«Այս յերկու նամակներում յեղած տեղեկանքի հիման վրա, յես հեռագրով խնդրեցի Դոնի պահնորդական բաժանմունքի պետից՝ կապ հաստատել շրջանի Փիլլերների հետ,

վորպեսզի Ստասովան Ռոստով գնալիս, յեթե տեսակցի «Վերայի» հետ, պարզվի թե ով է նա, նրան խուզարկել և ձերբակալել, յերբ Ստասովան դուրս կգա Ռոստովից, նկատի ունենալով, վոր Ստասովան տոմս եր վերցրել մինչև Ցեկատերինոսլավ, վորտեղ նա, ըստ յերևույթին, տեսակցելու յեր «Վիկտորի» կամ «Կոնստանտինի» հետ, բացի, դրանից, կարող եր պատահել, վոր առաջինը լիներ վերև հիշված Վիկտոր Իցկով Գոլդֆիլդը, վորի արտասահմանյան անցագիրը հայտաբերվեց Ստասովայի մոտ։ Ռոստովից յես հեռագրով Ցեկատերինոսլավի պահնորդական բաժանմունքի պետից հունիսի 11-ին խնդրեցի խուզարկել № 135-ով, և կասկածելով թե հեռագրային հաղորդությունը կարող եր խզվել, ապա նաև անպայման ձերբակալել Ստասովային։ Բացի դրանից, մատնանշեցի, վոր Ստասովան կարող է տեսակցել նշված անձանց հետ Ցեկատերինոսլավում, և հավանական է, վոր Վիկտորն ապրում է վերև հիշված Գոլդֆիլդ անվան տակ։

«Վորովհետև Ստասովայի մի նամակում հիշատակվում եր, վոր այն չիֆրը, վորով թղթակցում եյին, հայտնի յե իր «ծերունիներին», վորոնք ապրում են Պետերբուրգում, ապա նույն հունիսի 11-ին, № 133-ով հեռագրեցի և խնդրեցի Ս.-Պետերբուրգի պահնորդական բաժանմունքի պետից՝ խուզարկել Ստասովայի ծնողներին և նրանց հետ վարվել խուզարկության արդյունքի համաձայն։

«Այդ ցուցմունքի հիման վրա Վախմինայի վերաբերմամբ ունեցած տվյալների համաձայն հունիսի 11-ին խուզարկվեցին Հովյանն ու Վախմինան ու ձերբակալվեցին։ Հովյանի մոտ խուզարկելիս վոչինչ չգտնվեց։ Վախմինայի մոտ հայտաբերվեց. 1. յերեք գրքույկ—«Պետական Դումայի ընտրությունների որենքը Կովկասում», 2. Մի գրքույկ.—«Պետական Դումայի ընտրությունների որենքը», 3. Ցերեք հատ չեկային գրքույկ, վորոնք մասամբ ոգտագործված եյին և կնքված «Ռուսաստանի ՌՍԴԲԿ Թիֆլիսի գրասյակի ղեկավար կրուժոկ» կնիքով, 4. Ցերեք հատ դիմում, տպագրված Թիֆլիսի ՍԴԲԿ կազմակերպության կողմից, կոչ անելով բանվորական տոնը հավերժացնել հանգանակություն կատարելով կազմակերպության և բանվորական թերթի համար. 5. Մեկ համար տպագրված թերթիկ «ՌՍԴԲԿ Կիևի կազմակերպության կոմիտեյի բանաձևերը 1912 թ. հունվարին», 6. «Դնևնիկ Սոցիալ-Դեմոկրատա», 1910 թ. մարտ. № 11, 7. 102 ռուբլի փող և նրա հետ մի գրություն հետևյալ բովանդակությամբ՝ «Մուտք», ստացված է 12 ռ. 23 կ. նրանցից կ. կ. 9 ռ. մնացյալը պարտքերի մարում։

«Հովյանը հարցաքննության ժամանակ մատնանշեց, վոր, իբրև, ինքն է հանձնել Մդիվանիին պորտֆելը և պապիրոսի տուփը պահելու համար, չասելով, թե ինչ եր պահված նրանց մեջ, իսկ այդ բոլոր իրերն իրեն տվել եր ուսուցչուհի Ստասովան, վորը հունիսի 10-ին Թիֆլիսից գնաց, հայտնի չէ, թե ուր։

«Նկատի ունենալով վերոհիշյալ տվյալները Մդիվանու, Հովյանի և Ստասովայի վերաբերյալ, իմ ղեկավարության հանձնած վարչությունը հունիսի 12-ից կատարում է քննություն № 1035 հոդվածի քրեական դատավարության կարգով։ Նույն այդ քննությանը պիտի յենթարկվի Սուրեն Սպանդարյանը՝ Ստասովայի մոտ հայտաբերված փաստաթղթերի հիման վրա։ Սոցիալ-Դեմոկրատական կազմակերպության մնացած անդամները, վորոնք մասնակցել եյին հունիսի 4-ի և 8-ի ժողովներին, խուզարկության և կալանքի չենթարկվեցին, խուսափելով ագենտուրան պրովալի յենթարկելուց։ Նրանց գործունեության վերաբերմամբ շարունակվում է հետազոտ ագենտուրային հսկողությունը և միջոցներ են ձեռք առնված պարզելու, թե ովքեր են տեղական գործակատար «Վիկտորն» ու «Կասյանը»։

«Վերևում ասված եր, վոր Վախմինայի խուզարկության ժամանակ հայտաբերված եր չեկային տետրակ «ՌՍԴԲԿ Թիֆլիսի խմբակի ղեկավար կրուժոկ» կնիքով։ Այդ կրուժոկի

մասին հիշատակվում է նաև Ստասովային պատկանող փաստաթղթերի մեջ։ Բացի դրանից, նրա գոյության մասին մատնանշել է սույն թվի մայիսին, շրջանային ագենտուրան։ Իմ կողմից նշանակված շրջանի ագենտուրային հսկողությամբ սույն հունիսի 13-ին ստացվել է հետևյալ ցուցմունքն այդ կրուժոկի կազմի ու գործունեության մասին։

«Հունիսի 12-ի յերեկոյան ժամի 9-ին, Միքաելյան փողոցի № 129 տանը, ժողովրդական տան վրացական սեկցիայի բնակարանում հրավիրված եր բոլշևիկների ղեկավար խմբակի ժողով, վորին ներկա եյին. 1. Կասյան—գործակատար, 2. Արշակ—զբաղմունքն անհայտ է, 3. Ներսես—գործակատար, 4. Սերգեյ Թավդիշվիլի, 5. Միշա—ժամագործ, կարծեմ հրեա, 6. Ասատուր—պրոֆեսիան անհայտ, 7. Անհայտ մի հայ։ Նախագահում եր Միշան։ Ժողովում քննվում եյին հետևյալ հարցերը։

«1. Զեկուցում բջիջների մասին, սակայն զեկուցել կարող եր միայն Սերգեյ Թավդիշվիլին, վորը համարվում եր հացագործների բջիջի ներկայացուցիչը։ Նա հայտարարեց, վոր իրենց մոտ հարց հարուցվեց պրոֆմիության կազմակերպելու անհրաժեշտության մասին։ Բջիջներ ունեն Կասյանը, Ներսեսը և Ասատուրը, բայց նրանց բջիջները չեն հավաքվել։

«2. Անդրկովկասի յերկաթուղիների գլխավոր արհեստանոցի գործերի դրության մասին ասացին, վոր մինչև մայիսի 1-ը լիակատար անկում եր այնտեղ, իսկ ներկայումս ցանկություն է հայտնվում բանվորների կողմից ճանաչել Ս.-Դ. ղեկավարներին և նրանց հետ կապ հաստատել։ Խոստացել են կազմակերպել յերկու բջիջ։

«3. Ընտրությունների հարցը քննելիս Կասյանը հայտնեց, վոր մոտ որերս լույս է տեսնելու «պլատֆորման»։

«4. Արհեստավորների վարչության գործունեության վրա ազդեցություն ձեռք բերելու նպատակով՝ բանվորների աշխատաժամերը և արտաժամյա աշխատանքը կարգավորելու հարցում արտահայտվեցին «Միշան», և «Արշակը» այն մտքով, վոր բանվորների աշխատաժամերի հարցը վճռվի բանվորների ու գործատերերի ժողովում։

«5. Գործակատարների խմբակի մասին, վորի մեջ մտնում են բեկերը, մեկերը*) և անկուսակցականները, նրանք, ըստ «Կասյանի» ու «Ներսեսի» խոսքերի՝ ցանկանում եյին մտնել Սոցիալ-Դեմոկրատներին, բայց այն պայմանով միայն, վոր միանան բեկերն ու մեկերը։ Այդ առթիվ ծագեցին ընդհանուր վիճաբանություններ և արտահայտեցին այն միտքը, վոր բեկերը մեկերի հետ միանալ կարող կլինեն միայն այն ժամանակ, յեթե մեկերը համաձայնեն տանել բացառապես անլեգալ աշխատանք, վորը պետք է կազմի Սոցիալ-Դեմոկրատների ամբողջ գործունեության ծանրության կենտրոնը։

«6. Ինչ վոր ձերբակալված ընկերոջ ողնելու մասին «Կասյանին» հանձնարարվեց անցնել Քաթանյանի մոտ և իմանալ, թե նրա մոտ հանգանակված վորևէ գումար կա՞, թե վոչ։

«7. Բեկերի դրամական հաշվետվության մասին հանձնարարվեց «Ներսեսին»՝ հրապարակել հաշվետվություն, առանց վորի անկարելի յե դրամական հանգանակություն կատարել։

«Ժողովի համար Միքաելյան փողոցի № 102 տունը տրամադրեց Սերգեյ Թավդիշվիլին, վորը վրացական սեկցիայի անդամ է և այնտեղ էլ ապրում է։

«Ժողովի սկզբին «Ներսեսը» հայտարարեց, վոր խմբակի յերկու հայտնի անդամներ, վորոնք փաստորեն ղեկավարում եյին խմբակը և խոշոր հույսեր կային նրանց վրա, նրանցից մեկը Թիֆլիսից գնաց, իսկ մյուսը ձերբակալված է։ Այդ պահին տրվեց

*) Բեկ՝ բոլշևիկ, մեկ՝ մենշևիկ։ Ծ. Գարագաշ։

«Վալյա» անունը: Այդ տեղեկանքը չհիմնվող տպավորություն թողեց: «Կասյանին» հանձնարարվեց տեղեկանալ, թե ինչ էր վերցրած խուզարկության ժամանակ:

«Հունիսի 14-ին, յերեկոյան ութ ու կես ժամին նախատեսված էր նույն Միքայելյան փողոցի № 102 տանը ժողով հրավիրել Սերգեյ Թավդեչվիլու տանը:

«Մատնանշված անձանց մեջ իրենց կուսակցական աշխատանքով առանձնապես հայտնի յեն «Կասյանը» և «Միշան»: «Թավդեչվիլին» ու «Միշան» ճանաչում են ֆիլլերներից շատերին:

«Զեկուցելով վերոհիշյալի մասին, Ձերդ գերազանցություն, հունիսի 11—13-ի 141 և 146 համար հեռագրերնիրին պատիվ ունեմ ավելացնելու հետևյալը. նկատի ունենալով, վոր Բաքուվից տեղեկանք ստացվեց, թե Ստասովան մնաց այնտեղ մի օր, և հունիսի 13-ին գնաց վոչ թե Յեկատերինոդար, այլ Մոսկվա, յես նույն թվին, № 147 հեռագրով հայտնեցի Մոսկվա՝ Ստասովայի գնալու և Մոսկվայում «Վիկտորի և «Կոստանդինի» հետ տեսնվելու հնարավորության մասին, և վորպեսզի Ստասովան հսկողությունից չանհետանար, Մոսկվա գնալուց հետո ձերբակալվեց: Բացի դրանից, հիշեցրի, վոր անպայման ձերբակալել «Վիկտորին» և «Կոստանդինին»:

«Ստասովայի Բաքվից գնալու մասին հունիսի 13-ին յերեկոյան ութ ժամին Դոնի պահնորդական բաժանմունքի պետից ստացել եմ հեռագիր հետևյալ բովանդակությամբ.

«Դայլնայան» յերեկ առավոտ այստեղ յեկավ ու գնաց Նիկոլայևսկի փողոցի № 137 տունը, ուսանողուհի Վերա Լազարևնա Կեյլե Ռեյնեկե Լեյգերոլնա Շվեյցերի մոտ: Նրա հետ էր մի յերիտասարդ հրեա, վորը ծառայում է Գերշենզոնի մաղազինում: Գնաց նաև ուրիշ յերեք տուն: Այնուհետև նրան այցելեց մի անծանոթ յերիտասարդ: Բոլորը կպարզվի: Իր հետ յեկած տղան ուղարկեց Յեկատերինոդար, ուր հեռագրեցի պարզել, թե վորի մոտ: Այսօր № յոթերորդի պլացկարտով Խարկովի վրայով գնաց Մոսկվա, վորին ուղեկցում են ձեր և մեր ֆիլլերները: Հեռագրեցի Խարկով: Հեռագրեցեք, ինչ եք ցանկանում անել այն բոլոր անձանց, վորոնց հետ նա տեսնվեց:

«Նույն հունիսի 13-ին № 144-ով այդ հեռագրին յես պատասխանեցի հետևյալը. «Լիկվիդացիայի յենթարկեցեք ինչպես Վերային, նույնպես և նրանց, վորոնց կապ ունենալը պարզված է: Վերան յենթակա յե անպայման ձերբակալման, իսկ մյուսներին ձերբակալել ցանկալի յե՝ նրանց ինքնությունները պարզելուց հետո: Հնարավոր է, վոր «Վերայի» մոտ թողնված լինեն կոչեր, պետք է լինի նաև նամակագրություն «Դայլնայայի» ու Կենտրոնական Կոմիտեի մյուս անդամների միջև:

«Ինչ վերաբերում է վերոհիշյալ ղեկավար խմբակի գործունեությանը, ապա նրանց վերաբերմամբ ագենտուրային հսկողությունը շարունակվում է:

«Հավելված՝ Ստասովայի մոտ հայտաբերված փաստաթղթերի պատճենները:

«Իսկականը ստորագրեց գնդապետ Պաստրյուլին:

«Իսկականի հետ ճիշտ է՝ Գործերի վարիչ՝ Բրյազգին»:

(Տես Թիֆլիսի կենտրոնական արխիվի պատմա-հեղափոխական մաս, ֆոնդ 38, № 2564 (3) մ. ս. 25—33):

Հիշյալ փաստաթղթի մեջ բերված տվյալները չնչին բացառությամբ համապատասխանում են իրականության: Մենք դիտավորյալ կերպով օգտագործեցինք այն, վորովհետև լուսանկարչական ճշտությամբ այնտեղ տրված եյին բոլոր անցքերը՝ պահպանելով խրոնոլոգիական ճշտությունը, մանավանդ բերված թվականները, վորոնք այլ կերպ դժվար կլիներ ճշտությամբ վերականգնել:

Բայց ժանդարմական վարչության օպերացիաները «բոլշևիկների լիկվիդացիայի» գործում չվերջացան փաստաթղթում նկարագրածով: Ձերբակալությունները շարունակվեցին, բայց խիստ զգուշությամբ, կարճատև դադարներով, վորպեսզի «ագենտուրան վտանգի չենթարկելին»: Ձերբակալվեցին նաև ղեկավար խմբակի (հասկացիր՝ կոմիտեյի) այն անդամները, վորոնք առնված եյին «ագենտուրային հսկողության» տակ:

Սուրեն Սպանդարյան

1912 թ. հունիսի 21-ին միաժամանակ խուզարկվեցին ու ձերբակալվեցին Ցաշա Գուրշտեյնը, Ներսես Ներսիսյանը, Ներսես Մանուչարյանը, Վասիլ Խաչատրյանը և Մուշ Գեվորգյան անունով մեկը, իսկ հունիսի

Ստասովա Յելենա

Շվեյցեր Վերա

23-ին ձերբակալվեց նաև Բուդու Մդիվանին՝ «Բոչկա» ծածկանունով: Բայց ձերբակալվածների բնակարաններում խուզարկությամբ վոչ մի

«Հանգավոր» փաստաթուղթ չհայտաբերվեց, որը կարողանար հիմք ծառայեր կալանավորներին դատելու: Միայն Վասիլ Խաչատրյանի տանը հայտաբերվեց կազմակերպության ստամպը: Նույն ստամպանի գործով էլ ձերբակալվեց «Փոքր Ներսես» Մանուչարյանը:

Բուդու Մդիվանի

Վասիլ Խաչատրյան

Ինչպես միշտ, այս անգամ էլ ցարական ժանդարմերիան լավ իրազեկ էր մեր ընդհատակյա աշխատանքի բոլոր մանրամասնություններին: «Երբ գողը տանից է՝ յոթը յերդիկով կհանեն»,—ասում է ժողովրդական առածը: Քանի որ կուսակցության մեջ ժանդարմերիան պահում էր ագենտներ, մեր աշխատանքները, մեր ամեն մի քայլափոխը պետք է հայտնի լիներ նրանց:

Ձերբակալված Բուդու Մդիվանիի հեղափոխական գործունեության մասին ժանդարմական գնդապետ Պաստրյուլինն իր ոգնական ռոտմիստր Պասրեկին 1912 թ. հունիսի 28-ի № 10885 «գաղտնի կալանավորական» գրությամբ տալիս է հետևյալ մանրամասնությունները.—

«Իմ հիմնարկի ունեցած տեղեկանքից հայտնի յե, որ «Բոչկա» ծածկանունով՝ Սոցիալ-Դեմոկրատական կազմակերպության մեջ 1904 թվից որպես Մոսկվայի համալսարանի նախկին ուսանող՝ հայտնի յե Քութայիսի նահանգի ազնվական Պոլիկարպ (ինքը Բուդուն) Գուրգենով Մդիվանի: Բայց նրան անվանում եյին նաև «Բոչկարյով»:

Այնուհետև Պաստրյուլինը, թվելով նրա «հանցագործությունները» ավելացնում է.—

«1914 թվի ապրիլին, Մդիվանին Բաքվում, վախենալով խուզարկությունից ու ձերբակալությունից, թաքնվում է և գալիս է Թիֆլիս, որտեղ հսկողության տակ է առնվում, որպես սոցիալ-դեմոկրատ: Նույն թվի մայիսին տեղեկություն ստացվեց, որ նաև Ռուբեն Քաթանյանը գրագրություն են պահպանում Կենտրոնական Կոմիտեյի հետ, որպեսզի միջոցներ հատկացնեն Մետեխի բանտում պահվող ականավոր Սոցիալ-Դեմոկրատների փախուստը կազմակերպելու համար:

«Մդիվանիի բնակարանը խուզարկելու ժամանակ այնտեղ էր ուսուցչուհի Մարիա Արտեմիևովնա Ջխեիձեն, որը Ճիաթուրից մի քանի օրով Թիֆլիս էր յեկել, և մեր ունեցած տեղեկության համաձայն, Սոցիալ-Դեմոկրատական կազմակերպության անդամ է: Խուզարկելով Ջխեիձեյին, նրա մոտ հայտաբերվեց վրացերեն մի նամակ՝ ուղղված ինչ որ «Ալեքսանդրի»: Նամակում հաղորդվում է, որ Ծննդից առաջ ձերբակալված է «Կոտեն»: Հիշյալ «Կոտեն» Ոլիմպիյ Մաքսիմովիչ Ցինցաձեն է, որը մասնակցել է Թիֆլիսի Միքայելյան հիվանդանոցի հոգեբուժական մասից Սիմոն Արշակովիչ Տեր-Պետրոսյանի փախուստին: Վերջինս 1907 թվին մասնակցել էր Թիֆլիս քաղաքի Յերևանյան հրապարակում պետական տրանսպորտի 250·000 ռուբլու թալանին:

«1912 թվի փետրվարին ագենտուրային շրջանը տեղեկանք ստացավ, որ սոցիալ-դեմոկրատ բոլշևիկ Բուդու Մդիվանին համարվում է 4-րդ Պետական Դումայի հնարավոր թեկնածու: Նույն տարվա ապրիլին տեղեկություն ստացանք, որ 1911 թվին Թիֆլիսում կազմակերպված սոցիալ-դեմոկրատական առանձին խմբակը ստեղծվել էր Բուդու Մդիվանու և այլոց միջոցով, որոնց ցանկությունն եյին հայտնել՝ ստեղծել փոքր, բայց ամուր կազմակերպություն: Այդ խմբի մեջ մտան գլխավորապես հայ գործակատարները:

«1912 թ. մայիսին Թիֆլիսի պահնորդական բաժանմունքի պետը ագենտուրային տեղեկություն էր ստացել, որ նույն մայիսի 19-ին Թիֆլիսի Մուշտայիդ պարտեզում նախատեսվում էր կազմակերպել զբոսանք՝ ժողովրդական համալսարանի օգտին, որի գործունեությունը ղեկավարում եյին սոցիալ-դեմոկրատները: Բոլշևիկների գլխավոր ուժերն են յերդվյալ հավատարմատարի ոգնական Քաթանյանը և արտիստ Պոլիկարպ (Բուդու) Մդիվանին:

(Թիֆլիսի կենտրոնական արխիվ, պատմա-հեղափոխական բաժին, ֆոնդ 36, № 2691):

Յեվ այսպես, մեր Թիֆլիսի բոլշևիկական կազմակերպությունը ընդամենը մի ամսվա ընթացքում կորցրեց իր ամենալավագույն ուժերին, որոնց բացակայությունը մենք զգացինք բավական յերկար ժամանակ: Այնպիսի ուժեր ինչպիսիք եյին Սպանդարյանը, Մդիվանին, Ստասովան, Վախմինան և այլն, դրանք եյին մեր կազմակերպության ղեկավարները: Իսկ յեթե դրան ավելացնենք նաև մնացած մեր ընկերներին, այսինքն՝ Ներսիսյանին, Գուրշտեյնին, Մանուչարյանին, Վ. Խաչատրյանին և այլն, ապա պատկերը պարզ կլինի, որ մեր կազմակերպությունն այդ պրովալից ստացավ ամենածանր հարված:

Այդ խոշոր ձերբակալությամբ, ճիշտն ասած, բավական խառնվեց կուլիսը, ապա մնացած ընկերների գլուխը: Սկսեցին հազար ու մի յենթադրություններ անել և տեղի-անտեղի կասկածանքների տակ առնել այս ու այն ընկերոջ: Մենք սովորաբար կասկածում եյինք, աչքի առաջ ունենալով հետևյալ մոմենտները: Յեթե ձերբակալված ընկերներից հարցնում եյին այնպիսի գաղտնիքների մասին, որոնք հայտնի եյին ամենանեղ շրջանակի ընկերներին, և յեթե մեծ պրովալների ժամանակ, որոնք տարիների ընթացքում կրկնվում եյին և այդ ընկերները ազատ եյին մնում, իսկ ախրանկան մեր բոլոր գաղտնիքները գիտեր, ապա մենք հարց եյինք տալիս, թե ինչո՞ւ չեն ձերբակալում այդպիսի ընկեր-

ներին: Ժանդարմերիան, վորը շատ լավ գիտեր, թե ովքեր և քանի հոգի յեն ղեկավար մարմնի անդամները, յեթե մի անգամ «ագենտուրայի նկատառումներով» չէր ձերբակալել վորևէ ընկերոջ, ապա յերկրորդ կամ յերրորդ պրովալին անպատճառ պետք է ձերբակալեր: Ժանդարմերիան հո չէր կարող խտրություն դնել կամ գեղեցիկ աչքերի համար խնայել, ներողամիտ հանդիսանալ վորևէ կոմիտեյի անդամի կամ կուսակցության ակտիվ, «վտանգավոր» անդամի նկատմամբ:

Չափազանց միամիտները միայն կարող էին հավատալ այն լեգենդին, թե մեր ընկերների անզգուշությունից միայն ժանդարմերիան մեր կազմակերպության աշխատանքի հոտն առնում էր՝ և ապա ձերբակալություններ կատարում: Ինչպես ապացուցում են մեր ձեռքի տակ գտնված ժանդարմական արխիվի փաստաթղթերը, անկասկած, ժանդարմերիան մեր շարքերում ունեցել է «յերեսուն արծաթով» ծախված հուդաներ, վորոնք սիստեմատիկորեն զեկուցել են կազմակերպության բոլոր ձեռնարկումների մասին: Բայց ժանդարմերիան իր ձերբակալությունների ընթացքում գլխավոր հույսը ագենտուրան պրովալի չենթարկելու կողմն է ուղղել:

1912 թվի հունիսի ձերբակալություններն ինձ ուղղակի շշմեցրել էին: Ինձ չափազանց վշտացնում էր այն հանգամանքը, վոր ժողովին մասնակից, բայց չձերբակալված ընկերների վրա սովորաբար կասկածում էին: Ուրեմն պիտի կասկածեին նաև ինձ վրա—մտածում էի յես: Բայց չէ՞ վոր յես կուսակցության մեջ բոլորովին նոր մարդ էի և անտեղյակ նրա գաղտնի ձեռնարկումներից շատերին, իսկ ձերբակալություններն ու քննությունները ապացուցում պարզեցին, վոր այդ հմուտ մարդկանց, կուսակցության ամբողջ էությանը լավ ծանոթ մարդկանց գործն էր: Յեվ այդպիսի մարդկանց հետքերը ծածկելու համար միայն կարող էր տեղի-անտեղի կասկածանքներ տարածվել սրա նրա մասին:

Կասկածանքների մեծագույն մասը բարդվում էր այն ժամանակ Կախոյանի ու Թավդիշվիլու վրա, վորոնք, բացի բջիջային սովորական նիստերից՝ հաճախ մասնակցում էին նաև ավելի կարևոր ժողովների և, բացի դրանցից, մնացյալները ձերբակալվում էին: Այդպիսի կասկածներ այն ժամանակ կային, բայց ծածուկ, քողարկված, վախենալով՝ թե գուցե անհիմն, սոսկ յենթադրություններ էին և ուրիշ վոչինչ:

Կորցնելով մեր ամենալավագույն ընկերներին, անշուշտ, մեր կազմակերպության աշխատանքները թուլացան: Բայց խոշոր ջանքերից հետո նորից ուժեր հավաքվեցին, և ռելսերի վրա դրվեց կազմակերպության մեքենան: Կազմակերպվեցին նորանոր բջիջներ և կոմիտե, բայց, իհարկե, ամեն ինչ այն չէր, ինչ մինչև ձերբակալությունը:

Ցարական կառավարությունը մեր ձերբակալված ընկերներից մի

քանիսին դատի հանձնեց, հիմք ունենալով մի շարք տվյալներ: Դատախազն ապացուցված համարելով Ստասովայի, Վախմինայի, Հովյանի, Սպանդարյանի, Վախմինայի, Խաչատրյանի, Շվեյցերի, Մանուչարյանի վրա բարդված մեղադրանքը, նրանց դատապարտեց 102-րդ հոդվածով, վորը 8-ական տարի տաժանակիր աշխատանքի պատիժ էր խոստանում, բայց «ինչ վոր» մեղմացուցիչ հանգամանքներով դատարանը վճռել էր արդարացնել Ներսես Մանուչարյանին, իսկ մյուսներին աքսորել Սիբիր «նապասելենիյե», զրկելով բոլոր իրավունքներից:

Ներսես Մանուչարյան

Ներսես Ներսեսյան

Իսկ նույն պրովալի ժամանակ ձերբակալված հետևյալ ընկերները— Դուրչաեվ, Ն. Ներսիսյան, Գևորգով և Մդիվանի՝ դատարանը վոչ մի փաստ չունենալով, չկարողանալով վոչ մի ձևական մեղադրանք բարդել նրանց վրա՝ արդարացրեց, բայց, այնուամենայնիվ, նրանք աքսորվեցին ժանդարմական վարչության վորոշումով, Կովկասի սահմաններից դուրս, 1912 թվի սեպտեմբերի 5-ին:

Ցարական կառավարությունն այդ «ոպերացիայով» ցանկանում էր վոչ միայն «լիկվիդացիայի յենթարկել» մեր բայլշևիկյան կազմակերպության ղեկավար որգանը՝ կոմիտեն, այլ նաև վերահաս 4-րդ Պետական Դումայի ընտրություններին ազատվել իր ամենավտանգավոր թշնամիներից մեկից՝ բայլշևիկներից, վորոնք ուժեր հավաքելով՝ նոր հարված էին պատրաստում ցարական միահեծանությանը:

Սակայն ցարական սատրապների ջանքերն իզուր էին: Ձերբակալված ընկերների տեղ գալիս էին նոր ընկերներ: Քանի գոյություն ուներ մասնավոր սեփականատիրությունը, և արտադրական միջոցները գտնվում էին մի խումբ շահագործողների-կապիտալիստների ձեռքին,

բայլշևիկյան կազմակերպության համար պարարտ հող կար, վորից նորանոր ուժեր եյին առաջ քաշվում շահագործվող պրոլետարիատի շարքերից։

Ժանդարմերիայի բավական չեր նույնիսկ կուսակցության ներսում ունեցած սև հոգիները, վորպեսզի նա կարողանար կազմակերպությունը «լիկվիդացիայի յենթարկել»։ Քանի կար կապիտալիզմն ու շահագործումը և ցարիզմը, բայլշևիկների զարգացման, աճման համար սոսորերկրյա ուժերը հաջորդելու եյին մեկը մյուսին։ Ժանդարմերիան իր հաշիվներում սխալվել եր իր ոպերացիայով բայլշևիկյան կազմակերպությունը գլխավորելու գործում։ Բայլշևիկյան կուսակցությունը դեռևս կենդանի յեր։

ՎԵՐԵԼՔԸ ՄՅՈՒՍ ԱՍՊԱՐԵԶՆԵՐՈՒՄ

1910 թվից սկսվող վերելքը խոշոր կենդանություն առաջացրեց վոչ
միայն անտեսական կյանքում, բանվորական շարժման մեջ, այլ նաև
հասարակական ուրիշ կազմակերպությունների կյանքում։ Ժողովրդա-
կան համալսարան, պրոֆմիություններ, թատրոն, գրականություն,
հրապարակախոսություն և այլն՝ սկսեցին կենդանանալ աննախընթաց
կերպով։

Պետք է խոստովանել, վոր Թիֆլիսի մեր բայլշևիկական կազմակեր-
պությունը չափազանց զբաղված լինելով ընդհատակյա աշխատանքնե-
րով, աչքաթող եր արել և կամ ուղղակի թերագնահատում եր լեգալ կա-
ռուցվածքի հնարավորությունները այն բոլոր ասպարեզնե-
սակցական աշխատանքի հնարավորություններն այն բոլոր ասպարեզնե-
րում, վորտեղ կարելի յեր ազդեցություն ձեռք բերել՝ բանվորական
մասսաները դաստիարակելու, հեղափոխական գործողությունների
պատրաստելու համար։ Այլ խոսքով՝ չափազանց կաղում եր մեր թեորե-
տիկական— դաստիարակչական աշխատանքը և կամ ավելի շուտ՝ բացա-
կայում եր խաղաղ։

Ինչպես ասել ենք, ժողովրդական համալսարանի վրացական սեկ-
ցիան համարյա թե ամբողջովին մենշևիկների ձեռքին եր, վորոնք բա-
վական հաջող կերպով ոգտագործում եյին իրենց ազդեցությունը բան-
վորների մեջ տարածելու և ամրացնելու համար։ Իսկ հայկական սեկ-
ցիան դաշնակների և սակավաթիվ ևսեռների ձեռքին եր, վորոնք ուղղա-
կի դաշնակցական բյուրոյի եյին վերածել այն և ամեն ինչ հրամցնում
եյին ազգ—դաշնակցական նացիոնալիստական գունավորումով։
Պրոֆմիություններում դրությունը բոլորովին այլ եր։ Այնտեղ
մենք՝ բանվոր բայլշևիկներս՝ հանդես եյինք գալիս ամբողջ եյությամբ
և խաղում եյինք ղեկավար դեր։ Իհարկե, մեր ակտիվությունը բացա-
րել դուրս նյութական չհապրդությամբ՝ կլիներ չափազանց սխալ,
վորովհետև ցարական դորչ իրականության մեջ պրոֆմիությունները
համարյա թե վոչ միայն չոչափելի բան տալ չեյին կարող, այլ պրոֆ-
միությունները մեզ համար հանդիսանում եյին ամենալավ չամարանը,
վորտեղից մենք մեր կողմն եյինք բերում բանվորներից ամենաակտիվ-
ներին, նրանցից լավագույններին։ Պրոֆմիություններում բանվորները
աշխատում եյինք և կարող եյինք աշխատել առանց ինտելիգենտ ընկեր-
ների։ Մենք այնտեղ ուժեղ եյինք։
Սակայն մենք չափազանց թույլ և ազդեցությունից զուրկ եյինք թեո-
րետիկական խնդիրներում, իդեոլոգիական պայքարի ասպարեզում։
Բայց մենք թույլ եյինք վոչ թե մեր իդեոլոգիական զենքերի անուժու-

թյան պատճառով: Ոչ, այդ տեսակետից մենք չափազանց ամուր էինք. մեր գաղափարական զենքն ամենից սուրն էր և հաստ: Պրոլետարիատի ձեռքին մարքսիզմից հեղափոխական և բազմակողմանի ուժեղ զենք չէր կարող լինել իդեոլոգիական ֆրոնտում: Մենք թույլ էինք, որովհետև նրան գործադրողներ չունեինք և կամ ունեինք չափազանց սահմանափակ թվով:

Մարքսիզմի անունից էին խոսում Բ. Իշխանյանը, Դ. Անանունը. բայց դրանք ուղղակի թե անուղղակի բուրժուազիայի գործն էին աջակցում և կազմակերպված պրոլետարիատի հետ կապ չունեցող մարդիկ էին: Մարքսիզմի անունից էին խոսում նաև Հովակիմ Սոլովյանը, Ռուբեն Խանազատը, որոնց «Հայկական Պլեխանով» էին անվանում, բայց սրանց վրա դաշնակցականներն ուղղակի ծիծաղում էին: Նրանց ձեռնտու չէր այդպիսի «մարքսիստների» հրապարակ գալը: Դաշնակները քաշվում, հաշվի էին առնում սպեցիֆիկներին, բայց նրանց մեծ մասը «մաքրարյուն» մարքսիստներ չէին: Իսկ մեր լավագույն և ականավոր մարքսիստներն «ինչ-ինչ» պատճառներով ասպարեզ չէին գալիս, և հրապարակը մնացել էր դաշնակցական, մշակական և հովլիտական խափառամոլներին:

Օրինակ՝ Հայ Գրողների Ընկերությունը, որ շաբաթական մի անգամ երեկույթներ էր կազմակերպում ու տալիս էր իր հրապարակային դասախոսությունը: Այնտեղ հարցերը լուսաբանվում էին ազգ-դաշնակցական: Նրանք այդպես սիստեմատիկաբար դաստիարակում էին ունկնդիրներին ամբողջ տարիներ շարունակ: Դաշնակցական նացիոնալիզմն անարգել կերպով իր կամքն էր թելադրում ունկնդիրներին: Այնտեղ չկային մարդիկ, որ այդ շովինիստներին ցույց տային իրենց արժանի տեղը, մարքսիստական հաստ գաղափարներով, պրոլետարիատի դասակարգային պայքարի պրիզմայով լույս սփռեին շոշափվող խնդիրների վրա: Մեր բոլշևիկյան կազմակերպությունը գրական խնդիրներում և այլ կրթա-կուլտուրական ու հասարակական կազմակերպությունների վրա համարյա թե չուներ մեզ համար անհրաժեշտ ազդեցությունը:

Այդ պատճառով էլ, նկատի առնելով, որ հրապարակը մնացել էր դաշնակցականների ձեռքին ու սակավաթիվ սպեցիֆիկներին, որոնք իրենց յուրույթով աղավաղում էին հեղափոխակ. պրոլետարիատի մարքսիստական անաղարտ ուսմունքը, ուստի՝ մենք հարց բարձրացրինք, որ Ժողովրդական համալսարանի միջոցով մի քանի հրապարակական դասախոսություն կարդար մեր բոլշևիկ ընկեր Կասյանը: Բայց նա կտրուկ կերպով հրաժարվեց, հայտարարելով թե իրեն այդպիսի դասախոսության համար պետք էին ամիսներ, որովհետև նա չէր կարող սովորական ջրալի բաներ հրամցնել ունկնդիրներին: Մենք պահանջեցինք դասախոսություններ կարդալ մեզ համար՝ բոլշևիկների փակ ժողովում:

Կասյանը համաձայնեց, և իրոք, Ներսես Մանուչարյանի բնակարանում կարդաց մի կարճ զեկուցում՝ երկրի ու մարդու ծագման մասին, որպեսզի հետագայում աստիճանաբար անցներ տնտեսական ձևերի զարգացման պատմությանն ու ապա քաղաքատնտեսությանը՝ և, վերջապես, ընթացիկ քաղաքական խնդիրներին: Սակայն, հակառակ իր խոստման, Կասյանը դրանից հետո մեզ համար ոչ մի զեկուցում չկարդաց: Կասյանի կողմից իր խոստումը չկատարելը և նրա զեկուցման չափազանց մակերեսային բնույթը հիասթափություն առաջացրեց մեր շարքերում: Ցավ նրա հրապարակ չգալը մենք բացատրում էինք ծուլությամբ ու վախկոտությամբ: Իսկ հետագայում միայն համոզվեցինք, որ նրանից ավելին սպասել անկարելի էր:

Ուրիշ բան էր Տիմոֆեյը— Սպանդարյան Սուրենը: Նա իր հաստ գրչով ու լեզվով, իր սրամտությամբ և թունոտ ծաղրանքներով ուղղակի հիացմունք էր պատճառում ամենքին: Նրա հոդվածները Թիֆլիսի «Կոպեյկա» թերթում բոլորի ուշադրությանն արժանացան: Նրան կարելի էր

Սպանդարյան և Շահումյան

լսել երկար, որովհետև ուներ խիստ կենդանի լեզու, հռետորական ընդունակություններ: Նկատելի էր, որ այդ մարդու մեջ կայծ կար և մասսան կարող էր բռնկել հեղափոխական տրամադրությամբ, կարող էր

մղել ամենավճռական քայլերի: Նա, իրոք վոր արժանի յեր Բոգվի պատվիրակը լինելու Պրագայի բոլշևիկական կոնֆերանսում: Այո, նա կարող եր արտահայտիչը հանդիսանալ պրոլետարական հեղափոխության հրաբխային ժայթքումների, վորոնք հիմնահատակ կործանելու եյին գալիս բուրժուական աշխարհը՝ նորը, սոցիալիստականը կառուցելու համար: Բայց Սուրենը հայերեն չգիտեր, հետևաբար լիովին չեր կարող օգտակար լինել նաև դաշնակների դեմ պայքարելու գործում:

Այդ ժամանակ մեր կազմակերպության մեջ խոշոր համբավ ուներ և ամենախոշոր առաջնորդի դափնին եր վայելում Ստեփան Շահումյանը, վորին ամենքը ճանաչում եյին դեռևս 1905 թվից: Նրան սիրում եյին վոչ միայն իր կողմնակիցները, այլ նաև անգամ մեր հակառակորդները: Նրա մասին խոսում եյին պատկառանքով, վորպես մեծ մարդու մասին: Նա բանվորների մեջ հայտնի յեր վոչ միայն իր բանավոր յելույթներով, այլև իր գրական գործերով: Նրա 1906 թվին հրատարակած «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան», վորը տալիս եր ՌՍԴԲ կուսակցության բռնած դիրքը, ժողովրդականացումը ազգերի ինքնորոշման սկզբունքով և տեղական ինքնավարությամբ՝ ծանոթ եր ամեն մի գրագետ բանվորի: Նրա հետագա հոդվածները նույնպես ամենափայլուն գոհարներ եյին: «Նոր Խոսք» ժուռնալում նրա «Տիեզերական բուքակը», մի հռչակավոր հոդված եր, վորը կարդացվեց բանվորներիս մեջ՝ ուղղված եր դաշնակցական լիդեր և թեորետիկ Վ. Վարանդյանին, վորով նա ուղղակի ծաղրում եր և վոչնչացնում դաշնակցական անասնական նացիոնալիզմը: Վերջապես նրա «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» գրքույկը, Այսրա ծածկանունով, վորը լույս տեսավ 1913 թվին, մի սանշանավոր գործ եր, վորով նա քննադատում և պախարակում եր Դ. Անանունին՝ ցույց տալով նրա բուրժուական նացիոնալիստական հնացած մտքերը, ի պատասխան դաշնակցական «Նոր հոսանք» ժուռնալում զետեղված նրա «Ազգային հարցը և դեմոկրատիան» հոդվածի: Շահումյանն իր հետագա աշխատանքով էլ ցույց եր տվել, վոր նա կուսակցության առաջնորդ կոչվելու բոլոր տվյալներն ուներ: Նա միշտ մասսայի հետ եր և առաջնորդում եր նրան ամեն քայլափոխում: Մասսան նրան պաշտում եր, վորովհետև թե գրչով, թե լեզվով և թե կենդանի գործով նա նվիրվել եր բանվոր դասակարգի գործին: Նա արտահայտիչն եր մասսայի բոլոր պահանջքների: Թիֆլիսի ընկերներս նրանից օգտվելու հնարավորությունից զրկված եյինք: Նա աշխատում եր Բաքվում և խիստ սակավ եր յերևում Թիֆլիսում:

Այնուհետև խոշոր գործչի համբավ ուներ Բուդու Մդիվանին, վորը նոր եր յեկել Թիֆլիս և շատ շուտով ձերբակալվեց: Իր կարճ ժամանակվա գործունեությամբ անգամ նա հայտաբերեց ամենախոշոր հռետորական ընդունակություններ և ղեկավարի տվյալներ: Մի անգամ միայն ինձ

վիճակվեց նրան լսել ընդհատակյա ժողովներից մեկում, վորտեղ նա զեկուցող եր: Նրան լսողները հիանում եյին: Հեղափոխությունից հետո և նա ամենքիս հայտնի դեմք եր, բայց իվերջո ազգային-ուկլոնիստական, տրոցկիստական ճահիճն ընկավ և նեխացրեց իրեն»:

Ունենալով հանդերձ վերոհիշյալ ուժերը և ուրիշ մի քանի պատրաստված ընկերներ, այնուամենայնիվ, մենք իդեոլոգիական ֆրոնտում թույլ եյինք և հրապարակ չեյինք գալիս ամեն պատեհ առիթի ճակատելու նացիոնալիզմի դեմ, վորը ձգտում եր արմատներ ձգել Անդրկովկասի մասսաների մեջ:

1912 թվին Մոսկվայում մի խումբ «մարքսիստ» և կեղծ մարքսիստներ հրապարակ են հանում «Գարուն» ալմանախի 3-րդ հատորը, վորն ամբողջովին նվիրված եր հայ գրական դեմքերի քննադատությանը: Նա, ինչպես հայտնի յե, «մարքսիստական» գրական քննադատության առաջին ժողովածուն եր, վորով իհարկե վոչ հետևողականորեն հայ նացիոնալիստական գրական դեմքերը Պառնասի գագաթից ցած եյին բերվել: Աճառյան, Թումանյան, Շահազիզ, Իսահակյան, Աբովյան՝ յենթարկվել եյին քննադատության, տրվել եր նրանց գրվածքների հասարակական արժեքը՝ ցույց տալով, վոր նրանք հայ իրականության շահագործող դասակարգերի արտահայտիչն եյին, բայց վոչ յերբեք շահագործվող՝ տարրերի ձգտումների արտահայտիչը:

Հասկանալի յե, վոր դաշնակցական մամուլը լավ ընդունելություն չեր կարող ցուցաբերել «Գարուն»-ին և «Հորիզոն» թերթում Լեոյի բերանով «չան հաչոց» համարվեց «Գարուն»-ի մի քանի գրվածքները, օրինակ՝ Ա. Խանդոյանի գրածը Աճառյանի մասին*): «Գարուն»-ը ինչպիսի ընդունելություն էլ, վոր ուներ դաշնակցական մամուլի կողմից, նրա հանդես գալը գրական յերույթ եր՝ իր սխալներով հանդերձ: Մենք, գրասեր բանվորներս մատնացուցում եյինք մեր հակառակորդներին, թե՝ «ահավասիկ համեցեք և տեսեք, թե ինչպես կլինի քննադատությունը»:

«Գարուն»-ից հետո ուշադրավ յերևույթ պետք է համարել գրական ասպարեզում «Կովկասի Լրաբեր» թերթի հրապարակ գալը:

«Մշակ»-ի խմբագիր Համբարձում Առաքելյանն իր առաջնորդողում այդ թերթին «Կովկասի լըբեր» եր անվանել (լըրբ խոսքից) և փրփուրը բերնին հայհոյում եր նրան: Հայ վաճառականների բերան այդ թերթի

*) «Հորիզոն» թերթի 1912 թ. մայիսի 30-ին Լեոն իր «Զուլուսական հակազդություն» առաջնորդողը վերջացնում է այսպես.

«Շուն,—ասում եր «Ֆաուստի» ստեղծագործողը, հաչում է ձիավորի վրա, վորովհետև նրան իրանից շատ բարձր է տեսնում: Պարզ է ասված»:

վերաբերմունքից արդեն հայտնի պիտի լիներ, թե ինչ վոր մի բան կար։ Նրան հայհոյում և կամ շատ անգամ անպատասխան թողնելով՝ «ուշադրության արժանի» չեր համարում նաև դաշնակցական «Հորիզոն» թերթը։ Ինչո՞ւմն եր բանը. ինչո՞ւ դաշնակներն ու հայ կադետները «չեյին սիրում» այդ թերթը։

Այդ թերթը մի ամենորյա յերկու կոպեկանոց թերթ եր, վորն իր առաջին իսկ համարից բանվորների ուշադրության առարկան դառավ։ Փակագծի մեջ պետք ե ասել, վոր բանվորներն ուշադրությամբ հետևում եյին նաև ռուսերեն «Կոպեյկա» թերթին։ Այդ թերթերի հաջողությունն անկասկած պետք ե բացատրել նրանով, վոր նրանց աշխատակցում եյին սոցիալ-դեմոկրատները և գրում եյին բանվորների մտքին ու սրտին մոտ բաներ։ «Копейка»-ին աշխատակցում եր Վոլկինը (Սուրեն Սպանդարյանը), իսկ «Կովկասի Լրաբեր»-ն ամբողջովին գտնվում եր սոցիալ-դեմոկրատների՝ այսինքն՝ Ս. Յերզնկյանի, Խանոյանի, Գ. Վարդանյանի ձեռքում, վորոնք հրատարակում եյին բանվորական, դեմոկրատական մի թերթ, վորը կատաղի պայքար եր վարում «Հորիզոն», «Մշակ» թերթերի դեմ։ Այդ թերթում հիմնականում վոչ միայն հակաբոլշևիկյան վոչինչ չկար, այլև ընդհակառակը, գրվում եյին հօգուտ նրա և նրա վոգով բազմաթիվ հոդվածներ և համապատասխան ինֆորմացիա, վորոնք Ս—Դ ինտելիգենտների ու բանվորների գրչի արգասիք եյին։

Սոցիալ-դեմոկրատներն առանց մի կոպեկ ծախսելու և առհասարակ թերթի նյութականի մասին մազաչափ անգամ մտածելու, թերթն ամբողջովին իրենց ձեռքը վերցրած, մաքսիմալ չափով ոգտագործում եյին, վորպես ագիտացիայի ամբիոն։ Ցարական ցենզուրայի ամեն մի առողջ ու առաջադիմական միտք սպանող ճնշիչի տակ ուրիշ՝ լեգալ սոցիալ-դեմոկրատական թերթ ապրել չեր կարող, և շատ անգամ հեղափոխական մտքերն արտահայտվում եյին «յեզոպոսյան» լեզվով։ Անկասկած, տպարանի տերը, թերթի պաշտոնական խմբագիր Բ. Հարությունյանը, վորն իր հաշվով եր հրատարակում թերթը և խմբագրական գործին բոլորովին չեր խառնվում, պետք ե ստանար վորոշ նյութական շահ, այսինքն՝ նրա տպարանը մշտական պատվերով ապահովված կլիներ։ Բայց մեզ համար ամենակարևորն այդ չեր, այլ այն, վոր մեր ընկերներն արտահայտվելու տեղ ունեյին, թերթը գտնվում եր մասամբ մեր ընկերների ձեռքում։

Վոչ մի կասկած լինել չեր կարող, վոր իր ժամանակին, յեթե նկատի առնենք այն պայմանները, յերբ մենք թերթ չունեյինք և ունենալու վոչ նյութական հնարավորություն կար և վոչ էլ ցարական ցենզուրան թույլ կտար ունենալ, «Կովկասի Լրաբեր» թերթը խոշոր դրական գործ եր կատարում և արժանի յեր մեր ամենալայն աջակցության։ Համենայն դեպս, նա այն չեր, ինչ եյին նացիոնալիստական դարշահոտությամբ

ներկված «Մշակ» և «Հորիզոն» թերթերը։ Ցեվ յեթե դրա վրա ավելացնենք նաև այն, վոր «Կովկասի Լրաբեր» թերթն ամենամեծ հյուրընկալություն եր ցույց տվել բանթղթակիցներին, վորոնք առաջին անգամ ցարական ռեակցիայի տարիներին հնարավորություն եյին ստացել գրչով պայքարելու բոլոր ձևի շահագործումների դեմ՝ ապա պարզ կլինի պատկերը։

Այս բոլորից հետո թվում եր, թե մեր կազմակերպությունը պետք ե ձգտեր ոգտագործել «Կ. Լ.» և դարձնել իր վոչ պաշտոնական որգանը կամ տալ նրան ավելի հետևողական գիծ, վորպեսզի նա դառնար կազմակերպության արտահայտիչը, վորին մասնակցեյին մեր բոլոր կուսակցական ընկերները։ Դրանից հո կուսակցությունը չեր վնասվելու, այլ կշահեր, բայց մեր այն ժամանակվա ղեկավարությունից ականավոր մարքսիստ ընկեր Կասյանը համաձայն չեր դրան և ամեն կերպ աշխատեց այդ գործը խափանել։ Նա տեսավ, վոր իրենից դժգոհ ընկերները համախմբվում եյին թերթի շուրջը և կապվում նրա միջոցով մասսայի հետ ու վերջինիս աչքում հեղինակություն ստեղծում։ Կասյանն առանց կուսակցության վորոշման մի «Նամակ խմբագրության» գրեց «Մի խումբ մարքսիստներ» ստորագրությամբ, վորով նա այն միտքն եր հայտնում, թե «Կովկասի Լրաբեր» թերթն իբր թե մասսաները կուսակցության որգանի տեղ եյին ընդունում, ու այդ նամակով նա նրանց «նախազգուշացնում եր» իր կողմից։

Իհարկե, վոչ վոք այդ թերթը կուսակցության որգան չեր համարել, այլ Կասյանը հերյուրելով այդպիսի կարծեցյալ մտքեր՝ առիթ եր վորոնում վիրավորել իրենից դժգոհ ընկերներին, վորոնք համախմբվել եյին այդ թերթի շուրջը։ Նա, հակառակ Պրագայի կոնֆերանսի վորոշման, փոխանակ նման թերթերն ոգտագործելու և մասսայի մեջ ագիտացիա տանելու՝ աշխատում եր արհեստական կերպով կոնֆլիկտներ ստեղծել թերթի շուրջը՝ ռելսերի վրա դրված գործը խափանելու համար։ Կասյանի «Մի խումբ մարքսիստներ» ստորագրությունը կրող նամակը, վոր յես բազմացրի և ուղարկեցինք «Հորիզոն», «Մշակ» և «Կովկասի Լրաբեր» թերթերին, տպագրեց միայն «Մշակ»-ը և այդ նամակին կցեց մի փողոցային խմբագրական ծանոթություն։ Բայց այդպիսով, փաստորեն Կասյանը Համբարձում Առաքելյանի հետ թև-թևի տված՝ սկսեց խփել սոցիալ-դեմոկրատներին։ Ավելի լավ ե բերենք այդ նամակը և «Մշակ»-ի խմբագրական ծանոթությունը՝ առանց փոփոխության։

«Նամակ խմբագրության. 28 հուլիսի.

«Հայ բնթերցող հասարակության (բայց վոչ բանվորների Շ. Գ.*) մեջ այս կամ այն կերպ տարածվել ե այն կարծիքը, թե երբ «Կովկասի Լրաբեր» թերթիկը մարքսիստական ուղղության յեթե վոչ որգանը, գոնե նրա արտահայտիչն ե հնարավորության սահմաններում**)։

---

*)—**)—***), Բոլոր ընդգծումներն իմն ե Շ. Գ.։

«Նրանք, վորոնք ծանոթ են մարքսիզմի տեսական և գործնական հայացքների հետ, [illegible], միայն ժպիտով կընդունեն այդ չինծու կարծիքը: Բայց, վորովհետև հայ ընթերցողների*** ահագին մեծամասնությունը ծանոթ չէ բանվորական իդեոլոգիայի սկզբունքների հետ, ուստի նա հալած յուղի տեղ կընդունի այդ լուրը և թյուրիմացության մեջ կնկնի: Այդ պատճառով թույլ տվեք «Մշակ»-ի միջոցով հայտնել ի գիտություն ընթերցող հասարակության, մանավանդ բանվոր ընթերցողներին, վոր «Կովկասի Լրաբեր»-ը վոչ մի առնչություն չունի հայ մարքսիստների հետ և վոր նա լեգալ սահմաններում նույնիսկ հնարավոր կերպով անգամ չի արտահայտում մարքսիստական ուղղությունը:

«Մի խումբ մարքսիստներ»:

Հայ թերթերից միայն Համբարձում Առաքելյանի «Մշակ» թերթը հյուրընկալելով ոգտագործեց այդ նամակը փառավորապես և մաքրեց իր հաշիվները «Կովկասի Լրաբեր» «գրչի ավազակների» հետ:

«Ծանոթ. խմբագրության.— Մեզ թվում է, վոր նամակագիր պարոններն ավելի լավ բնորոշած կլինեյին, յեթե «Կովկասի Լրաբեր» կոչված թերթին տային նրա իսկական անունը: Այդ խղճուկ թերթը փողոցային և դեղին մամուլի տիպիկ ներկայացուցիչն է: Պաշտոնական ղեկավարը գրականության, մամուլի հետ վոչ մի կապ չունեցող մի փերեզակի խանութպան է, վորի միակ հոգսը կոպեկներ գցելն է իր վատարկ և փտած ապրանքով, իսկ բուն ղեկավարները՝ մի քանի գրչի ավազակներ, վորոնք քաջություն չունեն նույնիսկ իրենց անվամբ հանդես գալու, այլ գործում են խուրդուրեն, պատի հետևից, հովացնում են մի քիչ իրենց դառնացած սրտերը այն անձանց կողմից, վորոնք բաց ճանաչելով նրանց՝ միշտ պոկում եյին նրանց դիմակները: Ցավ նորություն չէ մեր մեջ, վոր հաճախ գրչի ավազակները և խղճի հելուզակները վեհ և արմատական գաղափարների դիմակի ներքո շահագործում են միամիտ ամբոխը:

«Ինչ կապ կարող է լինել Մարքսի և մի Կար-Միրի, Մե-Բիսի կամ մի փերեզակի միջև: Կար-Միրի բարբաջանքները լռեցնելու և նրա գզվելի դիմակը պատռելու ամենալավ յեղանակն այն է, վոր գործադրեցին Գ. Ցենկիրարյանը և Գ. Զալխուշյանը: Առաջինը մի հասարակ խոսքով լռեցրեց այդ քամելիոնին, «յեթե չեմ սխալվում, այդ Կար-Միրը նա պետք է լինի, վորին յես մի անգամ դատապարտեցի բանտարկության գողության համար», իսկ Գ. Զալխուշյանը լռեցրեց այդ քամելեոնին գրական ֆոնդի դեմ վեճի առթիվ, ցույց տալով, վոր նրա փորացավը վոչ թե գրական ֆոնդն է, այլ «մեկը ինձ, մեկը քեզ»: Սակայն մենք այդ [illegible] խմբի անդամներից մեկի սխրագործությունների հետ ևս կծանոթացնենք շուտով՝ խմբի պատկերը լրիվ դարձնելու համար»:

«Մշակ», 4 ոգոստոսի, 1913 թ., № 170:

Իսկ «Հորիզոն» թերթը վոչ տպագրեց և վոչ էլ ուշադրություն դարձրեց այդ նամակի վրա: Միայն «Կովկասի Լրաբեր» թերթը, վորին վերաբերում եր այդ յելույթը՝ պատասխանեց «Թիկունքից հարված» համարելով Կասյանի յելույթը: Բերենք ամբողջովին Հ.-ի —Արամայիս Ցերզնկյանի հոդվածը:

«ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

«ՄԻ ԽՈՒՄԲ ՄԱՐՔՍԻՍՏՆԵՐԸ»:

«Մշակ» թերթում սիրալիր ընդունելություն են գտել «Մի խումբ մարքսիստներ», վորոնք հրապարակ են յեկել հերքելու հասարակության մեջ «տարածված կարծիքը մեր թերթի ուղղության մասին:

«Վոր այդ մարդիկ նեղ ֆրակցիոներական դիտումներից դրդված ընդունակ են յեղել քարեր շպրտելու դեպի ամեն մի կուլտուրական ձեռնարկություն, դեպի ամեն մի կենդանի գործ՝ մենք յերկար տարիների ընթացքում բազմիցս հանդիսատես ենք յեղել:

«Այդ նրանց հին փեշակն է, տասնյակ այդորինակ եքսպերիմենտների նրանք անկարող են տալ:

«Չէ՞ վոր իրենց սրանեղ անկարողությունը պետք է մի վորևե պոհացում տան:

«Սակայն այժմ այդ մարդիկ հրապարակ են յեկել պրովոկացիայով:

«Իրենք թաղնված մթության մեջ, անանուն կերպով, ապահոված իրենց կաշին ամեն կերպ, նրանք ցանկանում են հարված հասցնել թիկունքից:

«Ցավ իրոք, ի՞նչ կարող է պատասխանել «Կովկասի Լրաբեր»-ը տված հարցին [illegible]:

«Ունի՞ նա հնարավորություն ներկա մոմենտում մտնել դրված խնդրին:

«Մի խումբ մարքսիստները» հրապարակ են յեկել նոր ռազմագետի հնարամտությամբ:

«Զավալով նույնիսկ իրենց անունները, նրանք հրապարակ են յեկել դավադիր նամակով մի գործի դեմ, վորը դրվում է հրապարակի վրա, և ամեն մի ավելորդ խոսքից կարող է ամբողջ գործը վնասվել:

«Սա, իրոք վոր մեծ քաջություն չէ:

«Այն ժամանակ, յերբ ներկա կղերա-բուրժուական լճացած մթնոլորտում անհրաժեշտ է սթափեցնող խոսք, և իր ուժերի չափ անում է «Կովկասի Լրաբեր»-ը, այդ դեմոկրատիայի անունից հորջորջողները միացած իսկական դեմոկրատիայի թշնամիների հետ, տալով նրանց ուժ՝ պայքարում են այն դեմոկրատիկ թերթերի դեմ, յենթարկում պրովոկացիայի:

«Դա ևս գործ է: Ներկա քար անտարբերության օրերում մենք շատ սյուրպրիզներ ենք տեսել «մեկուսացված» գեներալներից, թող դա յել անցնի այդ շարքը:

«Սակայն գիտակից դեմոկրատիան վաղուց է սկսել «սևը սպիտակից» ջոկել և նմանորինակ անզոր ճիչերին նա տալիս է իր արժանի գնահատականը:

«Մենք մի բան կասենք պ. «մարքսիստներին», յեթե ընդունակ եք ավելի լավ գործ կատարելու՝ հրապարակ յեկեք: Մենք առաջինը կլինենք, վոր կգնահատենք այդ գործի արժանիքը, սակայն քանի վոր դուք միշտ գտնվում եք խավարի շրջանում՝ մենք մի բան կասենք ձեզ:

«— Հեռու կացեք պրովոկացիայից, թողեք դավադրական միջոցները և հարվածը մեջքից:

«Նշանավոր» նամակի «Մշակ»-ի ավելի ևս նշանավոր հավելվածին կպատասխանենք վաղը»:

Խմբագրություն՝

1913 թ. ոգոստոսի 14, «Կովկասի Լրաբեր» № 182 (235):

Հոդվածագիրն իրոք «Կ. Լ.»-ի յերկու համարներում մի շարք փաստերով ապացուցեց, վոր հայ վաճառականների օրգան «Մշակ»-ի խմբագիրը գեղծող, խարդախող, գողերին հովանավորող է և այլն, և այլն:

Բայց Կասյանը ևս ձեռքերը ծալած չնստեց. նա գրեց մի նոր նամակ խմբագրության՝ «21 բանվորներ» ստորագրությամբ, վորը Ս. Կասյանը գրեց ու, արհեստանոցից-արհեստանոց տարավ և ստորագրություն հավաքեց: Թե ովքեր եյին և վորչափ եյին հասկանում այդ թուղթը ստորագրող «բանվորները»՝ մեկ ալլահը, Կասյանը և տղերքը

դրոշը դիտելին: Բայց բերենք այդ նամակը ես՝ օրինակով լինելու համար,— որը դարձյալ տպագրեց միայն «Մշակ» թերթը:

«Նամակ խմբագրությանը, 22 օգոստոսի:

«Տարիներ է ահա, որ մենք՝ հայ բանվորներս զրկված ենք բանվորական թերթից, մարքսիստական խոսքից: Ծայրահեղ կարոտով և մեծ անհամբերությամբ մենք սպասում էինք, որ ահա արգելքները կվերանան և մենք կրկին կունենանք մեր թերթը, հաստատ համոզված լինելով, որ մեր իդեոլոգները կանգնած են իրենց դիրքերում:

«Այդ սպասողական դրության մեջ էինք, յերբ մեր շրջաններում ևս տարածվեց այն լուրը, որ իբր թե «Կովկասի Լրաբեր» թերթիկը բանվորական-մարքսիստական է դարձել: Մենք չխնայելով մեր կոպեկները, սկսեցինք գնել ու կարդալ այդ թերթը: Բայց քանի կարդում, այնքան ավելի շփոթվում էինք, մի՞թե մարքսիստ ինտելիգենտները և չալիկ ունեն, որ փոխում են ժամանակի համեմատ: Այլապես ինչով բացատրենք այն հակասությունները, որ գոյություն ունեն պղտոր ջրում ձուկ որսացողների տարածած լուրի և հիշված թերթի առաջնորդողների ու նրանում զետեղված հոդվածների մեջ...

«Սակայն, յերբ կարդացինք «Մշակ»-ի մեջ «մի խումբ մարքսիստների» հայտարարությունը, թե այդ թերթիկը ոչ մի կապ չունի մարքսիզմի հետ, այն ժամանակ մեզ համար պարզ յեղավ նրա իսկական դիտավորությունը: Մենք հասկացանք, որ թերթի ղեկավարները, լինելով անսկզբունք, այսօր այս դասակարգի, վաղը մյուս դասակարգի հացին յուղ քսող մարդիկ, նպատակ են դրել զաղտնի և դեմագոգիական միջոցներով շփոթել բանվորներիս և հանել մեզ մեր իսկական ճանապարհից: Մեզ ավելի ևս պարզ յեղավ, յերբ իմացանք, որ թերթը «Հերմես» ապարանատերերի առևտրական ձեռնարկությունն է, որ վարձել է իր նմաններին, որպեսզի օգնի նրանց վարպետությունների՝ մեր կոպեկները կորզելու համար:

«Իսկ յերբ մեր իսկական իդեոլոգները իրենց հայտարարությամբ պատռեցին այդ դիմակը բանվորության առաջ, դիմակավորված պարոնները լռելու փոխարեն՝ դուրս յեկան ու առանց քաշվելու սկսեցին կրկին «դեմոկրատիայի» անունից պաշտպանել իրենց վարմունքն ու դիրքը»:

«Սրանով մենք հայտարարում ենք, որ այդպիսի պարոնները չեն յեղել յերբեք և չեն էլ կարող լինել մեր ղեկավարներն ու պաշտպանները: Մենք բողոքում ենք այդ մարդկանց վարմունքի դեմ, իսկ դիմակ պատռող «մի խումբ մարքսիստներին» հայտնում ենք մեր սրտաբուխ գոհունակությունը»:

«21 բանվոր»

«Մշակ», № 191, 31 օգոստ. 1913 թ.:

Սրանով էլ վերջացավ «Կովկասի Լրաբեր» թերթի շուրջն առաջացած պրոլետարիատի դասակարգային շահերին ու նրա պայքարի համար անողոք յելույթը: Յեվ այն ընկերները, որոնք թեև հիասթափված էին Կասյանից, բայց պահպանում էին կուսակցական կապը նրա հետ, և հարգում էին որպես ավագ ընկերոջ և մարքսիստի՝ վերջնականապես յերես դարձրին մի մարդուց, որը ցանկանում էր իր կամքը թելադրել և կուսակցության Պրագայի կոնֆերանսի վորոշումներին հակառակ՝ օպորտունիստական տեսակետներ փաթաթել ընկերների վրա:

Մի նրան հարց տվող պետք է լիներ, թե ո՞վ էր տարածել այնպիսի սուտ հերյուրանքներ, թե «Կովկասի Լրաբերը» իբր թե մարքսիստական

ազդեցության արտահայտիչն էր և այն: Այդ ճիշտ չէր, այդպիսի փոխ մի խտակցություն չկար և վերջապես ինչու Սուրեն Սպանդարյանը կարող էր աշխատակցել «Կոպեյկա» թերթին, կամ Շահումյանը, Մասլյանը, Խանոյանը, և մի շարք այլ բոլշևիկներ կարող էին աշխատակցել մենշևիկների Մարզային կոմիտեի օրգան «Պայքար» թերթին, որոնք անգամ նրա խմբագրական կազմի մեջ էին մտել, կազմել կոալիցիոն խմբագրություն, իսկ բանվորական անկուսակցական «Կովկասի Լրաբեր» թերթերին մենք աշխատակցելու իրավունք չպետք է ունենայինք մի թերթ, որը փաստորեն «անտեր» էր մնացել:

Յեթե խոսքը վերաբերում էր հեղափոխական մարքսիզմի—բոլշևիզմի թեորիայի ու պրակտիկայի միասնականությանը, ապա Կասյանն իր խմբագրած «Մեր Խոսք»-ի էջերում չպետք է գրեր թե «Մեր խոսք»-ի էջերը բաց են լինելու յուրաքանչյուր հետևողական մարքսիստի առաջ անկախ նրա այս կամ այն ֆրակցիային պատկանելուց»:

Ուրեմն Կասյանի յելույթն ունի այլ աստառ—ըղձապատճառ, նրա յելույթին արտաքին տպավորությամբ գնահատական տալ, մանավանդ ֆորմալ կերպով չի կարելի, որովհետև նա մարքսիստական մաքի անաղարտությունն օգտագործել էր որպես շիրմա՝ թիկունքից հարվածելու իրենից յերես դարձրած բոլշևիկ ընկերներին:

Մենք աշխատակցում էինք անկուսակցական բանվորական «Կովկասի Լրաբեր»-ին, իսկ Կասյանը «Մեր Խոսքը» ժուռնալի էջերը բացել էր մենշևիկների, ալեքսինիկների և վպերյոդովցիների առաջ, «անկախ նրա այս կամ այն ֆրակցիային պատկանելուց»: «Մեր Խոսքը» մեր կուսակցության օրգանն էր:

Կասյանի վերոհիշյալ գրական յելույթներում չկար բոլշևիկական հետևողականություն, բայց կար օպորտունիզմ, հաշտվողականություն դեպի ոչ բոլշևիկական «ֆրակցիաները»: Յեվ այդ բոլորն այն ժամանակ, յերբ «Պրավդան» վպերյոդովից Բոգդանովին հեռացրել էր թերթից: Բայց այդ հարցի շուրջը մենք ավելի յերկար կխոսենք գրքի «Մեր տարաձայնությունները» գլխում:

Յեվ այդ յելույթին խիստ միատեսակ «մեկնաբանություն» է տալիս Ա. Կախոյանն իր «Հիշողություններ»-ում:

Կախոյանի «Հիշողություններ»-ում այն միտքը, թե՝ Զավրիանց սխալ է... աշխատակցում էին նաև «Մշակ»-ին: Մեր

«... Այդ թերթին աշխատակցողներն աշխատակցում էին նաև «Մշակ»-ին: Մեր կազմակերպության ուժեղանալուց հետո այդ յերևույթն անթույլատրելի յեր, մանավանդ, որ կազմակերպության անունից խոսվում էր դաշնակների ու կադետների ռեակցիոն շրջանում»:

Թե ինչ է ուզում ասել այս տողերի հեղինակը՝ միայն ինքը կարող է հասկանալ: Բայց նա ավելացնում է նաև հետևյալը՝

«Մեր ընկերների մեջ կարգապահությունն ամրապնդելու համար փորձվեց կարգի հրավիրել այն ընկերներին, որոնք իրենց բոլշևիկ անվանելով հանդերձ՝ գործակցում էին մեր հակառակորդներին և յերբեմն էլ դուրս գալիս նրանց դեմ, առանց

գիրեկտիվներ ստանալու և անկազմակերպ: Սակայն նրանք վոչ միայն չլսեցին և չեն-թարկվեցին կազմակերպության դիսցիպլինային, այլև շարունակեցին էլ ավելի առաջ տանել իրենց գործունեությունն այդ ուղղությամբ»: (Տես եջ 274):

Կախոյանի այդ «Հիշողություններ»-ը, վոր ավելի ճիշտ կլիներ, յեթե «Թյուրիմացություններ և փաստերի գիտակցական աղավաղումներ» անվանվեր, վոչինչով չի համապատասխանում իրականության: Յեթե չկար կուսակցական վորոշում, ապա ի՞նչպիսի դիսցիպլինայի խախտման մասին կարող եր խոսք լինել: Իսկ յեթե լիներ՝ ապա տեղական կազմակերպությունն իր այդպիսի վորոշմամբ պիտի դեմ գնար Պրագայի կոնֆերանսի վորոշումներին: Ի՞նչ եր ասված Պրագայի կոնֆերանսում առհասարակ լեգալ կազմակերպություններում աշխատելու մասին: Տեսնենք...

«ա) Ամենագործունյա մասնակցություն ունենալ կուսակցական անլեգալ կազմակերպության կողմից տնտեսական պայքարը ղեկավարելու գործում: բ) Հնարավոր չափով մեծ նախաձեռնություն ցուցաբերել լեգալ ընկերություններում սոցիալ-դեմոկրատական աշխատանքը վերականգնելու գործում—պրոֆմիություններ, ընթերցարաններ, գրադարաններ, բանվորական զանազան զվարճության վայրեր, պրոֆորգանների տարածումը և պրոֆեսիոնալ մամուլը տանել մարքսիստական վոգով և այլն»:

(Տես՝ Լյադով, «Վ. Կ. Պ.», եջ 391, Մեծ Ենցիկլոպեդիայի հրատ.):

Կախոյանը նման խնդիրների մասին գրելիս պետք է կուսակցության բարձրագույն որգանների վորոշումները կարդար և ապա տեղի-անտեղի խոսեր «դիսցիպլինայի» մասին:

Ճիշտ է, վոր «Կովկասի Լրաբերը» վորևե պրոֆմիության որգան չեր, բայց փաստորեն նա բանվորական եր և հակադրված բուրժուական թերթերին: Բացի դրանից, Կախոյանը չարաչար սխալվում է, յերբ գրում է, թե «Կ. Լ.»-ին աշխատակցողները միաժամանակ աշխատակցում էյին նաև «Մշակ»-ին: Նրանք ինչո՞ւ պետք է գրեյին «Մշակ»-ում, յերբ «Կ. Լ.»-ի եջերից ամենակատաղի պայքար էյին մղում «Մշակ» թերթի և «Հորիզոն»-ի դեմ: Բայց, ո՞վ զարմանք, ինքը՝ Խեչո Կախոյանը եվ մի քանի անգամ գրել է «Կովկասի Լրաբեր»-ում...

«Կովկասի Լրաբեր» թերթում յես առաջին անգամ զետեղեցի իմ անդրանիկ բանաստեղծությունը՝ արհեստավորների համքարության խորամանկությունների մասին: Նյութը հանձնելիս ասացին, վոր «կարգին», բայց մի քանի որ հետո պոստ-արկղով խմբագրատուն հրավիրեցին և հայտնեցին, վոր նյութը կորել է և պետք է գրել նորից: Նորից և ավելի հաջող գրեցի ու տարա խմբագրություն, վորն իսկույն տպագրվեց: Դրանից հետո վոչ մի բանվորական ժողով կամ այլ ինֆորմացիայի նյութ չեր կարող վրիպել աչքիցս: Յես իսկույն գրի եյի առնում և տպագրության հանձնում: Վորոշ ժամանակ հետո, արդեն յես թղթակցություններ ուղարկեցի Ա. Մելիքյանի խմբագրած «Խոսք» թերթին Յերեվան քաղաքում, վորը հրատարակվեց մինչև ինը համար: Իսկ այնուհետև հոդվածներ ու թղթակցություններ գրում եյի հայերեն լեզվով հրատարակվող բոլոր բոլշևիկյան թերթերին:

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

1912 թվի յերկրորդ կիսամյակին նորից սկսվեց մռայլվել միջազգային դիպլոմատիական հորիզոնը: Այս անգամ փոթորիկ եր պայթում Բալկաններում: Այդ թվի սեպտեմբերի 25-ին Չերնոգորիան պատերազմ հայտարարեց Թյուրքիային: Հասկանալի յե, վոր մի այդպիսի փոքրիկ, վողորմելի պետություն յերբեք չեր համարձակվի նման քայլ անել, յեթե իր թիկունքում չունենար Թյուրքիային հակառակորդ յեվրոպական պետություններ: Չերնոգորիայից հետո, յերբ իրար յետևից հանդես յեկան Սերբիան, Բուլղարիան և վերջապես Հունաստանը և հակատաձևական ընդհանուր բալկանյան ֆրոնտ կազմեցին, այն ժամանակ պարզվեց «հանելուկը»: Մամուլը սկսեց թմբկահարել, թե հասել են Թյուրքիայի վերջին օրերը, թե շուտով Թյուրքիան բաժան-բաժան կարվի յեվրոպական կոնֆերանսում և այլն: Բացվեց նաև հայ բուրժուական մամուլի բերանը: Յեթե շուտով Թյուրքիան անդամահատվելու յե, ապա ինչո՞ւ քնել, ինչո՞ւ հարց չհարուցել, վոր բաժանվող կարկանդակից բաժին հանի նաև հայ բուրժուազիային: Պետք է թերթել միայն այն ժամանակվա որագրությունը, վորպեսզի պարզ գաղափար կազմվի, թե ինչպիսի ռոմանտիկ հույսեր էին տածում այդ պատերազմի յելքի վերաբերմամբ մեր բուրժուական հրապարակախոսները և ինչպիսի ոդային դղյակներ էին կառուցում մեր ցնորված գրչակները:

Դաշնակները մի հարվածով յերկու նապաստակ խփելու ցավով էին բռնված: Մի կողմից «դարավոր վրեժ լուծել» Թյուրքիայից, նրանից պոկել հայաշատ մի տերիտորիա, վորտեղ թեկուզ «կազմակերպվի հայկական ժանդարմերիա՝ սպաների ղեկավարությամբ»—գրում էին նրանք: Մյուս կողմից, դաշնակների համար հայկական հարցը, վորը շնորհիվ բալկանյան պատերազմի հարություն առավ մոխիրների տակից, նրանց համար ամենալավ առիթն եր լայն կամպանիա մղելու կորցրած «ժողովրդականությունը» վերականգնելու համար: Իսկ, ինչպես հայտնի յե, «հասարակական կարծիքը», «ժողովրդականությունը» միշտ էլ տալիս են իրենց ռեալ շոշափելի հետևանքները: Ներկա պարագայում այդ կամպանիան խոստանում եր դաշնակներին մի կողմից ուժեղանալ, նորանոր միամիտներ քաշել դեպի իրենց կուսակցությունը, իսկ մյուս կողմից հայ բուրժուա-աղաների քսակները կբացվեյին դաշնակների առաջ՝ ուժեղացնելու ագիտացիան, և «անհրաժեշտության դեպքում» ավանտյուրիստական յելույթներ կազմակերպելու համար:

Ահա այդ խիստ կարևոր մոմենտները լավ ըմբռնած դաշնակցականներն էլ ավելի ուժգնորեն կուրծք էին ծեծում, կոկորդիլոսի ար-

ցունք թափում, թե միայն իրենք, միայն դաշնակցական կուսակցությունն էր հոգատարված հայերի ազատագրության հարցով, և հասել էր ժամանակը հարցը հասցնել իր լուծման տրամաբանական վախճանին: Միայն պետք էր նյութական աջակցություն և այլն, և այլն: Ահա, թե այդ առթիվ ինչ էր գրում դաշնակցականների բերան «Հորիզոն» թերթն իր առաջնորդողում :—

«Թող... հայկական վայրերում կազմակերպվի հայկական ժանդարմերիա՝ ընդհանուր վստահություն վայելող սպաների ղեկավարությամբ և թող նա պետական միջոցներով զինի հայ ժողովրդին և այսպիսով հնարավորություն տա նրան, ավազակային հարձակումներից իրեն պաշտպանելու: Սակայն, յեթե նա (Թյուրք կառավարությունը) այդ չի կարողանա անել և հայը սահմանադրական ռեժիմի տակ իբրև նախկին շրջանների իրավազուրկ ռայան ենթակա է լինելու կոտորածների սարսափին, ապա թող լավ իմանան Տաճկաստանի բախտը ներքուստ անորինող Թյուրք պետական գործիչները, վոր տաճիկ կառավարությունը և վոչ էլ տաճիկ պետությունն այլևս զերոյի արժեք չեն կարող ունենալ հայերի աչքում, և նրանք ստիպված պետք է լինեն ուրիշ ճանապարհների մասին մտածելու՝ իրենց գոյությունը պաշտպանելու համար»:

«Հորիզոն», 1912 թ., 7 սեպտ.:

Դաշնակներն այս հայտարարությամբ հարցը դնում էյին բացեիբաց, թե «իրանք ստիպված կլինեն...» հայերին քարշ տալ ամենքին վաղուց հայտնի հին մեթոդին՝ զինված ավանտյուրաներ կազմակերպելու փորձերին, վորպեսզի հայերի—փաշին յերկինք բարձրացնեյին անհավասար կռվի մեջ:

Հայ վաճառականների բերան «Մշակ» թերթը նույնպես արտահայտվեց և չէր էլ կարող չարտահայտվել, իր սրբազան պարտականությունը չկատարել: Այլապես նա զրկվեր սննդատու աղբյուրից: Բայց նրա տոնն ավելի «խաղաղ» էր, ավելի զսպված: Այդ թերթի № 200-ի առաջնորդողում Հ. Առաքելյանը գրում է.—

«Սպասել վորևէ արմատական փոփոխության հայերի վիճակի մասին Թյուրքիայում, նույնիսկ յեթե Թյուրքաց կառավարությունը բարյացակամորեն տրամադրվի դեպի հայերը՝ անհնարին է. անկարողության ընդհանուր պատճառը Թյուրքիայի պետական մեխանիզմի մեջ պետք է վորոնել և այն հանգամանքի մեջ, վոր սահմանադրական ռեժիմ այն ձևով, վորպիսին յեվրոպականն է, բնավ չի կարող պատվաստվել Թյուրք ազգաբնակության պես մի զանգվածի: Ուրեմն հայերին մնում է բողոքել և բողոքել ազգորեն: Այդպես էլ անում են նրանք՝ ի դեմս պատրիարքի և ազգային վարչության»:

Բայց յերբ հայտնի յե դառնում, վոր ցարական կառավարությունը հանձին Վորոնցով-Դաշկովի՝ իր դիրքը փոխել է դեպի հայերը և ավելի բարյացակամ վերաբերմունք է հայտաբերում դեպի նրանք, քան առաջ, առանց ըմբռնելու այդ «հայասիրության» դրդապատճառները, մեր ազգային ջոջերը, հորթի վոգևորությամբ ցատկոտելով, ձեռնարկում էյին Ազգային Բյուրո կազմակերպելու գործին: Սակայն հայտնի պիտի լիներ այդ ջոջերին, վոր հենց ցարական կառավարությունն էր, վոր որգանապես չկարողանալով հանդուրժել առհասարակ վորևէ ժողովրդի ազատագրական փորձ իր ծանր լծից, իսկ ներկա դեպքում հայերի

վերաբերմամբ ցարիզմը գործադրել էր հետևյալ «հայասիրական» միջոցառումները: Նա յեր փակել հայ դպրոցներն ու գրավել հայ յեկեղեցիների կալվածքները, նա յեր, վոր անսքող տանում էր դեպի «ռուսացում», վարում էր մեծապետական չինովնիկական քաղաքականություն:

Ցարական կառավարությանը, անշուշտ, վոչ թե հետաքրքրում էր հայերի ազատագրումը սուլթանական լծից, այլ պետք էր ոգտագործել հայերին՝ իր հեռավոր նենգ նպատակներն իրագործելու համար: Բայց այդ բոլորը հասկանալու համար նրանց անհրաժեշտ էր մարքսիստական աշխարհայացք, վորը որգանապես հանդուրժել չէյին կարող հայ ազգային ջոջերը: Նրանք այնչափ հեռու գնացին իրենց հավատով դեպի ցարական միահեծանությունը, վոր նորաթուխ Ազգային Բյուրոյին հանձնարարեցին կաթողիկոսի միջոցով «հրահրել» հայկական հարցը և դիմել ցարական կառավարության հրեշին, վորպեսզի նա նոր հրավիրելիք յեվրոպական կոնֆերանսում աջակցի հայկական հարցի լուծմանը: Դատա՜րկ փրազներ և սին հույսեր...

Այդ Ազգային Բյուրո կոչեցյալը կազմակերպվեց 1912 թ. Թիֆլիսում հրավիրված հատուկ խորհրդակցությամբ: Այնտեղ ընտրել էյին 7 հոգուց բաղկացած մի ժամանակավոր բյուրո, և նրան հանձնարարել էր հետագայում հրավիրել ավելի լայն խորհրդակցություն—«ազգային համագումար» և ընտրել մշտական մարմին: Նույն թվի նոյեմբերի վերջերին արդեն հրավիրվում է այդ «համագումարը», վորտեղ վճռվում է ուղարկել կաթողիկոսին, վորպեսզի նա ուր հարկն է հարց բարձրացնի և կապեր հաստատի յեվրոպական և առհասարակ արտասահմանի հայաշատ վայրերի հայ գաղութների հետ: Մի խոսքով՝ վոտքի հանել ամբողջ յերկրագնդի հայերին, վորտեղ էլ վոր նրանք լինեն: Այդ համագումարն անհրաժեշտ համարեց նաև Թյուրքահայերին զինելու անհրաժեշտությունը, բայց այդ մասին առանձին վորոշում չկայացրեց:

Թիֆլիսի մեր բոլշևիկյան կազմակերպությունն այդ հարցով, պետք է ասել, բոլորովին չէր հետաքրքրվում: Առանձնապես այն ժամանակվա ղեկավարությունից ընկեր Ս. Կասյանը, վորը թվում էր, թե պետք է զբաղվեր այդ հարցով, վոչ միայն այդ հարցում, այլ նաև առհասարակ լեգալ աշխատանքի կողմնակից չէր: Նա պոդպոլյայի կեղևից դուրս գալու, և այն՝ լեգալ աշխատանքով լրացնելու փորձ անող ընկերներին «լիկվիդատոր», «լեգալիստ» մականուններ էր փակցնում տեղի—անտեղի: Սակայն հետևողական լինելու համար նա պետք է հրաժարվեր նաև պրոֆմիություններում և ժողովրդական համալսարանում աշխատելու անհրաժեշտության «լիկվիդատորական» մտքից նույնպես:

Յեթե առանց սոցիալ-դեմոկրատների և հատկապես բոլշևիկների պրոֆմիությունները միջազգային կազմակերպությունից կարող էյին

ազգային նեղ խմբերի վերածվել և բանվորության շահերը կվտանգվեին, յեթե ժողովրդական համալսարանում առանց սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների բանվոր դասակարգի դասակարգային գիտակցությունը կրթացնեյին և նրան նացիոնալիստական թույն կհրամցնեյին դաշնակ և այլ նացիոնալիստները, ապա Ազգային Բյուրոյի հրավիրած համագումարում հայ բանվորին մոլորեցնելու, նրան քարշ եյին տալու չլսված մի ավանտյուրայի մեջ, վորին զոհ գնացին մեկ ու կես միլիոն հայ աշխատավորներ: Մեր մեծ ուսուցիչ Լենինը նման պրակտիկայի կողմնակիցներին, լեգալ հնարավորություններից խուսափողներին բնութագրում եր վորպես «Ձախության յերեխայական հիվանդությամբ տառապողներ»:

Ի՞նչ եր սպասել, մի՞թե պրոլետարիատը գենքը ձեռքին ազատության դրոշակ եր բարձրացրել և բարրիկադների առաջ կանգնած եր, վորպեսզի ամենալավ, ապարդյուն համարվեր ոգտագործել նման պայմանները՝ ագիտացիա մղելու համար: Վոր այդ համագումարում և նրա շուրջը հանած աղմկող դաշնակցականները, մոլորեցնելով հայ բանվորներին նրանց քարշ եյին տալիս հայ բուրժուազիայի պոչից բուրժուազիային հլու կերպով ծառայելու՝ այդ վոչ մի կասկածի առարկա լինել չեր կարող: Կասյանն այդ մասին չեր ել ուզում լսել: Այդ հանգամանքը նրան ինչու պետք ե շարժեր տեղից: Յեվ Կասյանն եր այդ լեգալ աշխատանքի ժխտողականության մեջ այնչափ առաջ գնաց, վոր հեղափոխությունից հետո, անգամ յերբ դաշնակների ղեկավարությամբ Հայաստանը «ինքնուրույն» հայտարարվեց, վիճում եր Մռավյանի հետ և սխալ համարում բոլշևիկների մասնակցությունն այն ժամանակվա «պրոֆմիություններին»: Միայն այն ժամանակ, յերբ ստացվում ե նոր լույս տեսած Լենինի «Ձախության մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» գրքույկը, Կասյանը կարդում ե և համաձայնում ե, վոր ինքը սխալվում ե:

Յեվ այսպես, շնորհիվ Կասյանի, Ազգային Բյուրոյի հրավիրելիք համագումարին մասնակցելու ժխտողական տեսակետ եր տիրում մեզ մոտ, յերբ ստացվեց Աստրախանից մի հեռագիր Կասյանի հասցեյով, թե՝ «խնդրում ենք լինել մեր պատգամավորը հայկական համագումարում», և ապա մի այլ հեռագիր Շահումյանից ու Ծումարյանից՝ համագումարին մասնակցելու անհրաժեշտության մասին: Դրանից հետո միայն Կասյանի նախաձեռնությամբ հրավիրվեց խորհրդակցություն այդ առթիվ: Դեպքերի հետագա զարգացումն ապացուցեց, վոր հեռագրող ընկերների առաջարկը ճիշտ եր, համագումարին մասնակցել անհրաժեշտ եր: Կաթնակեր մանուկներն անգամ այսոր գիտեն, վոր այդ համագումարում ծնված և դաշնակների ձեռքով ոծված Ազգային Բյուրոյին եր վիճակված թյուրքահայ և մասամբ ռուսահայ աշխատավորության հրակային զանգվածներին դերեզման իջեցնելու վոճրագործությունը:

Այդ Բյուրոն եր, վոր պատերազմի առաջին որերից դաշնակների ղեկավարությամբ վերածվեց կամավորական խմբեր կազմակերպելու մի շտաբի:

Մասնակցելու կողմնակից ընկերների կարծիքով դաշնակների ու հնչակների կողմից սպասվում եր ինչ վոր ավանտյուրիստական նոր յելույթ, ուստի անհրաժեշտ եր համարվում մասնակցել այդ համագումարին և պատռել այդ կուսակցությունների բուրժուա-նացիոնալիստական դիմակը, կոչ անել բանվորներին՝ չխաբվել այդ ավանտյուրիստներից և ավանտյուրիայի ամբողջ պատասխանատվությունը թողնել դաշնակների, հնչակների և մասամբ մշակականների վրա: Մեր հետագա խորհրդակցությունն այդպես ել վճռեց անել:

Խորհրդակցությունը հրավիրվեց Վանքի փողոցում, այժմյան ծնընդաբերական տան առաջին հարկում, ինչ վոր իրավաբանի սենյակում:

Ժողովին մասնակցում եյին Կասյան, Շահվերդյան Դանուշ, Ռուբեն Քալթանյան, Խանոյան, Թումանյան Աշոտ, Ալաջալյան, Զավարյան, Կախոյան, Ծ. Գարագաշ: Ժողովում կարդացվեց նույն հարցի մասին Արշակ Զոհրաբյանի հոդվածը՝ «Հնչակ» ժուռնալում տպված: Կարդում եր Թումանյանը, և բոլորն ել ասացին— «Մութություն ե արել, կարող եր ավելի լավ գրել» և այլն:

Ժողովը վճռեց յերեք հոգուց մի հանձնաժողով ընտրել— Կասյան, Կախոյան և Գարագաշ, այսինքն՝ մեկ ինտելիգենտ և յերկու բանվոր: Հանձնարարվեց Կասյանին՝ դուրս գալ խոսել համագումարում, իսկ յեթե այդ հնարավոր չեր՝ ներկայացնել գրավոր դեկլարացիա և պատասխանատվությունը վերցնել մեր կազմակերպության վրայից: Հաջորդ որը, փոխանակ բանվոր Գարագաշի՝ Կասյանն ինքնագլուխ կերպով տարել եր մեր ծառայող ընկեր Աղասի Վարդանյանին: Նրանք գնացին մասնակցեցին, բայց Կասյանին չեյին թողել խոսելու, ուստի ներկայացրել եյին դեկլարացիան:

Կախոյանի «Հիշողություններում» չակերտների մեջ տրված ե հիշյալ համագումարում մեր բոլշևիկյան դելեգացիայի ներկայացրած դեկլարացիան ե, կամ ինչպես Կախոյանն ե ասում՝ «բանաձևը»: Վորչափ հիշում եմ, այդ «բանաձևը» դուրս եր յեկել Կասյանի գրչի տակից: Գրքին առաջաբան գրող ընկեր Կասյանը մի շարք թերություններին և սխալմունքների վրա կանգ ե առնում, բայց այդ բանաձևի մասին վոչ մի խոսք չի ասում: Յեվ վորովհետև այդ հարցը այն «մանր-մունր» թերություններին չի պատկանում և լռության ե մատնված, ուստի պետք ե յեզրակացնել, վոր առաջաբան գրող ընկերը համաձայն ե Կախոյանի չակերտների մեջ դետեղված «բանաձևին»: Ի՞նչ ե ասված այդ «բանաձևի» 4-րդ կետում:

«4. Պատերազմը Թյուրքիայի դեմ յերբեք չի կարող ազատագրել Թյուրքահայ ժո-

Պայքարի ճամբին—7.

ղովրդին: Յեթե վերջինս այդյան ընով ազատագրվի թյուրքական լծից անգամ, ապա ընկնելու յե ռուսական լծի տակ և յենթարկվելու յե բուրժուական վոչնչացման»:

Կախոյան, «Հիշողություններ», եջ 136:

Այդ «բանաձևը»— ղեկլարացիան կոլլեկտիվ համաձայնության արդասիք չեր, այլ ընկեր Կասյանի շատ գրածը, բայց յերբեք չենք կարող հավատալ, թե Կասյանն այն ժամանակ «բուրժուական վոչնչացման» նման արտուրդներ թույլ կտար: Սակայն վո՞րտեղ եր Կախոյանի դրքի խմբագիրը:

Յեվ այսպես, հայ բանվորության առաջ բոլկանյան պատերազմի պատճառով նորից ծառացան այնպիսի որյեկտիվ պայմաններ, վորոնք պատճառ հանդիսացան հայ բանվորին, հակառակ իր դասակարգային շահերի և նրանից բխող Ս—Դ բոլշևիկյան ինտերնացիոնալիստական քաղաքականության, մոլորվել, գնալ դաշնակցականների հետևից՝ հայ բուրժուազիայի ջրաղացին ջուր ածելու: Առանց դրա էլ հայ բանվորությունը չեր կարող հպարտանալ իր դասակարգային բարձր գիտակցականությամբ: Նրա հետամնացության գործում խոշոր դեր եյին խաղացել պատմական յերեք խոշոր պայմաններ. ա) թյուրքահայերի խնդիրը, վորն ոգտագործելու համար ամեն միջոց գործ եյին դնում դաշնակցական և հնչակյան կուսակցությունները՝ մասսան իրենց հետևից տանելու. բ) յեկեղեցական կալվածների գրավումը և հայ դպրոցների փակումը, վորը նույնպես ոգտագործվեց այդ նացիոնալիստական կուսակցությունների կողմից, և գ) հայ—թյուրքական ընդհարումները: Սրանք այնպիսի որյեկտիվ պայմաններ եյին, վորոնք հայ բանվորի դասակարգային գիտակցության բթացման գործում խաղացել եյին հսկայական դեր: Յերբ վերանում եյին այդ պայմանները, հայ բանվոր մասսան որըստորե մաքրվում, հեռանում եր դաշնակների և հնչակների ազդեցության տակից: Յեվ այդ եր պատճառը, վոր վերոհիշյալ նացիոնալիստական կուսակցությունները, իսկույն հարմարվելով ստեղծված դրությանը՝ մասսան իրենց ազդեցության տակ պահելու համար զարդարվում եյին սոցիալիստական փետուրներով: Դաշնակցական «Կովկասյան նախագիծը» և «Հնչակյան մարքսիզմը» ուրիշ բան չեյին, յեթե վոչ իրենց բուրժուական մերկությունը ծածկելու և մասսան խաբելու միջոցներ:

Այսպիսի պայմաններում կասկածից դուրս է, վոր Անդրկովկասում մեր բոլշևիկական կազմակերպության առաջ լեռնանում եր խոշոր պահանջ՝ լարել ուժերը, չբավականանալ միայն ընդհատակյա անլեգալ աշխատանքով և ամեն հարմար առիթ ոգտագործել՝ հրապարակ գալու, խարազանելու դաշնակ և հնչակ կուսակցությունների հակապրոլետարական քաղաքականությունը, պատռելու նրանց կեղծ «սոցիալիստական» դիմակը: Մեր կազմակերպության առաջ բացվում եր, յերկու ֆրոնտ. մեկը ցարիզմը, վորին 1905 թ. հեղափոխությունից հետո,

բացի կալվածատիրությունից, հարակցում եր նաև բուրժուազիան, իսկ մյուս կողմից՝ նացիոնալիստական կուսակցությունները, վորոնք վոչ մի միջոցի առաջ կանգ չեյին առնում՝ մոլորեցնելու, բանվոր մասսան իրենց հետ տանելու համար:

Պետք եր ականատես լինել, թե ինչպիսի յեռանդ, վորպիսի ճիգեր եր գործադրում Դաշնակցությունը: Նրա Ջամալյաններն ու Ադրասյանները ժողովրդական համալսարանի հայկական սեկցիայում պինդ նստած, իրենց կարդացած դասախոսություններով, իրենց նացիոնալիստական ժեստերով փոթոր եյին հանում մոլորված մասսայի մեջ, իրենց համար ովացիաներ սարքում: Բոլշևիկ բանվորներս այդ ժողովներից վերադառնում եյինք ցավ ի սիրտ, զայրացած, վոր չունեյինք նրանց հակադրելու ուժեր: Սպանդարյանն ու Շահումյանը չկային, իսկ Կասյանին «ամիսներ եր պետք»՝ հրապարակային դասախոսություններ կարդալու համար և կամ ինչպես ինքն եր ասում՝ նա զբաղված եր մարքսիստական-բնափիլիսոփայական դասագիրք կազմելով, վորը մինչև որս էլ հրապարակ չեկավ:

Այս բոլոր հանգամանքները մեր բանվոր—բոլշևիկ ընկերների մեջ բավական յերկար խորհրդակցությունների առարկա դարձան: Նկատելի յեր, վոր հայ մարքսիստներից ընկեր Կասյանը, վորի վրա մի ժամանակ մեծ հույսեր եյինք դրել, կտրված եր մասսայից և խիստ հաճախ հետ եր մնում նրանից, մասսան շատ անգամ փորձում եր ղեկավարին քարշ տալ իր հետևից:

Յեվ այդ եր պատճառը, վոր կուսակցական կազմակերպության բանվոր ընկերները, ինչպես նաև ինտելիգենտ ընկերներից վոմանք, սկսեցին հեռանալ նրանից, կազմակերպության մեջ «պասսիվացան» ղեկավարության պատասխանատվությունը թողնելով նրա վրա: Իսկ Կասյանը վոչ միայն ճիշտ չեր կարող ղեկավարել, այլ նաև չեր կարողանում կազմակերպության շուրջը համախմբել կազմակերպության կենդանի ուժերը, վորովհետև չուներ համապատասխան տվյալներ, այսինքն՝ մասսաները տանել իր հետ, նրա առաջնորդը հանդիսանալ:

ՄԵՐ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության մեջ ամբողջ պատերազմի ընթացքում չի յեղել վոչ մի տարաձայնություն իդեոլոգիական, տակտիկական, կազմակերպչական և ավելի խնդիրներում: Բայց զուտ առանձին «ղեկավար» ընկերների սխալների, անտակտությունների պատճառով Թիֆլիսի կազմակերպության մեջ առաջացան խոշոր տարաձայնություններ:

Ինչո՞ւմն եր բանը:

1912 թվի խոշոր պրովալից հետո, յերբ մեր կազմակերպությունը

զրկվելուց Սպանդարյանի, Մդիվանու և այլ ձերբակալված ընկերների ղեկավարությունից, Թիֆլիսի բոլշևիկական կազմակերպության ղեկավարությունը փաստորեն մնաց Կասյանի ձեռքում: Բայց նա մինչև իր ձերբակալությունը, այսինքն՝ 1914 թվի ապրիլ ամիսը, վոչ միայն չկարողացավ համախմբել ընկերներին, ամրացնել կազմակերպության մեջ ընկերների միաբանությունը, այլ նա իր սխալներով և այդ սխալները համառորեն պաշտպանելով պատճառ հանդիսացավ կազմակերպության անդամներից մի շարք բանվոր և ինտելիգենտ ընկերների մեկուսացման, վորոնք չկարողանալով հանդուրժել այդպիսի վիճակ, սկսեցին առանձին ժողովներ հրավիրել և կապեր հաստատել Բաքվի և այլ քաղաքների կազմակերպությունների հետ՝ Կասյանի ղեկավարությունից անկախ:

Կասյանի դեմ սկսվող այդ դժգոհություններն օրըստօրե խորանալով՝ ավելի մասսայական բնույթ եյին ստացել: Նրանից հեռացան կաշեգործները, տպագրական բանվորները, յերկաթուղայինները, գործակատարների վորոշ հատվածը և մի շարք ինտելիգենտ ընկերներ: Սակայն այդ բոլոր տարաձայնությունները վերջացան Կասյանի ձերբակալությունից անմիջապես հետո:

Կախոյանի «Հիշողություններում», վորին մի ամբողջ առաջաբան է գրել Կասյանը՝ խմբի այլոց գրված է հետևյալը.—

«Բաքվից Թիֆլիս յեկավ Բոգդան Բորյանը, նրան՝ իր ասելով՝ Բաքվի ընկերներն եյին ուղարկել, իբր թե հաշտեցնելու Թիֆլիսի մենշևիկ ու բոլշևիկ ընկերներին, վորոնց մեջ կոնֆլիկտ եր առաջացել»:

Ս. Կ. «Հիշողություններ», եջ 273:

Բորյանը վոչ թե իր կամքով եր յեկել Թիֆլիս, այլ Բաքվի գործադուլների ժամանակ փախել եր ձերբակալությունից ազատվելու համար և ապրում եր ուրիշի անվան տակ: Նա Թիֆլիս յեկավ 1913 թվի աշնանը, յերբ բոլշևիկների և մենշևիկների հաշտեցման մասին այլևս վոչ մի խոսք լինել չեր կարող, վորովհետև բոլշևիկները Պրագայի կոնֆերանսում վերջնականապես ինքնորոշվել եյին, վորպես առանձին կուսակցություն, ընտրել եյին սեփական բոլշևիկյան կենտրոնական կոմիտե և կատաղի պայքար սկսել վոչ միայն մենշևիկների՝ նրանց լիկվիդատորական թևը միասին վերցրած՝ այլ նաև այն ժամանակվա «ձախերի», այսինքն՝ «վպերյոդովցիների»— օտզովիստների դեմ: Ցավ միայն մեր կուսակցության պատմության հետ բոլորովին անծանոթ մարդը կարող է նման սուտ և զրպարտություններ բարդել Բաքվի կազմակերպության և նրա ներկայացուցիչ Բորյանի վրա: Ռուսական առածն ասում է. «слышал звон, да не знает где он». Այո, ճիշտ է, վոր Բոգդան Բորյանին Բաքվի ընկերներն ասել եյին հաշտեցման մասին, բայց վոչ թե մենշևիկներին ու բոլշևիկներին, այլ Կասյանի շնորհիվ առաջացած տարաձայնությունների մասին

մեր խոսքը: Պաղպաղովայի պատմության փաստերը չի կարելի այդպես անբարեխիղճ կերպով աղավաղել: Ցեթե «Հիշողությունների» հեղինակի հիշողությունն այդ աստիճան թույլ է, ապա նա չպետք է գրեր, և նման սուտ մտքեր:

Թե վորչափ եր կտրվել Կասյանը Թիֆլիսի կազմակերպության բանվորական հատվածից, դրան ապացույց կարող է հանդիսանալ յերկու փաստ: Առաջինը՝ Կասյանի ձերբակալության ժամանակ բաց թողնվեց մեկ թռուցիկը, վորը չարելու թե տպելու ժամանակ իր տան մեջ բռնվեց Մինաս Մելիք Արագյանը, և այդ այն ժամանակ, յերբ մեր կազմակերպությունն ուներ տպագրական բանվորների մի ամբողջ բջիջ, այնինչ տպագրական գործին բոլորովին անծանոթ Մելիք Արագյանին եր մնացել թռուցիկը չարելու թե տպելու պարտականությունը: Ցերկրորդ՝ Կասյանի խմբագրությամբ հրատարակված միայն մի համար «Մեր Խոսքը» ժուռնալում տպագրված է միայն մի բանվորական թղթակցություն, և այդ այն ժամանակ, յերբ 5—7 բոլշևիկ բանթղթակիցներ աշխատում եյին անկուսակցական «Կովկասի Լրաբեր»-ին: Կասյանի խմբագրած ժուռնալի շուրջը չեյին համախմբվել նաև վոչ միայն հայ հետևողական մարքսիստները, այլև թեկուզ նրա բոլշևիկյան հատվածը, վորը քանակով այնչափ եր, վոր մեկից ավելի նման ժուռնալներ կարող եր հրատարակել: Այդ պատճառով էլ Կասյանը ստիպված է լինում յերեք հոդված գրել միայն ինքը, իսկ ապա՝ զգալով ժուռնալի մեկուսացումը կուսակցական մասսայից՝ ստիպված է լինում գրել հետևյալ տողերը «Մեր Խոսք»-ի առաջնորդողում.

«Նախ՝ վորպեսզի բազմակողմանի և լայն կերպով բավարարություն տրվի ժամանակի առաջացրած պահանջներին, վորպեսզի բոլոր հարցերն ու յերևույթներն արձագանք գտնեն «Մեր Խոսք»-ի մեջ, անհրաժեշտ է, վոր բոլոր մարքսիստները—ինտելիգենտ թե բանվոր, համախմբվեն նրա շուրջը: Դրա համար «Մեր Խոսք»-ի եջերը բաց կլինեն յուրաքանչյուր հետևողական մարքսիստի համար, անկախ նրա այս կամ այն ֆրակցիային պատկանելուց»:

«Մեր Խոսքը» № 1, 1914 թ. 26 հունվարի, եջ 2.

Ցեթե յուրաքանչյուր հետևողական մարքսիստի առաջ ժուռնալի եջերը բաց եյին լինելու, անկախ նրա այս կամ այն ֆրակցիային պատկանելուց, ապա յեթե այդ փակագիծը բացենք՝ կստացվի այն, վոր Կասյանը թերթի եջերը բացել եր Արամայիս Ցերզնկյանի (մենշևիկ), Նարիման Ղազարյանի (սպեցիֆիկ), Հակոբ Հակոբյանի (վպերյոդովեց) առաջ:

Այնուհետև հարց է առաջ գալիս, թե ինչո՞ւ վերոհիշյալների հետ կարելի յեր աշխատակցել «Մեր Խոսք»-ում, իսկ սոցիալ-դեմոկրատների ձեռքը մնացած անկուսակցական բանվորական «Կովկասի Լրաբեր» թերթում՝ վոչ: Կամ ինչո՞ւ հետագայում նույն մարդիկ «Պայքար»-ում աշխատակցել կարողացան: Մի՞թե չեր կարելի նույն մարդկանց հետ՝

փոխանակ խնդրելու նրանց՝ մի քիչ ավելի լավ թերթի վերածել «Կովկասի Լրաբեր»-ը, յերբ վոչ փող կար, և վոչ էլ հնարավորություն էր տրվում ավելի լավ թերթ հրատարակելու բոլշևիկներին: Պատասխանը պարզ է. Կայանը «Մեր Խոսք»-ում լինելու յեր թելադրողի դերում, իսկ այնտեղ՝ վոչ: Բայց ինչո՞ւ վոչ: Յեթե նա բարյացակամ վերաբերմունք ունենար, գուցե և այդ թերթում էլ թելադրող լիներ: Ուրեմն, Կայանն աշխատակցության կոչ էր անում լիկվիդատորներին, մենշևիկներին, սպեցիֆիկներին, վպերեդովականներին՝ վորոնց լիդեր Բոգդանովը դուրս էր արված «Պրավդա»-յից: Յեվ այդ կոչն անում էր «հետևողական» Կայանն այն ժամանակ, յերբ Պրագայի կոնֆերենցիայից մի տարի արդեն անցել էր, յերբ մենշևիկների և սոցիալ-դեմոկրատական այլ ֆրակցիաների հետ կապերը խզված էին և զինված կոնֆերանսի վորոշումներով սկսվել էր կատաղի պայքար նրանց դեմ:

Այնուհետև Կախոյանն իր «Հիշողություններում» շարունակում է աղավաղել մեր կուսակցության պոդպոլիայի հիշյալ շրջանի պատմության ուրիշ փաստեր ևս: Նա գրում է.—

«Բագրատ Բորյանը, գալով Թիֆլիս, հայտնեց իր միսիայի մասին, բայց, իմանալով գործի հանգամանքները, նա ընդունեց մեր տեսակետը և խոստացավ պայքարել նրանց դեմ (խոսքը վերաբերում է «Կովկասի Լրաբեր» թերթին աշխատակցող բոլշևիկներին. Շ. Գ.)... սակայն «Կովկասի Լրաբեր»-ում լույս տեսավ նրա մի հոդվածը, իսկ հետո յերկրորդն ու յերրորդը, և նա շարունակեց աշխատակցել այդ թերթերին: Չնայած մեր նրան արած նկատողությանը այդ վարմունքի առթիվ, այնուամենայնիվ, նա շարունակեց մնալ մեր շարքերում և աշխատեց մեր կազմակերպության մեջ գտնել իրեն կողմնակիցներ: Դա սկզբում կարծես նրան հաջողվում էր»:

Ա. Կ. «Հիշողություններ», էջ 276.

Բորյանը Բաքվի ընկերների հանձնարարությամբ ծանոթացավ մեր տարաձայնություններին և համոզվեց, թե իրավացի էյինք մենք և վոչ Կայանը: Նա տեսավ, վոր կազմակերպության բանվորական մասսան մեր կողմն էր և վոչ Կայանի: Իսկ նրա հետ, բացի Կախոյանից և այլ խիստ սակավ բանվորներից, վոչ վոք չկար: Նրա հետ էյին նաև մի քանի ինտելիգենտ ընկերներ: Բորյանն այդ բոլորի մասին գրեց Բաքվի ընկերներին ու Շահումյանին, վորն այն ժամանակ, կարծեմ, Աստրախանում պետք է լիներ, ու Բորյանին հանձնարարել էր հրատարակել Թիֆլիսում «Ազգային կուլտուր-ավտոնոմիայի մասին» գիրքը:

Բորյանը, հակառակ Կայանի մասսայից կտրվածության, իր գալու առաջին որերից ցույց տվեց, վոր մասսայիկ էր, չէր խորշում բանվորների կեղտից, մրից, նրանց անկուլտուրականությունից, տգիտությունից: Նա նրանց հետ էր և աշխատում էր օգնել բանվորներին՝ դուրս գալու այդ դրությունից: Բայց բանվո՛ր պետք է լինել, վորպեսզի ճիշտ գնահատական տաս մասսայիկ ինտելիգենտին, յերբ նա թե՛ լավ և թե՛ վատ որերին լինում է բանվոր մասսայի մեջ:

Ուրեմն՝ Բագրատը մեր դժգոհությունները իրավացի համարելով, անցավ մեր կողմը: Բայց մենք, ինչպես վերևում ասել ենք, Կայանի հետ աշխատանքն անհամատեղելի համարելով, կուսակցական աշխատանքից բոլորովին կտրված չէյինք, այլ ունենում էյինք մեր ժողովները և Բորյանի միջոցով կապված էյինք Բաքվի ընկերների և Շահումյանի հետ: Շահումյանն այդ առթիվ Բորյանին գրած նամակներից մեկում տվել էր Կայանի ճշգրիտ բնութագիրը և մեղադրել նրան:

Լսելով մեր տարաձայնությունների մասին, մենշևիկները շտապեցին օգուտ քաղել այդ առիթից և պակաս ջանքեր չխնայեցին, վորպեսզի Կայանից դժգոհ բանվորներին ու ինտելիգենտ ընկերներին քաշեյին իրենց կողմը, միացնելու իրենց ընդհատակյա կազմակերպության հետ: Արամայիս Յերզնկյանն ու Բագրատ Մկրտումյանը մի քանի անգամ յեկել էն «Ելեգանտ» արհեստանոցը՝ տղերքի հետ «բանակցություն վարելու», վորովհետև համոզված էյին, վոր մեր կազմակերպության բանվորական միջուկը, թվով մոտ 40 հոգի, մեր կողմն էր և վոչ Կայանի:

Նրանք մեր ականջին «քաղցր մեղեդիներ» էյին յերգում Պլեխանովի հեղինակությամբ և նրա «ЕДИНСТВО»*)-յից, բայց իրենց հաշիվներում չափազանց սխալվեցին, վորովհետև մենք հայտարարեցինք, թե վորոշ հարցերում բլոկ կազմել իրենց հետ համաձայն ենք՝ հակաթե վորոշ հարցերում բլոկ կազմել իրենց հետ համաձայն ենք՝ հակառակորդին խփելու համար. բայց՝ բոլշևիկների ու մենշևիկների միացման մասին վոչ մի խոսք չուզեցինք լսել անգամ**):

Մեզ, բանվորներիս շրջապատել էյին հետևյալ ինտելիգենտ ընկերները— Բորյան, Լազյան, Խանոյան, Նարեկևիչ Սոնյա, Կամարի, Գուլոյան: Սրանք բոլորն էլ կանոնավոր կերպով պարապում էյին բանվորական բջիջների հետ: Մենք, կապ պահպանելով Բաքվի հետ՝ ունենում էյինք կանոնավոր նիստեր և ամեն ինչ ընթանում էր առանց տարաձայնությունների, մինչև վոր ձերբակալվեց Կայանը, վորից հետո ղեկավարությունն անմիջապես անցավ մեր հակակայանական խմբակի ձեռքը, և մեր ղեկավարության ժամանակ իսպառ վերացան ամեն տեսակի տարաձայնություններ:

Ինչպես վերևում էլ ասել ենք, տարաձայնությունների հիմնական պատճառները հետևյալներն էին. ա) Կայանի հակումը՝ կուսակցության մեջ դիկտատորի դեր խաղալու և իր սխալների վրա համառ կերպով պնդելը, բ) Նրա խուսափումը՝ լեգալ հնարավորությունները օգտագործելով լրացնել ընդհատակյա աշխատանքը, գ) Նրա կոպր-

---

*) Այն ժամանակ հրատարակվում էր այդ անունով մի ժուռնալ, վորը փետրվարյան հեղափոխությունից հետո վերածվեց թերթի:

**) Թիֆլիսում 4-րդ Պետական Դումայի ընտրությունները անցան բոլշևիկների և մենշևիկների բլոկով:

վածությունը մասսաներից և կույր վարմունքը դեպի ընկերները, դ) առանց համապատասխան կուսակցական վորոշումների՝ դավադրական յելույթները, կուսակցական ընկերներին թիկունքից խփելը («Կովկասի Լրաբեր»-ի հարցում):

Վոր Կասյանն ուներ այդ կոպիտ սխալներն ու բացասական գծերը, վոր մենք ճիշտ գնահատական եյինք տվել նրա գործունեյության այն ժամանակ, այդ կարող է ապացուցել նրա հետագա գործունեյությունը, հեղափոխության առաջին շրջանից սկսած մինչև այժմ: Այդ գործունեյությունը ցույց է տալիս, վոր մենք ճիշտ եյինք:

Կասյանը, վորպեսզի իր սխալների շնորհիվ կուսակցության միաբանությունը վտանգի տակ դնելն արդարացնի՝ մի այլ տեղ մեզ «բոլշևիկ լեգալիստ և հաշտվողականներ» է անվանել: Հասկանալի յե, վոր լեգալ հնարավորությունների օգտագործման մեր հետևողական բոլշևիկյան տեսակետը ժխտող՝ և ոտզովիստական գիծ տանող Կասյանի կողմից պետք է վորակվեր այդպես:

Մեր տարաձայնությունների գործում վորոշ դեր խաղաց նաև այն, վոր մեզ լուրեր հասան, թե Կասյանի ամենամոտիկ գործակիցներից յերկուսը՝ Կախոյան և Թավդիշվիլի, կապեր եյին պահպանում ցարական ոխրանկայի հետ: Այդ լուրերը գալիս եյին մենշևիկների պղտոր աղբյուրից, բայց այն ժամանակ մենք չեյինք կարող անուշադիր թողնել այդպիսի մի խոշոր յերևույթ: Սակայն անհրաժեշտ է այստեղ արձանագրել, վոր Ա. Կախոյանի գործը մոտ անցյալում քննվել է համապատասխան օրգաններում, և նրա վրա բարդված մեղադրանքը համարվել անհիմն: Այդ մասին կխոսենք հատուկ մի գլխում:

ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ասել ենք, տարաձայնությունները տակտիկական բնույթ ունեյին և կուսակցական վերադաս մարմինների դեմ չեյին ուղղված: Այլ ընդհակառակը՝ Կասյանը տանում է համարյա թե բոգդանովական-ոտզովիստական գիծ, և պայքարն այդ սխալ գիծն ուղղելու շուրջն եր: Իհարկե, չեր կարելի ասել, թե այդ պայքարը ուր կտաներ, յեթե Կասյանը չձերբակալվեր և տարաձայնությունները չվերջանային: Բայց ինչպես ել լիներ՝ շարունակել այդպես անկարելի յեր:

Սակայն վերահաս նոր պրովալը, վորին զոհվեցին Կասյանն ու Մելիք Արաղյանը, հարցը լուծեց այլ կերպ, դրականորեն: Այդ նոր պրովալի մասին ժանդարմական վարչության պետ Պաստրյուլինն իր «Հետախուզականում» գրում է հետևյալ տողերը.—

Մտից № 1005, 1225
№ 1234, 1915 թ. մայիսի 9
ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ

«Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության գործունեյության վիճակի մասին, 1914 թ. ապրիլի վերջերին, իմ ստացած ագենտուրային տեղեկության համաձայն հաստատվում է, վոր կազմակերպության մեջ ղեկավար դերը պատկանում է ինչ-վոր «Կասյանի», վորը հանդիսանում է հաշվառված Սարգիս Իվանովիչ Տեր-Գասպարյանը: Խմբակի կազմում մըտնում են հաշվառված Մինաս Իգնատևիչ Մելիք Արաղյանը, մեշչանին Գրիգոր Դավիդովիչ Գուրուլովը, գործակատար Սիմոն Ֆոմին Եվլոևը, ազնվականուհի Եվգե-

Մելիք Արաղյան

Սարգիս Կասյան

նիա Ալեքսանդրովնա Ցուլուկիձե և ուրիշները: Այդ կազմակերպությունը վճռել եր 1914 թվի մայիսի 1-ին թռուցիկ բաց թողնել, վորի պատրաստելը հանձն առավ վերոհիշյալ Մելիք Արաղյանը:

«Այդ թռուցիկը բաց թողնելը կանխելու համար ապրիլի 27-ին յես խուզարկել տվի վերոհիշյալ անձնավորությունը, Մելիք Արաղյանը բռնվեց իր բնակարանում՝ մայիս-մեկյան թռուցիկի շարվածքը տպագրելիս: Այդ պատճառով խուզարկեցի նաև նրա հետ կապված վերոհիշյալ անձանց ու ձերբակալեցի: Այդ ձերբակալությունն անչափ ազդեց կազմակերպության ապա մնացած անդամների վրա, վորոնց ձերբակալել հնարավոր չհամարվեց՝ ագենտուրան պրովալից ազատելու համար: Դրանից հետո կազմակերպության գործունեյությունը բոլորովին մեռավ և մինչև անցյալ տարվա հունիսի վերջերը վոչնչով չարտահայտվեց»:

Թիֆլիսի կենտրոնական արխիվ, պատմա-հեղափոխական բաժին, ֆոնդ, նո. 36, № 3147:

Խուզարկության ժամանակ, ինչպես ժանդարմական «Հետախուզական» գրությունից ել գիտենք, հայտաբերվել եր սույն թռուցիկի ձեռագիրը հայերեն լեզվով, վորը գրել եր Կասյանը, իսկ տպարան տարել եր Ռաչիկ Ցեսայանը խուզարկությունից քիչ առաջ: Մենք արտագրել ենք թռուցիկը ժանդարմական զեկուցագրից, վորում զետեղված եր ամբողջ թռուցիկը: Թռուցիկն ուներ հետևյալ բովանդակությունը:

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Պրոլետարներ, բոլոր յերկրների, միացե՛ք.

«Համաշխարհային պրոլետարական տոնը պայքարող, ճնշված աշխատավորության միակ տոնը, մեծ որն է:

«Մայիսի մեկը՝ այդ արդյունաբերական դասակարգի որն է, վորն իր բանվորական ուժով գոյություն է տալիս ամբողջ քաղաքակրթված մարդկության:

«Մայիսի 1-ը, այդ աշխատանքի որն է, վորը քաղաքակրթված աշխարհին տալիս է անսահման հարստություն:

«Մայիսի 1-ը՝ այդ՝ այժմյան սուտ և կեղծիքի վրա հիմնված բուրժուական կարգերում, քաղաքակրթված մարդկության մեծամասնության որն է, վորը գտնվում է չահագործման, իրավազրկության, սովության և դեսպոտիզմի ճիրաններում:

«Եվ մարդկության այդ ճնշված և իրավազուրկ մասը, հանձինս միջազգային առաջավոր պրոլետարիատի, ամեն որ կազմակերպում է մայիսի 1-ի աշխատանքի թագավորության նախատոնակը:

«Այդ որը պրոլետարիատն ավետում է աշխարհին, վոր նա ստեղծում է նոր, հրաշալի աշխարհ, հիմնված ազատության և հավասարության հիման վրա, վոր նա մարդկությանը տանում է դեպի սոցիալիզմ: Կապիտալիստական աշխարհի բոլոր կողմերից այդ որը հնչում է պրոլետարիատի ուժեղին կոչը:

«Կեցցե՛ սոցիալիզմը, կորչի կապիտալիզմը: Աշխարհի տիրապետող դասակարգերի ձրիակերների, չահագործողների, ժողովրդի արյունը ծծողների, գազանային բնազդների պաշտպան տերերի առաջ, մի խոսքով բոլոր ժողովրդական թշնամիների առաջ, միջազգային պրոլետարիատը ցուցադրում է իր հզոր ուժը և իր մինիմալ պահանջները:

«Մասնավոր սեփականության տիրապետության որերում, չահագործվող դասակարգի վիճակի թեթևացումով և կապիտալիզմի գազանային ախորժակի սանձահարման համար, ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը մայիսի 1-ի որը բարձրաձայն կոչում է.—

«Կորչի անսահման աշխատանքը: Կեցցե՛ ութժամյա բանվորական որը: Կորչի միլիտարիզմը, կեցցե՛ ժողովրդական միլիցիան:

«Ամեն տարի, մայիսի 1-ին, ամբողջ աշխարհի պրոլետարիատը միջազգային բուրժուազիայի և նրա կազմակերպված պաշտպանության առաջ հայտարարում է իր դասակարգային համերաշխությունը: Այդ որը կապիտալիստական աշխարհի բոլոր ծայրերից լսվում է պրոլետարիատի ձայնը:

«Կեցցե՛ բանվոր դասակարգի տոնը:

« Բոլոր տեղերում հնչելով ամբողջ աշխարհի առաջավոր միլիոնավոր բանվորների այդ ձայնը, լայն կերպով տարածվում է դասակարգային ինքնագիտակցությունը և կոչ է անում բանվոր ընկերներին, կազմակերպվել ամբողջ աշխարհի պայքարող պրոլետարիատի կուսակցության մեջ:

«Ընկերներ, այդ կոչը «կազմակերպվեցեք» մեզ մոտ Ռուսաստանում և մասնավորապես Կովկասում՝ պետք է հնչի ուժգնորեն: Ռուսաստանի պրոլետարիատն ապրում է իր ուժերի պատրաստման և կազմակերպման ժամանակաշրջանը: Պետերբուրգի, Ռիգայի և Վարշավայի բանվորներն արդեն վաղուց յեն յելել և բաց կերպով բարձրացրին հեղափոխական կարմիր դրոշակը:

«Անընդհատ գործադուլներով և հաջող ցույցերով նրանք մեր պետության բոլոր բանվորներին, առանց ազգության խտրության, կոչ են անում ակտիվ մասնակցության

ննալ հեղափոխական պայքարին: Ամեն որ մենք մոտենում ենք նոր հեղափոխության: Մենք պետք է պատրաստվենք, միանանք և կազմակերպվենք ՌՍԴԲԿ դրոշակի տակ: Մենք պետք է խտացնենք մեր շարքերը և ստեղծենք ուժեղ հեղափոխական բանվորական բանակ:

Մայիսի 1-ին, միջազգային լոզունգներին պետք է միացնենք Ռուսաստանի իրականության լոզունգները և բարձր պահենք ՌՍԴԲԿ հեղափոխական դրոշը: Արթնացնել ամբողջ ժողովրդին՝ քաղաքի և գյուղի բանվորներին, միացնել նրանց մի հզոր ուժի մեջ, վորպեսզի վոչնչացվի ցարական վերջին ինքնակալությունը, դուրս քշվի հողատերերին նրանց հողերից և տալ քաղցած գյուղացիության, վորպեսզի պայքար մղվի հակահեղափոխական ուժերի դեմ և բուրժուական կեղծ դատախաղության դեմ:

«Ընկեր բանվորներ, հավերժացրեք համայն աշխարհի պրոլետարիատի որը մեկորյա գործադուլով և տարածեցեք պրոլետարական լոզունգները:

«Այդ որը ամենքը պետք է կոչեն—

Կեցցե՛ մայիսի 1-ը,

«Կորչի ցարական ինքնակալությունը,

«Կեցցե՛ դեմոկրատական հանրապետությունը,

«Կեցցե՛ սոցիալիզմը,

«Կեցցե՛ ՌՍԴԲԿ:

(Տես՝ Թիֆլիսի կենտր. արխիվ, պատմա-հեղափոխական ֆոնդ 36, գործ № 2953 եջ 14, 20):

Եջ 14, 20:

1914 թ. հունիսին ժանդարմական վարչության պետ գնդապետ Պաստրյուլինը կայացրել եր հետևյալ վորոշումը, վորը տալիս ենք վորոշ կրճատումներով:—

ՎՈՐՈՇՈՒՄ

«1914 թ. հունիսի 10-ին, Թիֆլիս քաղաքում, յես, Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետ գնդապետ Պաստրյուլինս, ծանոթանալով իմ ոգնական ռոտմիստր Կրուզովսկու գրագրությանը, վորը կատարված եր իր պետական պահնորդական ղրության կարգով, Ալեքսանդր Շահվերդովի, Սերգեյ (Սարգիս) Իվանովիչ Տեր-Գասպարյանի, կանոնիս Նիկոլայեվիչ Ցինցաձեյի և ուրիշների քաղաքական բարեհուսության ստուգմանը հետաքննելու մասին գտա.

. . . .

«Գրագրության մեջ հիշատակված Մինաս Իգնատևիչ Մելիք-Արաղյանին, վորի մոտ մայիս-մեկյան թռուցիկը տպագրելու մոմենտին հայտաբերված է տպարանական հարվածք, իմ ղեկավարության հանձնված վարչության կողմից սկսված է հետաքննություն 1035 հոդ. քրեակ. դատ.:

«Վերոհիշյալ Տեր-Գասպարյանը, նկատի ունենալով եքսպերտների յեզրակացությունն այն մասին, թե Մելիք Արաղյանի մոտ հայտաբերված տպագրված թռուցիկի ձեռագրի վրա արված ուղղումները կատարված են Տեր-Գասպարյանի ձեռքով, նա յենթարկված է հետաքննության, վորը կատարվում է իմ վարչության միջոցով, քրեակ. դատ. կանոն, 1035 հոդ.: Նա մեղադրվում է այն հանցագործությամբ, վորով նախատեսվում է քրեակ. դատ. 102 հոդ.:

«Նկատի ունենալով, վոր վերև բերված տվյալների համաձայն, հիշյալ Տեր-Գասպարյանի, Գուրգուլովի, ազնվականուհի Ցուլուկիձեյի և Կալանտաձեյի քաղաքական տեսակետից հանցավոր գործունեությունը լրիվին ապացուցված է և հետագայում նրանց

ներկայությամբ Կովկասի սահմաններում, պետական կարգին և հասարակական անդորրությանը եյական սպառնալիք է հանդիսանում՝ յես յենթադրում եմ խնդրել հարուցել ներքին գործոց մինիստրության առաջ, հիշյալ անձանց աքսորելու մասին, վոստիկանության հրապարակային հսկողության տակ, ամեն մեկին չորսական տարի ժամկետը հաշվելով կալանքի որից, Ռուսաստանի հյուսիսային նահանգներից մեկում, այն պայմանով, վոր Տեր-Գասպարյանի վերաբերմամբ այդ միջոցը ի կատար ածվի միայն այն դեպքում, յերբ նրա մասին դուրս բերվեր արդարացուցիչ դատավճիռ, վերնշանակված ձևական հետաքննությամբ:

«Ինչ մնում է մյուս անձանց, վորոնք յենթարկվում եյին սույն գրագրությանը և արդեն զանազան ժամանակ կալանքից ազատ եյին արձակված, այսինքն Դանիել Շահվերդյանին, Պյոտր Շավլախաշվիլուն, Ռաֆայել Տարգոմաձեյին, Ալեքսանդր Մայսուրաձեյին, Կանոնիա Ցինցաձեյին և Սիմոն Ելիավային, ապա նրանց վերաբերմամբ յենթադրում եմ կարճել սույն գրագրությունը, նրանց համար առանց հետևանքի:

«Ներքին գործոց մինիստրության հրահանգի հիման վրա (վոստիկանական դեպարտամենտին ուղղված) 1881 թ. սեպտ. 5—ին, № 3988 վորոշում:

«Սույն գրագրությունն ուղարկել Թիֆլիս քաղաքի նահանգապետին՝ ի կարգադրություն:

«Խորհրդականը ստորագրեց գնդապետ Պաստրյուլին. ճիշտ է—ռոտմիստր Կուզովլև»

(Տես՝ Թիֆլիսի կենտր. արխիվ, պատմա-հեղափ. մաս, գործ № 1313, եջ, 250, 259. 260):

Յեվ այդպես դատի յենթարկվեցին Կասյանն ու Մելիք Արազյանը: Վերջինս դատարանում ամբողջ «հանցանքը» վերցրեց իր վրա և դատապարտվեց 4 տարվա «կրեպոստ»-ի այսինքն՝ բերդարգելության: Սակայն հետագայում բողոքելով, յերկրորդ անգամ վճռվեց բերդարգելությունը փոխարինել աքսորով «պոսելենիյե» Իրկուտսկի նահանգի Կիրենսկի գավառը:

Մելիք Արազյանի կայունության և անձնազոհության հակառակ Կասյանը ցույց տվեց թուլամորթություն ցարական ժանդարմերիայի առաջ: Նա իր դիմումներից մեկում այն միտքն եր հայտնել, թե ժանդարմերիան իրեն նման գործերով ձերբակալելով իր շրջապատում բարոյապես վարկաբեկում եր իրեն և այլն:

Ուրեմն՝ ձերբակալվեց նաև Կասյանը, վորը դեռևս 1912 թ. պրովալի ժամանակ, ըստ ժանդարմական վարչության զեկուցագրի, «Կասյանը առնված եր հսկողության տակ, բայց ագենտուրային նկատառումներով չեյին ձերբակալել»: Նորից սկսվեցին հազար ու մի հոգեմաշ կասկածանքներ. Կասյանի ու Մելիք Արազյանի հետ աշխատող տպարանի տեղն իմացող կամ որերով Կասյանի տանից դուրս չեկող անձինք չձերբակալվեցին, վորոնք, ինչպես յերևում է, նախկին խոշոր ձերբակալությանը վերաբերող ժանդարմական զեկուցագրից՝ արձանագրված եյին, վորպես ընդհատակյա աշխատանքների ակտիվ մասնակիցներ կամ վորպես կոմիտեյի անդամներ, բայց չեյին ձերբա-

կալվել: Նորից մեր ականջին սկսեցին փսփսալ, թե «տեսնում եք Կասյանն ու Թավդիշվիլին դարձյալ վոչ միայն չձերբակալվեցին, այլ նույնիսկ չխուզարկվեցին»: Մենշևիկների այդ կասկածանքները մեր մեջ ցանեցին կասկածանքի առատ սերմեր:

Իսկ ինչ վերաբերում է ժանդարմերիայի այն տողերին, թե այդ ձերբակալություններից հետո «կազմակերպությունը բոլորովին մեռավ», այդ բոլորովին չեր համապատասխանում իրականության: Ինչպես նկատելի յե, ժանդարմերիան յեթե բույն եր դրել Կասյանի խմբակի մեջ, ապա մեր անհամեմատ խոշոր թիվ կազմող հատվածին դեռևս չեր մեկնել իր գարշելի թաթը, չուներ մեր շարքերում ծախված հոգիներ: ժանդարմերիան մեզ «դե-յուրե» կերպով չեր ճանաչել: Բայց հակառակ նրանց յենթադրություններին, մեր «հիվանդացած» կազմակերպությունը բժշկվեց իսկույն ամենայն տեսակ տարաձայնություններից և նոր ուժեր մոբիլիզացիայի յենթարկելով՝ յեկավ Թիֆլիսի կազմակերպության ղեկավարությունը վերցնելու իր ձեռքը:

1914 թվի հունիսին Թիֆլիս յեկավ մեր սիրելի ընկեր Ալյոշա Ջափարիձեն, վորի վրա կազմակերպությունը խոշոր հույսեր եր դրել: Նրա առաջին գործը յեղավ՝ ամրացնել Թիֆլիսի կոմիտեն: Սկսվեց ամենայեռանդուն աշխատանք ամենուրեք: Բջիջների թիվն ավելացավ, բանվոր և ինտելիգենտ ընկերներն առանց մնացորդի խմբվեցին կազմակերպության շուրջը: Մեր ուժերն այնչափ եյին ավելացել, վոր արդեն «խմբակի» տեղ «Թիֆլիսի կազմակերպություն» անունը տալու բոլոր հիմունքներն ուներ մեր բոլշևիկյան կոլեկտիվը: Մենք արդեն ունեյինք կաշեգործական 3—4 բջիջ, գրաշարական 1 բջիջ, յերկաթուղայինների 2 բջիջ, գործակատարային բջիջներ, ունեյինք դերձակ, սավորիչ ընկերներ և այլն: Տրամվայում կազմակերպելու եյինք բջիջներ: Հրապարակ յեկան նորանոր վրացի բանվոր ու մտավորական ընկերներ: Մի խոսքով՝ մեր Թիֆլիսի կազմակերպությունը սկսեց աճել իր վերելքի շրջանն ավելի խոշոր տեմպով, քան 1911—12 թվերին: Մեր շարքերում արդեն հաշվում եյինք 50—60 ընկերներ: Իսկ այդ թիվը, այն ժամանակվա ընդհատակյա աշխատանքների համար փոքր թիվ չեր: Մեր ընկերներից ամեն մեկը, բանվոր թե մտավորական, իրենց միջավայրում շրջապատվել եյին անկուսակցական համակիրներով, վորոնք մերոնց աջակցում եյին անլեգալ գրականությունը տարածելու, հասարակական լեգալ ժողովներում մեզ աջակցում, քվեարկում եյին, դրամական հանգանակություններին ամենաակտիվ մասնակցում եյին և այլն:

Ալյոշան ձեռնարկեց նաև մենշևիկ կուսակցականների հետ կոալիցիոն խմբագրությամբ հայերեն թերթ հրատարակելու գործին: Մենշևիկները համաձայնում եյին փող տալ, բայց առաջարկում եյին, բայց

խմբագրության մեջ իրենց ներկայացուցիչը նշանակելուց՝ թերթը համարել իրենց պաշտոնական օրգանը: Մենք կատեգորիկ կերպով մերժեցինք և վճռեցինք մեր միջոցներով հրատարակել սեփական թերթ: Մեր սեփական թերթ հրատարակելու հարցը բանվոր ընկերները հրճվանքով ողջունեցին, 30 հոգի պատրաստակամություն հայտնեցին ամսական տալ 2-ական ռուբլի և տարածման գործին լայն կերպով աջակցել: Իսկ ամսական 60 ռուբլի փողով կարելի չէր ամսական չորս համար հրատարակելու գործը ապահովված համարել: Կաշեգործ բանվորներիս այդ վճիռը՝ թերթն ապահովել ամսական 60 ռուբլով՝ ամենախոշոր զոհողությունն էր, որ անում էին նրանք, որովհետև ամսական աշխատավարձը 25—30 ռուբլի հազիվ էր անում:

Թերթի անունը «Նոր Կայծ» դրվեց, և հոդվածներն արդեն շարված էին, պետք էր միայն գրաքննիչի թույլտվությունը, որպեսզի լույս տեսներ: Բորյանը, Գուլոյանն ու Լաղյանը գնացել էին գրաքննիչ Բալանթարի մոտ, ուղղակի նրա տունը, բայց նա չէր ընդունել, միայն երբ հայտնել էին թե իր մոտ յեկողները բոլշևիկյան կազմակերպության ներկայացուցիչներ էին, Բալանթարն իսկույն հրավիրել էր ներս և հայտարարել, թե ժանդարմերիան ճանաչում է թերթի նախաձեռնողներին և նույնիսկ գիտե, որ դա լինելու յե բոլշևիկների օրգանը, ուստի նախազգուշացնում է և այլն: Այնուհետև Ջափարիձեյի մասնակցությամբ խորհրդակցությունը վճռեց՝ ուժերի նոր ջլատումից խուսափելու համար ցրել շարվածքը և մտածել անլեգալ թերթի մասին, որին հետագայում ձեռնարկվեց Շահումյանի նախաձեռնությամբ, բայց չհաջողվեց:

«Նոր Կայծ»-ի ձևական խմբագիրը Գառնիկ Ղազարյանն էր: Այն ժամանակ թույլտվություն ստանալու համար կազմակերպությունը նույնիսկ բոլորովին պատահական մարդիկ էր ընտրում: Բայց մեր խմբագիրը կոմիտեյի անդամ էր:

Այն ժամանակ Թիֆլիսի կոմիտեյի կազմում մտնում էին՝ 1. Ջափարիձե, 2. Բորյան, 3. Նարեկլիշվիլի, 4. Կամարի, 5. Գուլոյան, 6. Թումանյան Աշոտ, 7. Լաղյան, 8. Սուխիշվիլի, 9. Ցեղուկիձե Ալեքսի, 10. Գարագաշ, 11. Գևորգյան, 12. Գառնիկ Ղազարյան, 13. Հարություն Սոլովյան, 14. Ասկուրավա, 15. Ցինցաձե:

Սակայն կարևոր և շատ հարցերը վճռում էին ավելի նեղ, սահմանափակ ժողովում: Այդ նեղ ժողովը պաշտոնական անուն չուներ այն ժամանակ, բայց այժմյան իմաստով Թիֆլիսի կ. կոմիտեյի բյուրոն էր: Ունեյինք նաև ֆինանսական հանձնաժողով՝ յերեք հոգուց. 1. Անահիտ Ցեսայան, 2. Ցեղուկիձե, 3. Գարագաշ:

Վերոհիշյալ կազմով մենք ունեցել ենք ժողովներ, ուր առաջին շրջանում հրավիրել ենք նաև Կախոյանին ու Թավգիշվիլուն: Բայց

յերբ մենշևիկների հետ բանակցություններ վարելիս նրանք պնդում էին, որ այդ յերկուսը պրովոկատորներ էին՝ մենք այլևս սկսեցինք նրանց չհրավիրել: Այդ մասին նրանք Ջափարիձեյին ասել էին Խոմերիկի (Խունխուզ) միջոցով, իսկ ինձ ասացին Արամայիս Երզնկյանի միջոցով: Նրանք պնդում էին, որ բազմաթիվ պրովալների ժամանակ նրանց չձերբակալվելը, իրենց «հասած ստույգ տեղեկություններով՝ պետք էր բացատրել ժանդարմերիայի հետ սերտ կապ ունենա-

Ալյոշա Ջափարիձե

Բագրատ Բորյան

Կոտե Ցինցաձե

լով»: Այդ հայտարարությունը մեզ վրա չհամոզեցուցիչ տպավորություն թողեց, իսկույն հրավիրեցինք կոմիտեյի սեղմ ժողով ու վճռեցինք նրանց չեզոքացնել ու հեռացնել նրանց գործունեությունից: Բայց նրանց մի անգամից չեզոքացնելը միանգամայն վտանգավոր համարելով՝ վրեժի... սկսեցինք հրավիրել սակավաթիվ և ոչ կարևոր ժողովների և այդպես չե-

1· Գուլոյան Աբրահամ, 2· Լազյան Վանի

Լադո Սուլխիշվիլի

Աշոտ Թումանյան

Գևորգ Գևորգյան



Գառնիկ Ղազարյան

Շավարշ Գարադաշ

շոքացնել ատաինանարար, ցույց տալով նրանց, թե կազմակերպությունը քայքայվել էր բոլորովին։ Նրանց մասին առաջ էլ լսել էյինք նման կասկածելի բաներ, բայց առաջին անգամն էր այդ, որ մենշևիկները գնում էյին իրենց բանակցությունների ժամանակ թե՝ «յեթե այդ յերկուսը մնում են ձեր շարքերում՝ ապա ձեզ հետ բլոկ կազմելը վտանգավոր՝ անհնար ենք գտնում» և այլն։

Նոր ղեկավարության ամենագլխավոր գործը նոր տպարան կազմակերպելն էր։ Այդ տեխնիկայի համար անհրաժեշտ էր տառեր և այլ պարագաներ, վորոնք ազատ կերպով գտնելն անհնար բան էր, ուստի պետք էր վորևե տպարանից ձեռք բերել։ Մենք տառեր ձեռք բերինք «Հերմես» տպարանից, «Կովկասի Լրաբերի» տպարանից։ Տառերը մեզ ծախում էյին զանազան շարվածքներով, վորոնց պետք էր ցրել։ Տառերի տեղափոխության աշխատանքին մասնակցել էյին՝ Բորյան, Գուլոյան, Գարադաշ, Մոըչեյաձե (վերջինս նոր էր մտել մեր շարքերը)։ Տպարանի տեղը կոմիտեյի անդամներից միայն յերկու-յերեք հոգի գիտեյին։ Գաղտնապահությունն այդպես էր պահանջում։ Տպարանը գտնվում էր Գանձակի մոտ Կորինապատ գյուղում, վորի հետ անմիջական կապ էր պահպանում Կոտե Ցինցաձեն։

Մեր աշխատանքը մի հաջողությունից մյուսին էր անցնում։ Պրոֆմիությունններում, ժողհամալսարանում և բանվորների մեջ մեր ազդեցությունն ուժեղանում էր։ Այնոշան ընտրվեց ժողհամալսարանի պրոֆ-քարտուղար, իսկ մեր ընկերների մեծամասնությունը նորակազմ ձեռնարկությունների վարչության անդամներ էյին ընտրված։ Մենք ձեռնարկությունների վարչության անդամներ էյին ընտրված։ Մենք ձեռնարկությունների կազմակերպելու գործին և ուղեցինք նաև լեգալ դասախոսություններ կազմակերպելու գործին և ուղեցինք նաև լեգալ դասախոսություններ՝ հակադրելով մեր տեսակետը գաղնեցանք ոզալի հաջողություններ՝ հակադրելով մեր տեսակետը գաղնակցականներին, նացիոնալ դեմոկրատներին և այլոց։

Ահա այդպիսի կազմակերպչական հարաճուն վերելք էր ապրում Թիֆլիսի բոլշևիկյան ընդհատակյա կազմակերպությունն էր նոր ղեկավարությամբ և միաբանությամբ, յերբ սկսվեց համաշխարհային իմպերիալիստական պատերազմը։

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ՄԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

1914 թվի օգոստոսին սկսված համաշխարհային իմպերիալիստական պատերազմը վոչ վոքի համար անսպասելի բան չէր։ Չնայած նրան, վոր հենց պատերազմի նախորյակին գերմանական և ռուսական դիպլոմատները խաղաղասիրական կոնգրեսներում «հակապատերազմական» վորոշումներ էյին ընդունում, բայց ամեն վոք գիտեր, վոր հենց պատերազմի հրձիգները գերմանական և ռուսական դիպլոմատներն էյին, վորոնք իրենց բանակները մինչև ատամները զինելով, «խաղաղասեր» ելույթներ

ղասիրական» ժպիտներ եյին արձակում իրար մոլորեցնելու, հանգստացնելու, վորպեսզի թակարդի մեջ ձգեյին իրար, ժամանակ շահեյին, և ավելի պատրաստվեյին գալիք պատերազմի համար:

Մեր մեծ ուսուցիչ Լենինն այն ժամանակ հետևյալ կերպ եր բնութագրել պատերազմը՝ «Սպառազինման աճումը, նորագույն իմպերիալիստական եպոխայում կապիտալիստական զարգացման առաջնակարգ աստիճանի վրա կանգնած յերկրների պայքարի ծայրահեղ սրումը շուկաների համար, և ավելի յետամնաց արևելյան-յեվրոպական միահեծանության դինաստիական շահերն անխուսափելիորեն պետք է հասցնեյին ու հասցրին ներկա պատերազմին: Ուրիշ ազգերի հողերի խլումն ու նրանց հպատակեցումը, մրցակից ազգերի քայքայումը, նրանց հարստության թալանը, Ռուսաստանի, Գերմանիայի, Անգլիայի և այլ յերկրների աշխատավոր մասսայի ուշադրության հեռացումը ներքին քաղաքական ճգնաժամից, բանվորներին բաժանելն ու ազգայնական մոլորեցնելը, նրանց ավանգարդի վոչնչացումը՝ պրոլետարիատի հեղափոխական շարժումը թուլացնելու նպատակով— ահա այդպիսի միակ և իրական բովանդակություն, նշանակություն և իմաստ ունի ժամանակակից պատերազմը»:*)

Այդպիսի տրամադրություն եր տիրում բուրժուական աշխարհում: Բայց ի՞նչ տրամադրություն կար այդ ժամանակ սոցիալիստների մեջ, նրանց միջավայրում:

Դեռևս բալկանյան պատերազմի ժամանակ, յերբ գումարվեց Բազելի սոցիալիստական կոնգրեսը, միջազգային պրոլետարիատի ներկայացուցիչները բուրժուական աշխարհին սպառնացին՝ «պատերազմ պատերազմի դեմ» լոզունգը նետելով հրապարակ: Բայց յերբ բռնկեց համաշխարհային պատերազմը՝ այդ «գեղեցիկ» ճառախոսներն ամենից առաջ քվեարկեցին իրենց բուրժուական-իմպերիալիստական պետությունների ռազմական բյուջեյի ոգտին:

Յերկրորդ Ինտերնացիոնալի «հերոսները» մեկը մյուսի հետևից դավաճանեցին պրոլետարական հեղափոխության գործին, վորի համար կուրծք եյին ծեծել, տաքուկ ճառեր արտասանել Բազելում: Գերմանական Սոցիալ-Դեմոկրատիան քվեարկեց պատերազմական բյուջեյի ոգտին, Ֆրանսիայում սպանվեց խաղաղության մեծ մունետիկ Ժորեսը՝ Ռուսաստանում Պլեխանովը հանդես յեկավ ամեն տիպի և գույնի մենշևիկների հետ և գրեց իր «Պատերազմի մասին» տխրահռչակ հոդվածները: Նա քարոզում եր աջակցել ցարական սատրապների ուժերին՝ գերմանական գրահապատ բռունցքը ջախջախելու համար: Պատերազմի

*) Լենին, հատոր XVIII, եջ 61 «Պատերազմը և Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատիան», ստորագրություն «Ռ. Ս. Դ. Բ. Կ. կենտրոնական Կոմիտե»: Տպագրված «Սոցիալ Դեմոկրատ»-ում, 1914 թ. նոյեմբերի 1-ին:

դեմ կատաղի ագիտացիայով հանդես յեկան Կարլ Լիբկնեխտն ու Ռոզա Լյուքսեմբուրգը:

Սակայն 2-րդ Ինտերնացիոնալին տրամագծորեն հակառակ դիրք բռնեց մեր բոլշևիկյան կազմակերպությունը պրոլետարական հեղափոխության առաջնորդ Լենինի ղեկավարությամբ: Պետական Դումայում մեր Ֆրակցիան վոչ միայն չքվեարկեց պատերազմական բյուջեյի ոգտին, այլ նա քվեարկության ժամանակ դեմոնստրատիվ կերպով թողեց և հեռացավ նիստի դահլիճից: Լենինն իր գրած Կենտրոնական Կոմիտեյի կոչում 1914 թ. նոյեմբերի 1-ին ասում եր:

«Ամեն մի յերկրի Ս. Դ. խնդիրը պետք է լինի՝ առաջին հերթին պայքարել տվյալ յերկրի շովինիզմի դեմ: Ռուսաստանում այդ շովինիզմն ամբողջովին համակեց բուրժուական լիբերալիզմին («կադետներ») և մասամբ նարոդնիկներին՝ մինչև Ս. Ռ. և «աջ» Ս. Դ.: Առանձնապես և անպայման պետք է նշանակել շովինիստական յելույթները Ե. Սմիրնովի, Պ. Մասլովի և Գ. Պլեխանովի, վորոնք բուրժուա-«հայրենասիրական» մամուլի կողմից ոգտագործվում են լայնորեն»:

«Ժամանակակից իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելը միակ ուղիղ և պրոլետարական լոզունգն է, վորը մատնանշված է Կոմունայի փորձով, ընդգրկված Բազելի (1912 թ.) բանաձևով և բղխեցրած՝ բարձր զարգացում ունեցող բուրժուական յերկրների միջև բոլոր իմպերիալիստական պատերազմների պայմաններից: Այդ գործը վորչափ ել խոշոր ու դժվարին թվա այս կամ այն րոպեյին, սոցիալիստները վոչ մի դեպքում չեն մերժում սիստեմատիկ, կայուն անշեղ նախապատրաստական աշխատանք կատարել այդ ուղղությամբ, յերբ պատերազմն արդեն դարձել է փաստ»*):

Մի խոսքով՝ թնդանոթի վորոտն ու վառոդի ծուխը շլացրին ու կուրացրին Բազելի «հերոսներից» շատերին, և նրանք փարվեցին իրենց բուրժուա-իմպերիալիստական կառավարություններին, ատամներն ու բռունցքները սեղմած կատաղի ագիտացիա սկսեցին՝ մեղադրելով նախահարձակ պետությանը: Զարմանալի կերպով մոռացության տրվեցին կապիտալիստական կարգերն իրենց անարխիական արտադրությամբ, գերարտադրությամբ և նրա հետևանք իմպերիալիստական ավանտյուրան:

Սոցիալ-դավաճանների այդ մատուցած ծառայության համար բուրժուազիան պարլամենտական տաքուկ աթոռներ կարող է տալ «հայրենիքի փրկության իմաստուններին»: Տուժողը միայն միջազգային պրոլետարիատն եր, վորի տարբեր հատվածներն արյուն եյին թափում, սերունդներ դիրքախրամներում՝ հանուն իրենց շահագործողների, հանուն կապիտալիզմի փտած կուռքի:

Մեզ մոտ, Թիֆլիսում, զորահավաքը խիստ տխուր պատկեր ստացավ: Ամեն տեղ լաց, շիվան ընտանիքներում: Քաղաքում սև-հարյու-

*) Լենին, հատոր XVIII, «Պատերազմը և Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատիան», եջ 61:

բոլշևիկները «հայրենասիրական» ցույցեր էին կազմակերպում, նվագներ հնչում, շանթ, շռինդ: Փողոցներում հրապարակով բուրժուական «հայրենասերները» ժողովրդական մասսաների «հայրենասիրական զգացումների» նուրբ լարերին խփելու համար՝ հանում էին իրենց «գերմանական» գլխարկն ու պատռում, ձեռնափայտերը «գերմանական» հայտարարելով՝ ջարդոտում էին: Ջարդե՛նք, փշրե՛նք, գերմանացիներին փոշիացնենք—գոռում էին սև-հարյուրակայինները: Գերմանական արյուն թափելու անհագուրդ ծարավ էր հայտաբերվում վոչ միայն այդ տականքների շրջանում, այլ նաև մեր անպիտան «սոցիալիստների» մեջ: Մթնոլորտը ելեկտրականացել էր, կարծես ամենուրեք արյան հոտ էր բռնել, «յերկինքը թքում էր արյուն»: Սկսվեցին ամենուրեք Ռուսաստանի դեմ պատերազմող պետությունների հպատակների ձերբակալությունները, ծեծը, ակումը:

Տեղական մամուլը նույնպես, անկասկած, չէր կարող անմասն մնալ այդ հակագերմանական-ավստրիական կոնցերտից: Նա ևս փառաբանում էր ցարական սվինը, վոր էլ ավելի սուր և ուժգին կերպով խրվեր Թշնամու կուրծքը:

Թյուրքիան դեռևս պատերազմին չէր խառնվել, բայց վոչ վոքի յել գաղտնիք չէր, վոր նա դաշնակից էր գերման-ավստրիական կոալիցիային և վաղ թե ուշ պիտի հանդես գար Ռուսաստանի դեմ՝ նետվելով իրեն բոցավառվող կրակի ալիքների մեջ:

Դաշնակցական և մշակական Ազգային Բյուրոն, վոր պատերազմի ընթացքում կամավորական խմբեր կազմակերպելու մի շտաբի վերածվեց՝ կաթողիկոսի միջոցով Կովկասի փոխարքային մի գրություն ներկայացրեց, վորտեղ ի միջի այլոց, ասված էր:

«Ամենախոնարհաբար խնդրում եմ ձեզ, ձերդ պայծառափայլություն, առ վոտս առաքելով նորին կայսերական մեծության, մեր սիրելի կայսեր, իմ և Ռուսաստանի ամբողջ հայ հավատարիմ հպատակության զգացմունքները, միջնորդել ամենավողորմած կայսեր առաջ՝ Թյուրքահայերի հովանավորության ու պաշտպանության մասին և նրանց վիճակի հիմնովին կարգավորման վերաբերյալ հույսերի իրագործման մասին»։

«Ցես յերջանիկ եմ հայտարարելու ձեզ, մեծարելի կոմս, նաև այն, վոր սահմանից այն կողմը բնակվող հայ ժողովուրդը նույնպես անխախտ հավատարիմ է մնացել իր անձնվիրության մեջ՝ մեծ ռուսաց պետությանը»։

Ինչպես կաթողիկոսը ասում էր, վորովհետև Թյուրքահայերը, լավ ըմբռնելով չեզոքությունը խախտելու վողբալի հետևանքները, մերժել էին Կովկասի դաշնակցականների առաջարկը՝ ողնելու ցարական բանակին և այլն: Միայն դաշնակցական ավանտյուրիստները Թյուրքահայերին ստիպելով նետեցին պատերազմի արհավիրքների գիրկը: Ցարական կառավարությունն աննպատակահարմար համարելով Թյուրքիան պատերազմի մեջ խառնվելուց առաջ նրա տերրիտո-

րիայում վորևէ հայկական ապստամբական յելույթ կազմակերպելը, փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովի միջոցով ցանկություն է հայտնում 245 հազար ռուբլի հատկացնել հայկական չորս կամավորական գնդեր կազմակերպելու, վորպեսզի պատերազմի դեպքում, վորպես առաջապահ—ուղեցույց գնդեր՝ ողնեն ցարական բանակին՝ ընդդեմ Թյուրքիայի: Ահա դրանով էլ սկսվեց կամավորական շարժում կոչված ավանտյուրան, վորով սկիզբ դրվեց Թյուրքահայ և մասամբ ռուսահայ աշխատավորության մարտիրոսագրության՝ հանուն ցարական դիպլոմատիայի չարանենգ նպատակների: Հայ նացիոնալիստական մամուլի բերանը բացվեց՝ հայերի ազատագրության ժամը հասած համարելով: Տրամագծորեն հակառակ պատկեր էր ներկայացնում վրացական բուրժուական ինտելիգենցիայի բռնած դիրքը: Ինչպես հետագայում էլ պարզվեց, նրանք ուղղակի գերմանացիների և Թյուրքերի հետ դաշն եյին կապել, վորպեսզի աջակցեին նրանց, իսկ վրացական նացիոնալիստների հրավիրած «ազգային» համագումարին, վորին մասնակցեցին մեր բոլշևիկները՝ նրանց դիմակները պատռելու համար՝ ուղղակի առաջարկներ էին յեղել Թյուրքերին ու գերմանացիներին դիմավորել աղ ու հացով, յեթե նրանք յերևային Անդրկովկասում:

Պատերազմն ահա այդպիսի օբյեկտիվ պայմաններ էր ստեղծել, վորտեղ պետք է գործեր մեր բոլշևիկյան կազմակերպությունը: Այդ ժամանակ մենք չունեինք կուսակցության Կենտրոնական Կոմիտեի վորոշումը պատերազմի մասին, բայց մենք ունեինք Մարքս-Էնգելսից մնացած ժառանգությունը, վորից գիտեինք թե ռուսական ժանդարմի տապալումով՝ ամբողջ Յեվրոպայում նոր կենսարար քամի կարող էր փչել, իսկ յերկրի ներսում նրա հաղթանակով կոտրվեր ներքին հեղափոխական շարժումը և, ընդհակառակը, նրա պարտությունը, նրա թուլացումը հնարավորություն կտար պրոլետարիատին՝ ուժասպառ ստորոտի հետ հաշվի նստելու:

Մենք, այդպիսով, բռնել էինք պարտվողականների ուղին, յերբ բավական ուշ ստացվեց կուսակցության Կենտրոնական Կոմիտեի վորոշումը, թե պատերազմը համարել հափշտակչական-իմպերիալիստական, և ձգտել նրան վերածելու քաղաքացիական պատերազմի, զենքերն ուղղել ներքին թշնամու՝ բուրժուազիայի և ցարիզմի դեմ: Մենք արդեն ունենալով կուսակցական դիրեկտիվներ՝ կարող էինք անսայթաք կերպով գործել:

1915 թվի փետրվարի վերջերին (20–22-ին) Թիֆլիսում հրավիրվում է հայկական համագումար, վորի նախաձեռնությունը պատկանում էր դեռևս 1913 թվից ստեղծված Ազգային Բյուրոյին: Համագումարի մշտական նախագահ էր ընտրվել Մեսրոպ յեպիսկոպոսը: Մասնակցում էին մենշևիկներից Արամայիս Յերզնկյանը, սպեցիֆիկներից Ղազար Տեր-Ղազարյանը, իսկ բոլշևիկներից՝ Բագրատ Բորյանը:

Համագումարում սոցիալ-դեմոկրատներին թույլ չէյին տվել նույնիսկ վերջացնելու իրենց ճառերը: Նույնիսկ մենշևիկների առաջադրած բանաձևը չէյին թույլ տվել կարդալու, ուստի կարդացվել էր Միքայել Պապաջանյանի (կադետ) միջոցով: Մի այլ բանաձև առաջադրվել է մեր բոլշևիկյան կազմակերպության ներկայացուցիչ Բագրատ Բորյանի միջոցով, վորի սևագիրը ստորև տալիս ենք անփոփոխ.—

«Ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր ռուսահայ պատգամավորական ժողովը մեզ հնարավորություն չտվեց ամեն մի հարցի առթիվ արտահայտել մեր կարծիքը, և, վոր գլխավորն է, այսպես կոչված Ազգային Բյուրոն իր գործունեյությունը հրապարակի վրա հղրեց ու զանազան պատրվակների տակ նա քողարկեց ամեն ինչ, հանուն ինչ վոր ազգային իդեալի, և դիտավորյալ կերպով յերևան չհանեց այն, ինչ վոր կար, մենք համարում ենք այդ անթույլատրելի և դատապարտելի: Ուստի մենք ստիպված ենք գրավոր կերպով ներկայացնել մեր կարծիքը (համառոտ կերպով):

«Ի նկատի ունենալով այն սխալ կարծիքը, հայ անգիտակից մասի մեջ, վոր իբր թե մենք դեմ ենք թյուրքահայերի ազատագրմանը, այդ մենք համարում ենք տհաս ուղեղների արդյունք և բացարձակապես սուտ մեր հակառակորդների կողմից, վոր նրանք տարածում են մեր հասցեյին: Ով ծանոթ է մեր դավանած սկզբունքի հետ, նա կտեսնի, վոր մենք ամենաջերմ կողմնակից ենք ճնշված ազգերի ազատագրման, և հասկանալի յե, վոր դեմ չենք կարող լինել նաև թյուրքահայերի ազատագրմանը:

«Բայց, նկատի ունենալով, վոր թյուրքահայ հարցի լուծումը «կապված է պատերազմի յելքից» և, վոր գլխավորն է, նա «դիպլոմատիական խնդիր է», միջազգային դիպլոմատիան թյուրքահայ հարցում պետք է յերևան գա իր շահերի թելադրանքով դրդված և նրանց շահերի բաղխումներից հետո միայն նա կասի իր խոսքը և վճռական քայլ կանի թյուրքահայ հարցը «լուծելու» այնպես, ինչպես իր շահերն են պահանջում այդ: Այդ տեսակետից յելնելով, մենք միանգամայն ավելորդ ենք համարում կամավորների ներկա ձևի կազմակերպման ու գործունեյության բնույթը և, վոր գլխավորն է, վոչ մի վճռական նշանակություն չունի նրանց մասնակցությունը ներկա պատերազմին՝ թյուրքահայ հարցի լուծման տեսակետից, ուստի մենք առաջարկում ենք՝ անմիջապես լուծել կամավորների խմբերը: Դա ասում ենք՝ նկատի ունենալով այն հանգամանքը, վոր սուր հարաբերություններ են ստեղծվել կովկասի հարևան ազգերի միջև և վտանգավոր է դարձել դրությունը: Իսկ մյուս կողմից՝ ներկա քաղաքական պայմաններում թյուրքահայերի համար այդ գործելակերպը վնասակար և անթույլատրելի յե: Ցեվ նկատի ունենալով այդ, մենք պնդում ենք, վոր կարիք չկա կազմել վորևէ նախահաշիվ ապագա հայ կամավոր խմբերի զինվորական գործողությունների մասին: Մյուս կողմից՝ ներկա պարագայում դիմել կովկասահայ ազգաբնակությանը, վորն իր ուժերը սպառել է, և նորից ավելորդ զոհեր պահանջել նրանից և ծախսերի համար հարկի յենթարկել նրանց՝ այդ մենք գտնում ենք աններելի և անթույլատրելի:

«Ինքնապաշտպանությունը մենք չենք բացասում և սկզբունքով դեմ չենք, բայց ազգային դարձնել՝ ներկայումս վտանգավոր է և անթույլատրելի:

«Մենք գտնում ենք, վոր նա պետք է դրված լինի ինտերնացիոնալ հողի վրա և անհրաժեշտ է թողնել ժողովրդին իրեն ու նրա դեմոկրատ տարրերին՝ վորոշել այդ:

«Հաշիվները քաոսային վիճակի մեջ են և դրական կարծիք չի կարելի հայտնել: Ծախսերն անվստահություն են առաջ բերում, և դրան ապացույց կարող են հանդիսանալ այն, վոր տարրական պարզ հաշվապահություն անգամ չի պահպանված, իսկ

վոր ամենագլխավորն է, մանրամասն ու անհրաժեշտ փաստաթղթեր չկան: Մենք անթույլատրելի և դատապարտելի յենք համարում այն, վոր զանազան բախտախնդիրներ հավաքվելով՝ իրենց հայտարարել են, այսպես կոչված, «Ազգային Բյուրո» և հասարակական խավերի հետ պատշաճ կերպով չեն վարվել: Ցեկամուտն ու ծախսերը կուտակվել են մի քանի անհատների միջոցով, և մի ընդհանուր հաշվապահություն պակասում է: Վերստուգիչ հանձնաժողով չկա:

«Մենք առաջարկում ենք ռուսահայ պատգամավորական ժողովին, վոր իրեն չվերապահե թյուրքահայ հարցի լուծումը, վորովհետև այդպիսի իրավունք նա չունի, և անհրաժեշտ է թողնել, վոր ամեն մի ժողովուրդ ինքը տնօրինի իր բախտը, և առաջարկում ենք ձեռք քաշել հանուն թյուրքահայերի ազատագրման վնասակար և անթույլատրելի քաղաքականությունից:

«Մենք ներկայիս գործելակերպը համարում ենք ռուսահայ բուրժուազիայի դասակարգային խորին հավատարիմ հպատակության զգացմունքի արտահայտություն դեպի ռուսաց կառավարությունը՝ իր շահերից դրդված և վոչ թե դեպի թյուրքահայերի ազատագրման գործում ունեցած անկեղծությունից:

«Ի նկատի ունենալով այդ և համարելով վնասակար և անթույլատրելի Բյուրոյի գործունեյությունը, ինչպես անցյալ, այնպես էլ ներկա ընտրող Բյուրոյի, վորը նախկինի գործունեյության շարունակողը պետք է լինի, մենք չենք մասնակցում ընտրություններին, և նրանց քաղաքական վնասակար հետևանքներին,—յեթե այդ տեղի ունենա,—պատասխանատվությունը թողնում ենք ինչպես ամբողջ Բյուրոյի կազմի՝ այնպես էլ նրանց ընտրողների վրա: Բյուրոյի ամբողջ գործունեյությանը մեր անվստահության քվեն ենք տալիս և դատապարտելի յենք համարում այն քաղաքական կազմակերպության յերկդիմի և հակահեղափոխական գործունեյությունը, վոր Ազգային Բյուրո կոչված բաղդախնդիրների անվան տակ՝ առաջ է տանում իր գործունեյությունը՝ իրեն համարելով թյուրքահայերի բաղդի տնօրինողը:

«Թյուրքահայերի ապագա քաղաքական կազմակերպության հարցը պետք է թողնել այդ տերիտորիայում ապրող ազգաբնակության վճռին (առանց ազգի խտրության) և այնպես, ինչպես ցանկանում են իրենք:

«Ռուսաց կառավարությունը (ինչպես նաև ամեն մի պետություն) թյուրքահայ հարցում առաջնորդվել է, առաջնորդվում է և առաջնորդվելու յե իր շահերով, և վոչ թե իր «ազատարար» տենչերով, ինչպես այդ ուզում է հավատացնել հայ բուրժուազիան, իրեն պարուրող ինտելիգենցիայով հանդերձ:

«Համագումարը համարում ենք վոչ ազգային, այլ իմպերիալիստական և պատահական անհատների հավաքույթ, վորովհետև նա լայն սկզբունքային հողի վրա չի յեղել դրված: Առաջարկում ենք մեր այս գրությունը մտցնել արձանագրության մեջ»:

1915 թ. փետրվարի 22, Թիֆլիս:

Սույն գրությունը ռուսերեն գրված է Ջափարիձեյի և Բորյանի ձեռքով, և մենք օգտագործել ենք նրա հայերեն թարգմանությունը՝ անփոփոխ կերպով արտագրելով բնագրից, վորը կատարվել էր խիստ շտապողական կերպով, տալով լեզվական-անհարթություններ:

Նույնպիսի մի առաջարկ ներկայացված էր, այսպես կոչված՝ վրացական «ազգային համագումարին» Ջափարիձեյի միջոցով, բայց դժբախտաբար նրա պատճենը մեր ձեռքի տակ չունենք:

Այդ համագումարից հետո, լույս տեսան հաշվետվություններ, վո-

քանցից պարզվեց, վոր, բացի սովորական զինվորներից, հայ կամավորների թիվը 5 հազարից աճելով՝ հասել էր մինչև 8 հազար հոգու:

Ո՞վքեր եյին այդ կամավորները:

Անկասկած, նրանց ճնշող մեծամասնությունը դաշնակցական ագիտացիայից խաբված, մոլորված գյուղացիներ և բանվորներ: Իսկ բուրժուական և կալվածատիրական տարրերից յեթե մասնակցեցին՝ անպայման սանիտարական կամ թիկունքային այլ գործերով:

Մեզ արդեն ասել եյին, վոր դաշնակցական կազմակերպությունից հատուկ շրջաբերական էր ուղարկվել կուսակցության բոլոր անդամներին, վորպեսզի կատաղի պայքար մղվեր սոցիալ-դեմոկրատների դեմ, վորոնք «հայ ժողովրդի ազատագրման նվիրական մոմենտին, յերբ ամբողջ ազգը միաձույլ շարքերով պետք է զենքը ձեռքին պայքարեր», սկսել եյին բանվորների մեջ «ազգակործան» դասակարգային կռիվ քարոզել:

Ցավ խոսք, այնտեղ, վորտեղ կար թեկուզ մի փոքր բոլշևիկ՝ պայքարը մղվում էր **ամենահամառ ու կատաղի կերպով** հայդուկային—կամավորական շարժման ու պատերազմի դեմ, իսկ այնտեղ, վորտեղ բացակայում եյին մեր ընկերները՝ դաշնակցականները բանվորներին խաբում և ուղարկում եյին կամավոր, իրենց շահագործող տերերի հացին յուղ քսելու և հայ աշխատավոր մասսայի բնաջնջման ճանապարհը հարթելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՇԵԳՈՐԾՆԵՐԻ ՄԵՋ

Ինչպես ուրիշ գլուխներում էլ ասել եմ, 1910 թվին Թիֆլիս գալով՝ զարմանալի արագությամբ ինձ հաջողվեց կապվել Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության հետ: Սակայն աշխատելու համար այդպիսի հաջողություն չհանդիպեցի, այլ բավական յերկար գործազուրկ թափառելուց հետո, ընդունվեցի կոշկակար Մղիվանյանի մոտ աշխատելու:

Այդ այն ժամանակն էր, յերբ ցարական Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնների՝ Պետերբուրգի, Վարշավայի, Մոսկվայի և այլ քաղաքների ֆաբրիկային ապրանքը մի կողմից, իսկ մյուս կողմից արտասահմանի՝ Վիեննայի, Փարիզի, Բեռլինի և յեվրոպական ու ամերիկյան այլ քաղաքների մաքուր կարված և էժան կոշկեղենն ողողում Թիֆլիսի շուկայի տեր ու տնորենն էր դառնում: Տեղական արհեստավորներն իրենց ձեռնարհեստով անկարող եյին մրցել այդ մեքենական ապրանքների հետ, ուստի կործանվում եյին՝ իրենց հետ փողոց շպրտելով բազմաթիվ բանվորների:

Սակայն հաղթողները ֆաբրիկներ և գործարաններ չեյին բացում, այլ շուկան գրավում եյին իրենց առևտրական կապիտալով՝ բանալով նորանոր առևտրական բաժանմունքներ, իսկ արտադրական ձեռնարկությունները լայնացվում, ճոխացվում եյին վոչ թե մեզ մոտ, այլ վերոհիշյալ կենտրոններում: Հասկանալի յե, վոր այդպիսի պայմաններում,

յերբ չկային մեծ գործարաններ, դասակարգային պայքարը նույնպես պետք է լիներ իր սկզբնական անզարգացած վիճակում, հետևաբար թույլ պետք է լիներ նաև պրոֆեսիոնալ շարժումը: Անդրկովկասում այն ժամանակ գաղութային քաղաքականություն եյին վարում ցարական կառավարությանը հենված կապիտալիստները, վորոնք ամեն ջանք գործադրում եյին այստեղ սպառելու իրենց պատրաստի ապրանքքը, բայց վոչ մի արտադրական ձեռնարկություն բանալու տրամադրություն չունեյին:

Այդ պատճառով էլ իմ Թիֆլիս յեկած ժամանակ բավական ուժեղ էր գործազրկությունը կաշեգործ բանվորների շարքերում: Իսկ յես հազիվ տեղավորվելով Մղիվանյանի մոտ՝ ամսական ստանում եյի միայն 24 ռուբլի, ապրում եյի զրկանքներով, հազիվ ծայրը ծայրին հասցնելով:

Իմ վարպետ Մղիվանյանը թերթ կարդացող և բավական խելացի զարգացած մարդ էր: Նրան այն ժամանակ խիստ հրապուրել եյին Տոլստոյի գաղափարները, վորովհետև նա նոր էր մահացել և թերթերում շատ եյին գրում այդ մեծ գրողի գրական գործունեության, նրա գաղափարների մասին: Նա հաճախ կրկնում էր իր կարդացածների մասին, վեճի բռնվում ինձ հետ:

— Մարքսի քարոզած դասակարգային կռվի փոխարեն յեթե նույնչափ տարածեյին Տոլստոյի գաղափարները մեր կյանքում, այն ժամանակ շատ բան կփոխվեր: Մարդկությունն ամենայն տեսակի հանցագործություններից, կռիվներից, արյունհեղություններից կազատվեր, յեթե ամեն մարդ պարապեր մտավոր-բարոյական ինքնակատարելագործումով: Ի՞նչ կարիք կա չարին չարով պատասխանելու,— այդպես անվերջ փիլիսոփայում էր վարպետը:

Բայց նա չափազանց կամազուրկ մարդ էր: Ամբողջ շաբաթ քըրտնաթոր աշխատանք էր թափում, շահագործում էր բանվորներին, աշակերտներին և իրեն չարաչար կերպով, վորպեսզի իր բակարա (թղթախաղ) խաղացող ընկերները գային և իսկույն գործը մոռանար, ժամերով նրանց հետ խաղար և վաստակած փողը տանուլ տար, զրկելով ընտանիքին և վարձու աշխատողներին: Իսկ դրանից հետո՝ զղջում, անիծում էր կյանքն ու մարդկանց և փիլիսոփայում:

— Մարդիկ դաժան են, իրար վոչնչացնելու հակումը նրանց մեջ դեռևս չափազանց ուժեղ է, պետք է նրանք կատարելագործվեն, բարոյապես վերածնվեն, այլապես այս դժոխային կյանքը կտևի խիստ յերկար...

— Բայց, վարպետ, յեթե քեզ հետ բակարա խաղացողը ձգտում էր փողերը տանել, այսինքն՝ մեր և քո ծանր աշխատանքով, քրտինքով վաստակած փողերը խլել, քեզ դժբախտացնել, ապա այդ չարությանը դու յել չպետք է պատասխանեյիր չարով, դու չպետք է խաղայիր և

ձգտեցիր խլել նրա փողերը: «Տոլստոյականներդ» իզուր եք թղթախաղի մեջ բարոյականություն փորձում: Բարոյականությունը պետք է փորձել բանվոր դասակարգի վարած պայքարում, որը թեև անցնում է արյան, ավերածության ճանապարհով, բայց իր մեջ կրում է ամենաբարոյական բաներ: Բանվոր դասակարգը յերբ հաղթի, վերջ է տալու մարդը մարդուն շահագործելու ամենազարշելի գործին: Ահա այդպիսի բարձր գործի համար էլ նա հավաքում է իր ուժերը:

Բանվոր դասակարգն ուժեղ է այն ժամանակ, յերբ գիտակցում է իր դասակարգային շահերը և նրա պաշտպանության համար համախմբվում է, կապիտալիստ դասակարգի ուժին դեմ—հանդիման իր միացյալ ուժով հանդես գալու համար: Բանվոր դասակարգի ուժը նրա գիտակցության և համախմբվածության մեջ է:

— Ուրեմն, դուք բարոյականություն ժխտո՞ւմ եք: Յես արդեն հասկանում եմ թե ինչու տպարանական բանվորները մի քանի անգամ իրենց խաղեյինից տառեր էյին գողացել ու ծախել: Դուք, սոցիալ-դեմոկրատներդ նրանց մեջ մեռցրիք ամեն տեսակ բարոյական հասկացողություն, բայց դուք ամեն տեղ խոսում ու գրում եք, թե բանվորները բարոյական մարդիկ են, թե նրանք են, որ կոչված են մարդկությանն ազատելու ամեն տեսակ ճնշումներից և շահագործումից: Յեթե նման գողություններով պիտի ազատագրվենք, ապա մենք հրաժարվում ենք այդպիսի ազատագրումից: Մի ժամանակ յես էլ բանվոր էյի և գիտում էյի ձեզ պես, բայց կյանքը համոզեց, որ սոցիալ-դեմոկրատների ասածները դատարկ, անիրագործելի բաներ են, և Տոլստոյի բարոյական գաղափարներն են, որ պետք է հաղթանակեն կյանքում:

— Վարպետ, իմ կարծիքով տպարանական բանվորների գողությունը չի կարելի գողություն համարել, որովհետև գողացված տառերը տրվել են հեղափոխականներին պրոլետարիատի ազատագրության գործին ծառայեցնելու համար: Մի գրող շատ խելացի կերպով ասել է, թե հասարակ դանակով ավազակը մարդու կյանքը կորստյան է մատնում, իսկ խիրուրգը՝ մարդու կյանքն է փրկում: Այդ գողությունն էլ յեթե հեղափոխականներին և հատկապես սոցիալ-դեմոկրատ բոլշևիկներին օգնելու համար է՝ ապա գողություն լինելուց դադարում է: Գողություն կլիներ այն ժամանակ, յեթե նա կատարվեր փող կուտակելու, անձնական նպատակների համար: Բուրժուաները շատ են խոսում բարոյականության մասին, բայց մանր արհեստավորներին ու բանվորներին թալանում, սնանկացնում են ու փողոց շպրտում, և այդ օրենքով գողություն չի համարվում: Իսկ մեր, բանվորներիս հասկացողությամբ՝ գողությունը հենց այդ է, որ օրը ցերեկով կատարվում է, և բուրժուական օրենքներն արդարացնում, համարում են նորմալ բան: Տեսնո՞ւմ ես, վարպետ, ինչ որ բուրժուաների համար բարոյական է, մեզ՝ բանվորներիս համար հակառակն է:

— Եղ[illegible]ը ճիշտ է, բայց դասակարգային կռվի, արյունահեղության հետ [illegible]ն ոչ մի կերպ համաձայնվել չեմ կարող:

Վարպետս դեռևս խոսքը չվերջացրած՝ ներս մտավ մի պատվեր տվող և պահանջեց կոշիկները: Մեր վիճաբանությունը դրանով էլ դադարեց:

Մդիվանյանի արհեստանոցում աշխատելը հետաքրքրական չէր. որովհետև շատ փոքր էր, բանվորները քիչ էյին: Յես ամեն կերպ ձգտում էյի ընկնել մեծ արհեստանոցներ, որտեղ կարելի յեր ավելի բանվորական կյանքով, կուսակցական և պրոֆշարժման շուրջը ագիտացիա մղել: Բացի դրանից, մեծ արհեստանոցներում միայն կարելի յեր արհեստ սովորել, առաջ գնալ:

Տեղափոխվեցի ախալցխացի Ոգոնյանի մոտ, որտեղ աշխատում էյին մինչև 15 բանվոր: Դրանք վերին աստիճանի անգիտակից մարդիկ էյին: Նրանք իրենց ամբողջ շաբաթվա աշխատավարձի մի խոշոր մասը շաբաթ օրերը գինետներում էյին ծախսում, զրկելով իրենց ընտանիքը վերջին կոպեկներից: Ոգոնյանին այդպիսի մարդիկ էյին պետք, վորպեսզի նրանց հետ կոնծեր, քեֆեր սարքեր: Նա հաճախ պարծենում էր.—

— Իմ բանվորներս ախպեր տղերք են, յես նրանց հոգին ուտեմ:

Ոգոնյանն իր կոնծարանություններով նրանց այնչափ էր իր կողմը գրավել, որ դժվար էր բանվորների մոտ իր մասին մի որևէ բան ասել: Այդ էր պատճառը, որ իմ ագիտացիան խաղեյինի դեմ, բանվորների կազմակերպվելու անհրաժեշտության մասին նրանց դուր չեկավ և նույնիսկ նրանք թափվեցին ինձ վրա ու մի լավ ծեծեցին:

Իր դաշնակցական համոզումներով դեպի սոցիալ-դեմոկրատներն ունեցած ատելությամբ առանձնապես աչքի յեր ընկնում վարպետ կաղ Մկրտիչ Հովսեփյանը, որ մի ժամանակ մեր շարքերումն էր, իսկ այժմ վտարված է:

Բավական ուշ պարզվեց, որ Ոգոնյանը նրանց հետ քեֆ էր սարքել, և յերբ նրան պատմել էյին իմ ասածները՝ նա ասել էր.

— Հըրը եդ չան տղին ինչի՞ մի քիչ չմեցիք (ծեծեցիք):

Վրա հասան Լենայի գնդակահարությունները: Ոգոնյանն այդ մասին նոր էր լսել, և իսկույն գունատված յեկավ արհեստանոց ու մոտենալով ինձ՝ ասաց.

— Շավա՛րշ, լսե՞լ ես, թե ինչքան մարդ են կոտորել Սիբիրում: Յեկա քեզ զգուշացնելու, որովհետև դու և մի քանի ուրիշները, որ սաուղ եք կարդմել, տաքցած գլուխներով գործադուլ-մործադուլ եւենց բաներ չենեք ու խալխին սպանել տաք: Ախպեր, թերթը տվեք եւենց բաների, խոմ տեսնո՞ւմ եք, որ առանց խղճմտանքի կոտորեն կը: Խալխը կնիկ, յերեխի տեր է, մեղք է, թերթը տվեք…

— Այդ վո՞րտեղ են կոտորել, որտեղ, և ինչո՞ւ:

— Սիբիրում, ինչ որ Լենա, վո՞րտեղ է, ենտեղ:

Հաջորդ օրը մենք կարդացինք Լենայի գնդակահարության մանրամասնությունները:

Լենայի գնդակահարությունները թեև շշմեցուցիչ տպավորություն թողին մեզ վրա, բայց ամբողջ յերկրի բողոքի ալիքների հետ խթան հանդիսացան նաև մեր բանվորության կազմակերպվելուն: Մեզ մոտ էլ արձագանք գտան այդ բոլորը, մենք էլ սկսեցինք կաշեգործների պրոֆմիության վերակազմության և ամրացման մասին մտածել:

1907 թվի ռեակցիայից հետո առաջին անգամն եր, վոր Թիֆլիսի կաշեգործները ձեռնամուխ եյին լինում վերակազմելու իրենց պրոֆմիությունը: Ժողովը հրավիրվեց Վերայի վերելքի վրա «Աշխատանքի բորսա» կոչված մի շինության մեջ: Վորպեսզի բանվորները հաջողությամբ հավաքվեյին՝ մենք ընտրել եյինք կիրակի օրը: Ժողովին մասնակցողները գլխավորապես կոշկակարներ և դաբաղներ եյին. իսկ Ադելխանովի բանվորներից ժողովին մասնակցում եյին խիստ սակավ: Այն ժամանակ նման ժողովներին ներկա յեր լինում նաև վոստիկանության ներկայացուցիչը:

Պրոֆմիության ղեկավարությունն ամբողջովին գտնվում եր մեր՝ շքեղ կոշկեղեն պատրաստող բանվորներիս ձեռքը: Մենք եյինք նախաձեռնողը և մենք էլ ղեկավարում եյինք հետագա աշխատանքները: Շքեղ կոշիկներ կարողների ավելի գիտակից և ակտիվ լինելը պետք է բացատրել նրանով, վոր գործատերերի կողմից ավելի եյին գնահատվում, վորպես մաքուր գործ կարողներ՝ մեշչանության և այն ժամանակվա արիստոկրատիայի պահանջներին բավարարելու համար: Չնայած այս բանվորների աշխատավարձը 25–30 ռուբլուց ավելի չեր ամսական, բայց այնուամենայնիվ, նրանք կաշեգործների շարքերում կաշեգործական «բանվորական արիստոկրատիայի» համբավ ունեյին և ավելի ապահովված եյին, քան մյուսները:

1912 թվի առաջին կեսին եր այդ, յերբ ժամանակավոր կազմակերպչական բյուրոն հրավիրել եր ժողով՝ նոր վարչություն ընտրելու համար: Գաղտնի քվեարկությամբ ընտրվեց՝ ճնշող մեծամասնությամբ սոցիալ-դեմոկրատական մի վարչություն: Դաշնակցականները, վոր ավելի անգիտակից հայ բանվորներն եյին գլխավորում, կաշվից դուրս յեկան, վորպեսզի վարչության մեջ սեփական քիչ թե շատ սոլիդ տեղ: Բայց չկարողացան դիմադրել սոցիալ-դեմոկրատական միջազգային համերաշխության գրոհներին և պարտություն կրեցին: Նրանց չհաջողվեց նաև առանձին հայկական պրոֆմիություն կազմակերպել:

Ընտրվել եյին հետևյալ բանվորները. 1. Յերեմկով—ես-եր, 2. Ջանջուղազյան—բայլշևիկ, 3. Բարանովիչ—անկուսակցական, մեզ համակրող, 4. Գարագաշ—բայլշևիկ, 5. Նիկոլ Գենջեյան—դաշնակ, 6. Կախոյան—բայլշևիկ, 7. Նալչաջյան—դաշնակ, 8. Սուլաձե—մենշևիկ

9. Մայսուրաձե—մենշևիկ, 10. Իսախանյան—բայլշևիկ, 11. Հայկունյան—բայլշևիկ: Մերոնցից եր նաև վերստուգիչ հանձնաժողովը:

Պետք է ասել, վոր մեր պրոֆմիությունը և առհասարակ այն ժամանակվա Թիֆլիսի պրոֆմիություններն առանձին խոշոր մեծություն ներկայացնել չեյին կարող, վորովհետև խիստ փոքր քանակով բանվորներ եյին համախմբում իրենց մեջ՝ հազիվ 150 հոգի, չունեյին ֆինանսական ուժեղ միջոցներ, չեյին կարող տանել կուլտ-կրթական աշխատանքներ: Ուստի, միությունը զբաղված եր գլխավորապես գործադուլների ժամանակ շտրեյկբրեխերների դեմ պայքարելով, հիվանդ, գործազուրկ և կամ մեռածների թաղման համար հանգանակություններ կատարելով, ինչպես նաև անդամների տնտեսական վիճակը բարելավելու համար յերբեմն կազմակերպում եր գործադուլներ: Նա պայքարում եր նաև տներում աշխատողների դեմ, վորոնք աշակերտներ եյին վերցնում ու գիշեր-ցերեկ իրենց հետ նրանց աշխատեցնում և շահագործում եյին և առհասարակ չարաչար: Դրանք աշխատավարձը ցածրացնում եյին և բանվորների համախմբված պայքար մղելու մեծ վնաս եյին հասցնում գործին:

Մեզ, բայլշևիկներիս համար, իհարկե, պրոֆմիություններում աշխատելը թե քաղաքական և թե, տնտեսական նպատակներ եր հետապնդում: Մենք համոզված եյինք, վոր ցարական դաժան պայմաններում, պրոֆմիությունները բանվորներին նյութական զգալի և ռեալ բարելավում տալ չեյին կարող, բայց այնտեղ բանվորները համախմբվելով՝ սովորում եյին կապիտալի մեծ և փոքր ներկայացուցիչների կատարած շահագործման դեմ կռվել: Նա մեզ համար մի շտեմարան եր, վորտեղից բերում եյինք կուսակցության մեջ բանվորների ամենագիտակիցներին, լավագույններին, հեղափոխականներին, պայքարողներին:

Մեր մշտական վարչությունը նույնպես փայլուն հաջողություն ունենալ չեր կարող, վորովհետև չկարողացավ համախմբել խիստ ցրված կաշեգործներին՝ բոլորին: Բայց նա հանդիսանում եր մի «բարոյական ուժ», վորից վախենում եյին շտրեյկբրեխերները և նրա վրա հենվում եյին գործադուլավոր բանվորները:

Մեր կաշեգործական պրոֆմիությունն ուժեղանալու մեծ հնարավորություններ ստացավ պատերազմի առաջին շրջանում, յերբ դրսից բերված ապրանքը դադարեց և տեղական արհեստն սկսեց ժամանակավորապես ծաղկել: Բանվորական ձեռքերը նույնպես սկսեցին պակասել զորահավաքի պատճառով: Մնացած սակավաթիվ բանվորների պահանջները սկսեցին ավելի լավ բավարարել գործատերերը, և չկարողանալով ստացած պատվերները կատարել՝ նրանք աշխատող ձեռքերի համար մրցում եյին միմյանց դեմ, շատ անգամ բանվորների աշխատավարձն ավելացնում և ձեռքե-ձեռք եյին խլում նրանց: Մրցումն աշխա-

տող ձեռքերի համար՝ նույնիսկ գործատերերի արհեստավորական վարչության քննության առարկա դառավ: Սակայն պատերազմն ուրիշ բոլոր հասարակական կազմակերպությունների հետ խափանեց նաև պրոֆմիությունները: Նրանց գործիչներին ամեն տեղ ձերբակալում և աքսորում էին: Բայց վարչության անդամները և հատկապես բոլշևիկները առանց պրոֆմիության, հնարավորության դեպքում աջակցում էինք բանվորներին իրենց արդարացի պահանջների բավարարության տանելու:

Պատերազմի ընթացքում մեր բոլշևիկյան խմբակի ղեկավարությամբ գործադուլներ կազմակերպեցինք Թիֆլիսում՝ Զուբինովի, Դիվանյանի, «Ռենիոն» և «Ելեգանտ» արհեստանոցներում: Միայն «Ելեգանտ արհեստանոցում գործադուլը վերջացավ լոկաուտով և այն էլ շնորհիվ շորեյկրբեխերների, իսկ մյուս արհեստանոցներում տարանք փայլուն հաղթանակներ:

«Ելեգանտ» արհեստանոցում գործադուլը տևեց ամիսներ, և այնտեղ կատարվեցին չափազանց խոշոր ընդհարումներ դաշնակցականների հետ, ուստի անհրաժեշտ է մի քիչ կանգ առնել այդ անցքերի վրա:

Այդ արհեստանոցի մասին Կախոյանն իր «Հիշողություններ»-ում գրում է.—

«... ինչ վերաբերում է «Ելեգանտ» արհեստանոցի բանվորներին, նրանք հավաքածոներին այնպիսի բանվորներ, վորոնց չուտ կազմակերպել չէր կարելի: Պետք էր, ամեն ժամանակ, մինչև վոր թե դրսից կատարված աշխատանքը և թե տեղերում իրեն կողմը խաղեյինի վերաբերմունքն ու հոլածանքը նպաստավոր հող տանդծեյին պրոֆաշխատանքը մտցնելու նաև այնտեղ»:

Ա. Կ. «Հիշողություններ», էջ 265—266:

Տեսնենք, թե «Ելեգանտ» բանվորնե՞րն էին այդպես անդիտակից, «վորոնց կազմակերպել չէր լինի», թե՞ այդ տողերը գրողն անշնորհք, ապդեցությունից դուրկ էր, վոր չէր կարողանում կազմակերպել այդ բանվորներին:

«Ելեգանտ» արհեստանոցը պատերազմի սկզբներին ուղղակի դաշնակցականների բույն էր: Նրանք այնտեղի բանվորներից մոտ 15 հոգու ցուցակագրել էին կամավոր, վորոնք պատրաստվում էին Ֆրոնտ գնալ: Թույլ տալ մեր բոլշևիկների ազդեցության տակ գտնվող պրոֆմիության բանվորներին, վոր կամավորական խումբ կազմած ֆրոնտ գնային դաշնակցականներին հետևելով՝ այդ կլիներ խայտառակություն: Պետք էր կասեցնել այդ ամոթալի գործը:

«Ելեգանտն» ունեք յերկու բաժանմունք: Միքայելյան փողոցի վրա (Թիֆլիսի) շքեղ կոշկեղենի արհեստանոցն էր, իսկ Մուխրանյան փողոցի վրա՝ հասարակ կոշկեղենի, վորոնք յերկուսը միասին ունեյին մոտ 50 աշխատող ձեռքեր: Անհրաժեշտ էր մտնել այդ արհեստանոցը, բայց ինձ չէյին ընդունում, վորովհետև արհեստին լավ չէյի տիրա-

պետում, իսկ դաշնակները չէյին ցանկանում, վոր մենք մուտք գործենք այդ արհեստանոցը: Ուստի, նրանք խաղեյինին հավատացնում էյին, վոր յես «խառնակիչ» եմ և այլն: Այդ պատճառով էլ այնտեղ ուղարկեցինք մեր բջիջի անդամ Ջանջուղազյանին, հետո Ալեքսեյ Զխենկելուն և ապա՝ մենշևիկ Սուլաձեյին: Նրանք դժվարությամբ հաջողեցրին իմ այնտեղ ընդունվելը:

Մեր ծրագիրը հաջողությամբ վերջացավ, արդեն յերեք հոգի սոցիալ-դեմոկրատ բոլշևիկներ մտել եյինք այդ «դաշնակցական բույնը»: Պետք էր մեր կոմիտեյի ցանկությունն իրագործել, այսինքն՝ քանդել այդ կամավորական խմբակը, կազմակերպել բոլշևիկյան բջիջ և արհեստանոցը վերցնել մեր ձեռքը:

Ինչպես արդեն ասել ենք՝ պատերազմի առաջին շրջանում դաշնակցականները հատուկ շրջաբերականով նախազգուշացրել էյին իրենց ագենտներին՝ սոցիալ-դեմոկրատ արհեստանոցների ազդեցության տակ գտնվող բանվորներին, վոր «չխառնվեյին» սցիալ-դեմոկրատների ագիտացիայից և գործադուլներով կամ առհասարակ տերերի դեմ դասակարգային պահանջներով «ազգային միաձույլ Ֆրոնտը» չպառակտեյին և այլն: Նրանք արգելել էյին իրենց բանվորներին մասնակցել գործադուլներին: Դեռ ավելին՝ նրանք հանձնարարել էյին խանդարել ամեն տեսակ միահամուռ պայքար տերերի դեմ: «Ելեգանտ»-ի դաշնակցականները, վորպես կուսակցության կարգապահության յերաշխիք՝ վճռել էյին ինչ գնով էլ լինի արձագանք տալ դաշնակցական բյուրոյի կոչին և կամավորական խումբ ուղարկել Ֆրոնտ:

«Ելեգանտ» արհեստանոցում դաշնակցական «Հորիզոն»-ի պատկերազարդ համարներն ու գեղեցիկ պոստերները, Անդրանիկի, Դրոյի, Քեռու և այլ դաշնակցական խմբապետների ու կամավորների նկարներով ձեռքից ձեռք էր թռչում: Դաշնակցական «Արյան ձայներ» յերգարանը նորից հրապարակ էր յեկել: Դաշնակցական «Արյան ձայներ» յերգարանը առանձնապես աչքի յեր ընկնում վոգևորությամբ և պոռթկումներով Տիրատուրյանը, վորը ցուցակագրեր այժմյան կոմունիստ Նիկողոս Տիրատուրյանը, վորը ցուցակագրված կամավորացուներին «զինավարժության» համար ոգտագործում էր. ավելի փայտե կոթը: Նրա սիրած յերգը «Անդրանիկը քաջ, իր հետ բռներով կույր պատերազմ» յերգն էր:

Վիճաբանությունների ազմուկն առանձնապես ուժեղանում էր այդ արհեստանոցում, յերբ թեյի ժամանակ բարձր ձայնով յես կամ մի ուրիշ մաց նստած Տիրատուրյանը կարդում եյինք թերթում տպագրված և կամ առանձին հրատարակված հեռագրերը:

— Բանվոր դասակարգն այս պատերազմից շահելու վոչինչ չունի, իսկ Ռուսաստանի հաղթությամբ նրա ազատագրական գործը կըխափանվի նորանոր կապանքներով,— ասում եյինք մենք:

— Վոչ, այս պատերազմից ազատագրված դուրս կգան մանր ազգությունները, յերբ կհաղթի Անտանտան, հետևաբար և Ռուսաստա-

նը: Ուրեմն, հայերի ազատագրության գործին աջակցելու համար պետք է ոգնել Ռուսաստանի բանակին: Կեցցեն Անդրանիկը, Դրոն, Քեռին և մյուսները, վորոնք իրենց հետ ազատություն են տանում տաճկահայերին,— ասում էր Տիրատուրյանը:

— Ցարական կառավարությունը ձեզ կոգտագործի և քամած լիմոնի նման մի կողմ կնետի: Ցարական կառավարությունը, վոր փոքր ազգերը ճնշողների մեջ ամենամեծ հրեշն է յեղել, ինչպես հայերին, նույնպես և ուրիշ ազգերի, պատերազմից հաղթող դուրս գալու դեպքում՝ իր յերկաթե կրնկով կտրորի, իսկ հայերն իրենց չեզոքության խախտման պատճառով թյուրքերի ձեռքով կոտորվեն, կվոչնչանան: Մնացած մասը հենց կռիվներում կվոչնչանա, և այն ժամանակ Հայաստանը, յեթե գրավված լինի ռուսական բանակի կողմից՝ ազատագրված կլինի հայերից, և դուք, դաշնակցականներդ մոխիրների վրա կգրեք «ազատագրված Հայաստան», վորտեղ ագռավներն ու գայլերի հոտերը կգան դիակները կրծելու,— ասում էինք մենք:

— Բրդի արյուն է հոսում քո յերակներում, դու հայերի ազատագրման դեմ ես, դու ազգի դավաճան ես,— ասաց «Ջոկ Խեչոն» և կոշկակարի դանակը ձեռքին՝ վոտքի յելավ: Այս դանակով փորդ կճղեմ, բավական է խոսես,— գոռաց այդ «Թաղթարիթի Խեչոն», վորին այդպես էին անվանում մեր արհեստանոցի բանվորները:

Այդ տեսնելով, վերցրին սապոգի պրավիլի դաղնիկները և վրա պրծան մենշևիկ Սուլաձեն, անկուսակցական, բայց մեզ համակրող Թոման, Վայնկան և ուրիշները, վորոնք միարերան գոռում էին.

— Դու նրան վոչինչ չես կարա անի: Ապա մոտեցիր և տես, չանսատակ կանե՞նք թե վոչ: Ինչ է, սովորել եք ամեն տեղ դանակով ու մաուզերո՞վ խոսել: Լեզու չունե՞ս, խոսիր և համոզիր, վոր դու ճիշտ ես ասում: Այստեղից մաուզերիստներիդ դուրս պետք է հանել: Բավական է, վորչափ համը տարաք...

Տիրեց յերկար լռություն, և մեր կողմնակիցների այդ յելույթն ավելի թևավորեց մեզ:

— Վողորմելիներ, ողնեցեք Նիկոլային, վոր նա ավելի լավ խփի գերմանական բանվորներին և աշխատավոր գյուղացիներին: Կոտորեցեք իրար՝ տարբեր յերկրների բանվորներդ՝ և տեսնենք, թե բանվոր դասակարգը դրանից ի՞նչ է շահելու: Պատերազմից հետո Վիլհելմն ու Նիկոլայը, յեթե մնան իրենց գահերի վրա, բանկետներում իրար հետ կկոնծեն, իսկ միլիոնավոր ընտանիքներ կմնան առանց աշխատող-կերակրողների, և դուցե յես ու դու յել առանց թևի կամ վոտքի դռնե-դուռ վողորմություն խնդրենք նրանցից, այսինքն՝ բուրժուազիայից, վորի համար մեզ պատերազմի դաշտ կուղարկեն այժմ,— ասում էինք մենք:

— Այո, այո, ճիշտ են սոցիալ-դեմոկրատները: Բանվորներն

հարուստների օգտի մղվող այս պատերազմից վոչ մի լավ բան սպասելիք չունեն,— ասաց Պարույրը, վորը դաշնակցականներից խաբվել ու կամավոր էր գրվել, և մոտենալով ինձ, ձեռքս թոթվեց ու ավելացրեց.

— Առաջինը յես հրաժարվում եմ ֆրոնտ գնալուց: Ճիշտ ես ասում, Շավարշ ջան, դուք սոցիալ-դեմոկրատներդ իրավացի յեք...

Այդ կոնֆլիկտը ցույց տվեց, վոր մենք արհեստանոցում արդեն ունեյինք համակրողների մեծամասնություն: Այդ կոնֆլիկտը ցույց տվեց նաև, վոր դաշնակցականները, յեթե հաջողություն ունեցել էին այդ արհեստանոցում, պատճառն այն էր, վոր նրանց չէր հակադրված սոցիալ-դեմոկրատների բոլշևիկյան տեսակետը պատերազմի մասին: Մեր ամենօրյա ագիտացիայի շնորհիվ օրըստօրե բանվորները հայտնեցին, վոր այլևս ֆրոնտ չեն գնում և կամ գնալն այնքան ձգձգեցին, վոր խումբը վերջնականապես քայքայված համարվեց:

Սակայն պետք էր ամրապնդել մեր հաջողությունը, իսկ այդ կարելի յեր միայն բոլշևիկական բջիջ կազմակերպելով: Կարճ ժամանակ հետո, մենք արդեն կազմակերպեցինք 7–9 հոգուց բաղկացած բոլշևիկյան մի բջիջ: Դրանից հետո անցանք մեր տնտեսական գրությունը բարելավելու ձեռնարկումներին: Յերկար ագիտացիայից հետո վորոշեցինք գրավոր պահանջագիր ներկայացնել «Ելեգանտ» արհեստանոցի տիրոջը: Այդ «տնտեսական պահանջների» հետ կար նաև կոպիտ վարվեցողության դեմ մի կետ:

Ինձ կանչեցին գրասենյակ: Նստած էր Հարությունյանի յեղբայրը, վորն անցյալում յեղել էր յերկաթուղային մեքենավար: Ինձ աթոռ տվեց, նստեցի:

— Ի՞նչ կա, ի՞նչ եք ցանկանում,— ասաց նա:

— Դուք եք ինձ կանչել և սպասում եմ թե դուք ի՞նչ եք ցանկանում:

— Այս արհեստանոցում առաջին անգամն է, վոր ձեռակերպված գրավոր պահանջագիր են ներկայացնում: Բայց նախազգուշացնում եմ, վոր շատ հեռու գնալ չեք կարող վորովհետև գործադուլ հայտարարել ձեզ չի հաջողվի:

— Գործադուլի մասին խոսք չկա մեր կողմից: Մենք պահանջում ենք աշխատավարձն ավելացնել, վորովհետև շուկայում ամեն ինչ թանկացել է, ապրելն օրըստօրե խիստ դժվարանում է: Բացի դրանից, մենք գիտենք, վոր դուք վաղուց ի վեր պատվերները վերցնում եք ավելի բարձր գներով, քան առաջ:

— Իսկ յեթե քեզ ավելացնեմ, և ավելի, քան ձեր պահանջագրում գրել եք, դրան ի՞նչ կասես... բայց պետք է խոսք տաս, վոր այդ գործն ինչպես վոր կազմակերպել ես, այնպես էլ պիտի քանդես... ասաց նա՝ սպասելով պատասխանի:

— Յես ընկերներիս հետ պահանջագիրը ստորագրել եմ և կավելացնեք բոլորիս միասին: Յես մինչև օրս դավաճանություն չեմ արել և

յերբեք ել չեմ անի: Ինչպես եք թույլ տալիս այդպես ինձ վիրավորել և նման առաջարկ եք անում,— ասացի և հեռացա դրասենյակից:

Նա հետևեց դուրս.

— Այդ դեպքում մի մոռնա, վոր դու շատ ել լավ գործ կարողներից չես, և քեզ ընդունել ենք բանվորների խնդրանոք, իսկ յեթե շատ համր տանես՝ վորտեղից վոր յեկար՝ կվերադառնաս այնտեղ: Հասկացա՞ր:

— Միայն բանվորների ցանկությամբ կհեռանամ, այդ լավ իմացեք,— պատասխանեցի ես, քայլերս ուղղելով դեպի արհեստանոց:

Մինչ այդ արհեստանոցի տեր Հարությունյանը գնացել եր արհեստանոց և հայտնել զայրացած, վոր զրկվել ե 15 ռուբլու արժողությամբ մի կաշի: Նա իր ասածը նորից կրկնում եր թե՝

— Մի ձեր միջի գողը գտեք, հետո կխոսենք ձեր պահանջի մասին:

— Այստեղ գողեր չկան, դու այն ասա, թե մեր պահանջները տալի՞ս ես, թե վոչ,— միասին պատասխանեցին մի քանի բանվորներ:

Խազեյինը նկատելով, վոր յես մտա արհեստանոց, մի խայթող հայացք ձգելով վրաս՝ մատը թափ տվեց և ասաց.—

— Լավ, կտամ, բայց գո՞րծ եմ պահանջելու, լա՛վ գործ... ասաց ու հեռացավ:

— Հա, հա, հա, Շավարշ, բանդ խարաբ ե, մատով քեզ սպառնաց,—կատակով ասացին բանվորները:

Ես պատմեցի մեր կուսակցականներին խազեյինի յեղբոր կեղտոտ առաջարկի մասին, և վճռեցինք այլևս նպատակահարմար չհամարել բանակցությունների ժամանակ ինձ խազեյինի մոտ ուղարկելը: Մեր բոլոր պահանջները բավարարվեցին կարճատև բանակցությունից հետո:

— Եղ ել ձեր ծակ ազգայինները, վորոնք խոսում են հայ ժողովրդի փրկության մասին: Թե այդպես սրտացավ բարեկամ ե հայ ժողովրդին, թող առանց կռվի տան մեր պահանջը ե՛լի: Տո դրանք մինչև հինգ հատ ընկույզ չտեսնեն, մի հատ քար չեն ձգի: Այո, ի՞նչպես չե, հենց դրանց նման չարչիներին ել մնացել և ժողովուրդների ազատագրումն ե՛լի,— այդպես եր ասում մեր Զանջուղազյանը:

«Երևան» արհեստանոցի տերը մեր բոլոր պահանջները բավարարելուց հետո գնաց Ռուսաստան՝ «ապրանք բերելու»: Թե ինչ ապրանքի մասին եր խոսքը՝ վոչ վոք չգիտեր: Միայն մի ամիս անց, յերբ վերադարձավ՝ այն ժամանակ հայտարարեց մեզ:

— Ինչ վոր մի ամիս առաջ ավելացրել եյի, այսուհետև այլևս չեմ կարող տալ: Ով չի ուզում առաջվա գնով աշխատել՝ կարող ե գնալ: Աշխատեցեք նախկին գնով, բայց ամեն մեկդ կարող եք վերցնել աշկերտ և միասին աշխատել:

Աշակերտով աշխատելը մենք միշտ մերժել եյինք, վորովհետև աշակերտներին արհեստ սովորեցնելու պատրվակի տակ՝ տանն աշխատող բարդահները չարաչար կերպով շահագործում եյին մանկահասակներին: Մեր խորհրդակցությունը վճռեց կտրուկ կերպով մերժել խազեյին Հարությունյանի առաջարկը և վոչ վոքի թույլ չտալ աշակերտով աշխատել, իսկ աշակերտների տեղ պահանջել Հարությունյանից՝ ընդունել նոր բանվորներ: Խազեյինը կտրուկ կերպով հրաժարվեց նույնիսկ բանակցություն վարելուց:

— Ով ցանկանում ե պակաս գնով և աշակերտով աշխատել, թող մնա, իսկ ով դեմ ե՝ թող գնա,—հայտարարեց նա:

Վճռեցինք հայտարարել գործադուլ և մեր նվաճումները պահել մինչև վերջը: Բանվորներից յերեք հոգի հրաժարվեցին աշխատել առանց աշակերտի: Դրանք եյին՝ Ն. Տիրատուրյանը, «Ջոկ Խեչոն» և «Սև Մեխակը»: Հարցը դրվեց այսպես՝ «կամ բանվորների հետ և առանց աշակերտի, կամ աշակերտով՝ խազեյինի հետ»: Նրանք գնացին խազեյինի հետ և գործիքները հավաքեցին ու չմասնակցեցին գործադուլին, այլ հեռացան ու գաղտնի կերպով գործ վերցնելով, սկսեցին աշակերտով աշխատել: Մնացած բանվորներս հայտարարեցինք գործադուլ, իսկ Տիրատուրյանին, «Ջոկ Խեչոյին» և «Սև Մեխակին», ստրեյկբրեխերներ:

Գործադուլը տևեց մեկ ամսից ավելի: Կանոնավոր նյութական աջակցություն չկար, իսկ վերոհիշյալ բանվորները խազեյինից գաղտնի գործերը վերցնում և կարում եյին ուրիշ տնային բանվորների հետ, ուստի խազեյինը վճռեց փակել արհեստանոցը, բայց մեզ չգիջել: Մենք նորից հավաքվեցինք և վճռեցինք գործադուլավոր բանվորներին ուրիշ տեղերում գործի դնել և «Երևան» արհեստանոցը հայտարարել բոյկոտի յենթարկված:

Վերոհիշյալ անցքերն ապացուցում եյին մի բան՝ այնտեղ, վորտեղ կա վարձու աշխատանք և կապիտալ՝ այնտեղ կարելի յե բանվորներին կազմակերպել: Սակայն դրա համար անհրաժեշտ ե գործադրել վորոշ ջանքեր, ժամանակ սպառել և ունենալ քիչ թե շատ հեղինակություն: Կախոյանը, ինչպես իր «Հիշողություններում» ել գրել ե, սպասում եր, վոր «Երևան» արհեստանոցը «դրսից մտնեն պրոֆաշխատողները»՝ ինչ վոր կույր ճակատագրի բերումով: Վոր նա, անգամ յեթե ցանկանար, չեր կարող կազմակերպել «Երևանի» բանվորներին՝ այդ վոչ վոք չեր կարող ժխտել, վորովհետև ամենից առաջ այդ հաջողության դրավականը՝ հեղինակությունը բանվորների մեջ, նա չուներ:

«Երևան» արհեստանոցի գործադուլին համազոր գործադուլներ մենք, բայլշևիկներս կազմակերպեցինք Զուբինովի, Դիվանյանի, Տեր-Զախարովի, Միրզաբեկյանի արհեստանոցներում, և բոլոր տեղերում

մեր գործադուլային յելույթները վերջացան փայլուն հաղթանակներով: ինչո՞ւ, վորովհետև այդ արհեստանոցներում չարեչկըրբըխերները մեզ խոչընդոտ չհանդիսացան:

Մեր գործադուլների մասին զեկուցվեց Թիֆլիսի մեր բոլշևիկյան կազմակերպության կոմիտեյում և հավանություն ստացվեց, ու քաջալերվեց կաշեգործների մեջ կատարված մեր աշխատանքները:

Ինչպես ասել ենք՝ պատերազմի ալիքը բոլոր մյուս հասարակական կազմակերպությունների հետ իր կրակով լափեց նաև պրոֆմիությունները, իսկ լեգալ կազմակերպություններն այդ յելույթները կազմակերպում եյին միայն մեր բոլշևիկ բանվորների նախաձեռնությամբ ու կոմիտեյի հավանությամբ:

ՎՊԵՐԵՈԴՈՎԵՑՆԵՐՆ ՈՒ ՍՊԵՑԻՖԻԿՆԵՐԸ

Թե վպերեդովեցները և թե սպեցիֆիկները վորևէ կազմակերպություն չունեյին և ուշադրության արժանի չեյին լինելու, յեթե նրանց առանձին ներկայացուցիչները վորոշ յելույթներ չունենային: Բայց թե՛ առաջին և թե՛ յերկրորդ հոսանքները Թիֆլիսում և առհասարակ Անդրկովկասում ունեցել են այդ հոսանքներին պատկանող անձինք, վորոնք կազմակերպել են գրական և այլ հրապարակային յելույթներ, ուստի անհրաժեշտ է մի փոքր կանգ առնել նրանցից առանձին անհատների գործունեյության վրա:

Վպերեդովեցների ամենաֆանատիկ ներկայացուցիչը Հակոբ Հակոբյանն եր Թիֆլիսում, վորի ասելով՝ «վոչ թե Լենինը կամ Պլեխանովը, այլ Բոգդանովն ու Լունաչարսկին են, վոր ամենաիսկական մարքսիստական տեսակետներ են պաշտպանում»: Յես Հակոբին ճանաչում եմ 1910 թվից, յերբ Թիֆլիսում մտա բոլշևիկյան կազմակերպության մեջ: Յես նրան վոչ մի բոլշևիկյան ժողովում չեմ պատահել և չեյի յել կարող պատահել: Նա 1912 թվերին հրատարակեց իր «Բանաստեղծությունների ժողովածուն» և աշխատակցում եր Գարեգին Լևոնյանի «Գեղարվեստ» հանդեսին: Նա այն ժամանակ բանվորների հայտնի յեր վոչ թե իր գրվածքներով, այլ վորպես թարգմանիչ Ագանեզրի բանաստեղծությունների, վորոնք մեծ հաջողությամբ կարդացվում եյին բանվորական շրջաններում:

Հակոբյանի «Բանաստեղծությունների ժողովածուն» ունի իր բավական ուշագրավ պատմությունը: Սուրեն Սպանդարյանը պատմել էր մեզ այդ ժողովածուի առթիվ տեղի ունեցած մի բավական անախորժ դեպք Հակոբի հետ: Հակոբյանը նրան հրավիրել եր կաֆե գնալ, և այնտեղ Սուրենին նվիրելով իր նոր հրատարակած գիրքը՝ խնդրել էր հայտնել իր կարծիքը:

— Շատ լավ գործ ես կատարում Հակոբ, վոր յերգում ես պրոլետարիատն ու նրա դասակարգային պայքարը: Նկուղներում արյան թքողները կգնահատեն ու կկարդան,— ասել եր Սուրենը, բայց խուսափել եր իսկական կարծիքը հայտնել նրա ստեղծագործական ընդունակությունների մասին՝ Հակոբի խաթրին չդիպչելու համար:

Սակայն Հակոբյանը նկատելով, վոր ինչ վոր չասված բաներ կան Սուրենի մեջ իր մասին՝ պնդել եր, վոր Սուրենն արտահայտվի լիովին:

— Ձե, Սուրեն, պետք է ասես քո անկեղծ կարծիքը իմ գրվածքներիս մասին: Ասա, ինչպես եմ գրում, ասա, Սուրեն:

Բայց Սուրենը, նորից թերթելով գիրքը՝ նայում է հեռուն և կրկընում իր ասածը: Ապա համոզված լինելով, վոր Հակոբն ոձիքը բաց չի թողնելու՝ ասել եր.

— Հակոբ, գրվածքներիդ մեջ արվեստը չափազանց կաղում է, յեթե չասենք խիստ բացակայում է:

Հակոբյանը դեռևս Սուրենի խոսքը ամբողջովին չլսած՝ վոտքի յե կանգնում ու կատաղած կերպով նետվում դեպի Սուրենն ու գոռում նրա վրա:

— Դու հայերեն չգիտես և վոչինչ չես հասկանում գրական խնդիրներից:

Սուրենի հայտնած մտքերն այն ժամանակ կազմակերպության մեջ ընդհանուր եյին: Կազմակերպությունը լավ գիտեր, վոր նա վոչ Պուշկին եր և վոչ էլ Լերմոնտով կամ Թումանյան՝ իր ստեղծագործական ընդունակություններն ու սկզբունքային կարողությամբ: Բայց նա իր համեստ ընդունակություններն ի սպաս եր բերել պրոլետարիատին ու նրա մեծ պայքարին, ուստի գնահատվում եր համապատասխան չափով: Սուրենը նույնպես նկատի առնելով այդ տրամադրությունները և հիշյալ անախորժությունը վերջ տալու նպատակով Հակոբյանի գրքի առթիվ գովասանականներ ավեց ինչ վոր թերթում, վորպես պրոլետարական յերգչի:

Թիֆլիսում, յերբ 1923 թվին տոնվեց Հակոբյանի գրական գործունեության հոբելյանը, լույս ընծայվեց նրա կենսագրությունը: Հոբելյանական հանձնաժողովի ստորագրությունը կրող կենսագրականի մեջ սպրդել են այնպիսի սխալներ, վորոնք կարող են աղավաղել մեր կուսակցության ընդհատակյա աշխատանքների պատմությունը: Այդ գըրքույկում, ի միջի այլոց, ասված է հետևյալը.—

«1911 թվի սկզբներին, Հակոբյանը կանգնած եր կուսակցական ցրված մեծամասնական և փոքրամասնական (ինտերնացիոնալիստ) անդամներից կազմված մի նոր յաչեյկայի գլուխ, ուր նրան, վորպես հին կուսակցական գործչի, հրավիրում են խումբը ղեկավարելու»:

«Հակոբյանը լրացնում է խմբի կազմն իր աշակերտներով, գրում մայիսմեկյան

այդ տարւա անդրանիկ թ-ուցիկը, ռաջող տարածում*) կազմակերպչական մեծամասնական ընկերոջ անունից ինքը ուղևորվում արտասահման»:

«Հակոբ Հակոբյան», հրատ. Անդր. Ցեր. Կոմիտեյի, 1923 թ. եջ 37.

Հիշյալ ընկերները բոլորն էլ վողջ են և կարող են սպացուցել, վոր «մեծամասնական և փոքրամասնական (ինտերնացիոնալիստ) անդամներից» այն ժամանակ վոչ մի բջիջ չկար, այլ կային զուտ բոլշևիկներից նոր կազմակերպված բջիջներ**): Իսկ Հակոբյանը բոլշևիկ վեճերախոսների հետ այն ժամանակ վոչ մի կապ չուներ, և 1911 թվին հրատարակված թռուցիկը վոչ թե նա յե գրել, այլ Սպանդարյանը: Նրան հայտնի յեր այն ժամանակ վորևե մեկը թռուցիկ գրելու հանձնարարություն աներ բոլշևիկների կողմից:

Բայց Հակոբյանին վերաբերող գրքույկում միայն վերոհիշյալ սխալները չեն, վոր ապրդել են, այլ նույն 37-րդ եջում տպագրված է նաև հետևյալը.

«Տարվա վերջին Հակոբյանը կազմակերպում է ու նորից ղեկավարում մի փոքրիկ յաչեյկա: Հետևյալ, 1913 թվին նա արդեն ղեկավարում է մի մեծ յաչեյկա, վորը կազմակերպվել եր տպարանական բանվորների նոր կաղրեյց»:

Տես նույն հրատ. 37-րդ եջը:

Թե վորչափ են համապատասխանում իրականությանն այս տողերը՝ կիմանանք հետևյալ յեղելությունից:

Կաոյանի ձերբակալությունից հետո, յերբ Թիֆլիսի կոմիտեյի ղեկավարությունն անցավ մի ժամանակ մեկուսացած ընկերների ձեռքը, խոլուն կատարվեց բոլշևիկ համարվող և համակրող բոլոր ընկերների ուժերի նոր մոբիլիզացիա: Ցեվ վորովհետև Հակոբյանը մի քանի անգամ հայտարարել եր, թե «Ցերե Ցերեվանյան հրապարակում վոտքս խփեմ գետին՝ իսկույն 30 կազմակերպված բանվորներ կգան», ուստի մենք նպատակ դրինք՝ հրավիրել Հակոբյանին և այդ բանվորներին միացնել մեր կազմակերպությանը:

Նրա հետ ժամադրվեցինք Թիֆլիսի բուսաբանական պարտեզի լեռան գլխին, Կուսանոց յեկեղեցուց վերև: Հակոբյանն իր հետ պետք է բերեր իր տպարանական բանվորներին: Նշանակված ժամին յես գնացի: Ցեկավ նաև Հակոբը, վորի հետ բավական յերկար խոսեցինք և զբոսնեցինք մինչև բանվորների գալը: Մենք այստեղ Հակոբի հետ պայմանավորվեցինք նաև, թե ի՞նչ պիտի ասեյինք, յեթե անսպասելի կերպով ժանդարմերիայի թաթը մեզ բռներ:

— Գարադաշ, յեթե քեզ բռնեն ու հարցնեն, թե ի՞նչ գործով եյիք

*) Մեծ յեռանդով աջակցում են տարածման գործին նույն յաչեյկայի անդամները՝ Հարություն Սոլովյան, Ներսես Ներսիսյան, Լազար, Ռեվեկկա, Ցեչենա և այլն, թվով 26 հոգի: (Սույն ծանոթությունը Հակոբյանին վերաբերող գրքույկի ծանոթությունն է — Շ. Գ.):

**) «Մ. Գ. ինտերնացիոնալիստները» յերևան յեկան միայն պատերազմի ընթացքում: «Ինտերնացիոնալիստ» բառը գործածված է թյուրիմացաբար:

այստեղ հավաքվել՝ դու կպատասխանես, վոր «Հակոբը բանատեղծ է՝ իսկ յես նրա յերկրպագուն», հմոռանաս...

— Շատ լավ, Հակոբ ջան, գլխիս վրա, չեմ մոռանա ասելիքս: Բայց, Հակոբ, ինչու չեկան քո բանվորները, վոր տեսնեյինք թե ովքեր պիտի լինեն նրանք, վորոնց մինչև օրս չենք ճանաչում:

— Լավ, քիչ էլ կաց, ես է կգան,— ասաց Հակոբը:

Շատ յերկար զբոսնեցինք ու խոսեցինք, սակայն վոչ վոք չեկավ և չկային այդպիսի յեկողներ: Իսկ այն 30 հոգին, վորոնց մասին ամեն տեղ խոսում եր Հակոբը՝ դրանք կարծեմ «Նադեժդա» տպարանի բանվորները պիտի լինեյին, վորոնք չարում եյին Հակոբյանի հրատարակած գրքույկները: Այդ բանվորները վոչ միայն կուսակցականներ չեյին, այլև սոցիալ-դեմոկրատներ: Նման համակրող բանվորները Թիֆլիսում վորչափ ասեք մենք ունեյինք:

Հակոբ Հակոբյանը յեթե բոլշևիկյան կազմակերպությունից բոլորովին կտրված եր այն ժամանակ ու Բողդանով, Լունաչարսկի յեր հոլովում ամեն մի փողոցի անկյունում, սակայն գրական ասպարեզում նա կատարեց բավական խոշոր ծառայություն: Նրա նախաձեռնությամբ և Խանոյանի, Արամի, Հովակիմ Սոլովյանի ու Կամարու մասնակցությամբ լույս տեսան մոտ ինը փոքրիկ, 16-եջանոց գրքույկներ, վորոնց տարածման գործին ամենաակտիվ մասնակցություն ունեցանք յես ու Գառնիկ Ղազարյանը:

Այդ գրքույկների հեղինակներն եյին. Մ. Գորկի, Լունաչարսկի, Բոգդանով, Սոլոյեվ: Ինչպես նկատելի յե, նաև հիշյալ խնդրում, Հակոբյանը բոլորովին պատահական չե, վոր ընտրել է վպերեդովեցիների գրվածքները, վորոնց հետ պահպանում եր նամակագրություն: Հակոբյանն համոզումով վպերեդովեց եր, և բոլշևիկյան կազմակերպության հետ վոչ մի առնչություն չուներ: «Պրավդա»-յից Բոգդանովին հեռացնելու առթիվ վպերեդովեցների բողոքի տակ ստորագրել է նաև Հակոբյանը:

Անկասկած, այս գրքույկների յերևան գալն ինքնըստինքյան խոշոր գրական յերևույթ եր և խրախուսանքի արժանի, ուստի մեր կազմակերպության կողմից սիրալիր ընդունելության հանդիպեց և տարածվեց: Այդ գրքույկների մնացորդներն իմ ձերբակալության ժամանակ ընկան ժանդարմերիայի ձեռքն ու մտան արձանագրության մեջ վորպես «արգելված» գործեր:

Ինչ վերաբերում է սպեցիֆիկներին՝ նրանք էլ չունեյին վորևե կազմակերպություն, այլ առանձին ինտելիգենտներ սաւպի նման յերևում եյին գրական ասպարեզում իրենց գրավոր կամ բանավոր խոսքերով և անհետանում: Սպեցիֆիկների գլխավոր տրիբունան հայ վաճառականների օրաթերթ «Մշակ»-ն եր, վորտեղ ծվարել եյին այդ առանց բանակի գեներալները: Նրանցից Բ. Իշխանյանը հայտնի յեր վոչ միայն վորպես գրագող, այլ և վորպես քրեական տիպ, դատապարտված եր

Գերմանիայում իր գողացած գրքերի համար: Իսկ Գ. Անանունն իր
գրական յելույթներով ապացուցել եր, վոր նացիոնալիստ եր, և ուրիշ
վոչինչ:

Վերոհիշյալ «մարքսիստները» և ուրիշ մարքսիստ ձևացողներ ամե-
նաայլանդակ կերպով աղավաղում եյին պրոլետարական վճիռ ու հե-
ղափոխական ուսմունքը, վերածելով այն սալոնական սոցիալիստների
ղարդարանքի, բուրժուազիայի համար անվտանգ մի ուսմունքի: Որի-
նակ՝ Բ. Իշխանյանն իր «Հայ վրացական հարաբերությունների պլոբ-
լեմը» գրքում թվական տվյալներով «ապացուցում» եր, վոր վրաց ազ-
նվականները հետադեմ, իսկ հայ բուրժուազիան առաջադեմ դասակար-
գեր եյին և ջատագովում եր հայ բուրժուական տարրերին, վոր զար-
գացնում եյին տեխնիկան, կապիտալ կուտակում և այլն: Իսկ բուրժու-
ազիայի նեխվածության, նրա անխուսափելի անկման, նրա գերեզմա-
նափոր պրոլետարիատի գոյության ու նրա ազատագրական պայքարի
մասին վոչ մի խոսք: Ինչ կասկած, վոր «Մշակ»-ը և մշակականներն
Իշխանյանին ովացիաներ եյին սարքում նրա դասախոսությունների ժա-
մանակ Տ. Նազարյանի «Գրական-գեղարվեստական» սալոնում: Մի
խոսքով, նա նույնպիսի բուրժուա-լիբերալ մտքեր եր արտահայտում,
ինչպես Պ. Ստրուվեն Ռուսաստանում:

«Մշակ»-ին աշխատակցում եյին նաև Ալ. Մարտունին, Սուրխաթ-
յանը, Ց. Խանդոյանը, Մակինցյանը, Տերյանը և ուրիշները:
Դաշնակցական «Հորիզոն» թերթը, ոգտվելով այն հանգամանքից,
վոր մեր կուսակցությունը հարց եր հարուցել չաշխատակցել բուրժուա-
կադետական «Մշակ»-ին, Ա. Ղազարյանի («Հորիզոն»-ի խմբագիր) նա-
խաձեռնությամբ «կատաղի» արշավանք սկսեց մշակական «մարքսիստ-
ների» դեմ, և գրում եր թե Համբարձում Առաքելյանը, աշխատեկցելու
հրավիրելով այդ «մարքսիստներին», ոգտագործում եր նրանց հեղինա-
կությունը և «հենելով նրանց», վորոշ ընթերցողների քաշում եր դեպի
«Մշակ»-ը և այլն:

Առանձին արժեք եր ներկայացնում Ալ. Մարտունու «Ազգային հար-
ցը» հոդվածաշարքը «Մշակ»-ում: Տերյանի դասախոսությունը «Հայ
լեզվի ապագայի մասին», անցավ մեծ հաջողությամբ:
Տերյանի դասախոսությունը մի շառաչուն ապտակ եր Մառենձյա-
նին, Աղբալյանին ու Ջամալյանին, վորոնց հակառակ Տերյանը պնդում
և ապացուցում եր, թե լեզուն նույնպես կենտրոնանում է և այն բազ-
մաթիվ բառերը, վորոնք կյանքի պրակտիկայում մասսայականացվել
են՝ չպետք է բռնաբարել կերպով «հայացնել», թխված լեզու ստեղծել
ժողովրդական կենդանի լեզվի տեղ: Տերյանի դասախոսությունը լսի-
լեցուն դահլիճի ովացիաներով ընդունելը դաշնակցական մամուլից «Նոր
ուժը», հանձին Արշակ Ղազարյանի՝ բացատրվեց բոլորովին այլ կերպ:

«Տերյանի դասախոսությունը յերաժշտական գպրոցի դահլիճում
յեթե ունեցավ խոշոր հաջողություն, յեթե դահլիճը ծայրեծայր լցված
եր՝ դա պետք է բացատրել նրանով, վոր ունկնդիրները յեկել եյին տես-
նելու բանաստեղ Տերյանին և վոչ թե լսելու նրա քաղաքական համո-
զումները»,— գրում եր նա:

Մի ուրիշ դասախոսություն կարդաց Մակինցյանը Ծատուրյանի
մասին՝ Հայ գրողների ընկերության ամբիոնից, վերջինիս հոբելյան
յերեկույթներից մեկում: Իր ընտրած թեման ուրվագծելով, նա փակա-
գծի մեջ խոսեց մի քանի խոսքով նաև Գամառ-Քաթիպայի մասին՝ ան-
վանելով վերջինին «գրական փեսփերել», վորով բավական սառը ջուր
ածեց նացիոնալիստ շովինիստ հայ մտավորականների տաքացած գլ.-
խին, վորոնք խոշոր գեղագետ բանաստեղծ եյին համարում նրան: Այդ
բավական մեծ պայրույթ առաջացրեց դաշնակների շրջանում: Յարական
մթության, խավարի թագավորության որով Անդրկովկասի նացիոնա-
լիզմով նեխված իրականության մեջ յեթե սպեցիֆիկները մի գրական
վորձ կատարում եյին, այդ պետք է համարել այն. վոր նրանք հայ վա-
ճառականների որգան «Մշակ»-ի եջերից հարվածում եյին դաշնակցա-
կան նացիոնալիզմը: Բայց նրանց «հակադաշնակցական» պայ. ...ը չտա
քեց եր տարբերվում այդ թերթի խմբագիր Հ. Առաքելյանի մղած պայ-
քարից: Տարբերությունն այն եր, վոր սպեցիֆիկները խոսում եյին
«մարքսիստական» փրազներով, առանց ունենալու իրենց հետ կապված
մի հատիկ բանվոր անգամ: Նրանք հայ բանվորության անունը չտա-
գործում եյին, բայց նրա ազատագրական պայքարին մասնակից եյին
այնչափ, վորչափ Տիբեթի Դալայ-Լաման:
Սպեցիֆիկների «անցյալ» գործունեությունից էլ մենք գիտեյինք,
վոր նրանք փորձեր եյին արել պրոլետարական միաձույլ, դասակարգա-
յին-միջազգային կազմակերպությունից պոկել հայ բանվորներին, ու
փաստորեն նույն վնասակար գործն եյին կատարել պրոլետարական հե-
ղափոխության համար, ինչպես դաշնակցականներն ու հնչակներն իրենց
նացիոնալիզմով: Ցեվ պատահականություն չէ բոլորովին, վոր նրանցից
մի քանիսը պրոլետարական հեղափոխությունից հետո դաշնակների հետ
թև-թևի տված՝ սկսեցին հարվածել պրոլետարական առաջին պետու-
թյանը՝ խորհրդային իշխանությանը:
Սպեցիֆիզմի մասին վերջին տարիներս մեզանում բավական շատ
գրվեց և խոսվեց: Առանձնապես խոշոր աղմուկ հանեց Կասյանի «Սպե-
ցիֆիկներ և սպեցիֆիզմ» գիրքը՝ տպագրված 1928 թվին:
Այս գրքում այնպիսի գռեհիկ սխալներ կան, վոր մեզ զարմացնում
են, թե ինչո՞ւ դրանք ժամանակին չեն նկատել մեր կոփված մարքսիստ
ընկերները:
Այդ գրքում Կասյանը գլխավորապես մի միտք է զարգացնում, թե

ուրիշ կուսակցության պատկանողները՝ ներկա դեպքում նախկին սպե-
ցիֆիկները, հեշտությամբ կարող են սպեցիֆիկյան ռեցիդիվ կատարել
և այլն: Նա գրում է.—

«Սպեցիֆիզմը ազգայնական, մեշչանական և ինտելիգենտական մտածելակերպով և ու գործելակերպով՝ գունավորված դասակարգային վարդապետությամբ: Յեվ, քանի վոր հայի հոգեբանությունը, անգամ այսօրվա հայ կոմունիստի հոգեբանությունը չի կարող հեշտությամբ և կարճ ժամանակում վերափոխվել, քանի վոր սպեցիֆիզմի օբյեկտիվ հողը, այդպիսով, տակավին գոյություն ունի մեզ մոտ, ուստի նա կարող է հեշտությամբ կրկնվել» (Կասյան, «Սպեցիֆիկներ և սպեցիֆիզմ», էջ 5)։

Ընդհանրացնելով ռեցիդիվի այդ «մարքսիստական մեկնաբանությունը», մենք գալիս ենք այն յեզրակացության, թե վորչափ մեզ հայտնի յե՝ վերոհիշյալ տողերի հեղինակը նույնպես մինչև բոլշևիկների շարքերը մտնելը պատկանել է այլ կուսակցության, յեղել է հնչակ: Յեվ վորովհետև «հայի հոգեբանությունը, անգամ այսօրվա հայ կոմունիստի հոգեբանությունը» չի կարող կարճ ժամանակում վերափոխվել, ուստի Կասյանը կարող է նույնպես ցուցաբերել հնչակյան ռեցիդիվ: Ինչո՞ւ, վորովհետև հանձին Կասյանի՝ հնչակիզմի «սուբյեկտիվ հողը տակավին գոյություն ունի»:

Ահա, թե ինչպիսի յեզրակացության կարելի յե հանգել Կասյանի խիստ «մարքսիստական» վուլգար սխալներից:

Բայց զարմանալին այն է, թե ինչու իր ժամանակին այդ գիրքը մանրակրկիտ քննության առարկա չդառավ, և այդպիսի կոպիտ սխալներով Կասյանը ցանկացավ «բավարարություն տալ մեր յերիտասարդ ընկերների մեջ առաջ յեկած հետաքրքրությանը՝ դեպի անդրկովկասյան հայ իրականության պատմությունը...»: Յեվ այդ գրքի բազմաթիվ, հակամարքսիստական սխալներից մեկն է, վորի մասին ակնարկեցինք:

ՆՈՐ ՊՐԱՎԱԼ

Ջափարիձեյի գալուց և Թիֆլիսի կոմիտեյի ղեկավարության փոփոխվելուց հետո, մեր շարքերում ստեղծվել եր խիստ ընկերական համերաշխ մի գործունեյություն, վորը տանում եր մի հաջողությունից մյուսը: Հակառակ ցարական ժանդարմական վարչության յենթադրությունների, թե Կասյանի ձերբակալությունից հետո մեր կազմակերպությունն իբր թե «վոչնչով իրեն չցուցաբերեց» և այլն: Ընդհակառակը, ընդհատակյա և նրա լրացուցիչ լեգալ աշխատանքները սկսեցին ծավալվել, խորանալ: Կազմակերպել եյինք սեփական նոր տպարան, բազմանում եյին բջիջները, վորոնց հետ սիստեմատիկ կերպով պարապում եյին Ջափարիձեն, Բորյանը, Գուլոյանը, Լազյանը, Նարեկլիձե Սոնյան Կամարին, Անահիտ Յեսայանը:

Իմ բնակարանը, Թիֆլիսի Յելիզավետինսկայա փողոցի № 44 տանը, վորի կորատակին (չարդախ) եր գտնվում, տրամադրված եր այդպիսի պարապմունքների ու զանազան ժողովների համար: Բավական բազմամարդ ժողովներում իմ բնակարանում Բորյանը զեկուցեց ազգա-

Россійская Соціаль-Демок. Рабочая Партія.

Пролетаріи всѣхъ странъ соединяйтесь!

ТОВАРИЩИ РАБОЧІЕ!

Вотъ уже больше четверти вѣка, какъ рабочіе
всего міра празднуютъ свой пролетарскій празд-
никъ 1-го мая, первое мая праздникъ труда, празд-
никъ международной борьбы всѣхъ народовъ за
лучшее будущее, за царство соціализма, за торже-
ство идеи братства, равенства и свободы.

Изъ года въ годъ, въ день перваго мая, рабо-
чіе всѣхъ странъ организуютъ смотръ боевымъ
силамъ. Рука объ руку, плечо съ плечомъ идутъ
они стройными рядами по улицамъ столицъ, го-
родовъ и мѣстечекъ, а надъ ихъ головами разві-
ваются красныя знамена съ ярко начерченными на
нихъ лозунгами международнаго пролетаріата: восьми
часовой рабочій день, всеобщее, равное и тайное из-
бирательное право, замѣна постоянной арміи в за-
мѣна ея народнымъ ополченіемъ. И, съ каждымъ
годомъ ряди кадры рабочаго воинства все увеличи-
вались и увеличивались.

Росла и крѣпла сила международнаго проле-
таріата. Со страхомъ и гнѣвомъ капиталисты всѣхъ
странъ и ихъ вѣрные слуга буржуазныя правитель-
ства смотрѣли на эту силу. И современная война,
съ такою силою обрушившаяся на Европейскіе на-
роды, является однимъ изъ предугаданныхъ ударовъ,
сильныхъ міра сего, по силѣ рабочаго класса, по
его международной солидарности.

Въ самомъ дѣлѣ, кѣмъ и почему начата настоя-
щая война? Народами? Нѣтъ! Ни одинъ изъ воюющихъ
народовъ этого не хотѣлъ и никто его о томъ не
спрашивалъ. Современныя войны въ своей основѣ
имѣютъ чисто завоевательную, империалистическую
политику. Постоянная армія и кровопролитныя войны
нужны капиталистической буржуазіи для охраны
своей безопасности внутри страны, для борьбы съ
врагомъ внутреннимъ и для хищническаго завоева-
нія новыхъ рынковъ, новыхъ территорій, новыхъ
барышей для своихъ кармановъ, новыхъ бѣшеныхъ
наживъ.

Такъ и война настоящая. Она начата не пото-
му, что въ Сербіи убили наслѣдника австрійскаго
престола, что Россіи необходимо было встать на за-
щиту независимаго славянства. Нѣтъ. Не потому!
Вотъ горючій матеріалъ войны накоплялся давно и
въ основѣ его лежитъ борьба за экономическое
преобладаніе и политическое вліяніе капиталистичес-
кихъ государствъ на мировомъ рынкѣ, Балканскомъ
полуостровѣ и Малой Азіи. И такъ, не по желанію
народовъ, а по волѣ тѣхъ, въ чьихъ рукахъ находит-
ся капиталъ, богатство и власть, къ границамъ вою-
ющихъ государствъ были стянуты милліоны людей
на кровавый бой, на безпощадное потребленіе другъ
друга. Свыше десяти мѣсяцевъ продолжается по
размѣрамъ неслыханная, по жестокости безпримѣр-
ная война народовъ. Три четверти года, изо дня въ
день десятками тысячъ, молодые, здоровые люди,
дѣти народа, устилаютъ своими трупами перевалы
Карпатъ, поля Галиціи, Франціи, Малой Азіи, и
кровью своею окрашиваютъ воды Нѣмана и Днѣпра,
Днѣстра, Вислы и Сены.

Рѣки крови, море слезъ, горы труповъ и мил-
ліоны калѣкъ, вдовъ и сиротъ,—таковы будутъ ито-
ги современной войны. Народы Европы задыхаются
въ этомъ кровавомъ кошмарѣ войны и со страхомъ
и ужасомъ ждутъ ея послѣдствій; смертеносныхъ
эпидемій, нищеты и разоренія хроническихъ голо-
довокъ на долгіе годы.

И, мы, рабочіе, въ свой день борьбы, въ день
1-го Мая, теперь, какъ никогда раньше, должны
выдвинуть и бороться за наши требованія, которые
наиболѣе отвѣчаютъ современному моменту.

Долой кровавую войну!

Да здравствуетъ миръ, заключенный истинными
представителями воюющихъ народовъ, на основѣ
національнаго самоопредѣленія.

Долой постоянныя арміи! Да здравствуетъ разору-
женіе народовъ,—какъ истинная гарантія долговѣч-
ности мира.

Да здравствуетъ Учредительное Собраніе, выбран-
ное на основѣ всеобщаго равнаго, прямого и тай-
наго избирательнаго права, которое одно только
можетъ явиться дѣйствительнымъ выраженіемъ воли
народа и въ заключеніи мира, и въ установленіи
гражданскихъ правъ и государственныхъ порядковъ
всѣхъ странъ.

Долой преступное русское **самодержавіе**, ко-
торое является однимъ изъ виновниковъ этой войны!

Да здравствуетъ Демократическая Республика!

Товарищи рабочіе! агитируйте вездѣ и всюду
за эти требованія, организуйтесь и входите въ ряды
своей рос. соц.-дем. раб. партіи.

Спѣшите, ибо недалекъ тотъ моментъ, когда
придетъ день расплаты съ врагами рабочаго класса.
„Онъ будетъ строгъ, потомства судъ, онъ долго
ждетъ, но вѣрно судитъ".

ОРГАНИЗ

Тифлисская [redacted] Р. С.-Д. Р. П.

№ 6.

Типографія [redacted] ОРГАНИЗ.

Բոլշևիկների Մայիսի 1-ի թռուցիկը

յին հույզի, պատերազմի և կուսակցության հերթական խնդիրների մասին:

Բոլորովին չեմ կարողանում մոռանալ մի դեպք, յերբ ժողովի գալով՝ Ջափարիձեն մթության մեջ խարխափելով, գլուխը խփել եր չարդախի սյուներից մեկին և ուռցրել, ու այդպես էլ սենյակ մտավ՝ գունատ ու վրդովված: «Այլևս այս տունը յես ժողովի չեմ գա, գլուխս քիչ մնաց կոտրվեր, մի թե ավելի հարմար տեղ չկարողացաք ընտրել ժողովի համար».— ասում եր Ջափարիձեն:

Մեր ժողովներից շատերը կայանում եյին նաև Գուլոյանի բնակարանում՝ Մամա-Դավթի լեռան վրա, յեկեղեցու մոտ: Այդ բնակարանի մի քանի ժողովների մասին հիշատակվում է նաև ժանդարմական գաղտնի զեկուցագրերում: Գուլոյանի յեղբայր Սեյրին, վոր այն ժամանակ համոզված դաշնակցական եր, իսկ հեղափոխությունից հետո բոլշևիկ էնտուզիաստի վերածվեց, այն ժամանակ, հակառակ իր համոզմունքներին՝ սիրով տրամադրում եր իր բնակարանը մեր ժողովների համար:

Մեր տպարանական տեխնիկան արդեն պատրաստ եր և իրար հետևից տպագրում եր թռուցիկներ: 1915 թվի մայիսի 1-ին մենք հրատարակեցինք որվան պատշաճ մի թռուցիկ: Թռուցիկը հոտն առնող ժանդարմերիան մեր շրջերում ունեցած ագենտների ձեռքով ամեն միջոց ձեռք եր առել տպարանը հայտաբերելու՝ բայց իզուր:

Մենք թռուցիկը տպում եյինք Փանձակի մոտ Կոբենապատ գյուղում և առաջին հերթին տարածում Թիֆլիսում, Բաքվում կամ այլուր, վորպեսզի տպարանը գրավելի չենթարկվեր: Բացի դրանից, տպարանի տեղը մասին գիտեյին միայն նրա հետ անմիջական առնչություն ունեցող ընկերները, մանավանդ այն անձինք, վորոնք այս կամ այն կերպ կուսակցական շրջերում կասկածի տակ եյին առնված՝ նրանց համար տպարանի տեղը բոլորովին անհայտ եր: Դրանով էլ պետք բացատրել այն, վոր չնայած մի քանի նոր գրավումների, այնուամենայնիվ, տպարան ազատվեց:

Մայիսի մեկին մենք բաց թողինք № 6 թռուցիկը՝ 20.000 օրինակ, Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության բայց վոչ թե ինչպես առաջ՝ Թիֆլիսի բոլշևիկյան խմբակի, անունից: Այդ թռուցիկների մեծ մասը Դ. Ղաչարյանի միջոցով ուղարկվեց Բաքու և տարածվեց: Այդ թռուցիկը գրել եր Ալյոշա Ջափարիձեն հետևյալ բովանդակությամբ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:

«Ահա քառորդ դարից ավել է, վոր ամբողջ աշխարհի բանվորները տոնում են իրենց պրոլետարական աշխատանքի տոն՝ մայիսի մեկը: Միջազգային պայքարի այդ տոնը բոլոր ժողովուրդների լավագույն ապագայի, սոցիալիզմի հաղթանակի, յեղբայրության, հավասարության և ազատության գաղափարների հաղթանակի տոնն է:

«Յարեկտարի մայիսի մեկի որը բոլոր յերկրների բանվորները կազմակերպում են իրենց պայքարող ուժերի ստուգատես: Նրանք ձեռք-ձեռքի, ուս-ուսի տված գնում են կարգով մայրաքաղաքների և գյուղաքաղաքների փողոցներով, վորոնց գլխի վրա փողփողում է կարմիր դրոշակը, պայծառ նկարազարդված միջազգային պրոլետարիատի լոզունգներով— ութժամյա բանվորական օր, ընդհանուր, ուղղակի և գաղտնի ընտրական իրավունք, մշտական զորքի վերացում և նրա փոխարինումը ժողովրդական պահեստի մասերով: Յեվ ամեն նոր մայիսի բանվորական մարտիկների կարգերը միշտ ավելանում և ավելանում են:

«Աճեց ու ամրացավ միջազգային պրոլետարիատի ուժը: Սարսափով ու ատելությամբ են նայում այդ ուժի վրա բոլոր յերկրների կապիտալիստներն ու նրանց ծառա բուրժուական կառավարությունները: Յեվ ժամանակակից պատերազմը, վոր այդպիսի ուժով ընկավ յեվրոպական ժողովուրդների վրա, վորը հանդիսանում է—նախապատրաստված հարվածներից մեկը, աշխարհիս ամենաուժեղների կողմից՝ ընդդեմ բանվորական ուժերին և նրա միջազգային համերաշխությանը:

«Յեվ իրոք, վորո՞ւ համար և ինչո՞ւ յե սանձվել այժմյան պատերազմը: Նա սկսվել է ժողովուրդների ձեռքո՞վ: Վոչ, պատերազմող ժողովուրդներից և վոչ մեկն էլ չեր ցանկանում և նրան վոչ վոք այդ մասին չի հարցնել: Ժամանակակից պատերազմն իր հիմքում կրում է զուտ նվաճողական իմպերիալիստական քաղաքականություն: Մշտական բանակն ու արյունահոս պատերազմը պետք են կապիտալիստական բուրժուազիային, իր անվտանգությունը պահպանելու յերկրի ներսում, ներքին թշնամու դեմ պայքարելու և գաղութարար նոր շուկաներ, նոր հողամասեր նվաճելու, նոր յեկամուտների, իրենց գրպանների և իրենց կաստայի փառքի համար:

«Այդպես է նաև այժմյան պատերազմը: Նա սկսված է վոչ թե այն պատճառով, վոր Սերբիայում սպանեցին ավստրիական գահաժառանգին, և անհրաժեշտ եր, վոր Ռուսաստանը պաշտպանելու դուրս գար սլավոնների անկախությունը: Վոչ. այդ չէ պատճառը: Այդ պատերազմի բռնկվող նյութը կուտակված եր վաղուց. Նրա հիմքում դրված է կապիտալիստական պետությունների պայքարը համաշխարհային շուկայում, Բալկանյան թերակղզում և Փոքր Ասիայում տնտեսական գերակշռություն ձեռք բերելու ձգտումը: Յեվ այսպես, վոչ թե ժողովուրդների ցանկությամբ, այլ այն մարդկանց ցանկությամբ, վորոնց ձեռքումն է գտնվում կապիտալը հարստությունն ու իշխանությունը՝ պատերազմող պետությունները մեջ եյին քաշել միլիոնավոր մարդկանց՝ արյունոտ պատերազմ վարելու, միմյանց անխնա վոչնչացնելու համար: Ինը ամսից ավելի յե, վոր շարունակվում է իր ծավալով չլսված ու խստությամբ անօրինակ ժողովուրդների պատերազմը: Յերեք-քառորդ տարուց ի վեր, որըստորե տասնյակ հազարավոր յերիտասարդ, առողջ մարդիկ, ժողովրդի զավակներ, իրենց դիակներով ծածկում են Կարպատի լեռնանցքը, Գալիցիայի, Պրուսիայի, Փոքր-Ասիայի դաշտերը և իրենց արյամբ ներկում են Նեմանի ու Դնեպրի, Վիսլայի ու Սենայի ջրերը:

«Արյունից գետեր, արցունքից ծովեր, դիակներից լեռներ, և միլիոնավոր անդամալույծներ, այրիներ, վորբեր,—ահա դրանք կլինեն ժամանակակից պատերազմի արդյունքը: Յեվրոպական ժողովուրդները ուժասպառ են լինում այս արյունոտ, կոշմարային պատերազմից, և սարսափով ու ահով ընչասպառ սպասում են նրա հետևանքներին, մահաբեր համաճարակներին, աղքատությանն ու քայքայմանը՝ յերկար տարիներով խրոնիկական սովերին:

«Յեվ մենք, բանվորներս, մեր մայիսի 1-ի պայքարի օրում, այժմ— ինչպես յերբեք, պետք է առաջ քաշենք ու պայքարենք մեր այն պահանջների համար, վորոնք ամենից ավելի յեն համապատասխան ներկա մոմենտին:

«Կորչի՛ արյունալի պատերազմը:
«Կեցցե՛ խաղաղությունը, որը կնքելու են պատերազմող ժողովուրդների իսկական ներկայացուցիչները ազգային ինքնորոշման հիմունքներով:
«Կորչի մշտական բանակը, կեցցե՛ ժողովուրդների զինաթափումը— որպես իսկական միջազգային երկարատև խաղաղության:
«Կեցցե՛ հիմնադիր ժողովը՝ ընտրված ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի հիմունքներով, որը միայն կարող է հանդիսանալ ժողովրդի կամքի իսկական արտահայտությունը և խաղաղության կնքողը և քաղաքացիական իրավունքներ հիմնողն ու բոլոր ժողովուրդների պետական կարգ հաստատողը:
«Կորչի ռուսական հանցավոր իշխանությունը, որը հանդիսանում է այս պատերազմի հանցավորներից մեկը:
«Կեցցե՛ դեմոկրատական հանրապետությունը:
«Ընկեր բանվորներ, ամեն տեղ ավխտացիտ վարեցեք այդ պահանջների համար, կազմակերպեցեք և մտեք Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության շարքերը:
«Տապալեցեք, վորովհետև հեռու չէ այն մոմենտը, լերբ կգա բանվոր դասակարգի թշնամիների հետ հաշվի նստելու օրը:
«Նա կլինի սերունդների խիստ դատը, նա լերկար է սպասում, բայց ճիշտ կպատժե»:
ՌՍԴ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Կազմակերպության տպարան, № 6»:

Մայիսի մեկին բաց թողնված այս թռուցիկով ժանդարմերիային ապացուցվեց, վոր կազմակերպությունը դեռևս ապրում է և վոչ միայն ապրում՝ այլև ուժեղանում էր: Այդ պատճառով եվ հենց մայիսի մեկին խուզարկություններ կատարվեցին, վորպեսզի «հանցավորներին» տեղնուտեղը բռնեյին ու հայտաբերեյին տպարանը, կամ գտնեյին նրա հետքերը: Խուզարկվեցին Լաղյանն ու Խանոյանը: «Լաղյանը ձերբակալվեց, իսկ Խանոյանը ազնվության նկատառումներով արձակվեց»,— այդպես է արձանագրված ժանդարմական գեկուցագրերից մեկում, վորը տալիս ենք ստորև: Իսկ Ջափարիձեն ձերբակալվեց մայիսի 4-ին:
Լաղյանի տունը խուզարկելու ժամանակ՝ ժանդարմները նրա մանկահասակ տղային առանձին սենյակ տարած՝ քաղցրավենիք եյին տվել և խոստացել, վորպեսզի վորևէ գաղտնիք կորզեյին լերեխայից, բայց ո՛չ զարմանք, տղան առանց շփոթվելու՝ բոլոր հարցերին ժխտողական պատասխան էր տվել և ժանդարմների ջանքերն անցել եյին իզուր: Այնուամենայնիվ, Լաղյանը ձերբակալվեց:
Ջափարիձեյին քննելիս՝ տվել եյին մի շարք հարցեր, վորոնք ե՛լ ավելի ուժեղացնում եյին կասկածը դեպի Թավդիշվիլին ու Կախոյանը: Նա հայտնել էր մեզ, վոր այդ լերկուսին վերջնականապես չեզոքացնեյինք, և այդպես էլ արվեց: Այդ առթիվ Կախոյանն իր գրքում՝ «Հիշողություններ»-ում՝ տալիս է իրականությանը բոլորովին չհամապատասխանող հերհյուրանքներ:
«Ջափարիձեյին ժանդարմները նախնական քննության ժամանակ հիշեցնում են Հավլաբարում տեղի ունեցած ժողովի մասին, հիշելով միաժամանակ, թե մարդկանց թիվը

և թե ժողովի օրակարգը (բայց տեղը չեն ասում): Սկզբում Ալյոշան ժխտում է, թե ժողովի մասնակիցներից մեկը լեռևի հայտնած կլինի պահնորդական բաժնին, մանավանդ, վոր օրակարգի հարցերը մանրամասն առաջ են բերվում: Այդ կասկածի հիման վրա, նա մի նամակ է ուղարկում իր կնոջը և հայտնում, թե զգուշացեք, վորովհետև հին ընկերներից մեկը կապված է պահնորդական բաժնի հետ և տեղեկություն է տալիս կազմակերպության աշխատանքների մասին...»:
«Ջափարիձեյի կինն այդ նամակը ստանալուն պես՝ սկսում է կասկածել Սերգո Թավդիշվիլու վրա»:

Կախոյան, «Հիշողություններ», եջ 321:

Ալյոշա Ջափարիձեյին հարցրել եյին վոչ թե Հավլաբարի ժողովի մասին, այլ կոմիտեյի ա՛յն նիստի մասին, և չոչափել եյին այնպիսի հարցեր, վորոնց մասին գիտեյին Կախոյանն ու Թավդիշվիլին: Դրանից հետո, Ջափարիձեն իր կնոջ Վարվառայի (Վարո) միջոցով պահանջում է, վոր Բորյան Բագրատը գնա իրեն այցելության՝ «խիստ կարևոր գործ հայտնելու համար»: Բորյանը, չնայած իրեն սպառնացող ձերբակալության վտանգին՝ այնուամենայնիվ, Վարոյի հետ գնում է, վորտեղ Ջափարիձեն հայտնում է իր կասկածը վերոհիշյալ լերկուսի մասին:
Բայց ավելի լավ է տանք Ջափարիձեյի ու Լաղյանի ձերբակալման մասին ժանդարմական «հետախուզական» գրությունը, վորպեսզի ապացուցվի, վոր ժանդարմերիան վոչ մի տեղեկություն չուներ ինչ վոր Հավլաբարում՝ Լեյլու բնակարանում տեղի ունեցած ժողովի մասին՝ վոր նման հարցեր տար Ալյոշային: Ահա, թե ինչ է ասված այդ փաստաթղթում:

Ցել. № 1005, 1225

№ 1234 | Խիստ գաղտնի
9 մայիսի, 1915 թ.
ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ

Նորին կայսերական մեծության Կովկասի փոխարքայի քաղաքական մասի փոխանորդին
(Հատուկ բաժին)

«...1914 թվի հունիսին, հայտնի չէ վորտեղից, Թիֆլիս լեկավ Քութայիսի նահանգի Ռաչինսկ գավառի Տարղամեր գյուղի ազնվական Ալյոշան՝ «Ալյոշա Բուլախանկի» կեղծանունով, վորն իր վրա վերցրեց բոլշևիկյան կազմակերպության ղեկավարությունը և առաջին ժողովը հրավիրեց Սոլյանոյ Դավիդ լեռան վրա՝ 1914 թ. հունիսի 25-ին, ազատ մնացած հետևյալ անդամների մասնակցությամբ՝ Թիֆլիսի Մուկվայի հոգևոր ուսանող Արշակ Սերգեյ Դավիդով Թավդիշվիլի, Թիֆլիսի Հավլաբարի բնակիչ Սոլովյան և կոկակոր «Ռոստով»:
«Այդ ժողովում Ալյոշա Ջափարիձեն հայտնեց իր մտադրությունը՝ Թիֆլիսում տեղծել բոլշևիկյան ամուր կազմակերպություն և աշխատել նրան միացնել մենշևիկների հետ, վորպեսզի վերջ դրվի «լիկվիդատորության» ու Թիֆլիսում ստեղծվի ընդհանուր սոցիալ-դեմոկրատական մի միասնական կազմակերպություն: Այնտեղ Ջափարիձեն ասել էր, թե ինքն այդ մտադրությամբ գնաց Քութայիս, վորտեղ իրեն խոստացան աջակցել:

«1914 թվի հունիսի 31-ին, գործակատարների ամառային ակումբի շենքում նույն այդ Ջափարիձեյի ղեկավարությամբ տեղի ունեցավ յերկրորդ ժողովը, վորտեղ կային ընդամենը չորս մարդ: Ժողովում Ջափարիձեն ասաց, վոր մտադրություն կա մի սոցիալ-դեմոկրատի միջոցով Ալեքսանդրոպոլում տեխնիկա (տպարան Շ. Գ.) գնել, և խնդրեց միջոցներ ձեռք առնել, հանգանակություն կատարել տեխնիկան կազմակերպելու համար: Ժողովականները խոստացան աջակցել, բայց այնուամենայնիվ այդ վորոշումը վոչ մի ռեալ ձեվ չհանդավ: Վերջին ժամանակները՝ մինչև 1915 թվի հունվարը՝ բոլշևիկական կազմակերպությունը վոչ մի գործունեյություն չունեցավ: Սույն տարվա հունվարի 11-ին*) մի բնակարանում, վորի տիրոջ ով լինելը չհաջողվեց պարզել, տեղի ունեցավ կազմակերպության ժողով՝ Ջափարիձեյի ղեկավարությամբ, վորտեղ բացի կազմակերպության չորս հին անդամներից, ներկա եյին ութ նոր հայ անդամներ և յերկու հայ ուխորդ: Նոր անդամներից հաջողվեց պարզել միայն Սարգիս Մելիքսեթով Խանոյանին: Ժողովում Խանոյանը կարդաց «Աչառի» բերած և Պետրոգրադից ստացված նամակը՝ կենտրոնական կոմիտեյի կոչը, վորով նախա-վում եյին բոլոր նրանք, ովքեր այս կամ այն կերպ մասնակցել են պատերազմին: Վճռված եր այդ կոչը տարածել: Այդ վորոշումը չիրականացավ:

«Ապրիլի ինին կայացավ կազմակերպության նոր ժողով, վորտեղ կային Ալյոշա Ջափարիձե, գյուղացի Վլադիմիր Պավլով Սուխիշվիլի, վերոհիշյալ «Աչառը», ինչ վոր «Վասիլ», վոր հանդիսացավ քաղաքացի Հովհաննես Կարապետով Լազյանը, կոչված «Սստուր», յերկու հայուհիներ, վորոնք ներկա եյին յեղել հունվարի 11-ի ժողովին, ընդամենը տասնըհինգ մարդ, վորոնց ինչ անձավորություններ լինելը դեռևս չի պարզված: Ալեքսեյ Ջափարիձեյի նախաձեռնությամբ հարց եր դրված մայիսի մեկին կոչ բաց թողնելու մասին և վճռված եր, չնայած աննպաստ պայմաններին, բոլոր միջոցները ձեռք առնել՝ հիշյալ կոչը բաց թողնելու համար, վորը խոստացավ կազմել Ջափարիձեն, իսկ տեխնիկական կողմի պատրաստության, տպագրության և տարածման գործը դրված եր Սերգեյ Թավդիշվիլու և մի հայի վրա, վորը ժողով բերեց Պետական Դումայի սոցիալ-դեմոկրատական Ֆրակցիայի դեկլարացիան: Կոչը բաց թողնելուն աջակցելու համար ընտրվեց մի հանձնաժողով, վորի կազմի մեջ մտան Ջափարիձեն, Սերգեյ Թավդիշվիլին, մի հայուհի, հայ Վասիլը և վերևում հիշված հայը, վոր ժողով եր բերել դեկլարացիայի պատճենը:

«Քանի վոր այդ ժողովի ձերբակալությունը, ինչպես նաև կազմակերպության լիկվիդացիան մինչև մայիսի մեկը կարող եր անդրադառնալ ագենտուրայի դրության վրա, ուստի յես աներաժեշտ համարեցի, նկատի առնելով կոչի տպագրության տեղը հայտաբերելու հնարավորությունը, նշանակել Ջափարիձեյի և «Վասիլի» վրա ագենտուրային և արտաքին հսկողություն, և պարզել նրանց հետ կապված այն անհայտ հայի դեմքը, վորին հանձնարարված եր Թավդիշվիլու հետ կոչը տպագրելու աշխատանքը: Այդ նպատակով հսկողության տակ առնվեց Թավդիշվիլու բնակարանը: Բայց չնայած այդ ձեռք առնված միջոցներին, չհաջողվեց պարզել հայի դեմքը, իսկ ագենտուրային ճանապարհով՝ կոչը տպագրելու տեղը և կազմակերպության անդամներին ու այդ գործի ղեկավարներին պարզելու մասին վորոշված եր միայն ապրիլի 30-ի գիշերը, այնինչ թռուցիկն արդեն տպագրված եր ապրիլի 30-ին միայն ռուսերեն լեզվով, և այդ որը պետք տարածվեր կազմակերպության անդամների մեջ: Թռուցիկները պետք տարածեր հայ կոշկակար «Ասատուրը», վորը մասնակցել և կուսակցության կոպենհագենի համագումարին: Հետագա զննումով հաջողվեց պարզել, վոր «Ասա-

*) Այդ ժողովը Գուրոյանի տանն եր: Շ. Գ.:

տուրն» ինքը չի տարածում Թռուցիկները, այլ մի անհայտ յերիտասարդ հայի միջոցով: Այդ հայի անձնավորությունը դեռևս պարզված չէ, իսկ «Ասատուրը» հանդիսացավ կոշկակար Մկրտիչ Ստեփանով Կախոյանը: Խուզարկել և ձերբակալել նրանց՝ առայժմ պատկերացնել հնարավոր չէ, նկատի առնելով ագենտուրայի մոտ լինելը նրանց, վորի աջակցությամբ հաջողվեց պարզել վերոհիշյալը: Այդ պատճառով ջանքեր ե գործադրվում, վորպեսզի պարզվի կոչի տպագրության տեղը, նոր կոչ տպագրելիս տեղնուտեղը բռնելու համար, յեթե այդպիսի մտադրություն առաջանա և ապա միայն այն ժամանակ, յերբ ագենտուրան պրավալից ապահովող պայմաններ լինեն: Ագենտուրայի գծով հաջողվեց հավաքել 300 որինակ կոչ (Թռուցիկը հրատարակված ե «Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության Թիֆլիսի կազմակերպության» անունից), վորից ներկայացվում ե յերեք համար: Վորովհետև Թռուցիկը վճռված եր տարածել միայն մայիսի մեկի որը, ուստի մայիսի մեկի գիշերը խուզարկեցի կազմակերպության անդամներից Խանոյանին և Լազյանին: Բացի դրանից, կանխորոշված եր խուզարկել և անպայման ձերբակալել կազմակերպության ղեկավար Ալեքսեյ Ջափարիձեյին, վորի կուսակցական կեղծ անունը «Բադիա» յե: Բայց նրան հայտաբերել հաջողվեց միայն մայիսի չորսին, յերբ նա խուզարկվեց ու ձերբակալվեց: Լազյանը ձերբակալված ե, իսկ Խանոյանը ագենտուրային նկատառումներով արձակված ե ազատ: Կազմակերպության ազատ մնացած անդամների հետագա հսկողությունը շարունակվում ե:

Ստորագրեց գնդապետ Պաստրյուլին.

Ճիշտ ե.— ռոտմիստր Ռոզալիոն Սոչալսկի

(Տես՝ Թիֆլիսի կենտրոնական արխիվի պատմա-հեղափոխական բաժին ֆոնդ 36, № 3147):

Ինչպես մեր գրքում բերած այլ փաստաթղթերից, նույնպես և վերոհիշյալ փաստաթղթից պարզապես յերևում ե, վոր ժանդարմերիայի ինֆորմացիոն աղբյուրը մեր կուսակցության մեջ ծվարած վաճառված վնասարարների գործն եր: Կասկածել այդ մասին չեյինք կարող վոչ մի դեպքում, մանավանդ, վոր նախազգուշացրել եր նաև ինքը՝ Ջափարիձեն:

Բայց սովորաբար, վորպեսզի ձերբակալվածների վրայից մեղադրանքը, կասկածները փարատեյինք, դրսի ընկերներս անմիջապես կազմակերպում եյինք նոր յելույթ, կրկնապատկված յեռանդով, նորանոր ընկերների միջոցով շարունակում եյինք ձերբակալված ընկերների կեսատ թողած գործը:

Մենք չեզոքացրինք պրովոկատորության մեջ մեղադրվողներին, վորոնք կասկածի տակ եյին առնված վաղուց: Յեթե մենք ժողով եյինք նշանակում Թիֆլիսի բուսաբանական պարտեզում, կասկածի տակ առնվածներին ուղարկում եյինք քաղաքի հակառակ մասը՝ Ֆունիկուլյոր կամ Խուդադյան պուրակ, վորտեղ մի յերկու ընկեր հանդիպում և մի քիչ սպասելուց հետո ցրվում եյին՝ հավատացնելով, թե կազմակերպությունը ձերբակալությունից հետո քայքայվել եր և այլն: Մի խոսքով, ամեն կերպ աշխատում եյինք կասկածի տակ առնվածներին յենթարկել դեզորիենտացիայի՝ վորչափ այդ հնարավոր եր: Բայց մեր բաց

թողած նոր թռուցիկներն ու յեռուն աշխատանքն այնչափ զգալի յեր, վոր ամեն ինչ թաքցնել նրանցից՝ անկարելի յեր:

Մինչև Ջափարիձեյի ու Լաղյանի ձերբակալությունը՝ մենք Գուլոյանի բնակարանում ունեցանք յերկու մեծ ժողով, վորտեղ մեզ զեկուցեցին Պետական Դումայի անդամներ՝ Չխեիձեն և Գեգեճկորին, վորոնք յեկել եյին Թիֆլիս իրենց գործունեյության ու ընթացիկ մոմենտի մասին զեկուցելու գաղտնի ժողովում: Այդ ժամանակ արդեն ձերբակալված եր բոլշևիկական ֆրակցիան և մենք ստիպված եյինք լսել դրանց ինֆորմացիան ստեղծված դրության մասին: Այդ ժողովներում հավաքված եյին մինչև քսանուհինգ հոգի, բացի կասկածի տակ առնվածներից: Յեվ ո՛վ զարմանք, ձերբակալված ընկերներից վոչ մեկից այդ ժողովների մասին բան չհարցրին ժանդարմական քննիչները, այդ ժողովների մասին վոչ մի խոսք նաև ժանդարմական արխիվի փաստաթղթերի մեջ չկա:

Բաքվից Թիֆլիս յեկավ Կոտե Ցինցաձեն, վորը Լադո Սուլխիշվիլու տանը կայացած խիստ փոքրաթիվ ժողովում զեկուցեց Բաքվի կազմակերպության և հատկապես Շահումյանի առաջարկի մասին՝ անլեգալ ռուսերեն շաբաթաթերթ ժուռնալ հրատարակելու մասին: Ժողովում ներկա յեր Կախոյանը, վորին վոչ վոք չեր հրավիրել և նրա ներկայությունը մեծ զարմանք պատճառեց Ցինցաձեյին: Բացի Կախոյանից, ներկա եյին Սուլխիշվիլին Բորյանը, Գարագաշը և Յեղուկիձե Ալեքսեյը: Վճռեցինք ամենայն աջակցություն ցույց տալ Բաքվի ընկերների այդ ձեռնարկումին:

Հաջորդ նիստին, վոր տեղի պիտի ունենար Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի նոր շենքի յեռան վրա, Ցինցաձեն ներկայացավ մազերը ներկված և հայտարարեց, թե յեթե կասկածի տակ առնված ընկերներից վորևե մեկը գալու յե նիստին՝ ապա ինքը հրաժարվում ե մասնակցել և այլն: Առանձնապես Ցինցաձեյին անհրաժեշտ եր խիստ կոնսպիրացիա պահպանել, վորովհետև նա անմիջական կապ եր պահպանում մեր գաղտնի տպարանի հետ: Բայց ժանդարմերիան արդեն նրա հոտն առել եր և վորսկան շան նման վռնում եր ամեն տեղ: Նա իր մազերը ներկելով մեր պարիկմախեր Յեղուկիձե Ալեքսեյի տանը, և մի քանի օր թաքնվելուց հետո՝ Թիֆլիսից գնաց Բաքու՝ դրության և մեր վճռի մասին զեկուցելու:

Մենք մի ժողով ունեցանք Ներսիսյան դպրոցի նոր շենքի հետև մի փոսի մեջ: Ժողովին ներկա եյին Բորյանը, Գեվորգյանը, Անահիտ Յեսայանը, Շ. Գարագաշը, Խաչիկ Յեսայանը, Սուլխիշվիլին, Թումանյանը, Գառնիկ Ղազարյանը, Կամարին, Գուլոյանը, Յեղուկիձեն: Յեսայան Խաչիկը, վոր չափազանց մոտ եր Կախոյանին և այդ պատճառով էլ նրան նույնպես Կախոյանի հետ չեզոքացրել եյինք փրփուրը բերնին

պաշտպանում եր Կախոյանին: Բայց այդ ժողովը չկարողացանք հաջողությամբ ավարտել, վորովհետև հարբած զինվորներ յերևացին, վորոնք տրամադիր եյին հարձակվել մեզ վրա՝ կարծելով, թե մենք լազարեթի գթության քույրերի հետ քեֆ եյինք անում այնտեղ: Ստիպված յեղանք ցրվել: Այդ ժողովի մասին ժանդարմական վարչության փաստաթղթերում կա հիշատակված, բայց բավական աղավաղված մանրամասնություններով:

Ստացվեց Շահումյանի մի նամակը, վորով նա նոր պրավալը համարելով պրովոկատորների գործ՝ ասել եր, վոր զգույշ լինենք թե Կախոյանից և թե «փեսա վորսողներից», վորոնք ավելի վտանգավոր եյին, քան հենց պրովոկատորները: Փեսա վորսողներ նա անվանում եր մեր այն ժամանակվա նոր ընկեր Աշխեն Անդրեասյանին, վորը խմբակի պարապմունքների ժամանակ Բորյանին տվել եր հետևյալ հարցը

— Իսկ մարքսիստական սերն ի՞նչպես ե լինում...

— Կսիրես և կապրես մի մարքսիստի հետ և կստացվի «մարքսիստական սեր»,— ասել եր մեր ընկեր Բորյանը: Յեվ դրա մասին էլ Շահումյանն ակնարկում եր իր նամակում:

Յեվ այսպես, չնայած մեր բազմաթիվ պրավալներին, վորոնք անընդհատ հաջորդում եյին մեկը մյուսին, այնուամենայնիվ, աշխատանքներն ընդունում եյին մեծ ծավալ: Չնայած նրան, վոր վերջին անգամ ժանդարմերիան մեզանից խլեց Ջափարիձեյին ու Լաղյանին, վորոնց դատելու վոչ մի փաստ չունենալով՝ աքսորեց, այնուամենայնիվ շուտով, դրանից քիչ անցած, մենք արդեն ունեցանք բոլշևիկյան կազմակերպությունների Կովկասյան Բյուրո՝ կարճ՝ Կավբյուրո:

ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՊՐԱՎԱԼԸ

Մենշևիկների պրավալն առանձին ուշադրության արժանի չեր լինի, յեթե նրան չզուգակցեր մայիսի մեկին հրապարակած նրանց թռուցիկը, վորը բնորոշում ե նրանց դիրքը դեպի այն ժամանակվա ամենախոշոր սոցիալական չարիքներից մեկը՝ պատերազմը:

Մենշևիկներն իրենց թռուցիկը բաց թողին 1915 թվի մայիսի մեկին: Այդ առթիվ խուզարկություն կատարվեց «Թանամեդրովե Ազրի» («Ժամանակակից Միտք») վրացերեն թերթի խմբագրատանը: Խուզարկվեցին նաև Ժորդանիայի, Ջիբլաձեյի, Խոմերիկի, Զումբուրիձեյի և այլոց բնակարանները, բայց ձերբակալվեցին բոլորը, բացի Ժորդանիայից: Ժորդանիայի վերաբերմամբ դեռևս այն ժամանակ էլ լեգալ մարքսիստ անունը բավական տարածված եր: Նրա գլխավոր պրետենզիան պրոլետարիատի դիկտատուրան կամ նրա դասակարգային շահերի պաշտպանությունը չեր, այլ նա յերազում եր մի դրություն, վորտեղ վրացիները միայն լինեյին իշխող վիճակում և իր ու յուրայինների ղե-

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук С.С.Р

կավարությամբ միայն: Իսկ նրա պահանջների նվազագույնը՝ պետական և տեղական օրգաններում դրավել պատասխանատու տեղեր:

Բայց ժանդարմական վարչությունը, ինչպես մեր բոլշևիկական, այնպես էլ մենշևիկական կազմակերպության մեջ, դրել էր իր ագենտուրային բույնը, վորով հետևում էր նրանց ամեն մի քայլին: Նրանք հետևել էին Աթոյանի բոլոր քայլերին, վորը մայիսի մեկի թռուցիկը հրատարակելու համար մեկնել էր Թիֆլիսից Քութայիս և վերադարձին բռնվել պայուսակը ձեռին, վորի մեջ կային 4·500 թռուցիկ:

Նրանց այդ թռուցիկը սովորական տոնական բնույթի մի կոչ էր, վորը վոչ թե պայքարի յեր հրավիրում պրոլետարիատին, այլ նրա հեղափոխական պայքարի փորձերը խաղաղացնելու, նրա հեղափոխական յելույթն ընդդեմ պատերազմի կասեցնելու համար էր: Նրանք անգամ թռուցիկի տակը չէյին դրել «կորչի ցարիզմը» լոզունգը, այլ հայտնում էին, վոր իրենք բանվորներին գործադուլի և պայքարի չեն հրավիրում, վորովհետև դրանով ողնած կլինեյին թշնամուն և այլն: Բայց ավելի լավ է՝ թռուցիկը տանք ամբողջովին:

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք»։

«Մայիսի մեկը»

«Ընկերներ, այսոր մայիսի մեկը՝ աշխատանքի տոնն է: Այսորվան որը տարեցտարի միջազգային պրոլետարիատը ցույց է անում հօգուտ խաղաղության՝ և կոչ է անում բոլոր ժողովուրդներին՝ վճռական կռիվ մղել միլիտարիզմի դեմ, վոչնչացնել մշտական զորքը և հիմնել ժողովրդական միլիցիա:

«Սակայն, ներկայումս բոլոր յերկրների թագավորների, կալվածատերերի և հարուստների կամքով սկսվել է անմիտ և սարսափելի պատերազմը:

«Յերկրագնդիս բոլոր մասերի քառասուն միլիոն քաղաքացիներ զենքի տակ սառչում են ցուրտ և խոնավ խրամատներում, վոչնչանում են գնդակներից և հիվանդություններից, հարյուրներով և հազարներով կոտորվում են ռումբերից, վորոնց արձակում են նոր տիպի թնդանոթներից և օդային նավերից:

«Վոչ մի ժողովուրդ պատերազմ չեր ցանկանում: Միայն թնդանոթային թագավորները, խոշոր բորսայականները և սպեկուլյանտները, ցարերը և կալվածատերերը, այդ նորանոր յերկրներ վորոնողները միայն ձգտում են դրան:

«Պատերազմը օգուտ է բերում միմիայն այդ պարազիտներին, վորովհետև հարստացնում և ամրացնում է նրանց իշխանությունը:

«Սակայն պատերազմը մահ է աշխատավոր տարրերի համար: Պատերազմի դաշտում վոչնչանում են միլիոնավոր մարդիկ: Միմիայն Ռուսաստանն իր աշխատավորներից կորցրել է սպանվածներ և վիրավորվածներ ավելի քան չորս միլիոն: Վորբացած ընտանիքները մնացել են մերկ ու սոված:

«Ցերկրագդիս ամենալավ անկյունները—Բելգիան, Հյուսիսային Ֆրանսիան, Լեհաստանը և Կովկասը, Գալիցիան և Արևելյան Պրուսիան, Լիտվան ու Բուկովինան քա-

քուքանդ են յեղել: Ցերկրները վայրենացել են, վոչնչանում է կուլտուրան: Վորտեղ
ծաղկում եր կյանքը՝ այնտեղ այժմ գերեզմանների բլուրներ են:
«Դաշտերը մնում են առանց ցանելու և հնձելու: Սով- -թագավորն արդեն մեկնել
է իր բաղուկները: Կյանքը սաստիկ թանգացել է: Հարստանում են մի խումբ բորսայականներ և սպեկուլյանտներ: Ժողովրդական դժբախտությունը նրանց համար ուրախ
խնճույք է:
«Տարափոխիկ հիվանդությունները հետզհետե ավելացնում են հարկերը, միլիոնավոր փոխառություններ են կնքում, բաց են թողնվում թղթադրամներ, վորպեսզի
ծածկեն հսկայական ծախքեր՝ պահպանելու համար զորքը և նավատորմիղը:
«Միայն Ռուսաստանը օրական ծախսում է յերեսուն միլիոն: Արդյունագործու-
թյունը կրճատվում է, գործարանները փակվում են: Գործազրկությունն աճում է:
Աւետուրն ընկնում է:
«Ցերկրիս վրա պատվում է զարհուրելի կատաստրոֆայի ուրվականը:
«Ընկեր բանվորներ.—Ահա այն դրությունը, վորում միջազգային պրոլետարիատը
հանդիպում է մայիսի մեկին:
«Ամենուրեք տիրապետում է զինվորական դիկտատուրան:
«Մենք կոչ չենք անում գործադուլի և դեմոնստրացիայի: Այդ ձեռնտու յե միմիայն
մեր թշնամիներին: Առավել ևս, յերբ ներկայումս գետերի նման հոսում է ժողովուրդների ամենալավ զավակների արյունը, պրոլետարիատը պետք է բարձրացնի իր ձայնը
ընդդեմ մշտական զորքի, հօգուտ ժողովրդական միլիցիայի, անհապաղ վերջ տալու
յեղբայրասպան պատերազմին և անմիջապես հաշտություն կնքելու:
«Միլիտարիզմի և զինվորականության ծանր լուծը ճնշում է բոլոր յերկրներին:
Թող մայիսի մեկը դառնա սկիզբը լայն և ընդհանուր պրոպագանդ մղելու հօգուտ խաղաղության: Արդեն բոլոր յերկրներում հասունանում է խաղաղություն կնքելու անհրաժեշտության գիտակցությունը և պրոլետարիատը բարձրացնում է իր ձայնը, վոր
ժամանակավորապես ընկճված եր զինվորական դիկտատուրայից:
«Կովկասի բանվորներ, առանց ազգի խտրության պրոլետարիատի առաջ կան լուրջ
խնդիրներ: Ամբողջ Ռուսաստանը սպասում է վերանորոգության: Բուրժուական կարգերը գնում են դեպի կործանում:
«Ամրացրեք և վերանորոգեցեք ձեր կազմակերպությունը: Թող ամբողջ յերկիրը,
թեկուզ ամենահեռընկած անկյունները պատեն կուսակցական կազմակերպությունների
ցանցով: Այդ կտա մեզ հնարավորություն՝ ավելի լավ օգտագործելու առաջիկա խոշոր
դեպքը:
«Կորչի պատերազմը:
«Կեցցե՛ խաղաղությունը:
«Կեցցե՛ սոցիալ-դեմոկրատիան»:
«Կեցցե՛ սոցիալ-դեմոկրատիան Կովկասի շրջանային կոմիտե» 1915 թ.
Ռուս. Սոց. Դեմ. Բանվոր. կուսակցության Կովկասի շրջանային կոմիտե»

Այս թռուցիկը հրատարակվել էր վրացերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով: Ճիշտ այս չափազանց լիբերալ խաղաղասիրական և անվնաս թռուցիկի պատճառով իրդուր եր անհանգստացել ու խուզարկել Պատրյուլինը: Ինչո՞ւ խուզարկել կատարել ժանդարմական գնդապետ Պատրյուլինը: Ինչու խուզարկել եյին ցարի հանդիստ խռովարար մենշևիկներին, յերբ նրանք անգամ վախեցել եյին ցարի հանգիստը խռովել՝ նրա դեմ թղթի վրա մի լոզունգ տպագրելով: Ակներևտ եր, չափազանց ակներևտ եր Պատրյուլինը, վոր այնուամենայնիվ իրենց հացին

յուղ քսող մենշևիկներին խուզարկում և նույնիսկ բանտարկում էր: Մենշևիկները սպիտակի վրա սև տառերով գրում էին, թե «Մենք կոչ չենք անում գործադուլի և դեմոնստրացիայի: Այդ ձեռնտու չէ միմիայն մեր թշնամիներին (ընդգծումն իմն է. Շ. Գ.) և կամ՝ «Թող ամբողջ յերկիրը, թեկուզ ամենահետընկած անկյունները պատեն կուսակցական կազմակերպությունների ցանցով»,— ասում էր նույն թռուցիկը: Ցարական դեսպոտիզմը չէր հասկանում, որ դրանից պրոլետարիատը շահելու և կապիտալիզմը կորցնելու վոչինչ չուներ: Այսօր սոցիալ-դեմոկրատներն ավելի ուժեղ են, քան մինչև պատերազմը, բայց նրանք, ինչպես առաջ, այժմ էլ մնացել են կապիտալիզմի հլու-հպատակ սպասավորը: Իզուր «վախեցել էր» ցարական ժանդարմերիան:

Սակայն ցարական կառավարությունը վորչափ էլ բանտարկեր մենշևիկներին՝ այնուամենայնիվ, նրանց շուտով արձակում էր: Մայիսի մեկի առթիվ ձերբակալված մենշևիկները՝ Խոմերիկի, Ջիբլաձե և Զումբուրիձե՝ մի առ մի ազատ արձակվեցին Մետեխի բանտից, բայց մեզ, բոլշևիկներիս, ամենափոքր փաստական տվյալի հիման վրա տաժանակիր աշխատանք սահմանեցին (Բորյան, Նարեկևիչվիլի Սոնյա), իսկ դատվելու վոչ մի հիմունք չունեցողներիս, այնուամենայնիվ, Սիբիր աքսորեցին վարչական կարգով (Գարագաշ, Ցեսայան և հետագայում՝ Գուրուլով):

Ցարական կառավարությունը լավ գիտեր, վոր մենշևիկներն իրեն ավելի հավատարիմ ծառայելու էին հետագայում, իսկ բոլշևիկներից գործադուլի և ապստամբության պատնեշներից բացի վորևէ «լավ բան» սպասել անկարելի էր: Բայց տեսնենք, ինչպես է ձևակերպում ժանդարմական վարչության պետ Պաստրյուլինը մենշևիկների խուզարկությունն ու ձերբակալությունը:

№ 1234

9 մայիսի, 1915 թ.

Ցել. № 1005, 1225

ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ

ԽԻՍՏ ԳԱՂՏՆԻ

Նորին կայսերական մեծության Կովկասի փոխարքայի քաղաքական մասի փոխտնօրենին

(հատուկ բաժին)

«Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության վրա հսկողության հետ միաժամանակ, աղենտուրային հսկողության էր յենթարկվում Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական մենշևիկյան կազմակերպությունը, վորի անդամները նպատակ էին դրել 1915 թ. մայիսի մեկին բաց թողնել կոչ, վորի տպագրության համար Թիֆլիսից Քութայիս գնաց, մեր ֆիլլերների հսկողության տակ, սղնախեցի մեշչանին Վարդո Ալեքսանդրով Աթոյանը: Նա Քութայիսից վերադառնալիս, իմ պահանջով կայարանում խուզարկվեց: Նրան պատկանած չեմոդանում գտնվեց 4500 հատ նոր տպագրված կոչ: Մինչև վերջին օրերս կատարվող հետագա հետախուզմամբ հնարավոր յեղավ պարզել, վոր



Մենշևիկների թռուցիկը

Մարզային կոմիտեն, վորի անունից հրատարակվել եյին Աթոյանի մոտ հայտաբերված թռուցիկները, լրացված եր նոր անդամներով, վորոնք են՝ Քութայիսի նահանգի Ոզուրգեթ գավառի սարկավագի վորդի Սիլվեստր Վիսարիոնովիչ Ջիբլաձե, Նոյ Գեորգիեվիչ Ժորդանիա՝ «Ծունխուզ» կեղծ անունով, նույն գավառի գյուղացի Նոյ Վիսարիոնովիչ Ռամիշվիլի՝ կուսակցական «Պյոտր» կեղծանունով, հայ ուսուցիչ Արամայիս Հարությունով Յերզնկյան՝ «Ալֆրեդ» կեղծանունով, յերդվյալ հավատարմատարի օգնական Կիրիլ Իոսիֆովիչ Նինիձե և Քութայիսի նահանգի գյուղացի Պյոտր Գավրիլ Գելեշվիլի: Մենշևիկական կազմակերպությունը հրատարակում է իր վրացերեն լոգվով լեզու «Թանամեդրովե Ազրի» («Ժամանակակից Միտք») թերթը, վորի ղեկավարությունը գտնվում է Ոզուրգեթի քաղաքացի Սիմոն Իվլիանով Ցխոմելիձեյի ձեռքին: Մինչև պատերազմի սկիզբը և նրա առաջին ամիսները Թիֆլիսի մենշևիկական կազմակերպությունը հրաժարվել եր ամեն տեսակի հակապատերազմական գործունեյությունից, իսկ այնուհետև Պետրոգրադի Պետական Դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի ազդեցության տակ կազմակերպության մեջ սկսվում է ձայն բարձրանալ հօգուտ պատերազմի դեմ ագիտացիա մղելու և կոչ բաց թողնելու վրա ազգաբնակության՝ հրավիրելով նրան՝ չմասնակցել կազմակերպվող վրացական կամավորական խմբերին: Այդ կոչերը բաց չթողնվեցին: Այնուամենայնիվ մենշևիկները չհրաժարվեցին իրենց ձայնը բարձրացնել պատերազմի վերաբերմամբ արտահայտվելու, և մինչև օրս վճռեցին, ինչ էլ վոր լինի, մայիսի մեկի օրը բաց թողնել այդ կոչը յերեք լեզուներով: Ստացած տեղեկությունների համաձայն, այն մարդկանց վրա, վորոնք կարող եյին կոչը հրատարակելու տեխնիկային մասնակցել, հսկողություն եր նշանակված ձերբակալելու նպատակով, վորպեսզի դրանով խանգարվեր թռուցիկի տարածումը: Սակայն առաջին ագենտուրային ցուցմունքը կոչը տպագրողների և տարածողների մասին՝ չհաստատվեց վոչ ագենտուրային և վոչ էլ արտաքին հսկողությամբ:

«Նկատի ունենալով այդ, յես միջոցներ ձեռք առա ուժեղացնելու ագենտուրային լուսաբանումը, վորը հաջողվեց միայն ապրիլի 23-ին, յերբ լիակատար համոզեցուցիչ կերպով պարզվեց, թե կոչը տպագրելու, տարածելու և արդեն Բաթում ու Քութայիս ուղարկելու գործը ղեկավարում է վերոհիշյալ Սիմոն Իվանով Ցխոմելիձեն, իսկ նրա անմիջական օգնականն է Զինգեր ընկերության հայ ագենտ Նիկոլայ Յեղորյան Շահնազարյանը, վորը տպագրված կոչերը պահում եր Սուղերնայա փողոցի վրա գտնվող ինչ վոր դերձակի արհեստանոցում: Այդ տեղեկանքն ամբողջովին հաստատվեց, և, հսկելով Շահնազարյանի վրա, պարզվեց, վոր վերևի ցուցմունքը դերձականոցի մասին վերաբերում եր Սուղերնայա փողոցի № 30 տան Ռաժդեն Սիմոնով Ջամալիձեյի դերձականոցին:

«Վորովհետև Թիֆլիսում կոչի տարածումը պետք է սկսվեր մայիսի մեկի առավոտից, ուստի մայիսի մեկի գիշերը և առավոտյան խուզարկեցի Վլադիմիր Պետրով Մարսակովին, Իոսիֆ Դմիտրիևիչ Մակեդոնսկուն, Յեգորին, վոր ինքը Գրիգոր Նատաձեն է, և Գասպար Սոլոմոնով Արությունովին, վորոնց, ագենտուրային տեղեկանքի համաձայն, հանձնարարված եր տարածել կոչը: Նրանց խուզարկումն անցավ անհետևանք: Ցխոմելիձեյին և Շահնազարյանին խուզարկել անկարելի յեր՝ ագենտուրան պրովալի յենթարկվելու վտանգի պատճառով: Նրանց խուզարկումն ու ձերբակալությունը կիրագործվի ագենտուրային հետագա հսկողության արդյունքի համաձայն, և մարզային կոմիտեյի ամենագործունյա անդամներ՝ Ժորդանիայի, Ռամիշվիլու և Ջիբլաձեյի վրա հսկողությամբ ու ձերբակալության հետ միասին: Նրանք միշտ գնում են Անդրկովկասի զանազան վայրերը և ապրում են մեծ մասամբ անլեգալ: Այժմ հաստատված է, վոր Ժորդանիան հաճախ լինում է Թիֆլիսում, վորտեղ յես միջոցներ եմ ձեռք

առնել՝ ձերբակալելու նրան առջին հնարավորության դեպքում: Իսկ Ռամիշվիլին ապրում է Բաքվում: Նրա մասին հայտնված է Բաքվի նահանգական ժանդարմերիայի վարչության պետին:

«Մենշևիկների հրատարակած կոչը մարզային կոմիտեյի անունից, վորից յերեք հատ ներկայացվում է, Թիֆլիս քաղաքում տարածված է ամենաչնչին քանակությամբ:

«Զեկուցելով նկարագրածիս մասին Ձերդ գերազանցությանը, պատիվ ունեմ ավելացնելու, վոր մենշևիկական կազմակերպության վրա, վերոհիշյալ նպատակով, ագենտուրային հսկողությունը շարունակվում է:

«Ավելված 3 հատ կոչ «ՌՍԴԲԿ և 3 հատ «Կովկասի Մարզային Կոմիտե».

Ստորագրեց գնդապետ Պաստրյուլին:

Ճիշտ է — ռոտմիստր Ռոզալիոն Սոչալսկի

Տես՝ ֆոնդ 36 № 3147, Թիֆլիսի կենտրոնական արխիվ, պատմահեղափոխական բաժին):

Յեվ այդ բոլոր նեղությունը ժանդարմական վարչությունը կրեց սոսկ նրա համար, վոր Պետական Դումայի սոցիալ-դեմոկրատների ազդեցությամբ պատերազմի «դեմ» խաղաղասիրական թռուցիկ եյին բաց թողել մենշևիկները, գույժ հայտնելու ցարական վանդալներին, վոր իրենք դեմ են բոլոր նրանց, վորոնք պատերազմի դեմ գործադուլի և դեմոնստրացիայի կոչ եյին անում: Ժանդարմերիան հետո միայն համոզվեց, վոր դրանք ավելորդ բաներ եյին, ինչ թույլ տրվեցին մենշևիկների վերաբերմամբ, վորովհետև մենշևիկները հետագայում մտան ռազմաարդյունաբերական կոմիտեյի մեջ՝ ցարիզմին օգնելու և իրենց ձեռքը թաթախելու թշնամի պետությունների բանվոր և գյուղացի մարտիկների արյան մեջ, վորոնք իրենց կապիտալիստների ու կալվածատիրական ավինների ուժով քշվում եյին պատերազմի դաշտ:

ԿԱՎԲՅՈՒՐՈՆ ԿԱԶՄՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Ջափարիձեյի և Լազյանի ձերբակալությունից և մենշևիկների պրովալից կարելի յեր յեզրակացնել, վոր ռեակցիան ուժեղանում եր, վոր ցարական կառավարությունն իր թիկունքն ամրացնելու համար կանգ չեր առնում վոչ մի միջոցի առաջ: Յեթե կենտրոնում բռնված հեղափոխականներին անմիջապես ֆրոնտի ամենաառաջին շարքերն եյին ուղարկում, ապա մեզանում աքսորում եյին Սիբիր, յեթե փաստեր չկային դատելու, և կամ ամենաչնչին փաստերի հիման վրա տաժանակիր աշխատանքի եյին դատապարտում իրենց ճանկն ընկած ընկերներին:

Չափազանց ցավալի և միաժամանակ զայրացուցիչ բան եր, յերբ այնպիսի պետական մի օրգան, վորպիսին եր Պետական Դումայի (4-րդ) բոլշևիկական ֆրակցիան, ձերբակալված եր, և Կամենևը, փոխանակ կանգնելու դեմ հանդիման ցարական դատարանի առաջ և պաշտպանելու կուսակցության տեսակետը պատերազմի մասին, հրաժարվեց ֆրակցիայի տեսակետներից և ժխտեց իր ունեցած մշտական կապը նրա հետ:

Բայց մյուս կողմից, մեծ վոգևորության և հիացմունքի առարկա հանդիսացավ բոլշևիկական ֆրակցիայի բանվորների բռնած դիրքը, վորոնք հայտարարել եյին դատարանում, վոր թե իրենք, և թե թիկունքի բանվորական մասսան, վորի ներկայացուցիչները լինելու պատիվն ունեն՝ ամբողջովին կողմնակից են իրենց ժողովում քննվող Լենինի թեզերին: Ցարական կառավարությունը, ինչպես հայտնի յե ամենքին, խախտելով դումայի պատվիրակների «ունեցած անձեռնմխելիությունը»՝ ամբողջ ֆրակցիային աքսորեց Սիբիր:

Ահա այդպիսի ծանր, ամեն առողջ միտք վոչնչացնող ցարական ռեակցիա եր տիրում ամենուրեք, պատերազմի ժամանակ: Բայց չնայած այդ ամենաաննպաստ պայմաններին, այնուամենայնիվ, Թիֆլիսի մեր բոլշևիկական կազմակերպությունը վոչ միայն բանվորների, այլ նաև զինվորների մեջ հաջողեցրել եր կազմակերպել բոլշևիկյան բջիջ, վորը լայն կերպով տարածեց մեր մայիսմեկյան և ապա Կավբյուրոյի անունից հրատարակած օգոստոսի 18-ի թռուցիկը պատերազմի դեմ:

Ցարական ռեակցիայի կատաղությունը հակառակ արդյունք եր տալիս՝ հեղափոխական տրամադրությունների բռնկում առաջացնելով մեր շարքերում: Մենք կրկնապատկված, յեռապատկված յեռանդով պատրաստվում եյինք, գալիք օրերի համար ուժեր հավաքելով, համոզված՝ վոր մոտենում եյին իմպերիալիստական պատերազմը քաղաքականի վերածելու լոզունգի իրականացման օրերը:

Ահա այսպիսի պայմաններ եյին տիրապետում ամենուրեք, յերբ ամբողջ Կովկասում մեր բոլշևիկական ցրված ուժերը համախմբվեցին և կազմվեց կուսակցական կազմակերպությունների Կովկասի Բյուրո «Կավբյուրո»:

Այդ առթիվ Թիֆլիս յեկավ զեկուցելու մեր հին ընկեր Աշոտ Խումարյանը: Մենք արդեն պրովոկատորության մեջ կասկածելիներին և անգամ նրանց հետ վորևե առընչություն ունեցողներին (թեկուզ բարեկամական) չեզոքացրել եյինք: Խումարյանի զեկուցումը Կավբյուրոյի կազմակերպման մասին՝ մենք լսեցինք Թիֆլիսի ֆունիկուլյորում: Ժողովը խիստ սահմանափակ եր: Ներկա եյին Բորյանը, Խումարյանը (զեկուցող), Կամարին, Դուլոյանը, Գարագաշը, Գևորգյանը:

Մենք պատվիրեցինք խորոված, և նստելով մի հեռավոր բուդկայում՝ խնդրեցինք մատուցողից տալ խորովածն ու հեռանալ: Ժողովականներից մոտ հաշիվ հավաքվեց խորովածի փողը, վորովհետև վոչ մեկիս մոտ չկար այդպիսի գումար: Մատուցողն անվերջ գալիս եր և խանգարում ժողովը, մինչև վոր նրան ջղայնացած «շնորհակալություն» հայտնեցինք մատուցած ծառայության համար, և մի կերպ նրանից ազատվեցինք:

Խումարյանի զեկուցումը խիստ կարճ, ինֆորմացիոն զեկուցում եր: Վճռվեց հրատարակված թռուցիկները հետագայում հրատարակել նորակազմ Կավբյուրոյի անունից: Այնուհետև Խումարյանն իսկույն գնաց և մենք անցանք գործի:

Ամենից առաջ պետք եր կարգի բերել տպարանը, տառերի պակասորդները լրացնել և տեխնիկական վորոշ մասեր ձեռք բերել, վորն արվեց խիստ կարճ ժամանակում: Տառերը ստանում եյինք մեզ համակրող անկուսակցական բանվորներից:

Տպարանը կանոնավորելուց հետո իսկույն անցանք Պետրոգրադից հենց նոր ստացված պատերազմի դեմ թռուցիկի շարելուն, վորը գրված եր Լենինի ձեռքով: Այդ թռուցիկը, վորը սուրբ տալու յենք, չանթ ու կրակ եր թափում ցարական կառավարության մեծ ու փոքր ներկայացուցիչների գլխին և կոչ եր անում բանվորներին ու զինվորներին՝ իրենց զենքն ուղղել պատերազմը նախաձեռնող և նրա պատճառ հանդիսացող բուրժուազիայի, կալվածատիրության և նրանց կառավարության՝ ցարիզմի դեմ: Թռուցիկի տեղական հրատարակությանն ավելացվեց միայն մի քանի բառ տեղական խնդիրների մասին, և հրատարակվեց ռուսերեն, վորպեսզի հետագայում վրացերեն և հայերեն հրատարակվեր: Բայց մինչև հայերենի տպագրությունը, տողերիս գրողը հավաքում եր բանվորներին և կարդում ձեռագիրը մի քանի անգամ և տարբեր տեղերում: 1915 թվի օգոստոսի 15-ին արդեն պատրաստ եր թռուցիկի ռուսերեն հրատարակությունը: Թռուցիկը տպագրվել եր, ինչպես գիտենք, մեր տպարանում, վորը գտնվում եր Գանձակի մոտ Կորինապատ գյուղում՝ Կավբյուրոյի անունից: Բայց ժանդարմերիան դեզորիենտացիայի յենթարկելու նպատակով, նախ տարածեցինք Թիֆլիսում, Բաթումում, Քութայիսում և ապա Բաքվում ու Գանձակում: Ժանդարմերիան լիուլի եր իր վորսկան շներով վորոնում տպարանը Թիֆլիսում: Նրան հայտաբերել չեր հաջողվելու նաև հետագայում, վորովհետև տպարանի հետ կապված և նրա տեղն իմացողները ամենավըստահելի, զգույշ և սահմանափակ թվով ընկերներ եյին:

Թռուցիկը հրապարակ յեկավ այն ժամանակ, յերբ արդեն ցարական բանակը գերմանական 4000 թնդանոթների «կրակե ավելի» հարվածների տակ, մեծ զոհերով մաքրեց Գալիցիայի Պերեմիշլ և Լվով քաղաքները: Հենց այդ ժամանակ ել խոսվում եր ցարական պալատականների մեջ բուն դրած գերմանական փողով ծախված մարդկանց մասին, վորոնք ռուսական զինվորի արյունը ծախում եյին ինչպես մի փտած միս:

Մեր թռուցիկի գլխավոր առարկան պատերազմի ու այդ դավաճանություններն եյին: Պետք եր լայն կերպով տարածել այն բանվորների, զինվորների մեջ, վորոնց ուղղված եր կոչը, իմպերիալիստական պատերազմը քաղաքականի վերածելու: Իմ աշխատած «Ունիոն» արհեստա-

Россійская Соціалъ-Демократическая Рабочая Партія

Пролетаріи всѣхъ странъ соединяйтесь!

Товарищи рабочіе и солдаты!

Преступленіе русскаго правительства раскрыто. Одной рукой оно бросило перчатку правительствамъ—Германіи и Австріи, другой—готовило измѣну родному народу. Преслѣдуя интересы буржуазіи и помѣщиковъ, ища новыхъ рынковъ сбыта, оно втянулось въ кровавую бойню всеевропейской войны. За спиной народа правительства Германіи, Австріи, Франціи и Россіи готовили рѣзню народовъ, взаимное истребленіе пролетаріата всего міра, а теперь... теперь ведутъ войну „въ защиту угнетенныхъ національностей". Сами эксплоатируя и обирая свой народъ, они собираются освобождать другихъ, не спрашивая ихъ—желаютъ-ли быть ими освобожденными. Правительство Россіи тоже ведетъ „освободительную войну". Преслѣдуя все живое въ странѣ, гноя сотни тысячъ лучшихъ сыновъ пролетаріата въ ссылкѣ и на каторгѣ, оно освобождаетъ подъяремные народы Австріи. Преслѣдуя евреевъ и армянъ, уничтожая остатки свободъ въ Финляндіи, оно на штыкахъ войскъ несетъ освобожденіе изъ подъ ига нѣмцевъ, а въ то же время тюрьмы переполнены дѣятелями рабочаго движенія и русскій пролетаріатъ стонетъ въ клещахъ эксплоатаціи и безправія, а въ то же время разгромлены всѣ свободныя учрежденія Галиціи, закрытъ ея сеймъ, уничтожено земское и городское самоуправленія и вмѣсто нихъ насажено правленіе охранки, жандармовъ, погромщиковъ и насильниковъ. Правительство говоритъ объ освобожденіи подъяремныхъ народовъ, а въ то же время своему народу, своей арміи, наноситъ ударъ въ спину. Товарищи, въ военномъ министерствѣ свила себѣ прочное гнѣздо измѣна.. Высшіе чиновники и высшая знать за рубли продавали кровь народа. Ужасна война, когда тысячи и милліоны пролетаріевъ проливаютъ свою кровь за чуждые интересы буржуазіи, юнкеровъ, объединенныхъ дворянъ во славу золотого мѣшка, но еще во сто кратъ ужаснѣе, когда солдатъ продаютъ оптомъ и въ розницу, когда торгуютъ кровью сыновъ Россіи, какъ мясомъ и дровами. Пролетаріатъ и крестьянство выслали милліоны своихъ сыновъ, отцовъ и кормильцевъ на поле брани, чтобы нажились Сухомлиновы, Мясоѣдовы, Строгановы... Но не въ нихъ дѣло.. А дѣло въ системѣ, гдѣ страной управляетъ кучка насильниковъ, палачей—вспомните, товарищи, знаменитыя слова Макарова „Такъ было, такъ и будетъ". „Когда настъ спроситъ солдатъ-герой, вернувшійся съ войны,—гдѣ люди, желавшіе нанести намъ ударъ въ спину", говорилъ прокуроръ на судѣ надъ нашими товарищами соц.-демократическими депутатами, мы имъ отвѣтимъ „Ихъ нѣтъ среди насъ". Какой ироніей звучатъ эти слова!.. Дѣло Мясоѣдовъ показало, гдѣ нужно ихъ искать. Нѣтъ измѣнниковъ среди русскаго народа, нѣтъ желающихъ нанести ударъ солдатамъ въ спину, нѣтъ желающихъ проливать кровь братьевъ—пролетаріевъ Германіи и Австріи.. Такихъ нѣтъ въ средѣ русскаго народа. Они тамъ, наверху, среди правительства, въ министерствѣ, въ блестящихъ золотомъ салонахъ. Вотъ имена этой блестящей компаніи: полковникъ Мясоѣдовъ, бывшій начальникъ жандармской охраны на прусской границѣ, полковникъ Спиридоновичъ, нач. личной охраны государя, баронъ Остенъ-Сакенъ, бывшій редакторъ „Вѣстника Полиціи", ген. Фредериксъ, братъ министра двора, баронъ Карнусъ, вращающійся въ придворныхъ кругахъ, чиновъ Болгарскаго Посольства и 40 офицеровъ Генеральнаго штаба. Въ отвѣтъ на это неслыханное преступленіе правительства должень раздаться кличъ народа: „На всенародный судъ палачи и измѣнники, правительству предателей и измѣнниковъ нѣтъ вѣры народной, правительству Россіи, создавшему войну-бойню и продающему солдатъ, нѣтъ прощенія, нѣтъ милости"... Холопы и приспѣшники кроваваго тирана недовольны, что разоблачена шайка предателей—они говорятъ, что такимъ образомъ умалится военная мощь Россіи, что извѣстіе объ измѣнѣ верховъ правительсва плохо отзовется въ войскахъ.. лучше пускай люди умираютъ, не зная, что ихъ предавали, что за измѣны получены нѣмецкія марки и австрійскія кроны. Пусть буржуазія имъ вѣритъ, пусть стремится къ единенію съ Мясоѣдовыми и компаней. Пролетаріатъ знаетъ свое дѣло. Онъ его сдѣлаетъ, а дѣло это великое освобожденіе народа изъ подъ власти палачей и убійцъ. Отвѣтомъ на измѣну Мясоѣдова, на новое преступленіе въ безконечномъ рядѣ преступленій, совершенныхъ уже раньше правительствомъ, будетъ усиленіе борьбы подъ старымъ испытаннымъ знаменемъ пролетаріата. Кровавому бреду и ужасамъ войны необходимо положить конецъ, и только международному пролетаріату подъ силу это великое дѣло, только онъ прекратитъ кровавую бойню въ Великую Международную Битву народа и пролетаріата съ правительствами эксплоататоровъ-убійцъ. Въ отвѣтъ на гнусную измѣну русскаго правительства, русскій пролетаріатъ провозгласитъ старые революціонные лозунги и подъ ними пойдетъ на новый бой съ правительствомъ палачей и предателей.

Долой царскую монархію!

Долой войну!

Да здравствуетъ революція!

Да здравствуетъ Р. С.-Д. Р. П.

Да здравствуетъ соціализмъ!

Кавказское Бюро Р. С.-Д. Р. П.

Типографія Бюро. № 1. Отпечатано 20,200 экз.

Բոլշևիկների թռուցիկը

նոցում ունեյինք յերկու կուսակցական լոուցիններ՝ Գեղամ և Սարգիս, վորոնց ազգանունները չեմ հիշում: Այս յերկու ընկերների միջոցով արդեն կազմակերպել եյինք զինվորական բջիջ, վորոնք ամենալայն աջակցություն ցույց տվին թռուցիկը զինվորների մեջ տարածելու գործին: Վերոհիշյալ ընկերների հետ փոքրիկ խորհրդակցությամբ վճռվեց թռուցիկը վոչ միայն լայն կերպով տարածել բանվորների և առանձնապես զինվորների մեջ, այլև փակցնել քաղաքի գլխավոր փողոցների և զորանոցների ու լազարեթների պատերին: Պատերազմի ամենատաք ոբերին, յերբ ամեն քայլափոխում վխտում եյին պահնորդական բաժանմունքի և վոստիկանական լրտեսները, մեր այդ վճիռը չափազանց հանդուգն քայլ եր: Մենք այդ լավ գիտեյինք, բայց վճռել եյինք վոչ մի բանի առաջ կանգ չառնել և թռուցիկը հասցնել բուն նպատակին: Մեր տարածած թռուցիկը հետևյալ բովանդակությունն ուներ:

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹ.

Պրոլետարներ, բոլոր յերկրների, միացեք.

«Ընկերներ բանվորներ և զինվորներ.—

«Ընկերներ բանվորներ և զինվորներ.— կառավարության հանցագործությունը մերկացված ե: Նա մի ձեռքով «Ռուսական կառավարության հանցագործությունը մերկացված ե: Նա մի ձեռքով մյուսով ձեռնոց նետեց Գերմանիայի, Ավստրիայի և ուրիշ կառավարություններին, մյուսով պատրաստեց դավաճանություն իր հարազատ ժողովրդին: Հետապնդելով բուրժուազիայի և կալվածատիրության շահերը, վորոնելով սպառման նոր շուկաներ, նա խցկվեց համայեվրոպական արյունոտ պատերազմի մեջ: Ժողովրդի թիկունքում՝ Գերմանիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները պատրաստեցին ժողովուրդների ջարդ, ամբողջ պրոլետարիատի փոխադարձ վոչնչացում, իսկ այժմ... այժմ պատերազմ են վարում «ճնշված ազգությունների պաշտպանության համար»: Շահագործելով և թալանելով իրենց ժողովրդին, նրանք պատրաստվում են ազատագրել ուրիշներին, առանց հարցնելու վերջիններին, թե ցականո՞ւմ են ազատագրվել իրենց ձեռքով: Ռուսական կառավարությունը նույնպես «ազատագրական պատերազմ» ե վարում: Հալածելով այն ամենն, ինչ վոր կենդանի յե յերկրում, քշելով աքսորի և տաժանակիր աշխատանքի՝ նա ազատագրում ե Ավստրիայի լծի տակ գտնվող ժողովուրդներին: Հալածելով հրեաներին ու հայերին, վոչնչացնելով Ֆինլանդիայի ազատության մնացորդները, նա իր զորքի սվիններով ազատություն ե տանում Գերմանիայի լծի տակ գտնվողներին: Իսկ նույն այդ ժամանակ բանտերը լցված են բանվորական շարժման գործիչներով, և ռուսական պրոլետարիատը տնքում ե շահագործման և իրավազրկության ճնշիչի տակ, նույն այդ ժամանակ ջարդուփշուր են արված Գալիցիայի բոլոր ազատ հիմնարկները, փակված ե նրա Սեյմը, վոչնչացված ե գյուղի և քաղաքի ինքնավարությունը և նրանց տեղ նստեցրել են ախրանկայի, ժանդարմների, ջարդարարների և բռնակալների վարչություններ: Կառավարությունը խոսում ե լծի տակ գտնվող ժողովուրդների ազատագրության մասին, իսկ նույն այդ ժամանակ իր ժողովրդին, իր բանակին խփում ե թիկունքից: Ընկերներ, զինվորական մինիստրության մեջ ամուր բույն ե դրել դավաճանությունը... Բարձրագույն չինովնիկները, բարձրագույն ազնվականները ժողովրդի արյունը ծախում են մի ռուբլով: Պատերազմը սոսկալի յե, յերբ հազարավոր և միլիոնավոր պրոլետարներ իենց արյունն են թափում

ուրիշի շահերի համար, բուրժուազիայի, յունկերների, ազնվականների՝ հանուն փոսկու պարկի, բայց դեռ հարյուր աստիճան ավելի սոսկալի յե, յերբ զորքը ծախում են պես միս կամ փայտ: Պրոլետարիատն ու գյուղացիությունը միլիոններով արյան դաշտ մեծաքանակ և մի առ մի, յերբ սակարկում են Ռուսաստանի զավակների արյունը, ինչ-ուղարկեցին իրենց զավակներին, հայրերին ու կերակրողներին, վորպեսզի հարստանան Սուխոմլինովները, Մյասոյեդովները, Ստրոգանովները... Սակայն գործի եյությունն այդ չէ, այլ այն, այն սիստեմը, վոր յերկիրը կառավարում են մի խումբ բըռնակալներ, վոճրագործներ: Ընկերներ, հիշեցեք Մակարովի հայտնի խոսքերը. «Այդպես յեղել է, այդպես էլ կլինի»: «Յերբ մեզ հարցնի պատերազմից վերադարձած զինվոր հերոսը, թե ո՞ւր են այն մարդիկ, վորոնք ցանկանում եյին Ֆինլանդիայից հարված հասցնել»—ասում եր դատախազը Պետական Դումայի մեր սոցիալ-դեմոկրատ ընկերներին, «մենք նրանց կպատասխանենք նրանք մեր մեջ չեն»: Ի՞նչպիսի հեգնանք է հնչում այդ խոսքերում... Մյասոյեդովի գործը ցույց տվեց, թե նրանց վորտեղ պետք է վորոնել: Ռուսաստանի ժողովրդի մեջ չկան դավաճաններ, չկան զինվորների թիկունքին հարվածել ցանկացողներ, չկան ցանկացողներ՝ թափելու Գերմանիայի և Ավստրիայի պրոլետար յեղբայրների արյունը... Ռուսաստանի ժողովրդի մեջ չկան այդպիսիք: Նրանք այնտեղ, վերևումն են, կառավարության մեջ, մինիստրության վոսկով փայլող սալոններում: Ահա այդ փայլուն կոմպանիայից առանձին անուններ՝— պոլկովնիկ Մյասեդով, պրուսական սահմանի ժանդարմական պահնորդական բաժնի պետ պոլկովնիկ Սպիրիդոնովիչ, կայսերական անձնական պահպանության պետ բարոն Ռուստեն-Սադեն, «Վեստնիկ պոլիցիի»-ի նախկին խմբագիր գեներալ Ֆրեդերիկս, պալատական մինիստրի յեղբայր բարոն Կուրնաս, վորը թրև եր գալիս բուլղարական դեսպանության բարձրաստիճան պալատականների շրջանում, և գլխավոր շտաբի քառասուն օֆիցերները: Կառավարության այդ չլսված հանցագործություններին վորպես պատասխան կհնչի ժողովրդի ձայնը՝ «Համաժողովրդական դատի տալ վոճրագործներին ու դավաճաններին, չկա հավատ լեպի մատնիչների և դավաճանների կառավարությանը հավատ չկա դեպի Ռուսաստանի այն կառավարությունը, վորը ստեղծեց սպանդանոց-պատերազմը. և զինվորների արյունը ծախողների վերաբերմամբ չկա ներում, չկա խղճահարություն»: Արյունոտ բռնակալի ստրուկներն ու կամակատարները դժգոհ են, վոր մերկացված է դավաճանների ավազակախումբը: Նրանք ասում են, վոր այդպիսով կնվազի Ռուսաստանի պատերազմական հզորությունը, վոր կառավարության վերին շերտի դավաճանության լուրը վատ արձագանք կտա զորքի մեջ... Ավելի լավ է թող մեռնեն մարդիկ, առանց իմանալու, վոր մատնեցին իրենց, վոր դավաճանության համար ստացվել եյին գերմանական մարկեր և կրոններ... Թող բուրժուազիան հավատա նրան, թող նա ձգտի միանալ Մյասոեդովի և նրա կոմպանիայի հետ: Պրոլետարիատը գիտե իր գործը: Նա կկատարի այդ գործը, իսկ այդ՝ վոճրագործների իշխանությունից ժողովրդի ազատագրության մեծ գործն է: Մյասոեդովի դավաճանության պատասխանը, նոր դավաճանություններին և մի շարք դավաճանություններ վորոնք արդեն վաղուց են գործված կառավարության կողմից, նրանց պատասխանը կլինի

ուժեղացված պայքար պրոլետարիատի հին փորձված դրոշակի տակ: Անհրաժեշտ է վերջ տալ արյունարբու հրեշին և պատերազմի սարսափներին, և այդ մեծ գործը կարող է կատարել միջազգային պրոլետարիատի ուժը: Միայն նա յե, վոր արյունոտ սպանդանոցը կվերածվի ժողովրդի և պրոլետարիատի միջազգային մեծ ճակատամարտի, ընդդեմ շահագործող և վոճրագործ կառավարությունների: Ռուսաստանի պրոլետարիատը հայտարարում է իր հեղափոխական հին լոզունգները և նրանց տակ գնում է կռվի՝ վոճրագործների և մարդասպանների կառավարության դեմ:

«Կորչի ցարական միահեծանությունը:

«Կորչի պատերազմը:

«Կեցցե՛ հեղափոխությունը:

«Կեցցե՛ ՌՍԴԲԿ:

«Կեցցե՛ սոցիալիզմը:

«ՌՍԴԲԿ ԿՈՎԿԱՍԻ ԲՅՈՒՐՈ»:

«Բյուրոյի տպարան, № 1, տպագրված է 20.000 որինակ.

Սույն Թռուցիկի տարածման նախօրյակին, յերեկոյան ժամը 7—8-ին, Թիֆլիսի Գալավինսկի փողոցով անցնում եյինք Բորյանը, Գևորգյանը, Սոլովյան Հարությունը և տողերիս գրողը՝ Գարագաշը: Գևորգյանը, վոր լավ եր ճանաչում ժանդարմական շպիկներին՝ ասաց

— Տղերք, «քեռիները» (շպիկները) հետևում են, զգուշացեք:

— Ինչպես յերևում է, դրանք մեր գլուխն ուտելու յեն այսոր յես նկատեցի դրանցից յերկսին, իմ բնակարանից դուրս գալիս, մեր տան առաջ—ասացի յես:

— Պետք է զգույշ լինել, տունը «մաքուր» պահել, Թռուցիկ և այլն չպահել: Իսկ ձերբակալվելու դեպքում՝ վոչ մի ավելորդ բանի մասին չխոսել, այլ «չգիտեմ, յես չեմ ճանաչում, չեմ տեսել» և այլն: Փորձը ցույց է տվել, վոր ավելորդ բաներ խոսողները հենց իրենց խոսքերով մատնել են իրենց կամ ընկերներին՝ առանց այդ ցանկանալու,— ասաց Բորյանը:

Մինչև մեր Յերևանյան հրապարակ հասնելը, անսպասելի կերպով ճանապարհը կտրեց Ասատուր Կախոյանը, վորը սկսեց խոսել իրեն կասկածի տակ առնելու մասին: Մենք նրան մի քանի հանգստացնող խոսքերով շոյեցինք:

— Ո՞վ է քեզ վրա կասկածողը, և ինչ միամիտ բաներ ես խոսում: Թշնամու խոսքեր են, մի հավատա, ցանկանում են իրար հետ կռվեցնել,— ասացի յես:

— Ասատուր, ախպեր պետք է ասես ո՞վ և ի՞նչ հիման վրա յե կասկածել քեզ վրա, և ի՞նչ դատի մասին խոսք կարող է լինել, յերբ մեղադրող չկա,— ավելացրեց Բորյանը:

— Վաղ յեկեք, տղերք, հավաս չկա այլևս աշխատելու, հանգստանանք, ո՞վ ցանկություն ունի ձերբակալվելու: Շատ էլ լավ են անում,

վոր տղերքն այլևս չեն հավաքվում: Ինչ վոր աշխատեցինք, հերիք է,— ասաց Գևորգյանն Աստուրին:

Հասանք Յերեվանյան հրապարակ: Մեզ մոտեցան Յեսայան Խաչիկն ու Անահիտը, վորոնց մոտենալով՝ յես ասացի

— Զգույշ, շպիկները հետևում են մեզ, ավելի լավ է ցրվենք:

— Մի բան, վոր այլևս աշխատանք չկա, ինչո՞ւ իզուր տեղը շպիկների կասկածանքի առարկան դառնանք, ավելի լավ է ցրվենք ու գնանք հանգստանալու, հոգնած ենք,— ասաց Բորյանը և դառնալով ինձ՝ ավելացրեց.

— Տավարշ, գալի՞ս ես դեպի Վարանցովի կամուրջը:

— Այո, գալիս եմ, գնանք,— և «ցտեսություն» ասելով՝ հեռացանք Յերեվանյան հրապարակից:

— Բագրատ, դու գիտե՞ս ինչ վճռեցինք մենք այսոր:

— Ո՞վքեր և ինչի՞ մասին է խոսքը:

— Ես մեր յերկու կաշեգործ ընկերներ Գեղամն ու Սարգիսը և նոր կազմված զինվորական բջիջի յերկու անդամների խորհրդակցությունը Թռուցիկը տարածելու մասին՝ վճռեց տարածել գլխավորապես բանվորական շրջաններում, և առանձին ուշադրություն դարձնել, վոր կազարմաններում և լազարեթներում լավ տարածվի և ..և փակցվի պատերին... Յես արդեն նախապատրաստական աշխատանքներ կատարել եմ, և ժամի 11—12-ին պիտի ստուգեմ, թե ճշտությամբ կատարել ու պատերին փակցրե՞լ են թե վոչ, այն տեղերում, վորտեղ պիտի փակցվեյին Թռուցիկները:

— Շատ լավ, բայց զգույշ յեղեք, անտեղի զոհեր չտաք. պետք է խնայել ուժերը, զգույշ, զգույշ,— ասաց Բորյանն ու հրաժեշտ տալով հեռացավ:

ՅԵՐԿՐՈՐԴ ՊՐԱՎԱԼԸ

1915 թվի օգոստոսի 17-ի գիշերն եր, յերբ տանից դուրս յեկա ստուգելու, թե մեր Թռուցիկը պատերին փակցվա՞ծ է թե վոչ: Դռնապանը, վոր տրտնջալով բաց արեց դուռը ինձ դուրս թողնելու՝ ավելացրեց.

— Այ մարդ, արդեն ժամի 12-ն է, այսպես ուշ վոր գնում ես, հապա յե՞րբ կվերադառնաս: Շուտ արի, ապա թե վոչ յես քնելու յեմ գնում, իսկ յեթե քնեցի՝ վորչափ ուզում ես զանգահարի՝ յես մեռելի պես քնելու յեմ, դուրսը կմնաս... Հետո մոռացա ասելու, վոր այսոր յեկան տան գիրքը պահանջեցին և յերբ քո անունը կարդացին՝ հարցրին թե ո՞ւր է քո բնակարանը: Ի՞նչ կա, ինչո՞ւ յեն հարցնում, խոմ պասպորթդ դուզան է, վախելու բան չունես:

— Պասպորթ էլ ունեմ և վոչ մի վախելու բան էլ չունեմ: Թող հարցնեն, յես պարսկահպատակ մարդ եմ, մեկ էլ տեսար՝ կհավաքեմ իրերս ու կերթամ Պարսկաստան,— ասացի՝ նրանից իմ շփոթությունը ծածկելու համար: Բայց յես հասկացա, վոր այդ բոլորը պետք է կապված լինեյին Թռուցիկի հետ:

Ստուգելուց պարզվեց, վոր մեր ընկերներն իրենց հանձնարարությունը կատարել եյին ճշտությամբ: Թռուցիկներ փակցված եյին հետևյալ փողոցների պատերին. Գալավինսկի, Միքաելյան, Յելիզավետինսկայա, Վարանցով, Բելգիյսկայա, Վերայի վերեյք և այլն:

Փողոցներում նկատելի յեր ինչ վոր իրարանցում պոլիցիականների միջև: Ինչպես յերևում եր՝ ստացված եյին շատ կարգադրություններ, և նրանք գնում եյին ինչ վոր տեղ: Յես քայլերս արագացրի, և համոզված, վոր տարածումը կատարված եր փայլուն կերպով՝ ճանապարհս փոխեցի և խուլ փողոցներով վերադարձա տուն: Բայց մտածում եյի, թե ինչ անփորձ մարդիկ են մեր տղերքը, ինչո՞ւ իմ ապրած փողոցում և նրա մոտերքը Թռուցիկներ փակցնել, չէ՞ վոր այդ իմ վրա կասկածելու առիթ կտար ժանդարմերիային...

Ժամի մեկի մոտ հասա տուն, յերկար ժամանակ զանգահարեցի, վերջապես դուռը բացվեց և յես ներս մտա:

— Ախպեր, չի կարելի այսպես չարչարել մարդկանց, ախար յես խնդրեցի, վոր շուտով վերադառնայիր: Այ մարդ, ի՞նչ է պատահել, դու ուշ ես տուն գալիս, նորից յերկու մարդ յեկան քեզ հարցրին...

— Ի՞նչպիսի մարդիկ եյին:

— Բանվորներ պիտի ըլեյին:

Համոզված, վոր յեկողները Թռուցիկը պատերին փակցնող մեր Սարգիսն ու Գեղամը կլինեյին, վորոնք, ըստ յերևույթին, յեկել եյին իրենց կատարած աշխատանքի մասին իրազեկ դարձնելու՝ հանգիստ խղճով վեր բարձրացա և իմ չարդախի սենյակում անկողին մտա: Բայց չկարողացա հանգիստ քնել, ամեն մի թրխկոցից իսկույն վեր եյի թռչում, և կարծում, թե ժանդարմները յեկան խուզարկելու:

Առավոտյան շատ վաղ, անքնությունից ջարդվածի պես, վեր կացա և սենյակիս բոլոր վտանգավոր թղթերը նորից ստուգելով՝ սենյակից դուրս, չարդախի մեջ պահեցի: Իսկ Թռուցիկի հայերեն թարգմանությունը, վոր կարդացել եյի բանվորների մեջ՝ պահել եյի պատից դուրս քաշված մի աղյուսի բացվածքում, իսկ աղյուսը նորից ամրացրել, այնպես վոր միայն պատը քանդելուց հետո կարելի կլիներ գտնել Թռուցիկի հայերեն ձեռագիրը: Այնուհետև, գիշերը խուզարկության չենթարկվելով, յենթադրելով թե մինչև գիշեր դժվար թե խուզարկվեմ կամ ձերբակալվեմ՝ վճռեցի կոմիտեյի կնիքը կրող գրությունը՝ տպարանի տառերի արժեքը վճարելու ստացականը՝ փոխադրել քրոջս տունը, վորը

խուզարկությունից բոլորովին ապահով եր: Բացի դրանից, բնակարանից դուրս թաքցրած թռուցիկներից մի քանի հատ մանր ծալած վերցրի և դուրս յեկա փողոց՝ «Բնավորության դաստիարակությունը» իտալերենից թարգմանած գիրքը ձեռիս:

Տանից դուրս գալով՝ պետք է թեքվեյի հարևան փողոցը, և ահա ճանապարհս կտրեց մի անծանոթ անձնավորություն և սուլեց, վորից հետո իսկույն վոստիկաններ մոտեցան դեպի ինձ: Անծանոթ մարդը հրամայեց՝ «տարեք»: Իմ հարցին թե ո՞ւր և ինչո՞ւ՝ պատասխանեցին.

— Վոստիկանատուն մի փոքր գործով, և շուտով կվերադառնաս:

— Շատ հավանական է, վոր կարիք կլինի անցագրի, ուստի թույլ տվեք բարձրանալ և անցագիրս վերցնել:

— Վոչ, գնանք, շուտով կվերադառնանք:

— Այդ դեպքում մի րոպեյով գնամ և դռնապանին ասեմ, թե ուր եմ գնում, վորպեսզի չփորոնեն ինձ:

— Չի կարելի, պետք է իսկույն գնանք,— պնդում եր վոստիկանը:

Թե վոստիկանը, թե յես անկեղծ չեյինք, միմյանց խաբում եյինք գիտակցաբար: Յես ցանկանում եյի մի կերպ տուն մտնել, վորպեսզի ազատվեյի գրպանիս թռուցիկներից և կոմիտեյի կնիքը կրող ապարանական տառերի սառցակալից: Իսկ վոստիկանը կասկածում եր, թե ինչ վոր մի ուրիշ նպատակով եյի ցանկանում տուն ընկնել: Նկատելով նրա կասկածը՝ յես մտա վոստիկանի թեր ասացի.

— Լավ, գնանք, բայց ի՞նչ կարիք կա յերկուսի, թող ձեզանից մեկը գնա, իսկ մենք ահա այսպես կգնանք, տեսնենք ինչումն է բանը:

Յերկրորդ վոստիկանը նախ չեր համաձայնվում, բայց մի փոքր պաուզայից հետո՝ համաձայնվեց և ասաց.

— Նու, սատանան ձեզ հետ, գնացեք, իսկ յես կգամ մի քիչ հետո,— ու հեռացավ:

Այնուհետև յես ամբողջովին մտահոգված եյի գրպանիս թռուցիկներից ազատվելու խնդրով: Հետ նայելով՝ նկատեցի, վոր վոչ վոք չեր գալիս յետեվից խկույն ազատ ձեռքով թռուցիկները գրպանից հանեցի ու զգուշությամբ նետեցի ածուխով բեռնավորված մի սայլի տակ, վորի տերը հեռացել եր: Իսկ մյուս՝ կնիքով թղթից ազատվելու վոչ մի հնար չկար, ուստի պետք եր սպասել ավելի հարմար մոմենտի:

Հասանք քաղաքամասի վոստիկանատունը: Վոստիկանապետը վերին աստիճանի «քաղաքավարի» ձեվեր ընդունեց, աթոռ տվեց նստելու, ծխախոտ առաջարկեց ու ավելացրեց.

— Ի՞նչպես է ձեր ազգանունը, կարծեմ պարսկահպատակ Շավարշ Գարաղաշյա՞ն....

— Այո, խնդրեմ ասեք, ինչո՞ւ յեք կանչել ինձ «չտապով»: Նույնիսկ հնարավորություն չավին տանից անցագիրս վերցնելու:

Նա իսկույն զանգահարեց սեղանի զանգով և պատասխանի փոխարեն՝ ներս մտնողին ասաց.—

— Իսկույն խուզարկել և հետեվանքի մասին զեկուցել:

Ներս մտնողը տարավ ինձ մի այլ սենյակ, վորտեղ խուզարկեց և գրպանիս մեջ յեղածն ամբողջությամբ անգամ գոտիս ու փողկապս վերցրեց: Բայց անդրավարտիքիս յետեվի՝ տարձանակի գրպանին ձեռք չտվեց, վորտեղ պահված եր կոմիտեյի ապարանին վերաբերող դրությունը: Նա ինձ

Այնուհետև ինձ առաջնորդեցին վոստիկանապետի սենյակը:
հարցաքննեց և անկետայում նշանակեց իմ պատասխանները:

— Ո՞ւր եք պահել թռուցիկները:
— Ի՞նչ թռուցիկի մասին է խոսքը, յես վոչ մի բանից տեղյակ
չեմ:
— Տվեք ձեր բնակարանի բանալիները, իսկ դուք նստեցեք, մենք
կգտնենք թռուցիկները...
— Խնդրում եմ առանց իմ ներկայության բնակարանս չխուզարկել:
Յես պարսկահպատակ եմ, և վոչ վոք իրավունք չունի առանց մեր կոնսուլի ներկայացուցչի խուզարկել ինձ և ձերբակալել առանց նրա գիտության: Յես բողոքում եմ:
— Յեղեք անհոգ, վոչինչ չի կորչի, և ամեն ինչ արվում է օրինական սահմաններում,— պատասխանեց և բանալիները վերցնելով գնաց:
Յես խնդրեցի դուրս գնալ, վորպեսզի մտախ վտանգավոր թղթից ազատվեյի, բայց հսկողությունն այնպես խիստ եր, վոր անհնար եր նման գործողություն կատարել: Ուստի ամբողջովին մտածում եյի այդ մասին, թե ի՞նչպես ազատվեյի գրպանիս թղթից...
Բավական ուշ յեկան խուզարկուները. հարևան սենյակում այնքան բարձրաձայն եյին խոսում խուզարկության արդյունքի մասին, վոր լսվում եր իմ սենյակի դռան արանքից:
— Նու, ի՞նչ արդյունք:
— Գտնվեց թռուցիկի հայերեն ձեռագիրը, պատերազմական դրության հիման վրա այդպիսիներին «կապուտ»... Պետք է հսկողությունն ուժեղացնել, նայեցեք սենյակում նրա մոտ պահակ կա... Բայց միայն նա չէ, բռնված են նաև ուրիշները:
Յես մյուս սասծների վրա առանձին ուշադրություն չեյի դարձնում, վորքան ձեռագիր թռուցիկը գտնելու վրա: «Ուրեմն պատը քանդեցին, այլապես անկարելի յեր գտնել ձեռագիրը: Բայց չէ՞ վոր վոչ վոք չգիտեր նրա տեղը, ուրեմն պատերն անգամ աչքեր ունեն»— մտա-

ծում էյի յես, յերբ դուռը բացվեց և մի զույգ զաղանացած խայթող աչքեր վրաս նայեցին:

— Ո՞ւր է գնացել պարոն վոստիկանապետը:

Յես դեռևս չպատասխանած՝ նա հեռացավ, և մի քանի րոպեից յեկավ մի վոստիկան և տեղ բռնեց պատուհանի ու դռան արանքում: Ինչպես նկատելի յեր՝ դա յեկավ ինձ հսկելու, վոր չփախչեյի:

Նստած սպասում էյի, յերբ հանկարծ դուռը լայն բացվեց և ներս մտավ մեր կոմիտեյի անդամ սափրիչ Ալեքսեյ Ցեղուկիձեն, վորի տանը թաքնվել էր Կոտե Ցինցաձեն: Ալեքսեյն էր ներկել Կոտեյի չեկ մազերը: Մենք իսկույն հարմար մոմենտին հայացքներով իրար հանդիպեցինք և միմյանց հասկացրինք, թե «իրար չենք ճանաչում»... Այդ մոմենտին դրսից յեկան և վոստիկան Ֆեդյային, վոր ինձ հսկում էր՝ կանչեցին մի րոպեյով դուրս: Մենք հնարավորություն ունեցանք մի քանի խոսք փոխանակելու իրար հետ:

— Ուրիշ ո՞վ է ձերբակալվել, Ալեքսեյ:

— Չգիտեմ, բայց ձերբակալվածներ պետք է լինեն:

— Քննելիս իրար բոլորովին չենք ճանաչում, հասկացա՞ր — ասացի յես և այլևս վոչ մի խոսք արտասանելու հնարավորություն չունեցանք, վորովհետև ներս մտավ պրիստավի օգնականը:

Ցեղուկիձեյին յերկրորդ անգամ պատահեցի նույն որը, ժանդարմական վարչության տան մեջ, բայց այս անգամ վոչ մի խոսք չկարողացա ասել նրան, վորովհետև յերկուսս էլ խիստ հսկողության տակ էյինք:

Այն խոսակցությունը, թե իմ բնակարանից խուզարկության ժամանակ գտել են Թռուցիկի ձեռագիրը՝ իրականությանը չէր համապատասխանում: Նրանք գտել էյին հայերեն թերթերում տպագրելու համար մի թղթակցություն, յերկար թղթի վրա գրված և կարծել էյին, թե Թռուցիկի ձեռագիրն էր այն: Ժանդարմական արխիվից դուրս բերված փաստաթղթերից նկատելի յե, վոր ժանդարմական վարչության պետ Պաստրյուլինը խիստ դժգոհ էր ռայոնական վոստիկանության կատարած խուզարկությունից և ստիպված էր լինում խուզարկության կատարելու մի ամբողջ նոր հրահանգ ուղարկել քաղաքամասերի վոստիկանապետերին: Ահա թե ինչ է գրում Պաստրյուլինն այդ առթիվ

Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության գաղտնի գրության պատճեն՝ 1915 թ. օգոստոսի 24, № 2262, ուղղված Թիֆլիսի վոստիկանապետին:

«Սույն օգոստոսի 18-ին, իմ № 22061 օրդերս ուղարկեցի [illegible] վոստիկանական բաժանմունքին, խուզարկելու բռնված Շավարշ Գարագաշյանի բնակարանը Բելիզավետինսկայա փողոց, № 44: Խուզարկությունը, վոր կատարված էր օկոլոդոչնի նադզիրատել Սերեժայի կողմից, ծայր աստիճանի մակերեսային էր: Չնայած նրան, վոր խուզարկվող բնակարանը կազմված էր միայն մի սենյակից և չոր- [illegible] շինությունից, այնտեղից չէր վերցված օգոստոսի 22-ին, յերկրորդ խուզարկու-

թյամբ հայտաբերված հացեններով չորս թերթիկներ, վորոնք գործի համար էյական նշանակություն ունեն»:

«Հաղորդելով վերոհիշյալի մասին՝ ավելացնում եմ նաև, վոր խուզարկության ժամանակ անուշադրություն նկատվում էր նաև առաջ»:

«Իսկականը ստորագրեց գնդապետ Պաստրյուլին»:

Յեվ ապա Զդանովսկին տալիս է հատուկ մի հրահանգ, թե ինչպես պետք է խուզարկել հետագայում: Նա տալիս է հետևյալ հրահանգը նույն գրության կից:

ԳԱՂՏՆԻ

«Թիֆլիս քաղաքի պրիստավներին և հետախուզական բաժանմունքի պետին.

«Կից ուղարկելով Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության՝ պետի գրությունը, սույն գրության ցուցումներին վորպես լրացում, առաջարկում եմ խիստ կերպով ներշնչել պրիստավների օգնականներին և օկոլոդոչնի վերահսկիչներին, վորպեսզի ամեն տեսակի խուզարկություններին վերաբերվեն ամենալուրջ կերպով և առանձնապես ուշադրություն դարձնեն ժանդարմական վարչությունների պետերի [illegible] խուզարկություններին: Խուզարկությունը պետք է կատարել մանրազնին, վոչ թե ցրված, այլ խիստ սիստեմատիկաբար, անցնելով մի առարկայից մյուսին, ամեն մի շինության մեջ առանձին, վորը նույնպես պետք է զննել խիստ սիստեմատիկաբար: Զննված առարկաները և իրերը մանրակրկիտորեն պետք է առանձնացվեն չզննվածներից, վորպեսզի վոչ մի փոքր բան անգամ բաց չթողնվի առանց զննման: Առանձին ուշադրություն պետք է դարձվի ամենայն տեսակի գրականության՝ ձեռագիր և տպագրական գործերի վրա, նկատի առնելով, վոր խիստ հաճախ, առանձին մի քանի խոսք, նույնիսկ մի խոսք, վոր գրված է վորևէ տեղ, կարող է ծառայել վորպես մի ամբողջ հետախուզական բանալի: Գրքերում, վորչափ էլ նրանք անմեղ լինեն, ուշադրություն դարձնել ընդգծված խոսքերի վրա, առանձին տառերի և տոհասարակ ամեն տեսակի գրված նշանների վրա: Բնակարաններ զննելիս ուշադրություն դարձնել հատակների (տախտակամած), վառարանների, լուսամուտների տակ, պատի պահարանների վրա և այլն, նկատի առնելով, վոր նրանց մեջ կարող են լինել գաղտնի տեղեր ամեն տեսակի առարկաներ թաքցնելու համար և առանձնապես ամեն տեսակի գրագրություն և տպագրված գրվածքներ: Նույնը նկատի առնել նաև գրասեղան և այլ սեղաններ, կամոդներ, սնդուկներ, տուփեր և այլն զննելիս... վորտեղ դյուրությամբ կարող է տեղ ունենալ կրկնակի արգելակներ, նույնը նաև գրքերում և այլն: Ամեն տեսակի խուզարկության ժամանակ հնարավոր չափով պետք է ներկա լինեն պրիստավները:

«Նախազգուշացնում եմ, վոր ամեն տեսակի անուշադիր և մակերեսային խուզարկության կատարող հանցավորները պիտի յենթարկվեն խիստ պատասխանատվության:

«Վոստիկանապետի փոխարեն պոդպոլկովնիկ Զդանովսկի.

Գրասենյակի վարիչ (անընթեռնելի), սեղանապետ»

1915 թ. օգոստոսի 31.

(Տես Թիֆլիսի կենտր. արխիվ, պատմահեղափոխական բաժին, ֆոնդ 36. № 3186, գործ № 2936):

Վոստիկանատնից կառքով ինձ ուղարկեցին Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչություն: Ալեքսեյ Ցեղուկիձեյին ուղարկեցին առանձին, վորպեսզի իրար հետ չխոսեյինք: Ժանդարմական վարչության սենյակներից մեկում հեռախոսով ասում էյին հետևյալը.

— Այստեղ ձերբակալվածներ կան, առայժմ յերեք հոգի, իսկ մյուսները շուտով կբերվեն:

Այնուհետև նորից խուզարկեցին, բայց ո՛վ զարմանք, դարձյալ կոմիտեյի Թուղթը չհայտաբերվեց, վորից հետո անցան նկարելու և պանդամ ձևականությունների: Նկարեցին կանգնած, նստած, պրոֆիլ, չափեցին հասակս, նկարեցին մատներիս կաշու գծերը, և մի շարք հարցերով լցրին ինչ-վոր անկետա: Մի խոսքով, ցուցակագրեցին Փոտոգրաֆիայի, անտրոպոմետրիայի և դակտիլոսկոպիայի օգնությամբ, վորից ստացվեց ստորև բերված յերկու նկարները, վորը վերցված է ժանդարմական արխիվից:

Նկարի մի եջը հետևյալն է

Վերջացնելով այդ բոլորը, տարան մի սենյակ՝ հարցաքննելու: Սենյակում պատերը զարդարված եյին դիագրամներով, Ռուսաստանի քաղաքական կուսակցությունների զարգացման և անկման չափը բնորոշող տվյալներով: Դիագրամների վրա մեծ տառերով գրված եյին՝ «Սոցիալ-դեմոկրատներ», «Սոցիալիստ-հեղափոխականներ», «Ֆեդերալիստներ», «Անարխիստներ», «Նացիոնալ-դեմոկրատներ» և այլն, և այլն:

Հարցաքննության ժամանակ տվեցին խորամանկ և խաչաձև հարցեր, վորոնց խիստ կատեգորիկ ու ժխտողական պատասխան տվի՝

«չեմ ճանաչում», «չգիտեմ», «չեմ տեսել», «կապ չունեմ», «անծանոթ եմ» և այլն,—ահա պատասխաններ, վոր ստացավ ժանդարմական ռոտմիստրն ինձնից: Վոչ մի կանոնավոր պատասխան չստանալով՝ քննիչս սեղմեց էլեկտրական կոճակը և խցում կողքիս սենյակից դուրս յեկավ մի անձնավորություն, վորին դիմեց քննիչս.

— Անդրեյ Իվանիչ, ներեցեք, յես ձեզ չեյի ցանկանում, այլ Թարգմանչին, վորովհետև հարցաքննվողը հայտարարում է, վոր լեզու չգիտե և բոլոր հարցերին բացասական պատասխան է տալիս:

Լսելով այդ, նա շտապով հետ դարձավ, և մի հաստ կապոցով մեր



ժանդարմական նկարի յերկրորդ եջը

Թուղթիկները ձեռքին վերադառնալով, դրեց սեղանի վրա և հեգնական ժպիտը դեմքին՝ ավելացրեց.

— Իսկ սրանք ինչ բաներ են, դու չե՞ս տպել ու տարածել: Դու այսինչ-այնինչ ժողովին չե՞ս մասնակցել, դու սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների կոմիտեյի կոլեկտիվի անդամ չե՞ս:

— Վոչ, չգիտեմ, տեղյակ չեմ, ծանոթ չէ, ղրպարտություն է,— ասացի Թարգմանչին:

Քննիչս ու Թուղթիկներ բերողը գոռացին վրաս և վոտքերը գետին խփելով՝ ասացին.—

— Այդ մենք գիտենք կապացուցենք, բայց լավ կանես, վոր խոստովանես վաղորոք, և քո դրությունը թեթևացնես: Մենք շատ լավ գիտենք, վոր այդ գործերին ամենաակտիվ մասնակցություն ես ցույց տվել: Այդ մենք կապացուցենք: Ստորագրեցեք այս հարցաթերթիկը, վորից հետո կուղարկենք Թիֆլիսի համար 2՝ Մետեխի ամրոցը՝ մինչև դատարանը քննի և համապատասխան վճիռ կայացնի»:

Յես ստորագրեցի, բայց ամբողջովին պատկերացրի իմ բնակարանը, և նորից մտածում էի, թե ուրեմն պատը քանդեցին, ձեռագիր թռուցիկը հայտաբերեցին:

Բայց հարցաքննության ժամանակ ի՞նչ էր գրում քննիչը իր թղթի վրա՝ միայն ալլահը գիտեր, և միայն այժմ մենք հնարավորություն ունենք վոչնչացումից ազատված ժանդարմական արխիվի մի մասից իմանալ, վորը տալիս ենք փոքր կրճատումով:

ԳԱՂՏՆԻ

«Տեղեկանք սկսված գրագրության մասին.

«Պատերազմական դրության հայտարարված տեղերի կանոնի մասին 23-րդ հոդվածի կարգով:

«1. Գրագրության անունը— պարսկահպատակ Շավարշ Ոհաննեսի Գարագաշյանի քաղաքական բարեհուսության աստիճանը հաստատելու մասին.

«2. Գրագրության սկսվելու ժամանակը—25 օգոստոսի, 1915 թ.

3. Գրագրության սկսվելու տեղը—Թիֆլիս քաղաք.

«4. Ո՞վ է կատարում գրագրությունը—ժանդարմական հատուկ կորպուսի ռոտմիստր Ռոզալիոն Սոշալսկի

«5. Գրագրության սկսելու հիմքը—ագենտուրային տեղեկանքի համաձայն, հիշյալ անձնավորությունը պատկանելով ՌՍԴԲԿ, մտնում է Թիֆլիսի կոլեկտիվի կազմի մեջ (կոլեկտիվ—կոմիտե. Շ. Գ.), վորը բաց էր թողել թռուցիկ՝ հետևյալ վերնագրով—«Ընկերներ, բանվորներ և զինվորներ», ապա նաև հանգանակություն ու մարկաների տարածման կուսակցական անլեգալ տպարանի կահավորման օգտին ....»:

«Ստորագրություն. Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետ. գնդապետ Պաստրյուլին»:

Իսկ մի ուրիշ գրությամբ, ժանդարմերիան արձանագրում էր այն բոլոր իրերը, վորոնք գտնված էին իմ բնակարանում և կարող էին հիմք ծառայել իմ քաղաքական անբարեհուսությունն ապացուցելու համար:

Բոլոր ձևականությունների վերջացումից հետո, յերկու ժանդարմների և մի զինվորի հետ կառքով ինձ ուղարկեցին Մետեխի բանտը: Ժանդարմական վարչությունից դուրս գալու ժամանակ պատահեցի Ալեքսեյ Ցեղուկիձեյին, վորին կերակրվելու համար հիսուն կոպեկ տվին և ասացին՝ «առա, ինչ ուզում ես ուտել, թող գնան բերեն»:

Ճանապարհին լուռ, մտազբաղ, ամբողջովին մտածում էի Ալեքսու մասին, թե ինչո՞ւ նրան պահեցին և նույնիսկ կերակրվելու փող տվին, իսկ յես ուղարկվում եմ Մետեխ:

Հաջորդ առավոտ, յերբ մենք մենարաններից դուրս յեկանք զբոսանքի, տեսա Բորյանն ու Ցեսայան Խաչատուրին Բորյանն ասավ, վոր ձերբակալված է նաև Սոնյա Նարեկիշվիլին:

Վոր այս պրովալը նույնպես պրովոկատորների գործ էր՝ այդ մասին վոչ մի կասկած լինել չէր կարող: Այդ նոր պրովալի մանրամասնությունների մասին ահա թե ինչ է գրում ժանդարմական վարչության պետ Պաստրյուլինն իր զեկուցագրում, վորն ուղղված է փոխարքային և վոստիկանական դեպարտամենտին:

ԳԱՂՏՆԻ

№ 2252

22 օգոստոսի, 1915 թ.

«Թիֆլիսի ՍԴԲԿ բոլշևիկյան կազմակերպության ղեկավար Պրոկոֆիյ Ջափարիձեյի մայիսի 4-ի ձերբակալումից հետո (վորի մասին ներկայացված է սույն թվի մայիսի 9-ի № 1234 գրությամբ), այդ կազմակերպությունը քայքայվեց և մինչև սույն տարվա հուլիսի վերջը գործունեություն չէր ցույց տալիս: Հունիսի 29-ի յերեկոյան ժամը 9-ին, հայկական սեմինարիայի հետևի դաշտում տեղի ունեցավ բոլշևիկներից կազմված կոլեկտիվի ժողովը, վորը կազմակերպել էր վիրավոր զինվորների 38 համար քաղաքային լազարեթի ծառայող հայ «Բաղրատը», վորն ապրում էր հիշյալ սեմինարիայի շենքում:

«Այդ ժողովը ղեկավարում էր «Բաղրատը», իսկ կոլեկտիվի կազմի մեջ մտան հինգ հայեր, յերկու վրացի, վորոնցից ժողովում ներկա էին կոշկակար «Աստուր», «Աշոտ» և «Շավարշ», պարիկմախեր «Ալեքսեյ» և Սարաջևի կոնյակի գործարանի բանվոր Վլադիմիր Պավլով Սուխիշվիլի, բայց մասնակիցներից մեկի ինչ անձնավորություն լինելը պարզված չէր: Ժողովում խոսվում էր տպարանը կանոնավորելու համար միջոցներ ստեղծելու մասին և պարզվեց, վոր կազմակերպության տրամադրության տակ կա միայն փայտյա մի շրջանակ և տպարանական տառեր, վորով տպագրված էր մայիսմեկյան թռուցիկը:

«Հետագա քննումով պարզվեց, վոր կոլեկտիվի կազմի մեջ մտնում են կոշկակար «Շավարշ», ուսուցիչ Խաչատուր Ցեսայան և աղջիկ Սոֆիա Գերասիմովնա Նարեկիշվիլեվա:

«Մայիսի 16-ին ագենտուրային տեղեկանք ստացա այն մասին, վոր օգոստոսի 18-ին կոլեկտիվի անդամները արհեստանոցներում և գործարաններում ու այլ ձեռնարկներում կսկսեն տարածել կազմակերպության հրատարակած թռուցիկը պատերազմի դեմ, վոր օգոստոսի 17-ին, յերեկոյան թռուցիկը կբաժանվի կոլեկտիվի անդամների մեջ, վորոնք 18-ի առավոտյան կանցնեն տարածման գործին:

«Ստանալով առաջին տեղեկանքը կոլեկտիվի կազմի մասին, յես անցա նրա անդամների ով լինելը ստուգելուն, և պարզվեց, վոր «Բաղրատը» ապրում է այստեղ Ալեքսանդր Արտեմյեվ Արությունյանի անվան կեղծ անձնագրով, բայց իրականում՝ նա Գանձակի նահանգի Ղազախ գավառի Ներքին Ծամբարակ գյուղի բնակիչ Բաղրատ Արտեմյեվ Բորյանն է, վորին վոստիկանական դեպարտամենտը վորոնում էր 1913 թվի նոյեմբերի 15-ին, № 89416-ով (263 հոդ. 28200):

«Աստուրը հանդիսացավ վերոհիշյալ № 1234 տեղեկանքում հայտնված կոշկակար Մկրտիչ Ստեփանովիչ Կախոյանը: «Շավարշը» հանդիսացավ պարսկահպատակ հայ Շավարշ Գարագաշյանը, «Աշոտը» առայժմ ճշտորեն չի պարզված, իսկ պարիկմախեր «Ալեքսեյը» պարիկմախերի քարգահ Ալեքսանդր Պավլովիչ Ցեղուկիձեն:

«Բաղրատ» Բորյանին ճիշտ կերպով պարզել հաջողվեց միայն սույն թվի օգոստոսի 15-ին, և այս թվից էլ նա հսկողության տակ առնվեց, վորով օգոստոսի 16-ին նկատված էր, վոր մոտ ժամի 8-ին, յերեկոյան, Յերևանյան հրապարակում կազմակերպ-

ված էր Թռուցիկ ժողով։ Բորյանը քայլում էր հրապարակի մայթերով «Աստուրի» և
մի անհայտ ուսանողի հետ*) (նրա ով լինելը պարզվում է)։ Ցերեկ ժամվա ընթացքում
յերկու անկյուններում կանգնած եյին ուսուցիչ Ցեսայանն իր քրոջ և «Շավարշի» հետ,
ըստ յերևույթին հսկելու այն մասին, թե չկա՞ն արդյոք հետախուզողներ։ Մի քանի
անգամ նրանց մոտեցավ «Բագրատը» իր ընկերների հետ, փոխանակեց մի քանի խոսք
և ապա շարունակեց զբոսնել։ Գիշերվա մոտ 11 ժամին բոլոր հիշյալ անձինք ցրվեցին
իրենց տները։

«Հաջորդ օրը, օգոստոսի 17-ին, հաջողվեց պարզել «Շավարշի» բնակարանը, վորը
կազմակերպության գործերում մոտիկ ողնականն էր «Բագրատի»։ Օգոստոսի 18-ի ա-
ռավոտյան, նկատի առնելով վերոհիշյալ տեղեկանքը, թե կոլեկտիվի անդամները ցան-
կություն ունեն տարածելու Թռուցիկը, վորն արդեն քաղաքում յերևվաց աննշան քա-
նակով տների պատերին փակցվելով՝ յես խուզարկեցի Բորյանին, Սոնյա Նարեկլեվա-
յին, Շավարշ Գարագաշյանին, Խաչատուր Ցեսայանին և պարիկմախեր Ալեքսանդր Բե-
դուկիձեյին։

«Խուզարկության ժամանակ Բորյանի մոտ հայտնաբերված է փող հանգանակելու
համար տպագրված թերթիկ՝ հետևյալ վերնագրով. «Ընկերներ, նվիրեցեք ՌՍԴԲԿ կով
կասի Բյուրոյի անլեգալ տպարանին» և յերեք նամակ՝ հետևյալ բովանդակությամբ։
«1. Այդ մարդը յեկավ։ Այժմ անհրաժեշտ են իրեր։ Ինչպես նկատելի յե, առայժմ
տառ չկա։ Մնացած իրերը կարելի յե գնել, բայց բոլոր նյութերը չունենալու պատ-
բոլորը պետք է հավաքել այսոր-վաղը։ Ցես այսոր կտեսնեմ Լադոյին**)։ Ինձ պետք
է մոտ տասը փունտ ներկ։ Բոլոր լեզուներով տառերի կարիք կլինի յերեք փթի չափ։
Ուրեմն, ամեն մի լեզվով մեկական փութ։
«Վորովհետև մեր տրանսպորտնիկն այստեղ հարմար բնակարան չունի, ուստի այդ
բոլորը պետք է հավաքել այսոր-վաղը։ Ցես այսոր կտեսնեմ Լադոյին*), ինձ պետք
է իմանալ, թե վորի մոտ են ռուսերեն և հայերեն տառերը։ Սակայն վրացերեն տառեր
բերողներից մեկին յես տեսա. նա խոստացավ բերել, չգիտեմ թե յերբ։ Սույնը ներկա-
յացնողին հայտնեցեք, թե ռուսերեն և հայերեն տառերի համար ո՞ւմ և ո՞ւր դիմել։
Լազեյեվը դո՞ւրս յեկավ (ըստ յերևույթին խոսքը վերաբերում է Օհաննես Կարապետով
Լազյանին, վորին ձերբակալեցին մայիսի մեկին, Պրոկոֆիյ Ջափարիձեյի հետ)։ Ցեթե
դուրս յեկավ, հաղորդեցեք նրա հասցեն։ Բացի դրանից, կարիք կա 40 ռուբլու վոչ
պակաս փողի, վորովհետև պետք է ծախսել կոնսպիրատիվ բնակարան կահավորելու հա-
մար։ Շտապեցեք, վորովհետև ժամանակն ու պայմանները չեն սպասում։ Մանրամասն
նամակով հաղորդեցեք։ 11 օգոստոս»։
«2. Թանգագին ընկեր. յես ստացա յերեկուն ռուբլի և պարտքերը վճարեցի։ Այժմ
դուք պետք է ծանոթացնեք այն պարոնին, վորն ունի «իրեր»։ Սույն նամակը տվողի
հետ հայտնեցեք, թե ի՞նչպես և վո՞րտեղ ծանոթանալ նրա հետ։ Իմ կարծիքով, ավելի
լավ է այսոր յերեկոյան ժամի 10-ին Վարոյի***) մոտ։ Դուք այժմ հայտնեցեք, թե
այսոր այնտեղ լինելո՞ւ յեք, թե վոչ։
«3. Հարգելի ընկեր, ինչո՞ւ փողը չբերին, չե՞ վոր յես շատ խնդրեցի։ Իմ... մոտ
նստած է և խնդրում է։ Ցեթե հնարավոր կլինի՝ ուղարկեցեք նամակ բերողի հետ.
ձեզ հարգող Վարո»։

---

*) Ուսանողը Հարություն Սոլովյանն էր։
**) Լադոն՝ Լադո Սուխիշվիլին է։
***) «Վարո»—Ջափարիձեյի ամուսին Վարվառայի մասին է խոսքը, վոր այժմ
աշխատում է վորպես կուսակցական պատասխանատու աշխատող։

«Նարեկլևայի խուզարկելու ժամանակ հայտաբերված է նույնպիսի հանգանակու-
թյան թերթիկ տպարանի համար փող հանգանակելու, ինչպիսին կար Բորյանի մոտ։
Շավարշ Գարագաշյանի մոտ հայտաբերված է սոցիալ-դեմոկրատական հրատարակու-
թյունների գրադարան։ Գրքերի թվում 6 հատ մեկական օրինակ՝ հետևյալ արգելված
գրքույկները—1. Բոգդանով՝ Կարլ Մարքս, 2. Ֆ. Ենգելս՝ «Գյուղացիական հարցը
Ֆրանսիայում և Գերմանիայում»։ Մնացած անձանց մոտ հանցավոր վոչինչ չկար։
Նրանցից ձերբակալված են Բորյանը, Նարեկլիշվիլին, Գարագաշյանը և Ցեսայանը։
«Նկարագրվածի մասին զեկուցելով, ձերդ գերազանցություն, պատիվ ունեմ ավե-
լացնելու, վոր Թիֆլիսի մարզային դատարանի դատախազի համաձայնությամբ, Բոր-
յանի և Նարեկլիշվիլու նկատմամբ կկատարվի հետաքննություն, քրեական դատ. 1035
հոդվածով, իսկ մնացյալ անձանց վերաբերմամբ գրագրությունը պատերազմական
դրության կարգով։ Տպագրված կոչերի տեղի հետախուզումը շարունակվում է։
«Ավելված.—յերեք օրինակ կոչ, վորը տարածված էր օգոստոսի 18-ին և տեղե-
կանք Բորյանի, Նարեկլիշվիլու, Գարագաշյանի և Ցեսայանի մասին։
«Ստորագրեց գնդապետ Պաստրյուլին.

29 օգոստոսի, 1915 թ.
(Տես՝ Թիֆլիսի կենտրոնական արխիվ, պատմա-հեղափոխական բաժին, ֆոնդ 36,
№ 3186)։

ՄԵՏԵԽԻ ԱՄՐՈՑՈՒՄ

Ժանդարմական կառքը մեզ հասցրեց Մետեխի մռայլ ամրոցի պա-
տերին։ Ժանդարմներն առաջարկեցին ցած իջնել և հետևել իրենց։ Ցես
հնազանդվեցի։ Բացվեց բանտի դուռը, մենք ներս մտանք։ Բայց մտնե-
լուց առաջ բնազդով կանգ առա մի րոպե, և ապա գնացի մեքենայա-
բար, առանց նայելու, թե ուր եյի գնում վռտներս։
— Մտիր, կանգ մի առ, այստեղ քո ընկերներից կան, և դուցե նո-
րերն էլ բերվեն,—ասաց ինձ ուղեկցող մեծ բեխերով ու հաղթանդամ
ժանդարմներից մեկը՝ հեգնական ժպիտը դեմքին։
Այնուհետև իրար հետևից բացվեցին մի քանի դռներ՝ ապիտակա-
մորուս, բանալիների կապոցը ձեռներին վերակացուների ձեռքով։ Մենք
հասանք Մետեխի ամրոցի բակը, ապա մտանք բանտի գրասենյակը։ Ու-
ղեկից ժանդարմները ներկայացրին ինչ վոր գրություն։ Գործավարը
կարդալով՝ մի զննող հայացք ձգեց վրաս և հարցրեց.
— Շավարշ Գարագաշյա՞նց, պարսկահպատա՞կ,— և ապա սպասող
վերակացուներից մեկին դառնալով՝ ասաց.
— Խուզարկել և տանել «նոր չենք», № 17 մենարան-խուցը։
Ցես լսելով խուզարկելու կարգադրությունը՝ իսկույն սկսեցի շո-
րերս քանդել, տրտնջալով թե՝
— Ցերեք անգամ խուզարկեցին, թող սա յել չորրորդը լինի...
— Այո, ճիշտ է ասում կալանավորը. խուզարկված է մի քանի ան-
գամ, կարող եք անհոգ լինել, ասավ ժանդարմը՝ խուզարկողի կողմը
նայելով։
— Վոչինչ, ձևականություն է, պետք է անել,—պատասխանեց

խուզարկուն և կուրծքս ու գրպաններս վերևից շփելով, թողեց՝ համարելով խուզարկությունը վերջացած:

Ապա անկետային թերթիկի հարցերին պատասխանելուց և ստորագրելուց հետո, վերակացուն առաջնորդեց նախ պահեստը, վորտեղից խոտով լցված մինդար, բարձ ու ծածկոց ստանալուց հետո՝ ուղևորվեցինք «ադինոչկա»-մենարան № 17-ը:

Մտանք «նոր շինության» (այդ շինությունը նոր չէր, բայց այդպիսի անուն էր կրում) սրահը, վորտեղ մեզ դիմավորեց շինության վերակացուն:

— Ի՞նչ է, նոր հյո՞ւր է գալիս, և վո՞ր համարում տեղավորել,— հարցրեց իմ ուղեկցին:

— № 17-ը, ժի՛վո (արագ),— ասաց և գնաց ուղեկիցս:

Սրահի վերակացուն մոտեցավ № 17 մենարանին և ձեռքի կապույի բանալիով արագորեն բացեց դռան խոշոր կողպեքը, դուրս քաշեց դուռը և պատը կպցող յերկաթե հաստ ձողը և դուռ հրելով՝ բացեց

— Համեցեք, շնորհավորում եմ ձեր նոր բնակարանը: Բայց այստեղ ամեն ինչ ձրի յե,—ասաց նա՝ նույնպես հեգնական ժպիտը դեմքին:

Ներս մտա, դուռը փակվեց: Յերկաթե ձողը շառաչյունով գնաց իր բույնը, կողպեքը փակվեց և լռեց ամեն ինչ: Լսելի յեր միայն վերակացվի քայլերի միապաղաղ ձայնը, մաշո՛ղ, տաղտկալի՛:

Իմ № 17 մենարանն այնչափ փոքր էր, վոր հազիվ տեղավորվել էր մի կեղտոտ, փայտոջիլներով առատ ու ճրճռան փայտյա թախտ, նույնպիսի մի հասարակ խոհանոցի սեղան, վորից հետո մնում էր նեղ մի անցք քայլելու համար:

Սեղանի վրա դրված էր լայնաբերան և խորը կավե մի աման կերակրի համար, զինվորական փայտյա մի խոշոր դգալ, սևացած, ժանգոտած մի թեյաման: Պատից կախված էր նավթի մի փոքրիկ լամպ, իսկ հատակին՝ կեղտոտության մի եմալե աման: Յեթե դրա վրա ավելացնենք այն բազմաթիվ մկները, վոր անվերջ վազվզում եյին սենյակում՝ պատկերը պարզ կլինի:

Ահա այդ բոլորը կազմում էր իմ անվարձ բնակարանի կահավորումը:

Մենարանի լուսամուտը բավական բարձր էր և բոլորովին արգելված էր բարձրանալ և դուրս նայել կամ խոսել մեկի հետ: Վորևէ կարիքի դեպքում՝ պետք էր թակել դուռը, վորպեսզի վերակացուն գար և բանար դռան վրայի ապակեծածկ «փորտոչկան», վորը դրսից փականքով փակվում էր:

Ներս մտնելուս պես՝ իսկույն նստվեցի թախթիս վրա, և հոգեկան ու ֆիզիկական ծայրահեղ հոգնածությունից՝ իսկույն քուն մտա: Բա-

վական ուշ «փորտոչկան» բացվեց և վերակացվի ձայնն ազդարարեց·

— Վեր կենալ, ստուգման են գալիս, պատրաստ լինել:

Մի քիչ անց, յեկան բանտապետի ոգնականն ու հերթապահը, վորոնք փորտոչկայից ներս նայեցին, ինչ վոր մի թիվ ասելով համարեցին ու գնացին՝ բանալիներն իրենց հետ վերցնելով:

Առավոտյան ժամի վեցին մեզ արթնացրեց զանգի և վերակացվի ձայնը:

— Դին-դոն, դին-դո՛ն, վեր կենա՛լ, վեր կենա՛լ... և բացվեց ու փակվեց փորտոչկան:

Քիչ անց, բերվեց որվա «պայոկը»—հաց, մի կտոր շաքար, և ապա թեյամանս վերցրին ու տակառից յեռացած ջուր ածելով՝ վերադարձրին փորտոչկայից:

— Գրասենյակում յեթե փող ունես՝ ապա տուր կվիտանցիան, և ասա՝ ինչ ես ուզում, խանութից կբերեմ,—ասաց պարաշնիկը*), վորը գնորդի դեր էր կատարում:

— Առայժմ վոչինչ չեմ ցանկանում:

Փողի մասին խոսելիս՝ հանկարծ հիշեցի, վոր առաջնակի դրպանումս պահված էր տպարանին վերաբերող կոմիսեյի կնքված թուղթը և տառերի գնումից մնացած փողի մնացորդը: Այդ դրությունից ազատվելու մի քանի փորձերս անհաջող եյին անցնել և բաղդի բերմամբ այդ դրպանիս ձեռք չեյին տվել խուզարկուները: Ուստի, անմիջապես վոչընչացրի այդ թուղթը, վախենալով թե մի նոր խուզարկությամբ կհայտաբերվեր: Իսկ փողը հետո տվի պարաշնիկին, վորը դաղտնի կերպով գնումներ կատարեց, վորովհետև կալանավորների մոտ փող պահելն արգելված էր. փողը հանձնում եյին գրասենյակ, ստացվում էր անդորրագիր, վորով խանութից բաց կթողնեյին ինչ վոր անհրաժեշտ էր:

Քիչ անց, վերակացուն մենարանի դուռը բացեց և դուրս թողեց ինձ՝ «լվացվելու գնա» ասելով: Պետք էր անցնել մենարանների սրահով: Անցնելիս բազմաթիվ աչքեր փորտոչկաներից հառած նայում եյին դեպի ինձ, պարզելու թե նոր յեկող հյուրս ո՞վ պիտի լիներ:

Պարաշնիկը յեկավ ջուր վերցրեց և շշնջալով ասաց.—

— Դու քաղաքական ես, յես գիտեմ, ձերոնցից յերեկ ուրիշ յերկու նոր մարդիկ էլ բերին:

— Մի իմացիր ովքեր են և ազգանուններն ինձ ասա,—ասացի նրան, բայց հանկարծ ուշքի գալով՝ հիշեցի, վոր նա կարող էր ասածս հայտնել վերակացվին, վորից վատ հետևանք կստացվեր:

— Գլխիս վրա, շատ շուտով կհայտնեմ քեզ:

Կես ժամ անց, կամերայիս փորտոչկան բացվեց և պարաշնիկն ա-

*) Պարաշնիկ—կեղտոտություն թափող, և առհասարակ մաքրությանը հետևող:

— Դռների վրա գրված է—Բարյան, Իսայան:

Ազգանուններն աղավաղված եյին, ուստի գլխի չընկա, թե ովքեր պիտի լինեյին:

Կեսօրին մենարանների դռներն իրար յետևից և արագորեն բացվեցին և վերակացվի ձայնը ազդարարեց.

— Նա պրագուլկու» զբոսանքի:

Յես իսկույն դուրս նետվեցի մենարանից, և ո՛վ զարմանք, սրահում աչքերս հանդիպեցին Բորյանին և ապա Ցեսայանին: Վողջունեցինք իրար, սակայն մեզանից վոչ վոք ռիսկ չէր անում ցույց տալ, թե ծանոթներ եյինք, կասկածելով թե լրտեսներ լինեյին և հետևանքը վատ լիներ:

Վերակացուն ազդարարեց՝ «դույգ-դույգ, տառ՛ջ»: Բորյանն ինձ հետ զույգ կազմեց և ասաց.

— Շավարշ, բարև, ինչո՞ւ չես խոսում: Ամեն ինչ վերջացավ, ընկանք պետք է խոսել և մտածել միասին, թե ինչ անել հետագայում, քննության ժամանակ ինչպես վարվել...

— Բարև, Բագրատ, տեսնո՞ւմ ես, Խաչիկ Ցեսայանին էլ են բերել, հա, հա հա...

— Խորամանկություն է արված ժանդարմերիայի կողմից, վորպեսզի ծածկեն իսկական պրովոկատորների հետքերը: Ափսոս նա հեռացված, մեր շարքերից չեկոքացված եր:

Զբոսավայրը մի յեռանկյունի և խիստ փոքր պարտեզ եր, բարձր պատերով շրջապատված: Մեզ վրա հսկում եյին վոչ միայն դռների մոտ կանգնած հրացանավոր զինվորները, այլև ավագ վերակացվի զննող աչքերը, դուցե հետամտելու, թե ով ում հետ ինչպես եր խոսում և ինչ եր խոսում:

Զբոսնող կալանավորներս զույգեր կազմած, ձեռքերս մեջքներիս դրած, կլոր պտույտ պիտի գործեյինք և վոչ բարձր ձայնով խոսեյինք մոտ 10—15 րոպե: Բայց ավագ վերակացուն կարող եր կարճել և անգամ յերկու րոպե միայն թույլ տալ զբոսնելու, կամ նույնիսկ մեզ բոլորովին զրկել զբոսանքից, յեթե այդ «անհրաժեշտ» լիներ, այսինքն՝ վորևե մեկի անզգուշությունից նա զայրանար:

Ցերկարատև բանտարկությունից գունատ, ջղայնացած, իսկ վոմանց վհատված, թմրած դեմքերով՝ կալանավորների աչքերը հառած եյին մեզ, յերեք նորեկներիս վրա: Նրաց մեջ եյին դեռևս մայիս ամսին ձերբակալված հետևյալ մենշևիկները—Ջիբլաձե Սիլվեստր, Նոյ Խոմերիկի (Խունխուզ) և Ջումբուրիձե: Սրանք իսկույն կապվեցին մեզ հետ՝ դրսից տեղեկություն ստանալու և մեզ, նորեկներիս խորհուրդներ տալու բանտում տիրող ռեժիմի մասին:

Ավագ վերակացուն զռաց.

— Զբոսանքը վերջացավ, վերադառնալ կամերաները,— վորից հետո պահակները մեզ ուղեկցեցին մինչև մենարանների սրահը:

— Ցտեսություն, ամեն որ զբոսանքի դուրս գանք, վորպեսզի խորհրդակցենք: Յեթե շտապ բան լինի՝ պարաշնիկի միջոցով մի կերպ հաղորդենք իրար: Ցտեսություն,— ասաց Բորյանն ու բաժանվեցինք:

Բանտում թերթ կարդալը խստիվ արգելված եր, բայց, այնուամենայնիվ, մեզ հաջողվում եր, թեև խիստ սակավ, բայց կարդալ: Թերթ և կամ առհասարակ վորևե թարմ տեղեկություն ստանալու համար աչխատելու պատրվակի տակ գնում եյինք արհեստանոցները, վորտեղ գալիս եյին դրսից պատվեր տվողները: Նրանց հետ շփվելով՝ ստանում եյինք ինչ վոր անհրաժեշտ եր:

Մեզ այն ժամանակ ամենից ավելի հետաքրքրում եր պատերազմը:
Վարշավան և այլ քաղաքներ գրավված եյին, և ռուսական բանակն
տրըստորե պարտվում եր: Բանտում, չեմ հիշում փոխարքայի, թե ժանդարմական վարչության կարգադրությամբ, սկսեցին ճաշից և յերեկոյան թեյից առաջ բարձրաձայն յերգելով աղոթել՝ պատերազմում ցարական ավինին հաջողություն մաղթելով: Զայն ունեցող կալանավորներին, հատկապես քրեականներին, հարկադրում եյին դուրս գալ
յերգելու. բայց մարդիկ գտնվեցին, վորոնք ինքնաբերաբար հանձն ա-
տաան ամեն որ յերգել՝ աղոտ արձակվելու նկատառումներով:
Կալանավորների միակ շփման տեղը զբոսանքը, բաղնիքը և վերջապես՝ յեկեղեցին եր, վորտեղ կրոնն առհասարակ ժխտող մարդիկ անդամ «աղոթելու» պատրվակով հանդիպում եյին բանտի յեկեղեցում՝
խոսելու, նամակներ փոխանակելու և այլն:
Կալանավորներիս միակ զբաղմունքը, չափազանց նեղ մենարաննե-
րում նստած կարդալն եր: Բանտում կար մի բավական աղքատ բայց
հետաքրքիր գրադարան: Կրոնական և կամ ուրիշ՝ բոլորովին անմեղ
գրքերի մեջտեղում կազմված եր սոցիալիստական գրքեր, և գրքույկներ
ռուսերեն, հայերեն ու վրացերեն լեզուներով:
Գրադարանից գիրք ստանալու համար պետք եր գրավոր դիմում
ուղարկել գրադարանապետին, վորից հետո կստացվեր գրացուցակը և
ցանկացած գրքերը: Մի անգամ, հակառակ իմ ցանկության, պարաշնիկը բերեց «Ինչպես դաստիարակել ձին» գիրքը, վորը յես զայրացած
հետ ուղարկեցի:
Պարաշնիկը նորից բերեց և ասաց.—
Բայց պարաշնիկը նորից բերեց և ասաց.— Դրադարանապետն ասում է թող ուշադրությամբ կարդա և ամ-
— Գրադարանապետն ասում է թող ուշադրությամբ կարդա և ամ-
բողջովին կարդա շատ լավ գիրք է:
Այդ խոսքերն իմ մեջ կասկած հարուցեցին, և յես ուշադրությամբ
թերթելով՝ գրքի մեջտեղում հայտաբերեցի Կաուցկու «Դասակարգային շահերի հակասությունը 1879 թվին» գրքույկը՝ Դաշտոյանի թարգ-

մանկությամբ վորը վերաբերում եր Ֆրանսիական հեղափոխությանը: Դա ինձ համար խոշոր գյուտ յեղավ:

— Կարդալով այդ գրքույկը՝ պարաշնիկին խնդրեցի:

— Ասա գրադարանապետին, վոր բացի իմ խնդրած հետևյալ գրքերից՝ մի լավ գիրք էլ թող ինքն ընտրի և ուղարկի:

Այնուհետև ստացա 1905 թվի հեղափոխության ժամանակ և հետո հրատարակված հայերեն բոլոր սոցիալիստական գրքույկների մեծ մասը: Նրանք բոլորն էլ կազմված եյին ցենզուրայով թույլատրված գրքերի մեջտեղում:

Նամակագրությունը կատարվում եր բացառապես դատախազի թույլտվությամբ: Բանտից դուրս գնացող և ներս յեկող նամակները կրում եյին նրա հիմնարկի կնիքը, բայց մենք գրություններ ստանում եյինք պապիրոսի բարակ թղթի վրա՝ ուտելիքեն փոխադրելու փաթեթների կարերի մեջ պահված:

Մեր նամակագրությունների կամ թերթ կարդալու մասին մազաչափ կասկածն անգամ առիթ եր հանդիսանում խուզարկելու կամերաները: Խուզարկությունները կատարվում եյին բոլորովին անսպասելի, յերբ կամերաների դռները բացվում եյին արագությամբ և վորսկան շների նման ներս եյին թափվում խուզարկու վերակացուները և տակնուվրա անում անկողինը, բարձրանում պատի վառարանի գլուխը, թխկացնում հատակը և պատերը, ստուգում լուսամուտի յերկաթյա ձողերը՝ թե արդյոք կտրված չե՞ն: Մենք կարդալու թերթը թաքցնում եյինք հատակին փակցված թիթեղի տակ, բայց նրանք չեյին գտնում, հակառակ իրենց «մանրակրկիտ» խուզարկության:

Կալանավորների մոտ թուղթ, գրիչ և կամ այլ գրենական պիտույք պահելն արգելված եր: Նամակ գրելու համար հերթապահ վերակացուն կտար մատիտ կամ թանաք և ապա ինքն հետ կստանար: Իսկ նրանք, վորոնք վորևե հեղինակություն պիտի գրեյին՝ պետք եր վերցնել համարակալված և կնքված տետր, և համապատասխան թույլտվություն ստանային: Գրվածքը պատրաստելուց հետո, դատախազը կամ ժանդարմական վարչությունը պիտի քններ և միայն «ալլահը գիտեր», թե հետ պիտի ստացվեր, թե վոչ:

Կալանավորների սնունդը որական 1 ու կես ֆունտ հաց, մի փոքր կտոր շաքար և մի շերեփ տաք կերակուր եր, վորը սուպից և «սալդատի» բորշից այն կողմն անցնել չեր կարող: Մեզ սնունդ մատակարարում եյին դռան բացվածքից— ֆորտոչկայից, առանց դուռը բանալու, ինչպես կերակրում են գազաններին, վորպեսզի վորևե վնաս չհասցնեն:

Կալանավորները յերբեմն վերակացուների կոպիտ վարվեցողության դեմ բողոքելիս՝ ասում եյին.

— Ինչ է, մենք մարդիկ չե՞նք, վոր այդպես անհոգի և դաժան եք վարվում:

Վերակացուն կամ բանտապետի օգնականը պատասխանում եյին ցինիկաբար:

— Վոչ, դուք կալանավորներ եք, դուք իրավազուրկ եք, դուք մարդ չեք...

Յեվ կալանավորին մարդ չհամարելու այդ հոգեբանությամբ նրանք անչափ առաջ եյին գնացել, վոր բանտային ռեժիմը խախտողներին ամենաչնչին «հանցանքի» համար, պատժում եյին ամենադաժան կերպով: Որինակ՝ մեր հարևան մենարաններում նստած եյին մի քանի գերմանացի, վորոնք առնված եյին «լրտեսության» կասկածանքի տակ: Նրանցից մեկը՝ Գերց ազգանունով, մի անգամ բարձրացել եր լուսամուտն ու նայում եր փողոց: Յեվ ահա, մենարանի դուռը զգուշությամբ բանալով, ներս մտավ վերակացուն և հայհոյելով սպառնաց.

— Գե՛րց, լսս քո մերը, դու վո՞րտեղ ես գտնվում, մոռացե՞լ ես, թե ով ես դու:

Յերեկոյան ստուգման ժամանակ վերակացուն զեկուցեց հերթապահին և ապա, իհարկե, բանտապետին: Գերցը մի քանի որ նստեցվեց կարցեր, պատժարան, վորտեղ ցեմենտե պատերի մեջ, առանց անկողնի, թախտի, առանց տաք կերակրի և յեռացրած ջրի՝ նա պահվեց քարե վորջի մեջ:

Քիչ չեյին պատահել և դեպքեր, յերբ լուսամուտից դուրս նայողներին ուղղակի գնդակահարել և ցած եյին գլորել դրսի պահապանները:

Այդպիսի մի գնդակի զոհ պիտի գնայի նաև յես, յեթե իսկույն ցած չիջնեյի լուսամուտից, ուր բարձրացել եյի տեսնելու, թե ո՞վքեր եյին տեսակցության գալիս կալանավորներին: Յեվ ահա, ինչ վոր ձայն գոռաց պահապանի վրա:

— Քո մե՛րը, ի՞նչ ես լռում, չե՞ վոր հրամայված է կրակել, ինչ է, ցանկանում ես քե՞զ էլ նրա մոտ նստեցնենք:

Իհարկե, յես լսելով այդ հայհոյանքը, համոզված եյի, վոր կպատժվեյի, բայց կարցեր նստելուց ազատվեցի՝ պատճառաբանելով, վոր բանտային ռեժիմին անծանոթ և նոր կալանավոր եյի, և այլն:

Մեզ, նոր ձերբակալված կալանավորներիս առաջին յերկու շաբաթը ազգականների հետ տեսակցելուց բոլորովին զրկեցին, բայց յերրորդ շաբաթը մենք արդեն հնարավորություն ստացանք տեսնվել մեր ազգականների հետ:

Տեսակցության վայրը մի խոշոր սենյակ եր, վորի մեջտեղ շինված եյին յերկու մետր հեռավորությամբ, յերկաթյա լարերով վանդակած

պատեր: Դրանց միջով քայլում եր վերակացուն և կանգնած եր հրացանավոր պահակը: Իսկ պատերի յերկու կողմերից կալանավորներն ու այցելուները բարձրաձայն գոռում եյին, վորպեսզի լսելի լիներ իրենց խոսակցությունը: Դրանից ստացվում եր գոռում-գոչյունով քաոսային մի աղմուկ: Ինչպես նկատելի յեր, պատերը դիտավորյալ հեռու եյին կառուցված, վորպեսզի կալանավորները և այցելուները հարկադրված լինեյին բարձրաձայն խոսել, կոնտրոլի յենթարկվելու համար, և վորպեսզի չկարողանային նամակ կամ վորևե այլ բան տալ կալանավորներին: Բայց կաշառակերությունը, վոր բույն եր դրել ցարական չինովնիկության մեջ՝ այստեղ ել խաղում եր իր դերը և հնարավորություն եր տալիս ստանալ նամակ և այլն: Տեսակցությունը տեվում եր 10—15 րոպե միայն:

Յերբեք չեմ կարող մոռանալ այն, վոր ավագ յեղբայրս, Անդրանիկի խմբի կամավորներից մեկը, վորը հետո հեռացավ նրանից, Փայլակը, յերբ ժանդարմական վարչության դուռը ծեծելուց հոգնած, վերջապես հնարավորություն եր ստացել առաջին տեսակցության համար՝ ասաց ինձ.

— Չեյի ասում՝ թե վերջ տուր այդ բոլորին: Ի՞նչ կարող եք անել այնպիսի մի հզոր կառավարության դեմ այդ մի քանի դյուժին «մարդիկդ»: Չեյի՞ ասում, թե տո՛, կընկնես բանտ, տեղդ հանգիստ նստիր,— ասում եր նա զգույշ, վորպեսզի վերակացվի ականջին չհասնեյին իր խոսքերը:

— Թող այդպես լինի, միևնույն ե, ապագան մերն ե:

Բայց նույն Փայլակը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մի յերկար նամակ գրեց և հայտնեց, թե «միայն այժմ եմ հասկանում, վոր քո աշխատանքդ իզուր չեր» և այլն:

Բորյանին յերկար ժամանակ տեսակցություն թույլ չեյին տալիս, վորովհետև նրա մոտ գտել եյին նամակներ, և դատի պիտի հանձնեյին: Նրան անվերջ տանում եյին գրասենյակ ու հարցաքննում, իսկ ինձ ու Յենայանին կանչեցին առաջին անգամ և հայտնեցին, վոր ժանդարմական վարչությունը փոխարքայից մի ամիս ժամանակ ե խնդրել, վորպեսզի մեր գործերն ուսումնասիրեն: Մի խոսքով՝ մի ամիս մեր բանտում նստելն ապահովված եր արդեն:

Այնուհետև, ինչպես արխիվային նյութերն են ապացուցում, ժանդարմական վարչությունը գործի անցավ՝ հեռագրելով զանազան քաղաքներ՝ հայտաբերված հասցեներով խուզարկություններ կատարելու համար: Որինակ՝ Բագու հեռագրված եր հետևյալ բովանդակությամբ.

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ.

Բագու ժանդպետին

«Բորյանն այստեղ ձերբակալված ե օգոստոսի 18-ին: Դրագրությունից յերևում ե, վոր տպարանի կահավորման գործերով նա թղթակցում եր ինչ-վոր Շալիկոյի*) հետ: Յեթե ձեզ հայտնի յե՝ խուզարկեցեք, պահնորդականով ձերբակալեցեք և ուղարկեք Թիֆլիս: № 68: Գնդապետ Պաստրյուլին»:

«Ճիշտ ե. ռոտմիստր Ռոզալիոն Սոշալսկի

1915 թ. 22 օգոստոսի.

Հեռագրված եր նաև Մոսկվա՝ Ներսես Մանուչարյանի, Պետրոգրադ Յերվանդ Գարաղաշի և Աստրախան՝ Ջիլինդարյանի բնակարանները խուզարկելու համար: Սրանց հասցեները հայտաբերված եյին իմ բնակարանի չարդախում, վորտեղ թաքցրել եյի յես, և միայն յերկրորդ անգամ խուզարկելով՝ կարողացան գտնել: Պետրոգրադի հեռագիրը հետևյալն եր.

ՊԵՏՐՈԳՐԱԴ, ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏԻՆ

«Խնդրում եմ ուսանող Յերվանդ Գարաղաշյանցին խուզարկել, վերցնել նամակագրությունը, վարվել արդյունքի համաձայն: Նա ապրում ե Լիտեյնի հրապարակ, տուն 37, բնակարան 22 № 69: Գնդապետ Պաստրյուլին»:

«Ճիշտ ե. ռոտմիստր Ռոզալիոն Սոշալսկի

(Թիֆլիսի կենտ. արխիվ, ժանդարմա-հեղափոխական բաժին, ֆոնդ 36, № 3186):

Խուզարկելու հեռագիր ուղարկված եր նաև Աստրախան Ջիլինդարյանին, և կարծելով, թե ըստ յերևույթին նրան կուղարկեյինք Թուր-ցիկներ՝ ավելացված եր, թե «ցանկալի յե հսկողություն նշանակել, վորպեսզի պասիկա ստանալու հնարավորության դեպքում անհրաժեշտ լինի նայել» և այլն:

Իհարկե, վերոհիշյալ խուզարկությունները գնդապետ Պաստրյուլինի ձեռքը վոչ մի նոր հիմք չտվին մեզ դատելու կամ Բորյանի վճիռն ել ավելի ծանրացնելու: Այդ պատճառով ել իմ և Խաչիկ Յենայանի գործը դատի տալու վոչ մի հիմք չունենալու պատճառով, ժանդարմական վարչության վորոշմամբ, հրջան գործեց Կովկասի Փրոնտի ռազմական վարչության վորոշմամբ, Կովկասի ռազմական գործողությունների պետի, նահանգապետի և վերջը՝ Կովկասի փոխարքայի գրասենյակներով՝ վարչական կարգով աքսորելու համար:

Մեր գործերն այդ հիմնարկների մեկից մյուսին անցնելիս՝ կանչում եյին բանտի գրասենյակն ու հայտնում, թե ուր եր ուղարկվել մեր գործը, բայց չեյին ասում ժանդարմական վարչության վորոշումը, վորը հիմք եր ծառայել աքսորի: Ուստի, մենք Մետեխում արդեն այն համոզմանն եյինք յեկել, թե մեզ կամ պիտի աքսորեյին և կամ ազատ արձակեյին:

*) Ինչպես գիտենք, «Շալիկո», կոտե Ցինցաձեյի կեղծանունն եր:

Ճեմ վարոշհետ այդ որերն ապատեցին մենշևիկներին ու այլ կալանավորներին, վորոնց դատելու հիմք չկար, մենք համոզված էինք, վոր աղատ կարձակեյին նաև մեզ: Սովորաբար ազատում էյին յերեկոյան ստուգումից հետո, յերբ սրահում ամեն որ համարյա լսվում եր վորևէ մեկի անունն և ազգանունը և...

— Հավաքիր իրերդ ազատվում ես...

Խաչիկ Ցեսայանը և յես այդպես մի քանի որ սպասեցինք որատորով, բայց վոչ վոք մեր «յերեսին չնայեց»: Միայն սեպտեմբերի 18-ին մեզ նորից տարան գրասենյակ և հայտնեցին իրենց վորոշման մասին:

Գրասենյակում կալանավորները հերթով մտնում էյին բանտապետի ոգնականին և նրանից իմանում իրենց գործի վիճակի մասին: Մեզնից առաջ մտեցան յերկուսը, և նրանց հայտնեցին, վոր աքսորում են Կովկասի սահմաններից դուրս, բայց թույլատրում կալանավորներին. ընտրել իրենց աքսորավայրը: Այդ պատճառով եղ Ցեսայանի հետ խոսում էյինք, թե վորտեղ ընտրեյինք:

— Ռոստով, Աստրախան թե՞ Ոդեսսա,— հարցնում եր նա:

— Ոդեսսան ամենից լավ կլիներ, բայց նա ծովափյա պատերազմական ռայոն է համարվում, ուստի դժվար թե համաձայնվեն: Ընտրենք Աստրախանը:

— Լավ, համաձայն եմ,— ասաց Ցեսայանը:

Հերթը հասավ մեզ: Մտեցանք չնչերս բռնված, հուզված: Բանտապետի ոգնականը կարդաց փոխարքայի գրասենյակի հետևյալ գրությունը.

«Նորին կայսերական մեծության Կովկասի փոխարքայի գրասենյակից հայտնվում է պարսկահպատակ Շավարշ Հովհաննիսի Գարագաշյանցին, վոր Կովկասի մարզի (ոկրուգ) պատերազմական Թատերաբեմի ռազմական գործողությունների պետն անհրաժեշտ համարեց նրան աքսորել Իրկուտսկի նահանգը, վոստիկանության հրապարակային հսկողության տակ Կովկասի ռազմական մարզի սահմաններում զինվորական դրության ամբողջ ժամանակ, հիմք ունենալով 1912 թվից շարունակվող որենքների 2-րդ ժողովածվի 23-րդ մասի 17-րդ կետի 19-րդ հոդվածը:

«Նորին կայսերական մեծության Կովկասի փոխարքայի գրասենյակի հատուկ բաժնի վարիչ Պետրովիչ»:

№ 4069,

18 սեպտեմբերի, 1915 թ.

Թիֆլիս քաղաք:

Գործավար՝ Տրուտկով.

*) «Այս ծանուցումն ինձ հայտնված է— Շավարշ Գարագաշ.

Այնուհետև միզանից ստորագրություն վերցրին ծանուցման հետ ծանոթանալու մասին:

4 սեպտ. 1915 թ.

Թիֆլիսի 2-րդ բանտի պետի ոգնական (ստորագրություն).

(Տես՝ Թիֆլիսի կենտ. արխիվ, պատմահեղափոխական բաժին, ֆոնդ 35 № 3186, գործ 61):

Նույնպիսի հայտարարություն յեղավ նաև Խաչիկ Ցեսայանին:

Իրկուտսկ նահանգ՝ Սիբիրի կենտրոնն աքսորվելը մեզ համար բո-

վորովին անսպասելի յեր: Այդ հայտարարությունը մեզ վրա ցնցեցնող

ազդեցություն թողեց, և կարծես թե սառը ջուր ածեցին մեր դըլ-

խին: Տիրեց լռություն... Նկատելով այդ՝ բանտապետն ավելացրեց.

— Ինչ սոսկալի բան կա այստեղ, ինչո՞ւ այլայլվեցիք, Իրկուտսկ

նահանգում նույնպես մարդիկ են ապրում: Հենց մեր բանտից ամիսը մի

մարդիկ են ուղարկվում միշտ...

— Այո, գիտենք, վոր այնտեղ եղ մարդիկ են ապրում...— ասացինք

և հեռացանք նրա մոտից՝ հերթը զիջելով մեր հետև կանգնած կալա-

նավորներին:

— Ա՛յ տղա, սա ի՛նչ բան եր, ինչո՞ւ մեզ այդպես հեռու յեն...

աքսորում...— ասաց Ցեսայանը:

Մենք լո՛ւռ, մտագրա՛վ քայլերս ուղղեցինք դեպի մենարանները:

Սրահը մտնելիս մեր վոտքերի ձայնը լսելով՝ Բոլյանը մոտեցավ

ֆորտոչկին և հարցրեց

— Նու, ազատո՞ւմ են թե աքսորում... Գուցե Աստրախան են աքսո-

րում վոր քեֆներդ տեղը չե, հը՞ տներ:

— Աքսորում են Իրկուտսկի նահանգը... Դու այն ասա, թե ի՞նչ-

պես գնանք, յերբ բոլորովին պատրաստ չենք Սիբիրի սառնամանիքնե-

րին դիմադրելու,— հարցրի յես:

— Իրկուտսկի նահա՞նգը... ասաց նա, իսկ մենք հեռացանք:

Սիբիր աքսորելու դրդապատճառի մասին վոչ մի խոսք մեզ չասա-

ցին մեզ հետ: Մեր բոլշևիկական կուսակցությունը ձգտում եր խմբե-

վեց, բայց մենք շատ լավ գիտեյինք, թե ինչու այդպես խիստ վարվե-

րիալիստական պատերազմը քաղաքականի վերածել և խորտակել ցա-

րական միահեծանությունը հիմնահատակ: Ցարական կառավարությու-

նը՝ սարսափած հեղափոխության ուրվականից, վճռեց իր Սիբիրի

տանդրաններում վոչնչացնել մեզ: Միայն այժմ մենք հնարավորություն

ունենք վոչնչացումից ազատված ժանդարմական արխիվից իմանալու,

թե ինչ հիման վրա աքսորեցին մեզ Իրկուտսկի նահանգը:

Ահա թե ինչով և հիմնավորում մեր աքսորը ժանդարմական վար-

չության պետ Պաստրյուլինն իր վորոշման մեջ, վորը բերում ենք անփոփոխ:

ՊԱՏՃԵՆ

«ՎՃՌՈՇՈՒՄ»

«1913 թվի սեպտեմբերի 4-ի որը, Թիֆլիս քաղաքում, յես՝ Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետ գնդապետ Պաստրյուլինս, քննելով սույն գրա-

ղրությունը, որը կատարված է 23-րդ կանոնի կարգով և որը վերաբերում է այն տեղերին, որտեղ հայտարարված է պատերազմական դրություն, քննելով այն մասին, թե քաղաքական տեսակետից ինչ աստիճանի բարեհույս են Թիֆլիսի քաղաքացի Խաչատուր Ոհաննեսի Ցեսայանցը, 24 տարեկան (հայ-լուսավորչական դավանանքով, ամուրի, ուսուցիչ առանց պաշտոնի) և պարիկահպանակ Շավարշ Ոհաննեսի Գարագաշյանցը, 23 տարեկան (հայ-լուսավորչական դավանանքով, ամուրի, կոշկակար, պարապում է ինքնազարգացումով)՝ գտա.

«Նկատի առնելով այն, որ սույն օգոստոսի 18-ին, Թիֆլիսի Սոցիալ-Դեմոկրատական կազմակերպության բոլշևիկյան կոլեկտիվը բաց էր թողել թռուցիկ ներկա ժամանակի մասին, բաց էր թողել հանգանակության թերթիկներ՝ կոչ անելով փող նվիրել Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության Կովկասի բյուրոյին անլեգալ տպարանի օգտին՝ Թիֆլիս քաղաքում կատարվեց վերոհիշյալ կոլեկտիվի լիկվիդացիա, ընդ որում՝ նրանց ամենաակտիվ անդամների թվում խուզարկվեցին ու ձերբակալվեցին Խաչատուր Ցեսայանցը և Շավարշ Գարագաշյանցը:

«Կատարված խուզարկությամբ Խաչատուր Ցեսայանցի մոտ հանցավոր ոչինչ չհայտաբերվեց, իսկ Շավարշ Գարագաշյանցի մոտ հայտաբերվեց և վերցվեց հետևյալը:

«1. Հինգ օրինակ հայերեն լեզվով «Բանվորի ալբոմը» վերնագրով գրքույկներ, որոնք պարունակում են հոդվածներ ու բանաստեղծություններ՝ բանվորների կյանքից ու կենցաղից՝ միտումնավոր բնույթի:

«2. Ռուսերեն լեզվով մի գրքույկ՝ Ա. Բոգդանով «Մեծ ուսուցչի հիշատակին» վերնագրով, որով տրված է սոցիալ-դեմոկրատ գրող Կարլ Մարքսի կենսագրական ուրվանկարը:

«3. Նույնը՝ Ֆ. Էնգելսի «Գյուղացիական հարցը Ֆրանսիայում և Գերմանիայում» գրքույկը, որը մտնում է այն գրքերի շարքը, որոնց գրավումը հաստատված է դատական վճռով:

«4. Հայերեն լեզվով պատռված մի գրքույկ՝ «Կարլ Մարքս» վերնագրով (կենսագրություն, հեղինակություն Ա. Մուրադյանի, գինը 20 սանթիմ, տպարան «Հնչակ», Փարիզ, 1908 թիվ): Այս գրքում նկարագրված է սոցիալ-դեմոկրատական գրող Կարլ Մարքսի կյանքն ու գործունեությունը:

«5. Թիֆլիսի ժողովրդական համալսարանի ընկերության չօգտագործված անդորագրի տետր՝ 1914 թվի, անդամավճար հավաքելու համար:

«6. Բաց նամակ բլանկ՝ նկարազարդված սոցիալ-դեմոկրատական թերթ «Պուտ պրավդի» № 61, 1914 թ. ապրիլի 17-ի հոբելյանական համարը, սոցիալ-դեմոկրատական գրող Կարլ Մարքսի բյուստով:

«Իմ տնօրինության հանձնված վարչության գործերի տեղեկանքից երևում է, որ Խաչատուր Ցեսայանցը հայտնի է, որպես անդամ Թիֆլիսի Սոցիալ-Դեմոկրատական կազմակերպության դեռևս 1914 թվից, երբ ցուցմունք ստացվեց, թե Թիֆլիսի ժողովրդական համալսարանի ընկերության վարչության կազմում անցկացված են բացառապես սոցիալ-դեմոկրատներից իրենց թեկնածուները, նրանց թվում նաև Խաչատուր Ցեսայանցը, որն ընտրված էր հիշյալ վարչության անդամ:

«Վերջին ժամանակներս նա մշտապես մասնակցում էր բոլշևիկյան խմբակի ժողովներին, որպես կիսաինտելիգենտների ներկայացուցիչ, և մտավ կոլեկտիվի կազմի մեջ*) որի ժողովներից մեկում սույն թվի օգոստոսի կեսերին քննվում էր մի թռուցի-

*) Ինչպես գիտես այլ դեպքերում էլ ասել եմ, Խ. Ցեսայանը չեզոքացված էր կազմակերպությունից, կասկածի տակ առնված Կախոյանի հետ: Պաստրյուլինի զեկուցման այս կետը չի համապատասխանում իրականության:

կի հրատարակության հարցը: Այդ հարցի քննությանը մասնակցեց նաև Ցեսայանցը, ընդ որում «Ռուսաստանի սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության Կովկասի Բյուրոյի» անունից հրատարակված թռուցիկը, խիստ կերպով քննադատելով կառավարության գործունեությունը՝ վերջացնում է հետևյալ կոչով՝ «Կորչի ցարական մոնարխիան, կորչի պատերազմը, կեցցե՛ հեղափոխությունը, կեցցե՛ Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցությունը, կեցցե՛ սոցիալիզմը»:

«Շավարշ Գարագաշյանցի մասին սույն թվի հուլիսին ստացվել էր ագենտուրային տեղեկանք, որ նա մտավ Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության բոլշևիկյան կոլեկտիվի կազմի մեջ և մասնակցեց նրա այն ժողովներին, որտեղ վերջին ժամանակ խոսվում էր տպարանը կանոնավորելու համար միջոցներ ձեռք բերելու մասին, որովհետև կազմակերպության տրամադրության տակ կար միայն մի փայտյա շրջանակ ու տպարանական շարվածք, որի վրա տպագրված էր մայիսի մեկի թռուցիկը: Այնուհետև ագենտուրային ճանապարհով և արտաքին հսկողության միջոցով բոլորովին ճիշտ կերպով հաստատված է, որ նա ամենաակտիվ մասնակցություն ուներ կոլեկտիվի գործունեությանը և կոլեկտիվի գործերով մոտիկ հարաբերության մեջ էր կոլեկտիվի ղեկավար Բորյանի հետ, որը կեղծ անցագրով ապրում էր այստեղ և այժմ իմ տնօրինության հանձնված վարչության կողմից, որպես մեղադրյալ քննության է ենթարկվում 1035 հոդված., քրեակ. դատ. կարգով: Նրա՝ Գարագաշյանցի մասնակցությամբ կայացավ կոլեկտիվի որոշումը՝ վերոհիշյալ թռուցիկը բաց թողնելու մասին, և նա ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ թռուցիկի տարածման գործում:

«Նկատի առնելով նկարագրված տվյալները, որոնք բավարար հիմք չեն կարող հանդիսանալ այս գործով՝ 1035 հոդ. քրեակ. դատ. կարգով ձևական հետաքննություն կատարելու, բայց հաստատված է հիշյալ անձանց քաղաքական լիակատար անբարեհուսությունը և նրանց ծայրահեղ վտանգավոր՝ գործունեությունը պետական կարգերի և հասարակական անդորրության համար, որոնց ագիտացիան պաշտոնապես ուղղված է ամեն կերպ խանգարելու պատերազմական գործողությունները: Ես կարծում եմ Խաչատուր Ցեսայանցին և Շավարշ Գարագաշյանցին ենթարկել վարչական աքսորի՝ ոստիկանության հրապարակական հսկողության տակ՝ Արևելյան Սիբիրի նահանգներից մեկը, ամեն մեկին հինգական տարի ժամկետով»:

«Ներքին գործոց պարոն մինիստրի շրջաբերականի հիման վրա (ուղղված ոստիկանական դեպարտամենտին), 1881 թվի սեպտեմբերի 5-ին, որոշում № 3588: Այս գրությունն ուղարկել Թիֆլիսի գ. նահանգապետին»:

Գնդապետ՝ Պաստրյուլին

Ճիշտ է. ռոտմիստր՝ Ռոզալիոն Սոչալսկի:

(Տես՝ Թիֆլիսի կենտ. արխիվ, պատմ. հեղ. բաժին, ֆոնդ 36. № 3186):

Ժանդարմական վարչության պետի այդ որոշումն ուղարկվում է Թիֆլիսի նահանգապետին, որը նույնությամբ հաստատելով Պաստրյուլինի որոշումը՝ ուղարկում է Կովկասի մարզի պատերազմական գործողությունների թատերաբեմի գլխավոր պետին՝ ի հաստատություն: Վերջինս փոխում է որոշումը՝ ավելի խստացնելով, որը տալիս ենք ստորև.

«ՎՈՐՈՇՈՒՄ № 100.

«1915 թվի սեպտեմբերի 15-ին, յես, Կովկասի ռազմական մարզի պատերազմական գործողությունների թատերաբեմի գլխավոր պետ, ծանոթանալով Թիֆլիսի նահանգապետի ներկայացրած այս սեպտեմբերի 10-ի № 5129 գրության հետ, վորով Թիֆլիսի քաղաքի բնակիչ Խաչատուր Ոհաննեսի Ցեսայանը և պարսկահպատակ Շավարշ Հովհաննեսի Գարագաշյանը դիմակայերծ են լինում, Սոցիալ-Դեմոկրատական կազմակերպության պատկանելությամբ և ագիտացիայով՝ պատերազմական գործողությունների դեմ, վորոշեցի՝ հիմք ընդունելով օրենքների 2-րդ ժողովածվի 17-րդ կետը, 19-րդ հոդվածի հավելված 23-ը, վորը շարունակվում է 1912 թվից, հիշյալ Ցեսայանին և Գարագաշյանին աքսորել Իրկուտսկի նահանգը՝ վոստիկանական հրապարակական հսկողության տակ՝ Կովկասի մարզի սահմաններում զինվորական դրության ամբողջ ժամանակում»:

«Վորոշման մասին հաղորդել Թիֆլիսի նահանգապետին՝ ի կատար ածելու համար»:

«Գեներալ-լեյտենանտ Կնյազ Որլով

(Տես՝ Թիֆլիսի կենտ. արխիվ, պատմ. հեղ. բաժին, ֆոնդ 36, № 3186):

Այնուհետև, փոխարքայի գրասենյակի հատուկ բաժնի կողմից դարձյալ մի գրություն է ուղարկվում նույն վորոշմամբ՝ վոստիկանական դեպարտամենտին՝ ի կատար ածելու համար: Այդ վորոշումից մի քանի օր անց, մեզ Մետեխի ամրոցից փոխադրում են № 1 բանտը՝, եսապով ուղարկելու համար: Իսկ 1915 թ. հոկտեմբերի 26-ին, մեզ եսապով ուղարկեցին աքսորավայրը: Բորյանը և Նարեկկևիչվիլին մնացին բանտում՝ հետագայում դատապարտվեցին 6-ական տարվա տաժանակիր աշխատանքի:

Մեր աքսորումն ի կատար ածելու մասին Թիֆլիսի նահանգապետը հետևյալ գրությունն է ուղղել փոխարքայի գրասենյակին.

ԳԱՂՏՆԻ

Թիֆլիսի նահանգապետի գրասենյակ
5 նոյեմբ. 1915 թ. № 6272

Թիֆլիս քաղաք

Նորին կայսերական մեծության Կովկասի փոխարքայի գրասենյակ

«Կից ուղարկվում է յերկու ծանուցագիր՝ № 4065. և № 4069, Շավարշ Գարագաշյանի և Խաչատուր Ցեսայանի հատկանիշների մասին տեղեկանքի հետ և հայտնում ենք, վոր հիշյալ անձինք հոկտեմբերի 26-ին, եսապով ուղարկված են նշանակված վայրը»:

«Նահանգապետ (ստորագրություն):

Գրասենյակի կառավարչի փոխարեն՝ (ստորագր.):

(Տես՝ Թիֆլիսի կենտ. արխիվ, պատմահեղ. բաժին, ֆոնդ 36, № 3186 գործ 61):

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՕՐԵՐԸ ՍԻԲԻՐՈՒՄ

Ինչպես արդեն ասել ենք, առանց պարզորեն իմանալու մեր դեմ հարուցված մեղադրանքը, առանց մազաչափ անգամ պատրաստ լինելու Սիբիրի սառնամանիքներին դիմագրելու, խիստ ծանր հոգեկան—բարոյական և ֆիզիկական տանջանքներ կրելով՝ Թիֆլիսից եսապով ուղարկվեցինք Իրկուտսկի նահանգը, չիմանալով անգամ աքսորման ժամկետը:

Սակայն այդ «ճանապարհորդությունը» չափազանց հետաքրքիր եր իր այլազանությամբ և մեզնից խլեց մոտ յերկու ամիս ժամանակ: Թե ինչպես մենք հասանք այնտեղ, այդ խիստ յերկար ու արկածներով լի պատմություն է, և նույնչափ հետաքրքիր, վորչափ Վոլխովի վերադարձը՝ վորի նկարագրությունը թողնում եմ գրքիս յերկրորդ հատորին:

Ճանապարհին մենք քարշ յեկանք ցարական կայսրության տերրիտորիայի մի շարք բանտերում, պատահեցինք բյուրավոր մարդկային՝ լավ ու վատ տիպերի, ականատես յեղանք ծիծաղելի ու զարհուրելի տեսարանների:

Մենք համոզված եյինք, վոր Սիբիրի վորևէ անկյունում կտրվելու յե մեր կյանքի թելը, կամ Սիբիրի սառնամանիքներում, տունդրաներում, ցրտի ու սովի ճիրաններում հանգչելու յե մեր կյանքի ճրագը, ինչպես անհամար աքսորյալներ կորել են անհետ: Սակայն պատահեց հակառակը. մեզ վիճակվեց տեսնել վաղուց փայփայած մեր մտավոր իդեալի իրագործումը՝ պրոլետարիատի դիկտատուրան:

Թիֆլիսից հետո մենք յեղանք Բաքվի, Ռոստովի, Ոլյաժսկի, Սամարայի, Պենզայի, Չելյաբինսկի բանտերում: Իսկ Կրասնոյարսկի և Նովո-Նիկոլայևսկի բանտերը լեփ-լեցուն լինելու պատճառով, չընդունեցին մեր եսապը: Վերջիվերջո հասանք Իրկուտսկի բանտը:

Մեր եսապը տարվում եր հսկայական հատուկ գնացքով, վորը քաշում եյին յերկու թե յերեք չոգեշարժ: Մեր այդ ահռելի բանտը— եսապը կազմվել եր Կովկասից, Ոդեսսա—Կիև, Խարկով—Մոսկվա—Պետրոգրադ քաղաքներից յեկող եսապների միացումով: Կայաններում ցարական բռբեխները (կանվոյ) վոչ վոքի չեյին թողնում մոտենալու գնացքին, բայց վանդակապատ լուսամուտներից, մաքուր օդի, ազատության կարոտ, գունատ, հյուծված, ջղայնացած, իսկ վոմանք հուսահատված իրենց հայացքները բևեռել եյին ամբոխին, վորը գալիս եր կայարաններ՝ դիտելու ցարական բռնակալության զոհերին:

Մենք Թիֆլիսից դուրս յեկանք 1915 թվի հոկտեմբերի 26-ին և Իրկուտսկ հասանք տարվա վերջին, վորտեղ մոտ մի ամիս բանտերում մնալուց հետո, 1916 թվի սկզբներին աքսորվեցինք Լենա գետի մոտ, նրա անվան Վերխոլենսկ գավառի Բայանդայ գյուղը, իսկ այնտեղից,

իմ խնդրանոք, յես տեղափոխվեցի Մանզուրկա գյուղը: Մանզուրկան գտնվում էր Իրկուտսկի յերկաթուղագծից 160 վերստ հեռու, դեպի Լենա գետը տանող խճուղու վրա:

Ահա այդ Մանզուրկա գյուղումն էլ յես մնացի մինչև 1917 թվի փետրվարյան հեղափոխությունը և այդտեղ էլ մոտ 60 քաղաքական աքսորյալների հետ դիմավորեցինք փետրվարյան օրերը:

Մանզուրկա գյուղը հեղափոխականների մի վորրան էր:

Այնտեղ էր աքսորված Սերգովը, վորն այն ժամանակ, վորպես

Բոլշևիկ աքսորյալներ Մանզուրկա գյուղ. կանգնածներ աջից Ֆիշկին. Ալեք–բովիչ Բազանով, Սկոբելևա, ձախից. Բրաուտե Նացարիանով, մեջտեղում. մեն–շևիկ Դիմիտրի. բոլշևիկ (լատիշ) Մարթա և Ստեպանով:

Առաջին կարգ աջից. Գարագաշ, մյուսների ազգանունը անհայտ:

բոլշևիկ ուսանող աքսորված էր Պետրոգրադից, Զալուցկին, Սամուկովը (յերեքն էլ հայտնի դեմքեր եյին՝ մասնակից տրոցկիստական և այլ օպ–պոզիցիաների), Ստեպանովը (Գորկու և Բոգդանովի կազմակերպած Կապրի կղզու դպրոցի աշակերտ, իսկ այժմ Տուլայի մետաղագործա–կան գործարանի կարմիր դիրեկտոր), Լոմովը և Բրաուդեն (իրավա–բաններ, յերկուսն էլ կոմունիստ են ու վարում են պատասխանատու խոշոր պաշտոններ), Պետրիցկին, վորն այն ժամանակ Տոտոմյանի ու–սակերին կանգնած կոոպերատոր էր: Վերջապես այնտեղ եյին Ալյե–

բովիչը, Նացարիանսը (յերկուսն էլ իրավաբաններ), Նինա Ազաջան–յան—Շուտկո («Բրոննենոսեց Պատյոմկինի» հեղինակը և Ռոստովի այն ժամանակվա կոմիտեյի անդամ), Գելայեվը (հայտնի բանվոր Պետրո–գրադից), Սկոբելևը (հայտնի բանվորուհի), Սիմոն Սուլթանյանը, Ար–տյուշ Ասլայանը և այլ բազմաթիվ բանվոր ու մտավորական քաղաքա–կան աքսորյալ ընկերներ:

Մեզ մոտ է յեղել նաև Սկրյաբին–Մոլոտովը, վորը մինչև իմ գնալը փախել էր: Այնտեղից փախան նաև Զալուցկին, Շուտկո—Նինա Ազա–ջանյանը միասին:

Մեր գաղութն իր կուսակցական կազմով խիստ խայտաբղետ էր: Նրա ամենախոշոր ստվարը բոլշևիկներս եյինք կազմում իսկ մնացած–ները մեշևիկ, էս–էռ, անարխիստ, լեհական պեպեեսականներ, բուն–դիստներ եյին, և այլն:

Բոլշևիկ աքսորյալներ Մանզուրկա գյուղում. Ներքևից աջից Զուլուցկի Գիլայև–վերև աջից Շուտկո—Նինա Ազաջանյան, ձախից Ստեպանով.

Պատերազմի և սոցիալ–քաղաքական այլ հարցերը բնա–անհրաժեշ–տորեն մեր գաղութը չերտավորել, յերկու մասի եյին բաժանել: Մի կողմում մենք, բոլշևիկներս եյինք, իսկ մյուս կողմում՝ մնացածների բլոկը: Սակայն ընդհանուր գաղութային հարցեր վճռելիս՝ դերակշռու–թյունը միշտ մեր կողմն էր մնում, վորովհետև վոչ միայն մեծա–մասնություն եյինք կազմում, այլև վճռական եյինք, միատարր և խիստ կարգապահության յենթակա: Իսկ հակառակ կողմի բլոկը՝ այ–լատարը, անկարգապահ և անմիաբան էր: Օրինակ՝ յերբ պետք էր գա–

ստական գաղութային կոնֆերանսին պատվիրակներ ընտրել մենք յերկու ձայնի առավելությամբ անցկացրինք մեր ցուցակը՝ գլխավորապես բոլշևիկներից: Հակառակ բլոկը մի քանի անգամ «սխալ» համարելով քվեարկությունը, պահանջեց քվեարկել նորից, բայց ամեն անգամ մեր միաբանությունից պարտված՝ նրանք խնդրեցին «սովոր. մեծամասնություն» կազմող բլոկին նույնպես տեղ տալ կոնֆերանսում՝ իր տեսակետը պաշտպանելու համար: Մենք, իհարկե, գաղութը քայքայման չենթարկելու նպատակով, հնարավորություն տվինք նրանց իրենցից եվս ներկայացուցիչ տալու, ընդհանուր գաղութային հարցերի քննությանը մասնակից դարձնելու համար:

Մեր գաղութն ուներ բավական հարուստ գրադարան: Ունեյինք մարքսիստական, նարոդնիկական, անարխիստական և առհասարակ սոցիալիստական այն բոլոր հրատարակությունները, վորոնք տպագրված եյին ռուսերեն լեզվով: Ունեյինք նաև գեղարվեստական և արվեստի ու գիտության այլ ճյուղերին վերաբերող հարուստ գրադարան: Մեր գաղութը ձրիաբար ստանում եր նոր լույս տեսած պարբերական և վոչ պարբերական բոլոր հրատարակությունները: Մեր կոլեկտիվ դիմումները՝ ձրիաբար ուղարկել վորևե հրատարակություն՝ յերբեք մերժում չստացան:

Յես արդեն ռուսերեն վեպեր կարդում և հասկանում եյի: Սկսեցի կարդալ նաև հասարակագիտական գրքեր: Իմ ընթերցանությունը բավական դյուրացնում եր Դադրաշյանի բառարանը: Սիբիրում յես առաջին անգամ տեսա և կարդացի Պլեխանովի հռչակավոր «Մոնիստական պատմահայեցողության զարգացման խնդրի շուրջը» և «Մեր քննադատների քննադատությունը» աշխատությունները և այլն, վորոնք իմ առաջ բացեցին մարքսիստական փիլիսոփայության պայծառ հորիզոնը:

Այնտեղ կարդացի նաև մեր բոլշևիկյան «Սոցիալ-Դեմոկրատը» և ծանոթացա «Կոմունիստ» ժուռնալները՝ տպված պապիրոսի «մետաքսյա» թղթի վրա: Առանձնապես ուժեղ տպավորություն թողին իմ վրա Լենինի և Զինովևի հոդվածները՝ Պլեխանովի բռնած դիրքի մասին դեպի իմպերիալիստական մեծ պատերազմը (Պլեխանովի հոդվածները «Պատերազմի մասին»): «Նորին մեծության պարոն Պլեխանովի» հոդվածը և առհասարակ մյուս հակապատերազմական հոդվածներն ուղղակի ձեռքից ձեռք եյին թռչում, ժուռնալները մաշվել, անընթեռնելի եյին դարձել:

Մեր գաղութը ձրիաբար ստանում եր վոչ միայն Ռուսաստանում հրատարակված թերթերը, ժուռնալներն ու գրքերը, այլ նաև կենտրոնում (Մոսկվա, Պետրոգրադ) և արտասահմանում հրատարակվող անլեգալ գրականությունը: Մի խոսքով, մեր գաղութը, չնայած նրան,

վոր խիստ մեծ տարածությամբ հեռու յեր ընկած կենտրոնից, բայց սերտ կապերով կապված եր նրա հետ և ապրում, շնչում եր քաղաքական կյանքով:

Մենք կազմակերպում եյինք անլեգալ ժողովներ, դիսպուտներ, դասախոսություններ: Մենք, բոլշևիկներս ունեյինք Մարքսի «Կապիտալ»-ը, Հիլֆերդինգի «Ֆինանսական կապիտալ»-ը ուսումնասիրող խմբակներ: Ունեյինք նաև Բոգդանովի և Ստեպանովի «Քաղաքատնտեսություն» գիրքն ուսումնասիրող խմբակ: Յես մասն եյի վերջին խմբակի մեջ, բայց ներկա եյի լինում նաև մյուս խմբակների պարապմունքներին: Վերջին խմբակը ղեկավարում եր Սիրցովը, առաջինը՝ Ալպերովիչը:

Կարծես ոդում միշտ ղողանջում եր Չերնիշևսկու բացականչությունը թե՝ «Թող լինի, ինչ կլինի, բայց և այնպես մեր փողոցում տոն կլինի»: Մենք համոզված եյինք, վոր կապիտալիստական տնտեսության զարգացումը, վարձու աշխատանքի ու կապիտալի պայքարը բնա-անհրաժեշտորեն հասցնելու եյին «անհրաժեշտության թագավորությունից ազատության իշխանությունը»: Այո, մենք այդ խորը համոզմունքն ունեյինք և պատրաստվում եյինք որերի համար:

Բոլշևիկ աքսորյալներ Բայանտայ գյուղում. վերևում կանգնած աջից չորրորդ Վասիլիյ Ավիրին, Շեստակով, Գարագաշ, նստած աջից 3-րդ Մաչուլսկի, Դիմիդրիյ Զուպին, իսկ մնացածները ավետարանականներ և այլք.

ինքնազարգացման, ինքնակատարելագործման աշխատանքների, գալիք հեղափոխության համար պատրաստ լինելու տենդային շարժում էր տիրում մեր քաղաքական աքսորյալներիս մեջ, յերբ սկսեցին զարգանալ 1917 թվի փետրվարյան դեպքերը:

Մանզուրկա գյուղի քաղաքական աքսորյալներս կենտրոնում տեղի ունեցող անց ու դարձի մասին թարմ տեղեկություն ստանում էինք Իրկուտսկ քաղաքում հրատարակվող մանր-բուրժուական ռադիկալ «Սիբիր» ամենօրյա թերթից, վորը մեզ հասնում էր յերրորդ կամ չորրորդ օրը: Թերթի շուրջն էին համախմբվել էսեռ-մենշևիկյան կոալիցիան՝ Ռաֆայելով, Ծերեթելի, Մինոր, Բրեշկո-Բրեշկովսկայա և ուրիշները:

Մի քանի օր շարունակ այս թերթում վոչ մի հեռագիր չկար Մոսկվայից ու Պետրոգրադից, և այդ մեզ չափազանց վրդովեցնում, տանջում էր: Բացարձակապես վոչինչ չիմանալով կենտրոնում կատարվող դեպքերի մասին՝ հազար ու մի յենթադրություն էինք անում.—

«Գուցե ֆրոնտում մեծ պարտություն է տեղի ունեցել և դրա հետ կապված անկարգությունները խանգարում են հեռագրական նորմալ հաղորդակցությանը»,— ասում էին վոմանք:

«Գուցե սոված ժողովուրդը վոտքի յե կանգնել և...» չէին վերջացնում իրենց միտքը ուրիշները և չգիտեյին ինչ ավելացնել:

«Հեռագրական հաղորդակցությունն է վնասվել և ուրիշ վոչինչ» ավելացնում էին ավելի «լավատեսները»:

Նման զրույցներն ու մտորումներն ուղղակի մաշում էին մեզ, յերբ վերջապես «Սիբիր» թերթում տպագրված մի առաջնորդողում յերևացին հետևյալ յեզրոպոսյան տողերը:

«Մի քանի օր շարունակ մայրաքաղաքից և ռուսաստանյան կենտրոնից հեռագրեր չի ստացվում, բայց Իրկուտսկում պտտվող լուրերի համաձայն՝ մեր կյանքի գրքում բացվում է նոր էջ»:

Բացի դրանից, Մոսկվայից ստացվել էր մի հեռագիր, թե՝ «արյոլցիներին*) ազատված են, շնորհավորում ենք»: Վերջապես մի հեռագիր էլ թե՝ «Շնորհավորում ենք»:

Գաղութի փոստը գալիս էր իմ բնակարանը, վորի ընդարձակության ու տեղի հարմարության պատճառով գաղութը նպատակահարմար էր համարել օգտագործել վորպես թարմ, նոր ստացված պարբերականների ընթերցարան:

Տուն վերադարձա շուկայից, և ներս մտնելիս Ստեպանովն ու Նազարխուսը հայացքներն ինձ հառած՝ հարցրին...

— Գարագաշ, նոր ի՞նչ բերիր, հը, սսս...

— Ցանկանում եմ ձեզ առողջություն...

— Եխ, դու անպիտան, ուրեմն դու դեռևս տեղեկություն չունե՞ս,

*) Արյոլի տաժանակիր բանտարկյալները:

նոր հեղափոխություն է սկսվել... «Սիբիր»-ի վերջին համարը կարդացե՞լ ես, նոր հեռագրերի մասին գիտե՞ս:

— Դե լա՛վ, թողեք կատակը, առանց դրան էլ կանոնավոր հեռագրերի բացակայությունը մեր ջղերն ուղղակի քայքայեց: Դուք այն ասեք, թե «Սիբիր»-ում վերջապես հեռագրեր տպվա՞ծ են թե ոչ: Ո՞ւր է թերթը, մի այստեղ տվեք:

— Տո անպիտան, կատակ չէ, ահավասիկ, կարդա այս տողերը:

Կարդալով թե «Սիբիր»-ի առաջնորդողը և մյուս առանձին հեռագրերը՝ համոզվեցի, որ այո, ինչ որ բան կատարվում էր: Մեր բոլորի տրամադրությունն է՛լ ավելի վատացնում էին այդ կիսակատար, հանելուկային տեղեկությունները:

Այդ օրը յերեկոյան իմ սենյակ-ընթերցարանում պետք է դասախոսեր էս-էռ Սկվարցովը վորպես պատասխան Սիրցովին, վորն իր համանուն զեկուցումով (զորացրում) ամենախիստ կերպով քննադատել էր էս-էռ-մենշևիկյան մանր-բուրժուական կուսակցություններին, և յեզրակացություն դուրս բերել, թե զորացրումն անկասկած պիտի վերջանար հեղափոխությամբ և այլն:

Ժողովականները սկսել էին դանդաղորեն հավաքվել: Թե մերոնք և թե հակառակորդները գալիս էին թղթերով—նյութերով իրենց տեսակետները հիմնավորելու համար, բայց բոլորն էլ «կտրված», տխուր, հուզված էին, և նկատելի էր, վոր վոչ վոք տրամադրություն չուներ դասախոսություն լսելու:

Յեվ իրոք. ո՞վ սիրտ ու նյարդեր ուներ ժամերով նստելու և զբաղվելու ինչ վոր ակադեմիական վեճերով, յերբ խիստ ժլատ, բայց չափազանց հուզիչ լուրերը խռովել էին մեր բոլորի հանգիստը:

Այդ պահին հևալով ներս ընկավ մի ընկեր և հայտնեց, թե նոր հեռագիր կա Շչերբակովի հասցեյով Իրկուցկ քաղաքում, ու «կարևոր հեռագիր պիտի լինի կարծեմ»: (Շչերբակովը Շանյավսկու համալսարանի բանվոր-ուսանող էր, Մոսկվայի ընդհատակյա Կոմիտեի անդամ, վորը սպանվեց հոկտեմբերի օրերին Մոսկվայում): Լսելով այդ՝ իսկույն սենյակից դուրս վազեցին Շչերբակովը, Ֆիշկին անունով մի ընկեր և վրացի մենշևիկ Դմիտրին:

Ժողովականներս լուռ, մտազբաղ սպասում էինք հեռագրին և շշնջալով խոսում էինք մեզ մոտ նստածների հետ: Մեզ դրդեցնողը «Սիբիր» թերթի առաջնորդողն ու Մոսկվայի հեռագրերն էին: Արդեն բոլորս էլ համոզված էինք, թե մի բան կատարվում էր... Բայց ի՞նչպես, այդ ո՞վքեր պիտի լինեյին նրա ձեռնարկողները... Չե՞ վոր

Հեղափոխականների խոշոր տոկոսը տառապում էր բանտերում և հեռավոր Սիբիրի տունդրաներում և այլն, և այլն:

Մեր ընկերներն այդ պահին արդեն հասել էին հեռագրատունը. բայց այնտեղ նամակը ստացված լինելու պատճառով՝ մութ տեղը նըստած ծառայողները սպասելիս են յեղել նամակի ստացվելուն: Ընկերները չնչասպառ ներս ընկած՝ խնդրել են հեռագիրը տալ, բայց ստացել էին մերժում՝ մթության պատճառով: Սակայն հեռագրողը, յերբ նկատել էր մեր ընկերների տրտունջը, վոր գնալով փոխվելիս է յեղել զայրույթի՝ սառնասրտորեն ասել էր.

—Ինչ եք վրդովվում, մի քիչ էլ սպասեցեք, նամակը բերվի, կտանաք իսկ յեթե այդ էլ չեք կարող անել, ուզո՞ւմ եք ասեմ բովանդակությունը:

Հեռագրողը լուցկու լույսի տակ կարդացել էր հեռագիրը:

«Դեռևս չհաստատված տեղեկությունների համաձայն՝ ձերբակալված է հին կառավարությունը. շտապեցեք քաղաք» (այսինքն՝ Իրկուցկ):

Դրանից հետո ընկերները ուղղակի հեռագիրը խլում են հեռագրողի ձեռքից և լուցկին վառած՝ յերեքով կարդում ստուգում յեն ու կայծակի արագությամբ սլանում դեպի մեզ, ժողովականներին՝ հաղորդելու յեղելության մասին:

Հակառակ մեզ՝ զարմանալի հակապատկեր էր ներկայացնում պրոստի չինովնիկի բռնած դիրքը դեպի կատարված այդ հասարակական վիթխարի հեղաշրջումը:

Մերոնք շտապում, հուզվում, ուրախությունից արտասվում էին, իսկ նա՝ հեռագրողը սառնասիրտ: Նրա համար միևնույն էր ըստ յերևույթին, թե իր պետը Իվանովը կլիներ թե Սիդորովը: Ինչո՞ւ պետք շտապեր նա, ի՜նչ մեծ նշանակություն ուներ նրա համար, վոր խորտակվել էր մարդկային հոգին ու միտքը կաշկանդող, ստրկացնող խավարի թագավորությունը:

Հեռագիրը բերելու գնացած ընկերները հևիհև հասան ժողովատեղը, ուժգնորեն հրեցին դուռը, վորը աղմուկով դիպչելով սյանը՝ մեզ ոտքի թռցրեց: Ընկերները չնչասպառ ներս ընկան: Հեռագիրը Դմիտրիի ձեռքին էր:

Քառասունհինգից— հիսուն տարեկան, ալեխառն մորուքով մի կրակոտ մարդ էր Դմիտրին: Նա մասնակցելով արևմտյան Վրաստանի 1905 թվի ապստամբություններին՝ տաժանակիր աշխատանքի դատապարտված և ուղարկված էր Սիբիր՝ «Նապասելենիյե»:

Դմիտրիի մորուքից ցուրտը սառույցի սպիտակ կլոր պատրույգներ

էր կախել: Նրա աչքերը փայլատակում էին, կրակ էին կտրել: Պետք էր տեսնել ծերունուն այդ դիրքով: Նա շշմեցնող, բերկրական առաքյալի տպավորություն էր թողնում ժողովականների մեջ, և մեր ուշադրությունն ամբողջովին սևեռված էր նրա վրա. սպասում էինք, թե ինչ էր ասելու նա:

Նախագահի տեղը բռնած Ստեպանովը, դիմելով նրան՝ ասաց.

— Դե, շուտ արա, հեռագիրը տուր այստեղ...........

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԳՐՔԻ

ՀԱՎԵԼՎԱԾ

Վորպեսզի «Պայքարի ճամբին» Ա. գրքի ընթերցողի համար ել ավելի համոզեցուցիչ լինեն գրքում արծարծված միքանի հարցերն ու պրոբլեմները, հեղինակը նպատակահարմար համարեց գրքում գետեղված բազմաթիվ այլ փաստաթղթերի հետ միաժամանակ տպագրել նաև ժանդարմական արխիվից հանված ներքոհիշյալ 2 փաստաթղթերը ևս, վորպես հավելված:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ № 1

ԴԱՏԱՎՃԻՌ

1913 թ. մայիսի 2/4-ին Թիֆլիս քաղաքում ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծության, Թիֆլիսի Դատարանական Պալատը Հատուկ Ատյանով դատական նիստում հետևյալ կազմով.

Դեպարտամենտի նախագահ՝ Ս. Ս. Բոգորոդսկի

Պալատի անդամներ՝ Լ. Ա. Իոնին, Վ. Կ. Կուլիբին,
Վ. Վ. Բոլդիրև

Թիֆլիսի նահանգի ազնվականության պարագլխի պաշտոնակատար Ն. Ի. Սադինով:

Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսով և Տաշյանինսկի գյուղական համայնքի հերթական տանուտեր Ի. Լիխոյվան:
Մասնակցությամբ պալատի դատախազի ոգնական Յե. Ֆ. Լիբեդինսկու
Պալատի քարտուղարի ոգնական Ա. Ա. Լեվիցկու,

Լսեց գործը մեղադրյալներ Ցելենա Դիմիտրևնա Ստասովայի, Մարիա Պետրովնա Վախմինայի և ուրիշների մասին, թվով յոթ հոգի, վորոնք մեղադրվում են Քրեյական Որենսգրքի 1 մասի 102 հոդվածով:

Թիֆլիսի Դատարանական Պալատի Հատուկ Ատյանի վճռով Նովգորոդի նահանգի ազնվական Ցելենա Դիմիտրևա Ստասովան 38 տարեկան, Վյատկայի նահանգի, Սարապուլ գավառի Բայլչայա Նորիա գյուղի գեղջկուհի Մարիա Պետրովնա Վախմինայի 27 տար. Թիֆլիս քաղաքի մեշչան Սուրեն Սպանդարով Սպանդարյան 29 տար. Զորա-Դոնյան մարզի Ռոստով Դ/Վ քաղաքի մեշչանուհի Կելլա Ռեվեկկան, նույնը և Վերա, Լազարևա Շվեցեր 26 տար. և Յերևանի նահանգի Ալեքսանդրոպոլ քաղաքի մեշչան Վասիլ Ակոպով Խաչատրյանը, 28 տար. մեղավոր են ճանաչված նրանում, վոր 1911 թվի և 1912 թվի առաջին կեսի ընթացքում մասնակից լինելով գաղտնի ընկերության, վորը կրում է Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության անունը և նրանց առաջուց հայտնի յե, վոր նա(կուսակցությունը) իր գործնեության նպատակն է դրել բռնությամբ չարամիտ փորձ անել Ռուսաստանում հիմնական որենքներով սահմանված կառավարման ձևը փոխելու դեմոկրատական հանրապետության, իսկ Ստասովան, լինելով նաև այդ ընկերության Կենտրոնական Կոմիտեյի անդամը, Թիֆլիս քաղաքում կազմել են նրա Թիֆլիսի կազմակերպությունը, ընդվորում նրանցից Ստասովան, Վախմինան, Հովհյանցը և Սպանդարյանը գործելով վորպես հիշյալ կազմակերպության անդամներ և վերը հիշված ընկերության խնդիրները կենսագործելու համար, մտել են կազմակերպության ղեկավար խմբակի կազմի մեջ, վորը հետագայում վերանվանվել է նրա ղեկավար կոլեկտիվը և գլխավորելով -ին, ղեկավարել են կազմակերպության ամեն տեսակի գործնեությու-

նը, ագիտացիա յեն մղել նպատակ ունենալով վերականգնելու, միացնելու և ամրացնելու Թիֆլիսում և ընդհանրապես Կովկասում Սոցիալ-Դեմոկրատական կուսակցության անկման հասած գործունեությունը և իրենց կազմած կազմակերպությունն ընդլայնելու և նրանում նոր անդամներ գրավելու նպատակով վերը հիշված կուսակցության կազմակերպության և կենտրոնական կոմիտեյի անունից կազմել են, պատրաստել և տարածել կոչի ձևով անլեգալ հակակառավարական գրականություն, վորոնք պարունակում են իրենց մեջ Ռուսաստանում հիմնական որենքներով սահմանված կառավարման ձևը բռնությամբ փոխելու գրգռող դատողություններ, ինչպես նաև պատրաստել են և ուր հարկն է ուղարկել տարածելու համար հենց այդպիսի գրականություն հենց նույն կուսակցության նաև ուրիշ, տարբերքաղաքյա կազմակերպություններին, քննարկում եյին կառուցվածքը և իրենց ղեկավարությամբ կազմակերպում եյին կազմակերպության անդամների արգելված գաղտնի ժողովներ, քննարկելու համար Ռուսաստանում գոյություն ունեցող պետական և հասարակական իրավակարգը տապալելու անհրաժեշտության հարցերը, ինչպես նաև բանվորների բացահայտ հակակառավարական ելույթները, ցույցերի և գործադուլների ձևով, դրամ եյին հավաքում կուսակցության պետքերի համար և անլեգալ գրականության միջոցով պրոպագանդա մղում նրա ուսմունքի համար, այդ դրամների մի մասը տալիս եյին ինչպես տարբերքաղաքյա կուսակցական կազմակերպություններին, այնպես էլ կուսակցության Կենտրոնական Կոմիտեյին: Շվեյցերը լինելով վորպես հիշյալ կազմակերպության անդամը և իրագործելու համար վերը հիշված կազմակերպության հետ կուսակցական հարցերի նկատմամբ նպատակ ունենալով կազմակերպության գործնեությունը միացնել համակուսակցական գործնեության հետ, Թիֆլիսի կազմակերպությունը մատակարարել է կուսակցության հրատարակությունները և մասնակցել Թիֆլիսի կազմակերպության ղեկավարների և անդամների ձեռնարկած հակակառավարական կուսակցական գործողություններին և Խաչատրյանցը գործելով վորպես հիշված կազմակերպության անդամ, և վերը հիշված ընկերության խնդիրներն իրագործելու համար իր տրամադրության տակ ուներ կուսակցական գաղտնի տպարան՝ Թիֆլիսի կազմակերպության հրատարակությունները տպագրելու համար, տպագրում եր այդպիսիք և բացի դրանից մասնակցում եր կուսակցության կարիքների համար դրամ հավաքելուն:

Հատուկ Ատյանի նույն այդ վճռով Գանձակի գավառի Ջագլիկ գյուղացի Ներսես Ղազարի Հովհաննիսյանը 23 տար. անպարտ է ճանաչված այն մեղադրանքի մեջ, թե 1911 թվի և 1912 թվի առաջին կեսի ընթացքում, մասնակից լինելով վերը հիշված գաղտնի ընկերությանը, Թիֆլիսում կազմել է նրա կազմակերպությունը, ընդվորում գործելով վորպես նշված կազմակերպության անդամը և վերը հիշված ընկերության խնդիրներն իրագործելու համար իր տրամադրության տակ է ունեցել կուսակցական գաղտնի տպարան Թիֆլիսի կազմակերպության հրատարակությունները տպագրելու համար և տպագրել է այդպիսիք:

Անցնելով նման վճռի որինական հետևանքների վորոշման, Հատուկ Ատյանը գտնում է 1) վոր հանցագործ արարմունքը, վորի մեջ

մեղավոր են ճանաչված դատի տակ գտնված Սոտսովան, Վախմինան, Հովվյանցը, Սպանդարյանը, Շվեյցերը և Խաչատրյանցը կազմում է ծանր հանցանք, վորը նախատեսված է Քրեյական Օրենսգրքի I մասի 102 հոդվածով, առաջացնում է նույն օրենսգրքի 16 հոդվածով ցույց տված աքսորը դեպի տաժանակիր աշխատանք ութ տարուց վոչ ավելի ժամանակով, 2) վոր նկատի ունենալով հանցանքը մեղմացնելու հանգամանքների առկայությունը, բոլոր հիշված դատի տակ յեղածները պետք է ճանաչվեն ներողամտության արժանի, ուստի և Քր. Օրենսգրքի 53 հոդվածի համաձայն տաժանակիր աշխատանքը պետք է փոխարինվի Քր. Որ. 17 հոդվածով ցույց տված աքսորով դեպի աքսորավայրը, նույն Օրենսգրքի 25 հոդվածի համաձայն զրկելով նրանց քաղաքացիական իրավունքներից բոլորի համար Քր. Որ. 26, 29, 30, 31 և 34 հոդվածների հետևանքներով: 3) վոր դատի տակ գտնվող Հովհաննիսյանը, Քր. Դատ. Կան. I մ. 77 հոդվածի համաձայն, նրան վերագրած ծանր հանցանքը նրա կողմից կատարելը չհաստատվելու պատճառով, դատարանով պետք է ճանաչվի անպարտ, 4) վոր դատական ծախսերը պետք է դրվի համահավասար չափով բոլոր դատապարտյալների վրա և նրանց մեկը մյուսի համար փոխադարձ պատասխանատվությամբ, 5) վոր իրական ապացույցների մասին հարկավոր է կայացնել հատուկ վորոշում և 6) վոր այս դատավճիռն իր օրինական ուժի մեջ մտնելով, բայց նախքան նրա կատարման անցնելը, Քր. Դատ. Կան. 945 հոդվածի համաձայն, Արդարադատության Մինիստրի միջոցով պետք է ներկայացվի Կայսերական Մեծության հայեցողությանը, զրկելու համար Սոտսովային, վորպես ազնվականուհու, քաղաքացիական իրավունքից:

Վերոհիշյալ նկատառումներով և ղեկավարվելով Քր. Դատ. Կան. 771 հոդվածով, Թիֆլիսի Դատարանական Պալատը Հատուկ Ատյանով վորոշում է դատի տակ գտնված Նովգորոդի նահանգի ազնվականուհի Յելենա Դիմիտրևնա Սոտսովային, 38 տար., Վյատկայի նահանգի գեղջկուհի Մարիա Պետրովնա Վախմինային, 27 տար., տոհմական պատվավոր քաղաքացուհի Արմենուհի Սումբատովնա Հովվյանցին, 20 տար., Թիֆլիս քաղաքի մեշչան Սուրեն Սպանդարյանին 29 տար, Ռոստով քաղաքի մեշչանուհի Կեյլյա Ռեվվեկային, նույնը և Վերա, Լազարևնա Շվեյցեր 26 տար. և Ալեքսանդրոպոլ քաղաքի մեշչան Վասիլ Ակոպով Խաչատրյանին 28 տար., համաձայն Քր. Որ. I մասի 102; 16, 53, 17 և 25 հոդվածների զրկելով քաղաքացիական իրավունքներից, աքսորելով Քր. Որ. 28, 29, 30, 31 և 34 հոդ. հետևանքներով համահավասար չափով նրանց վրա դնելով դատական ծախսերը և այդպիսիք վճարելու փոխադարձ պատասխանատվությամբ: Իրական ապացույցների մասին կայացնել հատուկ վորոշում: Այս դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելիս, համաձայն Քր. Դատ. Կան. 945 հոդվածի, Արդարադատության մինիստրի միջոցով ներկայացնել Կայսերական Մեծության հայեցողությանը, Սոտսովային, վորպես ազնվականուհու, քաղաքացիական իրավունքից զրկելու համար՝ Գանձակի Նահանգի Զագլիկ գյուղացի դատի տակ գտնված Ներսես Ղազարի Հովհաննիսյանին, 23 տար. նրան վերագրած ծանր հանցանքի կատարումը ապացուցված չլինելու պատճառով ճանաչել անպարտ և Քր. Որ. Դատ. Կան. I մ. 771 հոդվածի համաձայն, արդարացրած:

Թիֆլիս, Վրաստանի Կենտր. Արխիվ Ֆոնդ 36. գործ № 2564 (20-րդ)

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ № 2

1912 թ. սեպտեմբերի 5-ին Թիֆլիս քաղաքում, յես, Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետ գնդապետ Պաստրյուլինս, քննելով ինձ վստահած վարչության կատարած այս գրագրությունը, Պետական պահպանության կանոնադրության կարգով, Ցանկել Մոյշեա Գուրշունեյնի, Ներսես Հովհաննեսի Ներսիսյանի, Խաչատուր Հակոբի Գեվորգյանի և Պոլիկարպ Գուրտենովիչ Մդիվանու քաղաքական բարեհուսությունը հետախուզելու մասին գտա՝ այս տարվա հուլիսի 11-ին ուսուցչուհի Մարիա Վախմինայի մոտ խուզարկություն կատարելու, վորը ներկայումս Քր. Դատ. Կան. 1035 հոդվածի կարգով յենթարկված է հարցաքննության վորպես մեղադրյալ Քր. Որ. I մ. 102 հոդ. նախատեսված հանցանքի մեջ, հայտաբերվել է կուսակցական նպատակների համար դրամ հավաքելու անդորրագրերի գրքույկը, վորոնց վրա կար- «Ռ. Ս. Դ. Բ. Կ. Թիֆլիսի խմբի ղեկավար խմբակ» կնիքը, այդ խմբակի կազմն ու գործունեությունը հետազոտելու համար ձեռք առած միջոցներով հաջողվեց հաստատել, վոր նրան են պատկանում բացի դերձակ Բարսեղ Հակոբի Խաչատրյանից, վորի մոտ հայտաբերվեց ընդհատակյա տպարան և կազմակերպության ոգտին և բանվորական թերթի տպագրության համար նվիրաբերված գումարները հավաքելու թերթիկներ, վորոնց վրա կար ղեկավար խմբակի նույն կնիքը և վորը յենթարկված է հետաքննության Վախմինայի և ուրիշների գործով. նաև հետևյալ անձնավորությունները. Ժամագործ մեշչան Ցանկել-Մոյշա Իսաևիչ Գուրշունյը, յեղբայրք Յանդուլովների մանուֆակտուրայի խանութի հաշվապահ Ներսես Հովհաննեսի Ներսիսյանը և Խաչատրյանի հետ նույն բնակարանում բնակվող, դերձակ Խաչատուր Հակոբի Մուշ-Գեվորկովը:

Իսկ վերը հիշված ղեկավար խմբակի գործունեության նկատմամբ պարզված է հետևյալը.

Այդ խմբակի ժողովները, սկսած ս/թ. հունիսի 1-ից կայանում եյին պարբերաբար. մինչ այժմ ժողովները տեղի յեին ունենում տարբեր տեղերում. հունիսի 12-ին, և 23-ին և հուլիսի 1-ին, 2-ին ու 15-ին նրանցում լսվում եյին զեկուցումներ բջիջների աշխատանքների դրության մասին, քննվում եյին հարցեր, վորոնք վերաբերում եյին մենշևիկների և բայլշևիկների հնարավոր միացմանը, իսկ վերջին յերկու ժողովներում կարդացվել են 4-րդ Պետական Դումայի կայանալիք ընտրությունների առթիվ տպագրության և տարածման համար պատրաստած ագիտացիոն թերթերի բովանդակությունը: Այդ թերթերի տպագրության համար վորոշվել է հիմնել տպարան, վորի մասերը խուզարկության ժամանակ հայտաբերվել են վերոհիշյալ դերձակ Խաչատրյանի բնակարանում:

Այնուհետև հաջողվեց պարզել, վոր տնային դաստիարակչուհի Յելենա Դիմիտրևնա Սոտսովայի նամակներից մեկում հիշատակված «Բոչկա», վորի մասին նա ասում է, թե իրեն հաջողվեց նրա հետ տպագրել մայիսյան կոչի բովանդակությունը, նույնպես մասնակցել է ղեկավար խմբակի ժողովներից մեկին, վորը կայացել եր այս տարվա հուլիսի 1-ին Բուսաբանական այգում:

«Բոչկան» այդ ժողովին հրավիրված էր, վորպեսզի մշակի «մեկերի*) կոնֆերենցիայում ընդունած բանաձևերը:

Ինչպես յերևում է ինձ վստահած վարչության ունեցած տեղեկություններից, «Բոչկա» կեղծանվան տակ սոց. դեմ. կազմակերպության մեջ հայտնի յե 1904 թվից Քութայիսի նահանգի ազնվական, Մոսկվայի համալսարանի նախկին ուսանող Պոլիկարպ (նաև Բուդու) Գուրգենով Մդիվանին, վորին անվանում են նաև «Բոչկարյով»:

Մդիվանու մասին ինձ վստահած վարչության մեջ կան հետևյալ տեղեկությունները.—լինելով Մոսկվայի համալսարանի ուսանող, ուսանողական անկարգություններին մասնակցելու համար 1899 թվին հեռացվել է հիշված համալսարանից և վարչական կարգով արտաքսված Մոսկվա քաղաքից: Նույն 1899 թվին յեղել է վոստիկանական գաղտնի հսկողության տակ:

1904 թ. հունիսի 5-ին Մդիվանին ձերբակալվել է Թիֆլիսի կայարանում, ընդվորում խուզարկության ժամանակ նրա մոտ գտնվել են 1033 օրինակ Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական բանվորական կուսակցության «Պրոլետարիատի պայքարը» (Борьба пролетариата) հրատարակության թերթիկներ, վորի համար նա բանտարկվել է հենց այն ժամանակ և յենթարկվել հետաքննության Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության մեջ, մեղադրյալ պատժ. Որ. 251 հոդվածի համաձայն, վորպիսի հետաքննությունը հետագայում հանձնված է Քութայիսի նահանգի ժանդարմական վարչության պետի ոգնական Բաթումի մարզում, վորով Մդիվանին յենթարկվեց մեղադրանքի ըստ պատժ. Որ. 250 և 318 հոդվածների և հետաքննության 1904 թ. մարտի 30-ին Բաթումում վերահիշյալ միության գաղտնի տպարան հայտաբերելու վերաբերյալ, այդ հետաքննությունը կարճվեց 1905 թ. հոկտեմբերին բարձրագույն Մանիֆեստի հետևանքով:

Թիֆլիսի պահնորդական բաժանմունքի պետի գործակալական տեղեկությունների համաձայն, վորոնք վերաբերում են 1904 թվին, Բուդու Մդիվանին անլեգալ գրականության գլխավոր տարածողն է յեղել Խոնիում և նրա շրջակա գյուղերում:

1907 թվին Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության Քութայիսի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տպագրվել է, թռուցիկի ձևով, կոչ, Սոց-Դեմոկրատական կուսակցության կողմից Պետական Դումայում ընտրելու Պոլիկարպ (Բուդու) Մդիվանուն:

1908 թվի աշնանը և 1909 թ. սկզբին, Թիֆլիսի պահնորդական բաժանմունքում յեղել են գործակալական տեղեկություններ, վոր Մդիվանին հանդիսացել է Բաքվի Սոցիալ-Դեմոկրատական կազմակերպության ականավոր անդամը:

Բաքվի պահնորդական բաժանմունքի պետի նույն տեղեկությունների համաձայն, վորոնք վերաբերում են 1909 թվին, Մդիվանին, ծառայելով Բաքվի քաղաքային վարչության մեջ, յեղել է ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեյի անդամը, հանդիսացել է Բաքվի կազմակերպության ակտիվ աշխատողը, սերտ կապ է ունեցել 1908 թվի դեկտեմբերին Փարիզում կայացած Սոց. Դեմ. կուսակցության կոնֆերանսի գործերի հետ, և նույնիսկ ընտրվել է այդ կոնֆերենցիային մասնակցելու համար, սակայն չի գնացել: Արտասահմանից ստանալիս է յեղել անլեգալ գրակա-

*) «Մեկերի»— մենշևիկների Տ. Գ.:

նություն: 1909 թվի ապրիլի 30-ին խուզարկության և յենթարկվել. սակայն առանց հետևանքների:

Թուրքեստանի շրջանային պահնորդական բաժանմունքի պետի գործակալական տեղեկությունների համաձայն, վորոնք վերաբերում են 1910 թվի մայիսին, Բաքվի քաղաքային վարչության ծառայող Մդիվանին մոտիկ մասնակցություն է ունեցել Բաքվում սոցիալ-դեմոկրատական մենշևիկյան կազմակերպության կից հիմնված «Գործադիր հանձնաժողովի» մեջ:

Քութայիսի նահանգական ժանդարմական վարչության պետի նույն այդ տեղեկությունների համաձայն, վորոնք վերաբերում են 1910 թվի ոգոստոսին, Մդիվանու նախագահությամբ սոցիալ-դեմոկրատների ժողովներ եյին սարքվում Խոնիում, առևտրական Ջելիձեյի բնակարանում: Իր հանցավոր գործնեյությամբ Մդիվանին հայտնի յե դեռևս 1903 թվից:

1911 թվի ապրիլին, Մդիվանին զգուշանալով խուզարկությունից և բանտարկությունից, Բաքվից թաքնվեց և յեկավ Թիֆլիս, վորտեղ նույն թվի մայիսին ցուցմունքներ ստացվեցին այն մասին, վոր նա և Ռուբեն Քաթանյանը գրագրություն են վարում Կենտրոնական Կոմիտեյի հետ, միջոցներ հատկացնելու Թիֆլիսի բանտում պահվող ականավոր սոցիալ դեմոկրատների փախուստը կազմակերպելու համար:

Այդ ցուցմունքներն անկասկած վերաբերում եյին Միքայելյան հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքում պահվող Սեմյոն Արշակի Տեր-Պետրոսովի պատրաստվող փախուստին:

Գանձակի գավառի խմ ոգնականի գործակալական տեղեկությունների համաձայն, վորոնք վերաբերում են 1911 թվին, Մդիվանին Թիֆլիսում իր բնակարանում թաքցնում էր Քութայիսի գիմնազիայի նախկին աշակերտ Խան Լորդկիպանիձեյին, վորը մահափորձ կատարելով Քութայիսի գիմնազիայի դիրեկտոր Գլուշակովի և ռեալական դպրոցի դիրեկտոր Լևոնովսկու վրա, թաքնվում էր:

1912 թվի հունվարի 5-ի գիշերը Թիֆլիսում Մդիվանին յենթարկվել է խուզարկության, սակայն առանց հետևանքների, վորի պատճառով չի ձերբակալված: Խուզարկությունը կատարելու ժամանակ Մդիվանու բնակարանում բռնվել է Ճիաթուրից միքանի օրով Թիֆլիս յեկած ուսուցչուհի Մարիա Արշիլովնա Ջիբլաձեն, վորն ըստ ունեցած տեղեկությունների պատկանում է Ս. Դ. կազմակերպությանը: Խուզարկության ժամանակ Ջիբլաձեյի մոտ հայտաբերվել է վրացերեն գրված մի նամակ ուղղված վոմն «Ալեքսանդրին», հաղորդելով «Կոտեյի» բանտարկության մասին Ծնորից տուպ: Հիշված «Կոտեն» Ոլիմպ Մաքսիմով Ցինցաձեն է, վորը մասնակցել է Թիֆլիսի Միքայելյան հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքից 1907 թվին Թիֆլիսի Յերևանյան հրապարակի վրա 250.000 ռ. պետական դրամի կողոպտելուն մասնակցող վերահիշյալ Սիմյոն Արշակի Տեր-Պետրոսովի փախուստի գործին:

1912 թվի փետրվարին շրջանի կողմից ստացվել են գործակալական տեղեկություններ, վոր ս. դ. բոլշևիկ Բուդու Մդիվանուն համարում են 4-րդ Պետական Դումայի հնարավոր թեկնածու:

Այս տարվա ապրիլին տեղեկություններ են ստացված, վոր 1911 թ. Թիֆլիսում կազմակերպված առանձին ս. դ. խումբը հիմնված է յեղել Բուդու Մդիվանու և ուրիշների կողմից, վորոնք ցանկություն են

հաջողել ստեղծել վոչ մեծ, բայց ամուր կազմակերպություն: Այդ խմբի մեջ են մտել առավելապես հայ գործակատարներ:

1912 թվի մայիսին Թիֆլիսի պահնորդական բաժանմունքի պետը գործակալական տեղեկություններ է ստացել, վոր նույն մայիսի 19-ին Մուշտայիդի այգում (Թիֆլիսում) յենթադրվում է կազմակերպել զբոսանք հօգուտ Ժողովրդական Համալսարանի, վորի գործունեությունը ղեկավարում են սոցիալ-դեմոկրատները: Բոլշևիկների մոտ ականավոր գործիչների թվին է պատկանում դերասան Պոլիկարպ (Բուդու) Մդիվանին:

Այդ տեղեկությունների հիման վրա հուլիսի 24-ին Մդիվանին խուզարկվելով (առանց հետևանքի) բանտարկվեց և վորպես կասկածելի յենթարկվեց սույն հետաքննությանը:

Հուլիսի 21-ին Խաչատրյանի մոտ խուզարկություն կատարելու և բանտարկելու հետ միաժամանակ խուզարկվել և բանտարկվել են ղեկավար խմբակի վերը հիշված անդամներ՝ Գուրջաեյնը, Ներսիսյանը և Մուշ-Գևորկովը, վորոնց մոտ խուզարկություններն անցան առանց արդյունքի:

Այդ անձնավորություններից շրջանի գործերով անցել է միայն Ցանկել Գուրջաեյնը: Նա 1907 թ. ապրիլի 25-ին Թիֆլիսում խուզարկության յենթարկվեց իր յեղբայրներ Լազարի և Աբրահամի հետ, նկատի ունենալով նրանց հանցավոր գործունեության մասին ունեցած տեղեկությունները. չնայած խուզարկությամբ հայտաբերվել է պախարակելի գրականություն, սակայն այդպիսին ճանաչվել է վոչ բավարար քննության կամ ձևական հետաքննություն հարուցելու համար:

Ուշադրության առնելով, վոր այս գրագրության կատարումով չեն ստացվել բավարար տվյալներ վերոհիշյալ անձնավորություններին Դատ. կան. 1035 հոդվածի կարգով ձևական հետաքննության յենթարկելու համար և համարելով, վոր վերը բերած տվյալներով մեշչան Ցանկել Մոյսեյեվ Գուրջաեյնի, Ներսես Հովհաննեսի Ներսիսյանի, Խաչատուր Հակոբի Գևորգովի և ազնվական Պոլիկարպ Գուրդենովիչ Մդիվանու քաղաքական անբարեհուսությունը լիովին ապացուցված է, յենթադրում եմ յենթարկել նրանց պատշաճ իշխանության կարգադրությամբ վարչական արտաքսման Կովկասյան յերկրի սահմաններից դուրս ընդմիշտ գոյություն ունեցող բացառիկ դրությամբ:

Ներքին գործոց պ. Մինիստրի (ըստ վոստիկանական դեպարտամենտի) 1881 թ. սեպտեմբերի 5-ի № 3988 շրջաբերականի հիման վրա վորոշեցի. այս գրագրությունն ուղարկել Թիֆլիսի պ. Նահանգապետին:

Իսկականը ստորագրել է՝ գնդապետ Պաստրյուլին:
Իսկականի հետ ճիշտ է՝ ռոտմիստր Ռոզալիոն Սաշալսկի
Թիֆլիս կենտր. Արխիվ Ֆոնդ. 36 № 2691

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ԳՐՔԻ

1. Առաջաբանի փոխարեն . . . 3
2. Երզրում . . . 6
3. Փախուստ . . . 16
4. Խռովություններ համիդյան ռեժիմի դեմ . . . 27
5. Համիդյան բանտը . . . 30
6. Թուրքիան սահմանադրական . . . 35
7. Դեպի Անդրկովկաս . . . 39
8. Ցարական ռեակցիան . . . 41
9. Թիֆլիսում . . . 44
10. Բաթումում . . . 51
11. Խզումն դաշնակների հետ . . . 55
12. Ցրված ուժերի համախմբում . . . 57
13. Խոշոր ձերբակալություններ Թիֆլիսում . . . 63
14. Վերելքը մյուս ասպարեզներում . . . 81
15. Բալկանյան պատերազմի արձագանքը . . . 93
16. Մեր տարաձայնությունները . . . 99
17. Նոր ղեկավարություն . . . 104
18. Պատերազմը և մեր կազմակերպությունը . . . 113
19. Աշխատանքը կաշեգործների մեջ . . . 120
20. Վպերյոդովցիները և սպեցիֆիկները . . . 132
21. Նոր պրովալ . . . 138
22. Մենշևիկների պրովալը . . . 147
23. Կավբյուրոն կազմվելուց հետո . . . 153
24. Յերկրորդ պրովալը . . . 160
25. Մետեխի ամրոցում . . . 171
26. Փետրվարյան օրերը Սիբիրում . . . 185
27 Հավելված . . . 194
28. Սպանդարյանի, Ստասովայի և այլոց մասին ցարական դատավճիռ . . . 196
29. Ժանդարմական վորոշում Մդիվանիի, Ն. Ներսիսյանի, Ն. Մուշարյանի և այլոց մասին . . . 199
30. Բովանդակություն . . . 204

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ 15 ներքևից 17-րդ տողում տպագրված է հանգարություն. պետք է լինի հանգստություն։

Էջ 33 ներքևից 8-րդ տող տպագրված է հասասյամ. պետք է լինի հասասալամ։

Էջ 33 ներքևից 7-րդ տող տպագրված է րեհմիկթուլլա. պետք է լինի ռեհմեթուլլա։

Էջ 36 վերևից 13-րդ տող տպագրված է հավիտենական փոչինչ չկա. պետք է լինի հավիտենական փոչ մի յերևույթ չկա։

Էջ 38 ներքևից 16-րդ տող տպագրված է դաշնակցական ֆեոդալիզմ. պետք է լինի դաշնակցական ֆիդայիզմ։

Էջ 40 ներքևից 7-րդ տող տպագրված է վրայով. պետք է լինի կողքով։

Էջ 50 վերևից 18-րդ տող տպագրված է նրա գլխից. պետք է լինի նրա ծոցից։

Էջ 61 ներքևից 6-րդ տող տպագրված է («Ռ. Կ.»). պետք է լինի («Ո. Կ.»)։

Էջ 186 ներքևից 9-րդ տող տպագրված է կարապ, պետք է լինի կարդ։

Սրբագրեց՝ Ս. Տերտերյան

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

Պատվեր № 2176 Գլավլիտ 7543 (բ) Իր. 2264 Տիրաժ 5000

Հանձնված է արտադրության 22-ն հուլիսի 1932 թ.

Ստորագրված է տպելու 19 սեպտեմբերի 1932 թ.

գինը 2 ռ. 50 կ.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ш. КАРАКАШ
НА ПУТИ БОРЬБЫ
ГИЗ ССРА 1932 ЭРИВАНЬ

ՀՀ Ազգային գրադարան
NL0185795